

8/11 P
h-68

Ռ.Ա. ԻՇԽԱՆՅԱՆ

ՆՈՐ
ԳՐԱԿԱՆ
ՀԱՅԵՐԵՆԸ
XVII - XVIII դդ.

ԵՐԵՎԱՆ

ՀԱՅՈՑ ԵՐԵՔ ԳՐԱԿԱՆ ԼԵՋՈՒՆԵՐԸ

Հայտնի են հայոց երեք գրական լեզուներ, դրանք հետևյալներն են.

Առաջին կամ հին գրական հայերեն (գրաբար), որ պարեզ է եկել 5-րդ դարի սկզբներին և հայությանն ընդունուր առմամբ հասկանալի է եղել մինչև 11—12-րդ դարը, այսինքն՝ շուրջ 700 տարի, և ապա շարունակել է գործածվել մինչև մեր ժամանակները՝ հասկանալի լինելով մինչև նեղ շրջանի մարդկանց:

Երկրորդ կամ միջին գրական հայերեն (միջին հայերեն), որ սկիզբ է առել 12-րդ դարում և գործածվել մինչև 5-րդ դարի վերջը կամ 17-ի սկիզբը, այսինքն՝ շուրջ 500 տարի:

Երրորդ կամ նոր գրական հայերեն, որ իբրև հաղորդակցության միջոց սկսել է գործածվել 17-րդ դարի կեսերից ու արունակում է գործածվել այժմ, այսինքն՝ ավելի քան 300 տարի:

Չորրորդ գրական հայերենի որևէ հուշարձան չկա ասպարեզում: Տեղեկություններ են պահպանվել նախքան 5-րդ դարը գոյություն ունեցած հայերեն գրի մասին: Կարծիքներ չկան, որ գոյություն է ունեցել նախամաշտոցյան հայալեզու արականություն, ուստի և գրական լեզու: Սակայն այդ գրից գրականությունից որևէ վավերական նմուշ առայժմ գրություն չէ, ուստի և ներկայումս անիմաստ է գիտական խոսք բացել մի հնագույն հայ գրական լեզվի մասին, որով հայոց գրական լեզուների քանակը կարող էր չորս դառնալ¹:

Ամեն պարագայի, 5-րդ դարից մինչև այսօր ստուգապես հայոց միայն երեք գրական լեզուներ են գոյություն ունեցել, ուստի և այդ ժամանակամիջոցում (1574 տարվա ընթաց-

¹ Ըստ եղած տեղեկությունների և փաստերի, այնուամենայնիվ, հիմքեր չկան բացառելու, որ նախամաշտոցյան հայոց գիր ու գրականություն է եղել:

քում) ստեղծված գրական հայերենի ամեն մի նմուշ վերոհիշյալ երեք գրական լեզուներից մեկին է վերաբերում կամ նրանցից որևէ մեկի տարբերակն է:

Իսկ այդպիսի տարբերակներ երեք գրական լեզուներից յուրաքանչյուրը բավական շատ է ունեցել: Նրանցից ամեն մեկի գործածությունը հարյուրամյակների ընթացքում, ինչպես նաև ավելի ուշ շրջանում քաղաքական, տարածքային և այլ հանգամանքների ազդեցությունը այդպիսի տարբերակների գոյության պատճառ են դարձել:

Նրեք գրական լեզուներն էլ գոյացել են խոսակցական հայերենի հիմքի վրա, և այդ գրական երեք լեզուներից յուրաքանչյուրը կառուցվածքով ընդհանուր է տվյալ ժամանակաշրջանի խոսակցական հայերենի հետ:

Պահպանված փաստերը վկայում են, որ նոր ժամանակներում՝ առնվազն 17-րդ դարից մինչև 20-ի առաջին տասնամյակները, երրորդ գրական հայերենի հիմք հանդիսացող խոսակցական լեզուն գերադասեցապես արտահայտված է եղել մի քանի տասնյակ հայոց բարբառներով, ինչպես և մասամբ ժողովրդախոսակցական միջբարբառային հայերենով: Առաջին ու երկրորդ գրական հայերենների հուշարձաններում պահպանված որոշ լեզվատարրեր, նաև այդ գրական լեզուների, նրանց տարբերակների բնույթը, զարգացման առանձնահատկությունները, ինչպես և հին ու միջնադարյան մատենագիրների վկայությունները և վերջապես նոր շրջանի բարբառների բնույթն ու տեղաբաշխումը ենթադրել են տալիս, որ 5-րդ դարում ու նրանից էլ շատ առաջ խոսակցական հայերենը նույնպես հիմնականում արտահայտված է եղել բարբառներով. այն է՝ հայ խոսակցական լեզվի տարրերակներով: Հենց այդ տարբերակների (բարբառների) տարրաբաժանում է մի քանի կամ մի շարք հաղարամյակներ եղել այն, ինչ անվանում ենք խոսակցական հայերեն:

Հայերենը, երբ իբրև առանձին լեզու անջատվել է հրեղավորական մայր լեզվից, եղել է գուտ խոսակցական: Խոսակցական հայերենը, որ ըստ երևույթին նախապես եղել է մայր լեզվի տարբերակներից (բարբառներից) մեկը, իբրև ինքնուրույն հայոց լեզու սկիզբ է առել այն ժամանակներից, երբ սկսել է գործածվել ու գիտակցվել որպես հայերի հա-

ղորդակցման միջոց, առանձին լեզու: Եվ ապա՝ հետագա դարերի ընթացքում լեզվի զարգացման համընդհանուր օրենքով ինքն է տրոհվել, և առաջացել են հայոց բարբառները:

Ուրեմն և խոսակցական հայերենը ասպարեզ է եկել հրեղավորական նախալեզվի տրոհման ժամանակաշրջանում, որը, ըստ նոր կարծիքների, տեղի է ունեցել շուրջ ~~առաջին~~ հազար տարի մեզնից առաջ, այլոց կարծիքով՝ շատ ավելի վաղ շրջանում²:

Այդպիսով, խոսակցական հայերենը (տարբերակների ամբողջականությունը) ոչ միայն վերջին 1574 տարվա ընթացքում եղել է երեք գրական լեզուների հիմքն ու սկզբնաղբյուրը, այլև հայոց լեզվի միակ արտահայտությունը նախքան առաջին գրական հայերենի երևան գալը: Ուստի և խոսակցական հայերենն իր տարբերակներով (հիմնականում բարբառներով) հաղարամյակներ շարունակ եղել է առաջնային կամ բուն հայերեն, ապա նաև հիմք-հայերեն, իսկ երեք գրական լեզուները, իրենց հաճախ շատ բարձր մշակվածությամբ հանդերձ, խոսակցական հայերենի ծնունդ են, այսինքն՝ նեոլոգիալից³:

Թե լեզվական ինչ բնույթ ու որակ են ունեցել խոսակցական հայերենը և նրա տարբերակները հին ու հնագույն ժամանակաշրջաններում, ստույգ ոչինչ ասել հնարավոր չէ, քանի որ չի պահպանվել որևէ վավերական հուշարձան, չկա այդ հաղարամյակների խոսակցական հայերենի գրանցված որևէ նմուշ: Արվում են միայն ենթադրություններ՝ հին գրական հայերենի փաստերից բխեցված:

Միջին դարերի խոսակցական հայերենի որևէ նմուշ նույնպես չի պահպանվել. միջին գրական հայերենի որոշ հուշարձաններ շատ մոտավոր պատկերացում են տալիս այդ ժամանակաշրջանի հայոց խոսակցական լեզվի, նրա տարբերակների բնույթի մասին:

² Տե՛ս, օրինակ, Վ. Գեորգիևի հոդվածը՝ «Вопросы языкознания», 1975, № 5, էջ 9:

³ Մենք այս պարզ համարությունն ընդգծում ենք նաև այն պատճառով, որ որոշ լեզվաբաններ, նաև գրողներ, ոչ գիտական պնդումներ են անում այն մասին, թե իբրև հայ բարբառները հետամնաց խավերի գոհիկ լեզուներ են և այլն:

խոսակցական հայերենի՝ հիմնական բարբառների, շատ թե քիչ վավերական ամենավաղ նմուշները պահպանված են 17-րդ դարից ու 18-ի սկզբներից, իսկ գիտական ստույգ սղադրությունները՝ 19-րդ դարի երկրորդ կեսից:

Երեք գրական լեզուների և նոր շրջանի (17—20-րդ դարեր) բարբառների ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ հնագույն ժամանակներում խոսակցական հայերենի տարբերակները՝ բարբառները, թույլ են արտահայտված եղել: Հայ բարբառների տարբերությունները (դարձյալ լեզվի զարգացման օրենքի ուժով) գնալով մեծացել են, մինչև որ որոշ դեպքերում հասել են փոխադարձ անհասկանալիության աստիճանի:

Բարբառների տարբերությունների խորացման հետ ասպարեզ է եկել միջբարբառային խոսակցական (կամ ժողովրդախոսակցական) հայերենը, որով միմյանց հետ հաղորդակցվել են տարբեր բարբառների ներկայացուցիչ հայերը: Կարելի է ենթադրել, որ 5-րդ դարում, դրանից էլ փոքրինչ առաջ, արդեն եղել է այդպիսի միջբարբառային խոսակցական հայերեն: Բայց անհայտ է նաև, թե ինչպիսին է եղել այդ հայերենը հնում, միջնադարում և նույնիսկ 17—19-րդ դարերում, քանի որ նրա ունեցված վավերական նմուշ, որն է դրից պահպանված, չկա:

Ավելին, անհայտ է, թե ինչպիսին է այսօրվա միջբարբառային խոսակցական ընդհանուր հայերենը, քանի որ ոչ ոք այն չի ուսումնասիրել:

Մենք ունենք այժմյան ժողովրդախոսակցական հայերենի մի շարք սղադրություններ, որոնց քննությունը ցույց է տալիս, որ իբրև լեզվական միավոր, մի ամբողջական, համահայկական խոսակցական լեզու գոյություն չունի: Կան տարբերակներ, օրինակ, նրևանի, լենինականի, Բիյրութի, Կիրովականի, Մարտունու, Այնճարի և այլն: Եվ երբ, ասենք, Այնճարի (Լիբանան) հայր այսօր խոսում է, օրինակ, օձնեցի (Թումանյանի շրջան) հայի հետ, նրանցից յուրաքանչյուրը ձգտում է հասկանալի լինել մյուսին, լեզվական «գիշումներ» անել, սակայն բոլոր դեպքերում, նույնիսկ լիակատար հասկանալիության դեպքում, այդ երկուսի միջև անգամ չի գոյանում մի ընդհանուր խոսակցական հայերեն՝ իբրև լեզվա-

կան ամբողջական միավոր. խոսակիցներից յուրաքանչյուրի լեզվում պահպանվում են բարբառային և մասնավանդ նոր գրական հայերենի երկու տարբերակներից մեկի կամ մյուսի առանձնահատկությունները: Օձնեցու լեզվում իշխում է Լոու խոսվածքն ու գրական արևելահայերենը, այնճարցու լեզվում՝ գրական արևմտահայերենը, նաև խոսակցական արևմրտահայերենը, մասամբ էլ Սվեդիայի բարբառը:

Ուրեմն, այսօր ժողովրդախոսակցական հայերեն ասելով պետք է հասկանանք հայերենի միջբարբառային բոլոր տարբերակների ամբողջությունը:

Սա, ըստ երևույթին, նշանակում է, որ նախկինում, գլխավորապես մեզ հետաքրքրող ժամանակում՝ 17—18-րդ դարերում էլ չի եղել մեկ ընդհանուր միջբարբառային ժողովրդախոսակցական հայերեն, գոյություն են ունեցել տարբերակներ, որոնցից յուրաքանչյուրը սակայն, կարծում ենք, հասկանալի է եղել հայության գրեթե բոլոր հատվածներին, տարբեր բարբառների ներկայացուցիչ հայերին:

Մինչև 20-րդ դարը հայոց լեզվի զարգացումը մեծ մասամբ արտահայտվել է իբրև խոսակցական հայերենի՝ նրա բոլոր տարբերակների զարգացում: Գրական լեզուների մեջ կատարված լեզվական զարգացումը կամ փոփոխությունները զգալի չափով, հաճախ էլ գերազանցապես խոսակցական հայերենի զարգացման արտահայտությունն են եղել կամ նրա ազդեցության արդյունքը:

Խոսակցական հայերենն է, որ հազարամյակներ շարունակ ժողովրդի բերանում փոփոխվել, տարբերակվել, զարգացել կամ փոխաշրջվել է: Եվ հենց խոսակցականի այդ զարգացման արդյունքն է հալոց երեք գրական լեզուների գոյության փաստը. խոսակցական հայերենը ժողովրդի բերանում փոփոխվել, փոխաշրջվել է, իսկ գրական լեզուներից յուրաքանչյուրը՝ գրքերի մեջ արձանագրված, կանոնի բերված, «չի հասցրել» միննույն արագություն փոխաշրջվել՝ «հասնել» խոսակցականի հետևից:

Լեզվի փոխաշրջում, զարգացում նշանակում է նրա քերականական կառուցվածքի, հնչյունաբանության, բառային ձևաշարքի ու իմաստաբանության փոփոխություն: Գրական լեզուն բնորոշվում է իր ավանդույթի և կանոնի կայու-

նությամբ⁴։ Որնէ՞ գրական լեզու իմացողների և գործածող-
ների լեզվազգացողությամբ՝ գրականը, ճիշտը այն է, ինչ
համապատասխանում է գրավոր խոսքի մեջ գրական լեզվի
կայունացած կանոնին ու ավանդույթին, նրանցից շեղումը
համարվում է ոչ գրական, ոչ ճիշտ։

Միաժամանակ, գրական լեզվի այդ ավանդույթի և կանո-
նի հիմքը խոսակցական լեզվի՝ բարբառների ամբողջության,
այն ժամանակաշրջանի կառուցվածքն է, բառաձևերի համա-
կարգն ու իմաստաբանութունը, որի ընթացքում երևան է ե-
կեղ տվյալ գրական լեզուն։ Խոսակցական լեզվի անընդհատ
փոխաշրջմամբ պարբերաբար խախտվում է նրա և՛ կառուց-
վածքը, և՛ բառաձևերի համակարգը, և՛ իմաստաբանութու-
նը. մի քանի հարյուրամյակի ընթացքում կարող է դուրսնալ
խոսակցականի նոր որակ՝ կառուցվածքով, բառաձևերի հա-
մակարգով և այլն։ Խոսակցականի այդ նոր որակը գրական
լեզվին քաջահմուտ անձանց կողմից ընկալվում է իրրե աղա-
վաղում, լեզվի օրենքների խախտում, ռամկոտեմ, ինչպես ա-
սում էին մեր գրագետ նախնիները։ Գրական լեզուն գործա-
ծողների մեջ ձգտում է առաջանում պահպանել նրա, ինչպես
ընդունված է ասել, անաղարտությունը, այսինքն՝ նախնա-
կան կառուցվածքը, բառաձևերի համակարգը, իմաստաբա-
նությունը և այլն։

Որոշ դեպքերում արվում են ակամա, երբեմն էլ ծրագրո-
ված դիջումներ խոսակցականի նկատմամբ, և որոշ «աղա-
վաղյալ» տարրեր մուծվում են գրական լեզվի մեջ։ Սակայն
դրանք չեն փոխում գրական լեզվի ավանդական դարձած
կառուցվածքը, կանոնը։

Փոխաշրջված խոսակցականը, նրա տարբերակները՝ գոր-
ծածող ժողովուրդը սկսում է չհասկանալ գրական լեզուն, որը
այդ նույն ժողովրդի դարեր առաջ խոսած լեզվի հարազատ
ծնունդն էր։ Գրական լեզուն իմացող մտավորական խավը,
որքան էլ նախանձախնդիր լինի այդ գրական լեզվի ավան-

⁴ Առհասարակ գրական լեզու նշանակում է իրրե գրավոր խոսք գոր-
ծածված և ըստ այդ խոսքի պահանջների մշակված ու կանոնի ենթարկված
լեզվական որակ։ Բարբառը կամ ընդհանուր խոսակցականը, որոշ ժամա-
նակ գործածվելով իբրև գրավոր հաղորդակցման միջոց, կարող են նոր
հատկանիշներ ձեռք բերել ու դառնալ գրական լեզու։

դույթն ու կանոնը «անաղարտ» պահելու գործում, անհրա-
ժեշտություն է դրում հաղորդակցվելու գրական լեզուն շիմա-
ցող ժողովրդի հետ. պետք է կրթել, քարոզել, հրահանգներ
և հրամաններ տալ ժողովրդին նրան հասկանալի լեզվով։
Ապա, ինքը՝ ժողովուրդը, հատկապես բարբառախոս գյուղաշ-
խարհից հեռացող նրա հատվածները (առևտրականներ, վար-
ձու աշխատողներ և այլն) պահանջ են դրում ազգային գրա-
վոր, ընդհանուրին հասկանալի լեզվի։

Այդպես ստեղծվում է նախադրյալ՝ մի նոր գրական լեզ-
վի գոյացման։ Եվ այդ նոր գրական լեզուն ստեղծվում է տրվ-
յալ ժամանակի խոսակցական լեզվի կառուցվածքի, բառա-
ձևական համակարգի, իմաստաբանության հիման վրա՝ ա-
ռավել կամ պակաս չափով իր մեջ առնելով նախորդ գրական
լեզվի այլևս խոսակցականին խորթ, արդեն գրեթե լեզվա-
տարրերը։

5-րդ դարում խոսակցական հայերենի հիման վրա գոյա-
ցած, կառուցվածքով նրան համապատասխանող գրական
լեզուն, որ, բնականաբար, հասկանալի էր այդ ժամանակի
հայրությանը, վեց-յոթ հարյուր տարի հետո դարձավ անհաս-
կանալի այդ նույն հայության սերունդներին։ Ժողովրդի խո-
սած հայերենը այդ հարյուրամյակների ընթացքում բավա-
կան փոխաշրջվել էր, և եթե 12-րդ դարում հարություն առնե-
ր մի հայ գյուղացի ու նույն գյուղում ծնված իր ծոռան ծոռի
հետ փորձեր խոսել իր իմացած հայերենով, ապա նրա այդ
ծոռան ծոռը ապուպապի հայերենը չէր հասկանա կամ դժվա-
րությամբ կհասկանար։

12-րդ դարում ապրող այդ ծոռան ծոռը և նրա հարյուր
հաղարավոր սերնդակիցներ չէին հասկանում 5-րդ դարի գր-
ական լեզուն, որ հասկանալի էր իրենց ապուպապերին։

Պատճառն այն էր, որ առաջին գրական լեզուն որակով,
կառուցվածքով հիմնականում մնացել էր 5-րդ դարի մա-
կարդակով, իսկ նույն 5-րդ դարի խոսակցական հայերենը
փոխաշրջվելով՝ այլ կառուցվածք ու որակ էր ստացել։

Ավելին. առաջին գրական հայերենը կրոնական ու եկե-
ղեցական գրքերի մեջ, եկեղեցու արարողութուններում սրբ-
բազործվել էր, կտրվել զարգացող խոսակցականից, նաև
դուրս գրեալին, սենյակային որոշ մշակումների էր ենթարկ-

վել ու այդ պատճառով 12-րդ դարի հայ շինականի կամ առհաստավորի, առևտրականի համար ավելի անհասկանալի էր դարձել, քան 5-րդ դարի նրանց ապուպապերի խոսած լեզուն կարող էր լինել:

Երբ Կիլիկյան հայոց թագավորությունը ձևավորվեց, պահանջ զգացվեց այնպիսի գրական լեզվի, որ հասկանալի լիներ հպատակներին. պետք էր հրովարտական արձակի. դատաստանագրքեր գրել ժողովրդին հասկանալի լեզվով: Միաժամանակ, ժողովրդին պետք էին հասկանալի երգեր, ոտանավորներ և գեղարվեստական արձակ: Այդպես, Կիլիկիայի միջբարբառային խոսակցական հայերենի հիման վրա ասպարեզ կկազմվեր երկրորդ գրական հայերենը, որը որոշ տարբերություններով սկսեց գործածվել նաև Հայաստանի այլ մասերում:

Սակայն խոսակցական հայերենի փոխաշրջումը կանգ չառավ, շարունակեց առաջ ընթանալ, և 17-րդ դարում, երբ հայ վաճառականությունը հասավ աննախադեպ ծաղկման, երբ հայ գյուղաշխարհի տարբեր գավառների հայերի միջև զանազան պատճառներով (գլխավորապես արտագաղթների և վտարանդիության) շփումը նույնպես աննախադեպ չափերի հասավ, պահանջ առաջացավ մի նոր՝ արդեն երրորդ գրական լեզվի: Քանի որ առաջին գրական լեզուն, որ հոգևորականության նեղ շրջանում շարունակում էր գործածվել գրավոր խոսքի մեջ, ժողովրդին նույնքան, դեռ շատ ավելի անհասկանալի էր (քան 12-րդ դարում), իսկ երկրորդ (միջին) գրական հայերենն էլ, որ վերահիշյալ պատճառներով նույնպես բավական «հետ էր մնացել» խոսակցական հայերենի, մանավանդ Հայաստանի արևելյան մասի խոսակցականի փոխաշրջումից, խորթ էր, իսկ հաճախ՝ վատ հասկանալի կամ անհասկանալի ժողովրդին, հատկապես նրա տարաբարբառ այն հատվածներին, որոնք շփման մեջ էին միմյանց հետ և մի ընդհանուր, լիովին հասկանալի գրավոր լեզվի պահանջ ունեին:

Այդպես, 17-րդ դարում սկսեցին գրվել և տպագրվել երկեր, որոնք ոչ առաջին, ոչ էլ երկրորդ հայերենի լեզվական որակն ունեին, այլ սկզբնական նմուշներն էին այն գրական լեզվի որակի, որը գործածվում է հայության կողմից այժմ:


Այդպես է դրացի նոր գրական հայերենը:

Անշուշտ, 17 կամ 18-րդ դարերում գործածված հայոց նոր գրական լեզուն լիովին չի նույնանում այդ լեզվի 20-րդ դարում գործածվող նմուշների հետ, տարբերություններ կան, բայց դրանք որակային-կառուցվածքային կամ իմաստաբանական չեն: Դրանք մոտավորապես այն բնույթի տարբերություններ են, որպիսիք կարելի է դիտել առաջին գրական հայերենի (գրաբարի) 5-րդ և, ասենք, 9-րդ դարերի նմուշների միջև կամ երկրորդ գրական լեզվի 12-րդ ու 16-րդ դարերի մի շարք նմուշների միջև:

Նոր գրական հայերենի ասպարեզ գալուց հետո անցել է ավելի քան 300 տարի, որի ընթացքում այդ լեզուն դարձացում է ապրել, փոփոխվել և այն էլ շատ ավելի արագ, քան հայոց առաջին ու երկրորդ գրական լեզուները: Պատճառը պարզ է. այդ 300 տարվա ընթացքում, մանավանդ վերջին հարյուրամյակում, կյանքն էլ ավելի արագ է փոփոխվել, քան առաջին ու երկրորդ գրական լեզուների կենդանի դործածության 700 կամ 500 տարիների ժամանակաընթացքում:

Այն բոլոր տեսակետները, որոնց համաձայն միջին կամ նոր գրական հայերենները գրաբարի աղավաղումն են, որևէ պատմական հիմք չունեն: Լիովին անհիմն են նաև այն կարծիքները, որոնց համաձայն հին գրական հայերենը (գրաբարը) եղել է անհասկանալի ժողովրդին, «վերին» դասակարգի՝ «ֆեոդալների» լեզու և այլն, քանի որ, կրկնում ենք, հայոց երեք գրական լեզուները պարզապես տարբեր ժամանակներում աճել ու ձևավորվել են անընդհատ փոխաշրջվող խոսակցական հայերենի՝ այդ ժամանակների միմյանցից տարբեր որակ ունեցող հիմքերի վրա: Եվ յուրաքանչյուր գրական լեզվի կենդանության ժամանակամիջոցում նրանցից ամեն մեկի գլխավոր դերը եղել է ժողովրդի հետ հաղորդակցվելը, ժողովրդին հասկանալի լինելը: Դեր, որը գրական երեք լեզուներն էլ կատարել են:

Երբեմն շփոթություն է առաջացնում նաև այն իրողությունը, որ հին գրական հայերենը գործածվում է 5-րդ դարի սկզբներից մինչև այսօր, այսինքն՝ հայոց երեք գրական լեզուների միմյանց փոխարինման ամբողջ ընթացքում: Պարզապես հայոց հին գրական լեզվով (որ 5-րդ դարում նոր



էր) Թարգմանվեցին քրիստոնեության զլիսավոր գրքերը, գրվեցին մի շարք դասական երկեր, այդ լեզուն սրբագործվեց ու, իրրեւ ամրացած ավանդույթ, ժողովրդին անհասկանալի դառնալուց հետո էլ շարունակեց գործածվել միջին ու նոր գրական հայերեններին զուգահեռ և այժմ էլ սահմանափակ գործածություն ունի:

Այս իրողությունը չհասկանալով՝ որոշ մտավորականներ կարծում են, թե հին գրական հայերենը կարող էր դառնալ նոր ու նորագույն ժամանակներում գործածվող համազգային գրական լեզու, եթե 1840—70 թվականներին չլիներ գրապայքար, և այդ պայքարում չհաղթեին նոր գրական հայերենի (աշխարհաբարի) կողմնակիցները (որոնք անվանվում են նաև *սոսադադիականներ*):

Այս պատկերացումն ունեցողները նաև աղետ են համարում հին գրական հայերենի հաստատումը նոր ժամանակներում՝ որպես ընդհանուր հայոց գրական լեզու։ Թեև դրանում աղետալի ոչինչ չկա, և եթե այսօր հայոց գրական լեզուն լիներ գրաբար կոչվածը, ու բոլոր հայերը հասկանային այն, խոսեին նույն որակի հայերենով, վատ չէր լինի։ Բայց դա պարզապես հակապատմական է, և, եթե գրաբարն այսօր ընդհանուր գործածական գրական լեզու չէ, պատճառը բնավ էլ գրապայքարում «աշխարհաբարյանների տարած հաղթանակը» չէ։

Իրողությունն այն է, որ գրապայքարը սկսվեց այն ժամանակ, երբ նոր գրական հայերենը՝ իբրև գրքերի, մամուլի, թատրոնի, գեղարվեստական, գիտական, կրոնական գրականության լեզու, վաղուց՝ շուրջ 150—200 տարի արդեն գործածվում էր։ Պարզապես հայ մտավորականության մի մասը (անկախ հասարակական-քաղաքական համոզումներից) այս հարցում իրատես չէր, ձգտում ուներ հին գրական հայերենը, իբրև ավելի մշակված և միասնական լեզու, դարձնել նոր ժամանակների ընդհանուր գրական հայերեն, իսկ մտավորականության մյուս մասը (դարձյալ անկախ հասարակական-քաղաքական համոզումներից) ավելի իրատես լինելով, այն կարծիքին էր, որ հին գրական լեզուն անհասկանալի է ժողովրդի և միայն ու միայն այդ պատճառով չի կարող ծառայել իբրև համազգային հաղորդակցության միջոց։ Սա էր

գրապայքարը, որ սոսկ կարծիքների բախում էր: Իսկ նոր գրական հայերենը իր երկու ճյուղով, իբրև հայոց գրական լեզու, իշխող ու համատարած դարձավ, և հին գրական հայերենի գործածության շրջանակն էլ լիովին փոքրացավ ոչ բնավ գրապայքարի պատճառով ու ոչ էլ այդ գրապայքար կոչվող վեճին մասնակից կողմերից մեկի տեսական հաղթանակի շնորհիվ (բանավիճային այդպիսի հաղթանակ իրականում չի էլ եղել), այլ ուղղակի պատմական զարգացման անողորմ ուժով իշխող դարձավ ժողովրդին հասկանալի լեզուն, ինչպես եղել է հին գիր ու գրականություն ունեցող մյուս ազգերի մեջ:

Վերջապես, լիովին անհիմք են նաև այն պատկերացումները, որոնց համաձայն նոր գրական հայերենը հիմնադրվել կամ ստեղծվել է այս կամ այն անձի կողմից: Անհատները չեն ստեղծում լեզու, նաև՝ գրական լեզու, իսկ այն հեղինակները (Խ. Արուսյան, Ս. Նազարյան, Մ. Նալբանդյան, Բաֆֆի, Խ. Պատկանյան), որոնցից մեկին կամ մյուսին հայ տարբեր բանասերներ հռչակել են իբրև նոր գրական հայերենի հիմնադիր կամ հորինող, սկսել են գործել այն ժամանակ (19-րդ դարի 30—50-ական թթ.), երբ արդեն հայոց նոր գրական լեզվով բազմաթիվ գրքեր հոգվածներ, պարբերականներ էին հրատարակվել:

«ԱՇԽԱՐՀԱՐԱՐ» ԱՆՎԱՆՈՒՄԸ

Աշխարհարար բառը, նախապես աշխարհարառ ձևով, սկսել է գործածվել 15-րդ դարից՝ աշխարհիկ, ընդհանուրին հասկանալի, խոսակցական կամ խոսակցականին մոտ գրավոր լեզվի նշանակությամբ: Ամիրդովլաթ Ամասիացին (15-րդ դար) աշխարհարար գործածել է այդ իմաստով: Զի բացառվում, որ ավելի վաղ գործածություններ էլ լինեն:

Այդպես աշխարհարառ կամ աշխարհարար կոչվել են և

⁵ Գրապայքարի մասին մանրամասն տե՛ս «Սովետական գրականություն», 1975, № 12, էջ 124—129:

⁶ Մանրամասն տե՛ս «Սովետական գրականություն», 1974, № 9, էջ 155—159:

այժմ էլ շատերի կողմից շարունակում են կոչվել հայոց լեզվի այն բոլոր արտահայտությունները, տարբերակները, որոնք առաջին գրական լեզուն չեն, այսինքն գրաբար չեն: Վերջինս, այն ժամանակաշրջանից, երբ այլևս անհասկանալի էր ընդհանուր հայությունը, սկսեց կոչվել գրաբառ, ապա՝ գրաբար, որ նշանակում էր գրի, նաև նեղ եկեղեցական լեզու՝ մատչելի շատ բերին, անհասկանալի ժողովրդին: Այդպես գոյացան աշխարհարար և գրաբար ըմբռնումները՝ իբրև հասկանալի, աշխարհիկ լեզվի և անհասկանալի, նեղ եկեղեցական ու գրոց լեզվի հակադրություն:

Հայ տարբեր հեղինակներ աշխարհարար անվանել են միջին գրական հայերենը, հայ բարբառները, միջբարբառային ժողովրդախոսակցական հայերենը, նոր գրական հայերենը, սրանց տարբերակները, այսինքն՝ այն, ինչ գրաբար չէ:

17—20-րդ դարերում փորձեր արվեցին նաև աշխարհարար անունը տալ միայն նոր գրական հայերենին (Հովհաննես Հոլով, Մխիթար Սեբաստացի, Խ. Աբովյան, Գ. Այվազովսկի, Ս. Նազարյան, Գ. Պատկանյան, Մ. Նալբանդյան, Խ. Պատկանյան, Ս. Մանդինյան, Մ. Զեբազ և ուրիշներ), սակայն այդ փորձերը եղան շատ անհետևողական, և նույն հեղինակը երբեմն աշխարհարար անվանել է թե՛ նոր գրական լեզուն, թե՛ բարբառը, թե՛ միջին գրական հայերենը:

Հայ ամենախոշոր լեզվաբանները՝ Ա. Այտրնյանը, Մ. Աբեղյանը, Հ. Աճառյանը, փորձեցին աշխարհարար անվանումը տալ միայն նոր գրական լեզվին, սակայն միևնույն է, այդ իմաստով աշխարհարար բառը չկայունացավ, և այսօր էլ գրավոր թե՛ բանավոր խոսքում այն հաճախ գործածում են առհասարակ հասկանալի, կենդանի հայերենի իմաստով: Սա լուրջ շփոթությունների պատճառ է դառնում, և վերացվում է գիտական սահմանագիծը՝ մի կողմից միջին ու նոր գրական հայերենների, մյուս կողմից՝ հայոց նոր գրական լեզվի և բարբառների ու ժողովրդախոսակցականի միջև, քանի որ աշխարհարար բառի հիշյալ իմաստով միջին հայերենն էլ աշխարհարար է եղել 12—16-րդ դարերում: Այս կերպ բովանդակությունը կորցնում է նաև գրաբար-աշխարհարար հակադրությունն ու տարբերակումը, քանի որ եթե աշխարհարար նշանակում է ընդհանուրին հասկանալի, ապա այն,

ինչ այսօր կոչվում է գրաբար, 5—11-րդ դարերում եղել է ընդհանուրին հասկանալի, ուստի՝ աշխարհաբար:

Սովորական խոսակցություններում աշխարհաբար բառն, անշուշտ, կարելի է գործածել նաև այդ տարածված իմաստով: Սակայն գիտական գրականության մեջ, թվում է, որ պետք է հնարավորին շափ խուսափել այդ բառի գործածությունից, իսկ օգտագործելու դեպքում անպայման նշել, թե իմաստային ինչ սահմանով է գործածվում:

Մենք այդ կերպ էլ վարվել ենք. նոր գրական հայերենն անվանել ենք հենց այդ անունով, նաև երբեք գրական հայերեն կամ հայոց նոր գրական լեզու: Աշխարհաբար բառը ջանացել ենք գործածել ավելի սակավ, ըստ անհրաժեշտության և միայն նույն նոր գրական հայերենի, նաև նրա առավել ժողովրդաբարբառային երանգ ունեցող, ինչպես և նոր շրջանի միջբարբառային խոսակցական հայերենի զգալիորեն գրականացված տարրերակների համար (իսկ միջբարբառային խոսակցականին, ինչպես և բարբառներին, միջին հայերենին, նրա տարրերակներին աշխարհաբար անունը երբեք չենք տալիս):

ՆՈՐ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՍՊԱՐԵԶ ԳԱՂԸ

Հին, միջին և նոր գրական հայերենների սահմանաբաժանային շրջաններում ստեղծված հայերեն բնագրերն ուսումնասիրելիս՝ երբեմն լուրջ դժվարություն է առաջանում գրաբար բնագրերը միջին հայերեն բնագրերից և միջին հայերենը նոր գրական հայերենից զանազանելու գործում:

Իրոք, երբեմն շատ դժվար է, եթե չասենք անհնար, մի կողմից հին ու միջին, մյուս կողմից միջին ու նոր գրական լեզուների միջև ստույգ սահմանագիծ դնել: Ու թվում է, թե ինչ-որ շափով միջին գրական լեզուն հնի, իսկ նորը միջինի շարունակությունն են:

Բացի սրանից, լեզվաբանները բերում են հին գրական հայերենով 5—11-րդ դարերում գրված երկերի լեզվից առան-

ձին տարրեր, որոնք միջին հայերենի կամ նույնիսկ նոր գրական լեզվի կառուցվածքային բաղադրիչներ են:

Բերում են նաև 14—16-րդ դարերի գրավոր հուշարձաններից առանձին ոչ մեծ հատվածներ՝ որակով մոտ նոր գրական հայերենին⁸:

Բայց ահա 17-րդ դարում (և միայն այդ դարից սկսած) ունենք ոչ թե առանձին փոքր հատվածներ, այլ մի շարք ամբողջական երկեր, նաև տպագրված գրքեր, որոնց լեզուն ակնհայտորեն ոչ թե միջին, այլ նոր գրական հայերենն է:

Այս է պատճառը, որ ներկայումս շատ լեզվագետներ հայոց նոր գրական լեզվի առաջին դարը համարում են XVII-ը⁹:

Նոր գրական հայերենի ձևավորման մասին մի ամբողջ շարք կարծիքներ են հայտնվել: Նրանցից մեկն այն է, որ նոր գրական լեզուն հնի աղավաղումն է: Վերն արդեն խոսվեց դրա անհիմն լինելու վերաբերյալ:

Մյուս կարծիքներից են հետևյալ երկուսը. 1) նոր գրական լեզուն հայոց բարբառների և հին գրական հայերենի համադրումից է գոյացել¹⁰, 2) նոր գրական հայերենը ժամանակի միջբարբառային խոսակցական հայոց լեզվից է գոյացել¹¹:

Նոր գրական հայերենի վաղ հուշարձանների մեր երկարամյա ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա ձևավորումը փոքր-ինչ ավելի բարդ երևույթ է եղել, քան սովորաբար ներկայացվել է:

Նոր գրական հայերենի կառուցվածքային հիմքը, լեզվամտածողական որակը, ինչպես ասել ենք, եղել է ժամանակի խոսակցական հայերենին: Դա կառուցվածքային որակն է 17-րդ դարի հայոց խոսակցական լեզվի՝ նրա ամբողջության մեջ (բարբառներ և այլն): Ինչպես ուսումնասիրությունն է

⁸ Նույն տեղում, էջ 441—445:

⁹ Տե՛ս, օրինակ, Գ. Սևակ, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Ե., 1948, էջ 37—39, Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969, էջ 49, Զ. Туманян, Очерки исторического развития падежных форм новоармянского языка, М., 1962, էջ 3—5:

¹⁰ Գ. Սևակ, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, էջ 143—146:

¹¹ Է. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Ե., 1962, էջ 344—345:

⁷ Հմմտ. Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Ե., 1951, էջ 440:

ցույց տալիս, այդ հիմքի ավելի որոշակի մասերն են կազմել մի քանի բարբառներ և մանավանդ խոսակցական միջբարբառային այն հայերենը, որ տարածված է եղել հասկայես հայ առևտրական, մասամբ էլ արհեստավորական և հոգևորական խավերի մեջ:

Նոր գրական լեզուն առաջ է եկել և՛ բարբառի¹², և՛ միջբարբառային խոսակցականի մեջ հին ու միջին գրական հայերենի լրացուցիչ լեզվատարրեր մուծելու շնորհիվ:

Մի շարք փաստեր, ինչպես, օրինակ, 17-րդ դարի նորջուղայական դուսանների որոշ խաղերի լեզուն, ցույց են տալիս, որ բարբառի մեջ հին ու միջին գրական հայերեն լեզուների որոշ տարրերի մուծումով գոյացել է նոր գրական հայերենին շատ մոտ լեզվական մակարդակ:

Ավելի շատ փաստեր ցույց են տալիս, որ 17-րդ դարում տարածված միջբարբառային խոսակցական հայերենն արդեն իր մեջ ունեցել է հին ու միջին գրական հայերեններին, նրանց գրավոր խոսքին հատուկ որոշ տարրեր, որոնցով այն եղել է միջբարբառային: Եվ ահա այդ խոսակցականը, օգտագործվելով իբրև գրավոր խոսք, հայոց գրական նախորդ լեզուների դարավոր ավանդույթի մղումով իր մեջ առել է հին ու միջին գրական հայերենների ավելի շատ հավելյալ տարրեր և այդպես գրականացել:

Ամեն դեպքում, առավել կարևոր և անառարկելի է մնում մի հանգամանք. նոր գրական հայերենի ասույարեզ գալու գործում նշանակալի դեր է կատարել հայոց խոսակցականում այն ժամանակ շեղած գրաբարյան բառաձևերի, բառերի, նըրանց ուղղագրության, նաև մի շարք քերականական ձևերի

¹² Կարևոր ենք համարում նշել, որ բոլոր բարբառները չեն, որ 17-րդ դարում մասնակցել են կամ հավասար չափով են մասնակցել նոր գրական հայերենի ձևավորմանը: Առայժմ մեզ ստույգ հայտնի է այդպիսի մեկ բարբառ՝ Ն. Զուղայինը, փաստեր կան նաև արարատյան, Կ. Պոլսի, Կարինի, գուցե Աղուլիսի բարբառների մասնակցության վերաբերյալ: 18-րդ դարից վճռական է դառնում մի կողմից Կ. Պոլսի, մյուս կողմից՝ արարատյան և ապա նաև Քփղիսի բարբառների դերը նոր գրական հայերենի մշակման ու կանոնավորման, նաև երկփեղկման գործում:

Մրա հետ միասին չպետք է մոռանալ, որ լեզվական որակով, կառուցվածքով 17—18-րդ դարերի բոլոր հայ բարբառները համապատասխանում էին նոր գրական լեզվին և հեռացած էին հնից:

գործածությունը՝ զրի առնվող կամ իբրև գրավոր խոսք օգտագործվել սկսող խոսակցական հայերենի մեջ:

17-րդ դարում ընդունված ուղղագրությամբ (գրաբարյան) սոսկ զրի առնել որևէ բարբառ կամ միջբարբառային խոսակցական, արդեն նշանակում էր ինչ-որ չափով գրականացնել այն: Օրինակ, տարբեր հայերի կողմից հոբի, ֆոբի, խոբի արտասանվող բառը խոսակցական լեզուն զրի առնող գրագետ մարդը գրում էր հոզի, և դրանով արդեն գրական լեզվի տարր գոյացնում: Նույն կերպ և մաբ կամ մոբ արտասանվող բառը մաբդ ձևով գրված՝ գրական լեզվի տարր է մուծում խոսակցականի մեջ:

Շատ զգալի է խոսակցական և բարբառային բառաձևերի փոխարեն հին գրական հայերենի բառաձևերի գործածությունը 17-րդ դարում՝ ընդհանուրին հասկանալի լեզվով շարադրող գրագետ անձանց կողմից: Օրինակ, հաբ, հեբ, խեբ, խոսակցական (նաև բարբառային) ձևերի կամ նրանցից մեկի փոխարեն, հայ գրավոր խոսքի ավանդույթին հմուտ այդ անձը պետք է որ գրեր հայբ. կամ բուբ, բիբ, բոբ ձևերի փոխարեն գրեր բոյբ, ապա՝ աղբաբ, ախպաբ, ախպեբ ձևերի փոխարեն՝ եղբայբ և այլն: Ու սովորաբար այդպես էլ եղել է:

Հին գրական հայերենի բառաձևերի շարքերը (օրինակ, հայբ, մայբ, այբ, եղբայբ, այս, այդ, այլ, այժ կամ աբիւն, ձիւն, իւղ, հաբիւր և այլն) կամ նրանց հիմնական մասը, 17-րդ դարում ոչ մի բարբառի հատուկ չլինելով, ընդհանուր հայկական էին, և այդ բառաձևերից մի քանիսը հնարավոր է, որ նախապես գործածական են եղել արդեն միջբարբառային խոսակցականում, որը հետո նույնարժեք ավելի շատ բառաձևերով համալրվել է, երբ արդեն գործածվել է իբրև գրավոր խոսք:

Հայերեն միջբարբառային խոսակցականը իբրև գրավոր հաղորդակցման միջոց գործածելով՝ գրագետ անձինք նրա մեջ պետք է մուծեին նաև զրաբարյան բառեր, գլխավորապես այնպիսիք, որոնց համարժեքները կամ խոսակցականում չկային, կամ արտահայտված էին գրավոր խոսքին խիստ անսովոր օտար բառերով և կամ պարզապես անհաջող էին թրվում: Այդ կերպ գրավոր գործածվող խոսակցականի մեջ էին մտնում գրաբարարնույթ այնպիսի բառեր, ինչպես, ասենք,

համայն, միթէ, զղջալ, շարագործութիւն, գլխիկօր, քերահատաութիւն, սասանել, նախահայր, սուսեր, որոգայթ, ախոյան, այլազգի, տրտմութիւն և այլն: Իսկ եթէ սրանց որոշ մասը խոսակցականում երբեմն գործածվում էր, ապա գրովո՞ղ «խոսակցականում» ամրակայվում էր:

Գրավոր (հին և միջին հայերեն) խոսքի ավանդույթով գրովո՞ղ նոր խոսակցականի մեջ էին թափանցում նաև այլևս գրքային դարձած քերականական շատ ձևեր՝ քշնամիք, քաճալ, մալկոսն, ձիատօր, դստեր, կայսեր, որդոյն, քերանոյ, իւրեանց, սուսերօք, շարշարանաց, եկեղեցոյն, արբուցանելոյ, արարեմ, իջանեն, նուագեցաւ, սասանեցան, կու անկանին և այլն:

Հայ գրավոր խոսքի ավանդույթով գրական, կիրք ընկալվող վերահիշյալ բնույթի տարրերը զգալի գրական գունավորում էին տալիս միջբարբառային խոսակցականին կամ բարբառին, ապա նրանց մի մասը, նոր լեզվում ամրակայվելով, նրա մեջ սկսում էր ընկալվել որպէս ավանդական և դառնում էր նոր գրական հայերենի կանոնի ու զգացողության բաղկացուցիչ մաս:

Պետք է նշենք, որ գլխավորապէս հին գրական հայերենը նոր գրական լեզվին ներգործուն կերպով ուղեկցեց նաև 18, 19, 20-րդ դարերում: Հին գրական հայերենի բառային ու քերականական շատ ձևեր, բառեր ու արտահայտութիւններ, որոնք հաճախ խորթացած էին կամ ներհակ կենդանի, խոսակցական հայերենի բառային ու քերականական ձևերի համակարգին, ոչ միայն ամրակայվեցին նոր գրական հայերենում իբրև նրա ավանդական ու անբալտելի բաղադրիչներ, այլև գրաբարյան լեզվատարրերի բուն թափանցումը նոր գրական լեզվի մեջ, որ տեղի էր ունենում վերջինիս գործածման ամենավաղ շրջանում՝ 17-րդ դարում, նույնպէս դարձավ ավանդական հատկանիշ նոր գրական հայերենի, նրա հետագա զարգացման համար:

Եթէ առաջին գրական լեզվի տարրերը երրորդ գրական հայերենում մի կողմից լեզվական համահայկականութուն էին առաջացնում, որ շատ կարևոր է համազգային (կենտրոնածիղ) գրական լեզվի համար, մյուս կողմից էլ հեռացնում

էին նոր գրական հայերենը կենդանի խոսակցականից, արհեստականութուն մուծում նրա մեջ:

Միաժամանակ, գրաբարի ավելի քիչ տարրեր իր մեջ առած նոր գրական լեզվի տարբերակները, ավելի մոտ էին մրնում խոսակցական կենդանի հայերենին, անշուշտ, նրա այս կամ այն տեղային տարբերակին կամ բարբառին ու հենց դրանով մեծ մասամբ հեռանում համահայկական միասնական լեզվի մակարդակից (դառնում կենտրոնախույս):

* * *

Նոր գրական հայերենի ամենավաղ շրջանի հուշարձանները մի քանի լեզվական տարբերակներով են ներկայացված:

Նախ, 17-րդ դարում ունենք նոր գրական լեզվի գրավոր խոսքում և բանավոր բանաստեղծության մեջ մշակված տարբերակներ: Այդ վերջինը, որ առնչված է նորգուսանական արվեստի զարգացման հետ, մենք անվանում ենք գուսանական աշխարհաբար. այն գուցե լիակատար իմաստով նոր գրական հայերեն չէ, բայց շատ մոտ է նրան: Ինչ վերաբերում է նոր լեզվի զուտ գրային տարբերակին, ապա այն նույնպէս իր հերթին ունի ենթատարբերակներ, որոնց զանազանող մի շարք առանձնահատկութիւններից, թերևս, զրլխավորը յուրաքանչյուրի մեջ հին ու միջին գրական հայերենների հատուկ տարրերի առկայության տոկոսն է:

Գուսանական աշխարհաբարը, վերն ասված պատճառով, ավելի տեղային լեզվական երանգ է ունեցել (նորջուղայական), իսկ գրավոր մշակվող նոր գրական հայերենը 17-րդ դարում լեզվական իմաստով միասնական էր՝ առանց արևելահայ և արևմտահայ բաժանումի ու ենթաբաժանումների:

ՆՈՐ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԸ

Ինչպէս ասվեց, խոսակցական հայերենի, նրա հիմնական արտահայտութիւնը հանդիսացող հայ բարբառների շատ թիւ քիչ վստահելի գրանցումներ (այն էլ հատուկենտ) ունենք 17—18-րդ դարերից, այսինքն՝ այն նույն շրջանից, որի ըն-

թացքում ստեղծվել են նոր գրական հայերենի վաղ նմուշները:

Կարող ենք 17-րդ դարը համարել ոչ միայն երրորդ գրական հայերենի, այլ նաև նոր շրջանի հայ բարբառների առաջին դար: Սակայն, եթե նոր գրական լեզվի համար դա բավական ստույգ բնորոշում է, ապա նոր շրջանի բարբառների համար այդ սահմանագծումը պայմանական է, քանի որ հայ բարբառների փոխաշրջումը դարերի ընթացքում կատարվել է դանդաղ և, հավանաբար, առանց որակային թռիչքների. կառուցվածքային մի որակից մյուսը կատարված անցումները բարբառների մեջ շատ հարթ ու լիովին աննկատ պետք է տեղի ունեցած լինեն, ուրեմն և հայ բարբառների լեզվակառուցվածքային վիճակը, տարբերությունների բնույթը կարող էր գոյություն ունենալ նաև 16-րդ դարում ու ավելի առաջ: Քանի որ այս մասին ստույգ տեղեկություններ չկան, հեռու գնացող ենթադրություններով հրապուրվելն անիմաստ է: Եվ այսպես, հայ բարբառների դարգացման նոր շրջանը 17-րդ դարից սկսելը սոսկ պայմանական մի դրույթ է:

Միաժամանակ վստահ կարելի է ասել, որ 17-րդ դարում հայ բարբառներին հատուկ լեզվակառուցվածքային վիճակը, նրանց միջև եղած տարբերությունների բնույթն ու չափը և տարածքային տեղաբաշխումը հիմնականում պահպանվեց մինչև 1915 թվականը:

Հակիրճ ներկայացնում ենք մեր պատկերացումը հայ բարբառների գլխավոր խմբերի ու նրանց մի քանի տարբերությունների վերաբերյալ՝ հետագա շարադրանքը պարզ դարձնելու համար:

Բոլոր հայ բարբառներն ամենից առաջ և առավել ակերնհայտ բաժանվում են երկու հիմնական խմբերի՝ արևմտյան և արևելյան¹³:

Այս երկու բարբառախմբերը միմյանցից բաժանող աշխարհագրական սահմանը մոտավորապես համընկնում է այն

սահմանագծերին, որոնք 591 և 1639 թթ. Հայաստանը երկու՝ արևելյան և արևմտյան մասերի բաժանեցին և որով ստեղծվել են այժմյան Արևելյան ու Արևմտյան Հայաստան ըմբռնումները:

Հիշյալ գծից արևելք ու արևմուտք ընկած տարածքներում մինչև 1915—22 թվականները տեղաբաշխված հայության բարբառները լեզվական բնույթի տեսակետից տարբերվում են, ներկայանում են իբրև խոսակցական հայերենի երկու գլխավոր տարբերակներ կամ խմբեր:

Իհարկե, այդ գիծը բացարձակ ճշգրտությամբ չի բաժանում արևելյան և արևմտյան բարբառները, արևմտյան բարբառների որոշ հատվածներ ընկնում են գծից արևելք և հակառակը, բայց սրանք շատ մասնավոր երևույթներ են. հիմնականում օտար տիրապետողների կողմից բնութայամբ սահմանված այդ գիծը հայ բարբառների երկու խմբերը բաժանող սահմանն է դարձել: Այդ գծից դեպի արևմուտք եղել են Կարինի, Համշենի, Խոտորչրի, Սեբաստիայի, Կ. Պոլսի, Խարբերդի, Ակնի, Մուշի, Սասունի, Տիգրանակերտի, Վանի, Սվեգիայի, Հաջրնի, Զեյթունի, Բեյլանի և այլ վայրերի բարբառները (շուրջ՝ 30): Այդ գծից դեպի արևելք գտնվել են մեծ մասամբ այժմ էլ գտնվում են արաբատյան, նոր Զուղայի (կամ Զուղայի), Արցախ-Սյունիքի (Ղարաբաղի), Շամախիի, Ագուլիսի, Մեղրու, Խոյի (Ուրմիայի), Աստրախանի և այլ բարբառներ (շուրջ՝ 15):

Հայ բարբառների աշխարհագրական այս տեղաբաշխումը տարբեր ժամանակներում մասնակիորեն խախտվել է բնակչության տեղափոխումների պատճառով. օրինակ, Արցախից մարդիկ են գնացել Կ. Պոլսի կողմերը կամ Խոյի, Մուշի, Սասունի շրջակայքից մարդիկ են վերաբնակվել Արաբատյան դաշտում, Արագածոտնում, Վայոց ձորում և այլն, կամ Անիի շրջակայքից ու Մեծ Հայքի այլ վայրերից մարդիկ գաղթել են Ղրիմ, Գալիցիա, Առդեալ (Տրանսիլվանիա) և այլն: Գաղթողները մեծ մասամբ իրենց հետ տարել են տեղական բարբառը:

Այս ամենով հանդերձ, արևելյան և արևմտյան բարբառների աշխարհագրական տեղաբաշխումը մինչև 1915 թ. էապես մնում էր անխախտ, մինչ այդ եղած տեղափոխում-

¹³ Այս բաժանումն ընդունել են հայ բանասերներից շատերը (այդ թվում՝ Լ. Այտրեյանը, Թ. Պատկանյանը, Գ. Զահուկյանը): Առավել հանգամանալից այդ մասին տես Գ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:

ները մասնավոր շեղումների առիթ էին տվել կամ նման առիթ չէին էլ տվել (օրինակ, խոյնցինները, գաղթելով Արարատյան դաշտ կամ Վայոց ձոր, մնացին հիշյալ գծից արևելք, անցիններն էլ Գալիցիայում կամ այլուր մնացին այդ գծից արևմուտք)։

1915—1922 թթ. հայ բարբառների աշխարհագրական այս տեղաբաշխումը խաթարվեց գլխավորապես Հայաստանի արևմտյան մասի հայազրկման պատճառով։

Այս երկու բարբառախմբերի մեջ կան մի շարք լեզվական տարբերություններ, որոնցից առնվազն մեկը համընդհանուր է, այսինքն՝ տարբերիչ հատկանիշ է բոլոր արևելյան և արևմտյան բարբառների համար։ Դա բայի ներկա և անցյալ անկատար ժամանակների կազմության երկու տարբեր ձևերի հակադրությունն է։

Արևմտյան բարբառներում բայի ներկա և անցյալ անկատար ժամանակները համադրական են, այսինքն՝ բայի դեմքը, թիվը, ժամանակը ցույց տվող մասնիկները անշարժ կցված են բային ու սրա հետ մի ամբողջություն են կազմում, ինչպես՝ կսիրեմ, կսիրես, կսիրենք, կսիրեի և այլն։ Գրեթե բոլոր այս բարբառներում այդ նույն ժամանակաձևերը սկզբից կամ վերջից ունենում են եղանակիչ մասնիկներ՝ կ, գ, կր, կու, գու, գը, կա, գա, կի, գե, գո, հայ և այլն։ Կա նաև անմասնիկ բարբառ (Խոտորչուրին)։

Այս մասնիկների բաղմազանությունը (կամ բացակայությունը) հարցի էությունը չի փոխում. ներկայի և անկատարի ձևերը մնում են համադրական (վերն ասված իմաստով)։

Արևելյան բարբառներում բայի ներկա և անց. անկատար ժամանակների ձևերը հարադրական են (կամ վերլուծական), այսինքն՝ բայաձևը բաղկացած է երկու մասից՝ անջատ բայահիմքից (կախյալ դերբայ) և դեմք, թիվ ու ժամանակ արտահայտող շարժական մասնիկից (օժանդակ բայ), որ կարող է դրվել անջատ բայահիմքից նախադաս և ետադաս. օրինակ՝ սիրւմ եմ, սիրւմ ես, սիրւմ ա, սիրւմ ենք, սիրւմ ի, սիրւմ ինք և այլն (նույնը՝ ես եմ սիրւմ, մենք ենք սիրւմ և այլն), նաև՝ սիրւմ ըմ, սիրես իմ..., սիրես եմ..., սիրես ըմ..., սիրել իմ.... նաև՝ տեսման ամ, տեսման աս... և այլն։ Որքան էլ տարբեր են անջատ բայահիմքերը (ըմ, ում, իս,

—ս, —լ, —ման վերջույթներ) և դեմք, թիվ ու ժամանակ ցույց տվող մասնիկները (ամ..., եմ..., ըմ..., իմ..., աս..., ես..., ա..., է..., ենք..., ի... և այլն), էությունը մեկ է՝ բայի ներկա ու անց. անկատար ժամանակները հարադրական են (վերն ասված իմաստով)։ Բացառություն է կազմում Արդվի-նի բարբառը, որ արևմտյան բարբառների մի շարք հատկանիշներ ունի, բայց ներկան ու անց. անկատարը հարադրական են. սիրելիս իմ (եմ)... մնալիս իմ (եմ)... Այս բարբառն, ըստ երևույթին, միջին դիրք ունի արևմտյան և արևելյան բարբառների միջև։ Միջին դիրքերում է, որոշ արևելյան թեթևով, Թփղիսի բարբառը, որ ներկան ու անց. կատարյալը և՛ համադրական (կու սիրեմ), և՛ հարադրական (սիրում եմ) ձևերով է կազմում։ Ինչպես ասվածից երևաց, մենք չենք ընդունում հայ բարբառները կ, ում, ս, լ, հայ, գա և այլ ճյուղերի բաժանելու սկզբունքը, քանի որ այն սքոզում է հայ բարբառների երկու հիմնական խմբավորումների գոյությունը, որն ամենից էականն է հայ բարբառների դասակարգման գործում։

Արևելյան և արևմտյան բարբառները միմյանցից բաժանող մյուս հատկանիշները համընդհանուր չեն, այսինքն՝ երկու բարբառախմբերի անխտիր բոլոր բարբառների համար չէ, որ տարբերիչ են։ Այդ հատկանիշներից հիշենք մի քանիսը։

Արևմտյան բարբառներին բնորոշ է էական բայի ներկա ժամանակի եղակի երրորդ դեմքի է ձևը, որ և հատուկ է հին ու միջին գրական հայերեններին, ինչպես՝ ֆաղաֆ է, շուն է, սեղան է և այլն։ Արևելյան բարբառների մեծագույն մասը այդ է-ի դիմաց ունի ա, ինչպես ֆաղաֆ ա, շուն ա, սեղան ա և այլն։ Թեև արևելյան որոշ խոսվածքներում առկա է է-ն, բայց ամեն պարագայի, էական՝ բայի եղակի երրորդ դեմքի այդ ա ձևը խստորեն արևելահայ բարբառախմբի հատկանիշ է, խորթ արևմտյան բոլոր բարբառներին։ Այնուհետև, արևելյան բարբառների մեծագույն մասում կա ներգոյական հոլով՝ ում կամ ըմ մասնիկով կազմվող՝ գեղըմ (ը), ֆաղաֆըմ (ը), նաև ֆաղաֆում (ը) և այլն։ Արևմտյան բարբառներում ներգոյական հոլով չկա (բացառություն է Վանի բարբառը), և համապատասխան իմաստը այլ միջոցներով է արտահայտվում (օրինակ, մեջ բառի օգնությամբ՝ քաղքի(ն)

մեջ), թեև արևելյան բարբառներից հոյի (ներառյալ Ուր-միայի, Մարադայի և այլն) բարբառը շունի ներգոյական հո-լով, միևնույն է, այդ հոլովը արևելյան բարբառների հատ-կանիշ է և խորթ է արևմտյան բարբառներին:

Այնուհետև, կարևոր է բացատրական հոլովի կազմությունը. արևմտյան գրեթե բոլոր բարբառներն այն կազմում են է մասնիկով, ինչպես հին ու միջին գրական հայերեններում էր՝ տունէ(ն), ծովէ(ն), ձիէ(ն), ֆեզնէ և այլն: Արևելյան բար-բառների զգալի մասում բացատրական կազմում է ց (ից, ուց) մասնիկով՝ տընից, ծովից, ձիուց, ֆեզանից և այլն: Ու թեև արևելյան որոշ բարբառներում բացատրական կազմում է է-ով (հոյ) կամ է-ի տարբերակ ա-ով (օրինակ, Արցախի բարբառում տանա(ն), ֆեզանա), արևմտյան մի բարբառում էլ (Վանի) կա և՛ է, և՛ ց մասնիկներով բացատրական, միև-նույն է, ց (ից, ուց)-ով բացատրականը մնում է իբրև արևել-յան բարբառներ հատկանշող ձև, խորթ արևմտյան բարբառ-ներին:

Բառաձևային տարբերություններից է, օրինակ, այն, որ արևելյան բարբառներում եղած էս, էդ, էն, էլ, հէր, մէր... ձևաշարքի դիմաց արևմտյան բարբառների մեծ մասում կա աս, ադ, աճ, ալ, հար, մար... ձևաշարքը: Արևմտյան որոշ բարբառներում ու խոսվածքներում նույնպես ունենք էս, էդ, էն, մէր ձևաշարքը կամ նրա առանձին տարրերը, բայց արևել-յան բարբառներում, աս, ադ, աճ, հար, մար... ձևաշարքը բացակայում է, և այն զուտ արևմտյան բարբառախմբի հատ-կանիշ է մնում:

Կարելի է հիշել նաև բաղաձայն պայթականների (ու կի-սաշփականների) արևելահայ-արևմտահայ տարբերություն-ներից. օրինակ, մի շարք բառերի մեջ արևելահայ բարբառ-ների զգալի մասում արտասանվող ք, տ, կ-ի դիմաց արև-մրտյան բարբառներն ունեն Բ, Դ, Գ. ինչպես pap-bab (պապ բառը), pat-bad (պատ բառը), tun-dun, katu-gadu և այլն: Բայց արևելյան ու արևմտյան բարբառները տարբերակելիս հնչյունաբանական այս տարբերությունը պետք է զգուշորեն հաշվի առնել, քանի որ այն հետևողական չէ, ապա մի շարք փոփոխակային դրսևորումներ ունի: Հիշենք, որ արև-մրտյան բարբառներին (մի մասին) բնորոշ է նաև արևել-

յան բարբառների ձայնեղ Բ, Դ, Գ-ի դիմաց շնչեղ խուլեր ու-նենալ, ինչպես քերան-փերան, գորտ-ֆորտ և այլն:

Արևելյան և արևմտյան բարբառների այս մի քանի տար-բերություններին մենք անդրադառնալու ենք հետագա շա-րադրանքում՝ 17—18-րդ դարերի նոր գրական հայերենի ո-րոշ հուշարձանների լեզուն վերլուծելիս: Մի քանի այլ տար-բերություններ էլ այժմ չենք թվարկում, կնշենք ըստ հարկի, շարադրանքի համապատասխան տեղում:

17-ԻՊ ԴԱՐ

17-ԻՊ ԴԱՐԻ ԳՈՒՍԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՐԱՐԸ

17-րդ դարում Ն. Զուղայի տնտեսական ու մշակութային ծաղկման դրսևորումներից մեկն էլ հայոց նոր գուսանական (աշուղական) արվեստի զարգացումն էր: Ինչպես հայտնի է՝ Ն. Զուղայում 17-րդ դարի առաջին կեսից սկսած վերելք ապրեց հայոց դպրոցը, կերպարվեստը, ստեղծվեց հայկական տպարան և այլն: Գեղարվեստական գրականությունը մեծ մասամբ ներկայացված էր նոր գուսանական արվեստով, որը հիմնականում ստեղծվում էր տեղի բարբառով, միայն մերթ-մերթ, հատկապես կրոնական երգերում, բարբառը «մեղմվում էր», հագեցվում գրաբարյան լեզվատարրերով, և զոյանում էր նոր գրական հայերենին շատ մոտ լեզվական որակ¹⁴:

¹⁴ 17-րդ դարի նորջուղայական աշխարհաբար շափածոյի պահպանված նմուշների հարցում բանասիրության մեջ որոշ թյուրիմացություններ են տեղ գտել: Օրինակ, «Ողբ շուղայեցոց» անթվակիր երգը («Ափսոս թեզ հայոց խեղճիկ ժողովուրդ») Գալուստ Երմազանյանի անճիշտ տեղեկատվության հիման վրա համարվել է «Արևելյան աշխարհաբարով գեղարվեստական գրականության ամենահին նմուշ»: Մինչդեռ պարզվում է, որ այն ստեղծվել է 19-րդ դարի 40-ական թթ., հավանաբար իր՝ Երմազանյանի կողմից: Կամ՝ 17-րդ դարում ապրած գուսան էգագի ստեղծագործությունն է համարվել «Ասի, ախլի» խաղը, որն իրականում առնչություն չունի նորջուղայեցի այդ գուսանի հետ և հորինվել է շատ ավելի ուշ: Եվ կամ՝ 17—18-րդ դարերի բանաստեղծ Նաղաշ Հովնաթանին է վերագրվել: «Գատվական եղբայրներ» տալը, որն իրականում այդ բանաստեղծին էր չէ: Միայն զեպոսում Նաղաշ Հովնաթանինն է համարվել Ստեփանոս Գաշտեցու «Զուղայեցոց հայերէն պարզ լեզուն այս երգիծական ոտանավորը, գրված Ն. Զուղայի բարբառով, և ըստ այդմ հայոց լեզվի պատմության վերաբերյալ հետազոտություններ են արվել (այս անհշտությունների մասին տե՛ս «Բաները Երեանի համալսարանի», 1971, № 1, էջ 63—68, «Երաբեր հասարակական գիտություններ», 1972, № 1, էջ 49—50, «Արևելահայ բանաստեղծությունների լեզվի պատմություն», Ե., 1978, էջ 33—56):

17-րդ դարից պահպանվել է երկու նորջուղայեցի գուսաններ՝ էգագի (մոտ 1650—1734) և Արզունու (մոտ 1650—1750) ստեղծագործությունների մի փոքր մասը, որի մեջ կա մեկ-երկու կրոնական խաղ: Այս վերջիններում է, որ Նոր Զուղայի բարբառն են մուծվել զգալի քանակով գրաբարյան կամ գրաբարակերպ բառեր ու ձևեր, ինչպես՝ խոնարհ, հաշակեմ, ընդդէմ, զղջում, մարմին, բողոքիմ, այսօր, ամենայն, ողջ, ձեռոք, ոտոք, մեղաւորաց, օրինաց, այլոց, զիս, գտանեմ և այլն, որով և բարբառը գրականացված է:

Ստորև բերում ենք երկու նմուշ էգագի խաղերից. առաջինը՝ հորինված նրա շափածոյին առավել բնորոշ լեզվով՝ նոր Զուղայի բարբառով, մյուսը՝ գրականացված, որ արդեն գուսանական աշխարհաբարն է¹⁵:

Դուրիս փիանդագ գծեմ,
Մին ճազանի ետ այ գովման,
Սիրել այ, ձեռ չի վեր առման,
Նա ինձի խամար այ գովման:
Գայ գովման այ, գայ յետ դառման,
Ինձ վերայ մնար այ բառման,
Աշխարհն խոյում, հոգիս առման,
Բարկացած մին բարն այ գովման:
Ես բանել ամ, դու չվան աս,
Ամենայն դարդս չի հիմանաս,
Խմել աս մաստ ու մաստանաս,
Աշխարհ խումար այ գովման¹⁶:

Սա Ն. Զուղայի բարբառն է միայն գրաբարյան-գրքային լեզվատարրերի աննշան հավելումներով (բերված օրինակում՝ վերայ, ամենայն, բարկացած): Սա էգագի խոսքի սովորական բնույթն է: Պահպանված խաղերից մեկում («Մեղաց վերնագրով»), որ բովանդակությամբ կրոնական է, բարբառի գրականացումն ավելի զգալի է.

Վայ իմ յետին օրէն դատաստանին,
Մեղայ Բեզ, Տէր Աստուած, մեղաւոր եմ ես,
Փռման եմ ես իմ աբած բանէն,
Մեղա՛ Բեզ, Տէր Աստուած, մեղաւոր եմ ես:
Մեղես շատացել ա քան զգետ ու ծով,
Մեղաց ծով ամ դարձել ոստով ու ճղկով,

¹⁵ Բնագրերից բերված այս և մյուս օրինակներում պահպանում ենք օգտագործած աղբյուրի ուղղագրությունը:

¹⁶ Հ. Սահակյան, Հայ աշուղներ. XVII—XVIII դարեր, Ե., 1961, էջ 80:

Մեղուցեալ եմ ես ձեռքով ու ոտով,
Մեղա՛յ ՔԼԳ, Տէր Աստուած, մեղաւոր եմ ես¹⁷:

Օրինակում էական բայի եղակի երկրորդ դեմքի նորջուղայական բնորոշ ամ-ի փոխարեն հինգ անգամ գրաբարյան-գրական եմ-ն է գործածված, թեև ամ-ի գործածությունն էլ կա. բարբառային մյուս ձևերի կողքին ունենք գրական խոսքի նաև ուրիշ տարրեր, ինչպես՝ ոստ, «Վայ իմ յետին օրէն...», «Քան զգետ», մեղաց, մեղուցեալ և այլն:

Սա արդեն ոչ թե բարբառ է, այլ գուսանական աշխարհաբարի նախնական մի տարրերակ՝ մոտ նոր գրական հայերենին:

Ն. Զուղայի գուսանական աշխարհաբարի մեջ հին գրական հայերենի տարրերը չեն փոխել նրա արևելահայ բնույթը (դեր է կատարել նաև արևմտահայ թեքում ունեցող միջին հայերենի տարրերի բացակայությունը կամ աննշան առկայությունն այդ լեզվում):

Նորջուղայական արևելյան աշխարհաբարը, բացի գուսանական արվեստից, ինչպես կտեսնենք, գործածվեց նաև գրավոր ստեղծվող երկերում, այն լրագրի լեզու դարձավ 18-րդ դարի վերջերում, առավել զարգացման հասավ 19-րդ դարի առաջին կեսում:

Առայժմ եղած փաստերը ցույց են տալիս, որ 17-րդ դարում գրական արևելահայերենը առանձին նմուշներով, եթե կարելի է ասել, սաղմնային վիճակում, երևան է եկել Ն. Զուղայի բարբառի հիմքով, ապա 18-րդ դարից նորջուղայական գրական արևելահայերենին զուգահեռ սկսել է ձևավորվել կովկասյան արևելահայերենը հիմնված արարատյան բարբառի վրա, մասամբ էլ Թփղիսի բարբառի ազդեցությամբ: Ապա 19-րդ դարի երկրորդ կեսին նորջուղայական աշխարհաբարն անկում է ապրել, ասպարեզից դուրս եկել, և գրական արևելահայերենի արարատյան տարրերակը, հաղթանակելով, մենաշնորհ է ձեռք բերել (արևելահայոց մեջ):

Ամեն դեպքում, Ն. Զուղայի գուսանական աշխարհաբարի հանդես գալը 17-րդ դարում նոր գրական հայերենի զարգացման մայրուղին չէր, այլ մասնավոր երևույթ. նախ այն միայն տեղական արժեք ուներ և ոչ համահայկական և ապա

նույնիսկ այն մշակող նորջուղայացի գուսանները հազվադեպ էին դիմում լեզվական այդ որակին, քանի որ գերազանցապես ստեղծագործում էին տեղական բարբառով:

Ինչ վերաբերում է Ն. Զուղայի բարբառի վրա ձևավորվող գրական լեզվին, ապա այն ևս թե՛ 17-րդ դարում, թե՛ հետագայում գործածվեց միայն նորջուղայացիների սահմանափակ շրջանում (Ն. Զուղա, Հնդկաստան, Հնդկաստան և այլն):

Ն. Զուղայի գուսանական աշխարհաբարի հետ միևնույն 17-րդ դարում գրքերի մեջ ավելի լայն շափով գործածվում էր նոր գրական հայերենի գրավոր տարրերակը, և այդ զարգացումն էր հայոց երրորդ գրական լեզվի մայրուղին:

Դա ինչ-որ չափով շարունակությունն էր երկրորդ գրական հայերենի, թեև միաժամանակ նոր լեզվակառուցվածքային որակ էր՝ բարձրացած տվյալ ժամանակի խոսակցական հայերենի բնոճանուր հիմքի վրա, նրանից սնվող:

17-ՐԴ ԴԱՐԻ ՆՈՐ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԸ ԳՐԱՎՈՐ ՈՒ ՏՊԱԳԻՐ ԽՈՍԷԻ ՄԵՁ

Զայեթ է մոռանալ, որ 17-րդ դարում, ինչպես և հաջորդ 150 տարիների ընթացքում հայոց գրավոր հաղորդակցության մեջ՝ ձեռագիր ու տպագիր գրքերում, ապա և որոշ պարբերականներում, իշխողը հին գրական հայերենն էր: Հույսը չէր մարել՝ այդ լեզուն ժողովրդին հասկանալի դարձնելու և լայնորեն գործածելու:

Նոր գրական հայերենը, եթե կարելի է ասել, տարբրայնորեն, ըստ հրատապ պահանջների և այդ շրջանում հայության հոգևոր ու մշակութային կենտրոնի՝ էջմիածնի կողմից հավանություն չստացած էր գործածվում ու մշակվում, բայց և հետևողականորեն ու համառորեն ընդլայնվում էին նրա գործածությունն սահմանները, առաջ էր ընթանում նրա կանոնավորումն ու զարգացումը:

17-րդ դարում, հատկապես նրա երկրորդ կեսում միջբարբառային բնոճանուր խոսակցական հայերենը ծավալվելու և որոշակի զարգացում ապրելու լուրջ ազդակ ուներ: Այդ ազդակը վաճառաշատ Նոր Զուղայի ծաղկումն էր և դրա հետ

¹⁷ Նույն տեղում, էջ 84:

ընդհանրապես հայ վաճառականության ծաղկումը, որն այդ ժամանակ իր գագաթնակետին հասավ: Նորջուղացի, ագուլիցի, կեսարացի, պոլսեցի, երևանցի և այլ վայրերի հայ վաճառականները, որ հեղեղում էին Եվրոպայի ու Ասիայի շատ քաղաքներ ու շուկաներ և Արևելքի ու Արևմուտքի միջև առևտրական կապ պահպանող գլխավոր տարրն էին դառնում, անհրաժեշտություն ունեին մի ընդհանուր, հասկանալի հայերենի: Այժմ մենք 17-րդ դարի հայերեն միջբարբառային խոսակցականի մասին կարող ենք դատել միայն պահպանված գրավոր հուշարձաններից, որոնք կենդանի խոսքի ճիշտ պատկերը տալ չեն կարող: Համենայն դեպս, նշաններ կան, որ այն շրջանում համահայկական խոսակցական լեզվի ձևավորման ուժեղ միտում է եղել, թեև հավանաբար այն անհրաժեշտ չափով չէ, որ իրականացվել է:

Ինչ էլ եղած լինի, 17-րդ դարի միջբարբառային խոսակցական հայերենը (գուցե՝ վաճառականական խոսակցականը) կամ նրա ինչ-որ տարրերակը իր վճռական դերն է կատարել գրավոր խոսքում նոր գրական հայերենի ձևավորման գործում:

17-րդ դարում հայ գրագետները, մասամբ վաճառականների խնդրանքով, մասամբ իրենց նախաձեռնությամբ, փորձում են գրքեր գրել կամ թարգմանել հատկապես հայ վաճառականների համար: Բայց ի՞նչ լեզվով էր հնարավոր ստեղծել այդ գրքերը: Տառաճանաչ, երբեմն որոշ գրագիտություն ունեցող հայ վաճառականները գրաբար չգիտեին կամ վատ գիտեին: Մյուս կողմից, եթե նրանց հասցեագրված գրքերը ստեղծվեին որևէ գավառաբարբառով (ասենք, Ագուլիսի կամ Ն. Զուղայի), այն բավարար չափով հասկանալի չէր լինի այլ վայրերի հայ վաճառականներին: Ուստի և ամենից հարմարը տարերայնորեն ձևավորվող խոսակցական միջբարբառային հայերենի օգտագործումն էր: Իսկ այդ խոսակցականը, ինչպես ասել ենք, գրավոր, մանավանդ տպագիր արտահայտություն ստանալու դեպքում անխուսափելիորեն պետք է գրականացվեր, նկատելի չափով ենթարկվեր եղած գրավոր խոսքի ավանդներին, այսինքն՝ լրացուցիչ կերպով հագեցվեր հին ու միջին հայերենների տարրերով:

Կարևոր էր նաև, թե նոր լեզվով գրող կամ թարգմանող

անձը որտեղացի էր, որ բարբառի ներկայացուցիչ: Վաղ շրջանի նոր գրական հայերենը ձևաբանական ու բառապաշարային (գլխավորապես՝ բառաձևային) տեսակետից այնքան տարբերաց ու անկայուն էր, որ նրա օգտագործման ժամանակ չէր կարող դեր չխաղալ հեղինակի կամ թարգմանչի մայրենի բարբառը:

Աշխարհաբար առաջին գիրքը տպագրվել է Մարսելում, 1675 թվականին, այն կոչվում է «Արհեստ համարողութեան», թվաբանական-հաշվապահական բովանդակություն ունի, ձեռնարկ է վաճառականների համար:

Գիրքը նշված է Գարեգին Զարբհանալյանի «Հայկական մատենագիտության» մեջ¹⁸, թեև չի ասված, թե գրքի լեզուն ինչպիսին է:

Արսեն Ղազիկյանը, իր մատենագիտության մեջ ներկայացնելով գրքի հանգամանալից նկարագրությունը, ավելացրել է՝ «Փոքրագիր ու մանրագիր գրքույկ մը ժամանակին աշխարհաբարով»¹⁹:

Կարելի էր սպասել, որ գրքույկը արժանանար հայոց լեզվի պատմությամբ զբաղվող բանասերների ուշադրությանը, սակայն այդպես չի եղել:

Գրիգոր Վանցյանն իր «Պատմական քերականության» մեջ վաղ աշխարհաբարյան բնագրերի մասին խոսում է արևելահայ բարբառների ծագմանը նվիրված գլխում²⁰ (օրինակ, այնտեղ է հիշատակում Զաքարիա Ագուլիցու օրագրությունը), մասամբ էլ նոր գրական լեզվի ձևավորման գործում հայոց ուսումնարաններին հատկացված գլուխներում²¹, բայց խոսք չկա «Արհեստ համարողութեան» մասին:

Հ. Աճառյանը նոր գրական լեզվի վաղ բնագրերի թվարկման մեջ տպագիր գրքերից առաջինը հիշատակում է «Պար-

¹⁸ Գ. Զարբհանալյան, Հայկական մատենագիտություն, Վենետիկ, 1883, էջ 70:

¹⁹ Ա. Ղազիկյան, Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի, Վենետիկ, պր. 1. 1909, սյունակ 248—249:

²⁰ Գ. Վանցյան, Պատմական քերականություն արևելահայ լեզվի, Թբիլիսի, 1906, էջ 26—36:

²¹ Նույն տեղում, էջ 41—97:

դարանութիւն հոգենուագ սաղմոսացն» գիրքը (Վենետիկ, 1687)²², բերում նրա լեզվից ընդարձակ նմուշ, զնահատում գրքում օգտագործված հայերենի որակը: «Արհեստ համարողութեան» գրքի հիշատակություն չկա:

Այդ գիրքը չի հիշատակվում հայոց լեզվի պատմությանը նվիրված նաև մյուս բոլոր աշխատություններում, այդ թվում Ս. Ղազարյանի «Հայոց լեզվի համառոտ պատմություն» գրքում, ուր նույնպես իբրև առաջին աշխարհաբար տպագիր գիրք հիշված է «Պարզաբանութիւն»-ը և խոսք կա նրա լեզվի մասին²³:

Եթե հայոց լեզվի պատմությանը նվիրված աշխատություններում նոր գրական հայերեն տպված առաջին գիրքը նույնիսկ չի հիշատակվում, ապա վերջին տասը-տասնհինգ տարում մի շարք անգամ այդ հրատարակությունը հիշվել ու զնահատվել է մատենագիտական աշխատություններում և հոգվածներում²⁴:

Երբեմն «Արհեստ»-ը աշխարհաբար առաջին գիրքը չեն համարում այն նկատառումով, որ աշխարհաբար բառը լայն են ըմբռնում, այդ բառի տակ հասկանալով ընդհանրապես աշխարհիկ, ոչ գրաբար հայերենը, ուստի նաև միջին հայերենը, և առաջին աշխարհաբար տպագիր գիրք բնականաբար համարում են Հակոբ Մեղապարտի Տաղարանը²⁵: Իրողությունն այն է, որ «Արհեստ համարողութեան»-ը առաջմ հայտնի²⁶ առաջին տպագիր գիրքն է, որի լեզուն ժամանակակից գրական հայերենի՝ 17-րդ դարում գործածված մի տարբերակն է: Ահա այս իմաստով է այն առաջին աշխարհա-

բար գիրքը: «Արհեստ»-ը նաև առաջին տպագիր մաթեմատիկական ու վաճառականական գիրքն է:

17-րդ դարի երկրորդ կեսում նոր գրական հայերենով կամ նրա առավել պարզունակ տարբերակներով թվաբանական-վաճառաբանական բնույթի գրքեր կազմելու կամ թարգմանելու մի շարք ուրիշ փորձեր էլ են եղել, թեև դրանցից տպագրվել են միայն երկուսը՝ մեկը՝ 1675-ի այս «Արհեստ համարողութեան»-ն է, մյուսը՝ Ղուկաս Վանանդեցու «Գանձ շափոյ, կշռոյ, թուոյ և դրամից բոլոր աշխարհի» գիրքը (Ամստերդամ, 1699):

Ընդհանրապես ուշադրության առարկա ժամանակաշրջանում իբրև գրավոր խոսք նոր գրական հայերենը գործածվել, ձևավորվել ու մշակվել է, թեև, ամենից ավելի շատ թվաբանական-վաճառականական բնագրերում:

Նոր գրական հայերենի՝ դեռևս իբրև գրական խոսք չհասունացած կամ պարզունակ տարբերակներ գործածվել են նաև հայ վաճառականների նամակներում, դավթարներում, այլ գրություններում: Դրանց մի նմուշն առկա է 17-րդ դարի վաճառական Ջաքարիա Ազուլեցու դավթարի մեջ, որի հիմնական մասն այդ հեղինակի օրագրությունն է²⁷: Այս Օրագրության լեզուն բանասիրության մեջ վկայակոչվել ու զնահատվել է մի շարք անգամ, գրվել է նաև հատուկ ուսումնասիրություն (Վ. Կաթյանի կողմից), որի առանձին հատվածներ հրապարակված են²⁸:

Ջաքարիայի Օրագրությունն ընդգրկում է 1647—1681 թվականների ժամանակաշրջանը, սակայն ստույգ հայտնի չէ, թե երբ են առանձին մասերը կամ ամբողջը շարադրվել: Ըստ ուսումնասիրողների, պահպանված միակ ձեռագիրը գրված է 1664—1691 թթ. հեղինակի կողմից²⁹: Հավանական է, իհարկե, որ շարադրումը սկսված է եղել 1647-ից կամ այդ թվականից առանձին նշումներ են արվել, որոնք 1660-ական թվականներից ընդհանուր շարադրանքի են վերածվել:

²⁷ Այս օրագրության միակ գրչագիրը տպագրվել է մեր ժամանակներում՝ 1938 թ.:

²⁸ Տե՛ս, օրինակ, «Ասպիրանտական գիտ. աշխ. ժողովածու», Ե., Խ. Արուվյանի անվան մանկ. ինստ., 1975, № 8, պրակ 2, էջ 437—449:

²⁹ Ջաքարիա Ազուլեցու օրագրությունը, Ե., 1938, էջ VI:

²² Հ. Անադյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, էջ 448—449, 476:

²³ Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., 1954, էջ 380—381:

²⁴ Տողերիս հեղինակը նույնպես անդրադարձել է այդ գրքի հրատարակման հանգամանքներին ու լեզվին («Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ, հատ. 1962, № 5, էջ 46, «Երեկոյան Երևան», 1963, № 139, «էջմիածին», 1966, ԺԱ—ԺԲ, էջ 136, Հայ հնատիպ գիրքը, Ե., 1968, էջ 29—31, «Հայրենիքի ձայն», 1969, № 3):

²⁵ Տե՛ս, օրինակ, Հ. Դավթյան, Աշխարհաբար գիրքը հայ տպագրության սկզբից մինչև 1850 թվականը, Ե., 1964, էջ 7—10, 53, 79, 98:

²⁶ Ասում ենք առաջմ հայտնի, որովհետև դժվար է լիովին բացատրել ավելի վաղ հրատարակված աշխարհաբար գրքի հայտնաբերում:

Քանի որ այդ երկի լեզուն, ինչպես ասացինք, առանձին ուսումնասիրության նյութ է դարձել, ուստի մենք այն մանրամասն չենք քննի, կրե՞նք միայն մի հատված և կտանք որոշ ծանոթություններ:

«Թվին ՌՃԺԷ նոյեմբերի ի-ումն ես Զաքարիայ Երևան էի, այսօր Շահ-Ալեման թագաւորէն Ըսպհանայ շափար եկաւ Երևան Սէֆիդուլի խանին վերայ, թէ ԸՃ մարգ տուր, ամէն խան ու քէկ տալիս այ, քանզի ըոռու այ դուս եկել, Իռ մարդ այ, տվել ան, Ասրաբադ շափմիշ արել, տարել, դիր անողորմ քան են արել, որ մանդր երէխերն վեր կու փթաւէին. գալու ժուկն թրով կու տին, Բ ճոթ կանեն. այսպէս սիթամ արին, շատ գերի, ապրանք տարան: Այս ջանիքէս Շահ-Ալեման Մանսուր-խանն սարգար դրեց հրաման տվաւ, որ ասկար կիտվէն, զնան Ասրաբադ կոխ: Այս ջանիքէս Շահ-Ալեման իւր օլթին վերայ մաղաթի փող գծեց, ջամէջամ առաւ: Ագուլաց Մէթուման գո դիան առաւ: Ամէն երկիր տվին դինարայ դինար դիվանի: Դաշտեցոց ըռասադովն տվինք ար Մէթուման գո դիանս. այս է:

Թվին ՌՃԺԷ դեքտեմբերի ի-ումն, որ Ագուլաց Դաշտին ժողովուրդն հակառակ ընկան Ագուլաց վանքի սուրբ Թումայի առաջնորդ Պետրոս Վարդապետին յետ ք պատճառի: Մին՝ վասն այս. այր ոմն մեծատուն՝ Դաշտէն, անունն Մղդսի Մելքում, վերայ վարդապետն Մելքումն ուղէր, դաշտեցիք Մելքումն ուղին ոչ, թէ՛ մեք Մելքումն ուղում չենք, դու էլ ուղիլ մի, Քանզի այս Մելքումս լ տարի ավել այ, որ Դաշտի ուզսախալու էր, ապա այժումս գծեցի. վասն հսաքի այս Մելքումիս յետ շատ դավի դիվան գնացին դաշտեցիք. այս է»³⁰:

Սա պատահականորեն բացված էջից բերված քաղվածք է, և հիմնականում ճիշտ է ներկայացնում Զաքարիայի Օրագրության լեզուն:

Զաքարիան վաճառական է եղել, թույլ գրագիտությամբ, նույնիսկ հայերենի ուղղագրությունը վատ է իմացել: Նրա շարադրանքը գրական լեզվի մակարդակի չի հասել, բայց և չի մնացել զուտ վաճառականական խոսակցականի մակարդակում: Դա, կարելի է ասել, նոր գրական հայերենի շատ

պարզունակ, ստորին վիճակում գտնվող տարբերակ է, և դրա պատճառն էլ անհատական է՝ հեղինակի ցածր գրագիտությունը:

Բերված հատվածում նկատում ենք.

1. Արեւելյան հայ բարբառներին հատուկ մի շարք ձևեր, ինչպես, ներգոյական հոլով (ի-ումն, այսինքն՝ 20-ումն), բայի ներկա ժամանակի վերլուծական ձևեր (տալիս այ, ուղում չենք), այլ բայաձևեր (ուղին ոչ, ուղիլ մի), էական բայի եզակի երրորդ դեմքի ա (այ) ձևը (տվել այ, մարդ այ), էական բայի հոգնակի երրորդ դեմքի ն. Զուղայի բարբառին հատուկ ան ձևը (տվել ան), մի շարք բարբառային բառաձևեր ու բառեր (այդ թվում արեւելյան լեզուներից փոխառյալ) և այլն:

2. Արեւմտյան հայ բարբառներին (նաև գրաբարին ու միջին հայերենին) հատուկ ձևեր. է-ով բացառական (քաղաւտէն, ջանիքէս, Դաշտէն), բայի ներկա և անցյալ անկատար ժամանակների կ (կու)-ով կազմված համադրական ձևեր (կու փրաւէին, կու տին, Բ նոք կանեն), էական բայի եզակի 3-րդ դեմքի է ձևը (այս է):

3. Զուտ գրաբարյան ձևեր. բառեր ու բառաձևեր (այս, այսօր, այսպէս, վերայ, քանզի, մեք, իւր, այր), արտահայտություններ (վասն այս, այր ոմն մեծատուն):

Ինչպես տեսնում ենք, բերված հատվածի լեզվում կան և՛ արեւելյան, և՛ արեւմտյան հայ բարբառներին հատուկ ձևեր, թեև արեւելյանի ակնհայտ գերակշռությամբ: Օրագրության մյուս հատվածներում նույն բանն է դիտվում (թեև կան հիշյալ բնույթի այլ լեզվատարրերի ուրիշ շատ օրինակներ): Կնշանակի Զաքարիայի լեզուն ինչ-որ չափով թեքված է դեպի արեւելահայերենը, միասնական գրական հայերեն չէ, թեև ունի այս վերջինի մի շարք կարևոր հատկանիշներ:

Միաժամանակ, պարզ է դառնում, որ վաճառական Զաքարիան, թեև թույլ գրագետ է եղել, բայց, այնուամենայնիվ, գրաբարյան որոշ բառապաշար և ձևապաշար ունեցել է, որոնց օգտագործմամբ էլ վաճառականական խոսակցականին ինչ-որ չափով դրքային-գրական երանդ է տվել՝ դրանով ևս իր խոսքը մոտեցնելով միասնական գրական հայերենին:

Գրաբարյան լեզվատարրերի, հատկապես բառաձևերի օգ-

³⁰ Զաքարիա Ագուլեցու օրագրությունը, էջ 77 (1668 թ. բաժինը):

տագործումը, նոր հայերեն խոսքը գրականացնելուց բացի, միշտ էլ կատարել ու կատարում է նոր գրական հայերենին միասնական, համահայկական բնույթ տալու դեր, քանի որ այդ ձևերը, ինչպես վերը նշվեց, ոչ արեւելյան են, ոչ արեւմտյան, այլ ընդհանուր հայկական:

Այժմ անցնենք համարողության արհեստին վերաբերող 17-րդ դարում ստեղծված մի քանի բնագրերի և զխավորապես «Արհեստ համարողութեան» տպագիր երկի լեզվի քըննությանը:

Ընդհանրապես հայոց համարողական արհեստը գալիս է հնից՝ Անանիա Շիրակացուց ու, թերևս, ավելի վաղ շրջանից: Բավական շատ են տարբեր դարերում հին գրական հայերենով ստեղծված հաշվողական, այդ թվում թվաբանական բնագրերը՝ հրապարակված (նոր ժամանակներում) և դեռևս չհրապարակված:

Գրաբար թվաբանական գրքեր գրվում ու թարգմանվում էին նաև 17-րդ դարի վերջում և ավելի ուշ՝ 18-րդ դարում: Մաշտոցի անվան մատենադարանում կան այդպիսի մի քանի պրշագիր ձեռնարկներ: Օրինակ, «Հարցումն և պատասխանի» վերնագրի տակ կա թվաբանական մի փոքր ինքնուսույց՝ վաճառականական բնույթի խնդիրներ ու նրանց պատասխանները: Գրված է ամբողջությամբ գրաբար³¹:

Շատ ավելի հետաքրքրական է Մատենադարանում պահվող թվաբանական մի այլ ձեռնարկ, 18-րդ դարից՝ «Արիթմաթիկա, որ համաշոդական արհեստ» վերնագրով³²: Լեզուն գրաբար է, թեև կան ժողովրդախոսակցական հայերենին բնորոշ բառեր ու բառաձևեր (բողշա 62, ապրշում 62, բոճկայ 63ա, նապար 67, մին 4ա, 12, 61, լեղանալ 79 և այլն): Այս ձեռնարկը շատ ավելի ընդարձակ է և նույնպես թվաբանական խնդիրների ու նրանց պատասխանների ժողովածու է: Խնդիրների մեծ մասը վաճառականական հաշվումների են վերաբերում:

³¹ Զեռ. 1662, Գրչագրի սկզբում Զաքարիա Քանաքեռցու «Պատմութիւն»-ն է, որին անմիջապես հաջորդում է թվաբանական այդ բնագիրը՝ քավական անփույթ կազմված:

³² Զեռ. 2950, Գրված է գեղեցիկ ձեռագրով, ունի խնամքով կազմված գծագրեր:

17-րդ դարի վերջերին և 18-ին գրաբար գրված այսպիսի ձեռնարկներն ամենից ավելի պետք է որ վաճառականություն սովորելու, դրան վարժվելու նպատակին ծառայեցնելու համար կազմված լինեն: Գրաբարն, իհարկե, բնավ համար լեզու չէր վաճառականներին կամ թեկուզ որևէ վարժարանում սովորող ապագա վաճառական աշակերտներին հասցնագրված նման ձեռնարկների համար. և ըստ երևույթին, գրաբարն այդպիսի ձեռնարկների լեզու էր դառնում սոսկ դարավոր ավանդույթի ուժով: Բայց հենց նույն ժամանակաշրջանում էլ այդ ավանդույթը խախտվում էր, և կազմվում էին համարողական արհեստի նաև լիովին հասկանալի լեզու ունեցող ձեռնարկներ:

Նկատելի է, որ որոշ խնդիրներ և նրանց լուծման ձևերը այս՝ ժամանակաշրջանի թվաբանական-վաճառականական բոլոր ձեռնարկներում միմյանց շատ նման են, որ իր պատճառն ունի: Բայց այժմ մեզ հետաքրքրողը ձևավորվող նոր գրական հայերենի տարբերակներով գրված ձեռնարկների լեզուն է:

Մաշտոցի անվան մատենադարանում պահվող մի ձեռագիր ժողովածուի մեջ կա վաճառականական բնույթի խընդրագիրք՝ բացատրություններով, «Արուեստ թվական է սայ» վերնագրով³³: Զեռագիրն անթվակիր է: Գարեգին Պետրոսյանը, որ մասնագիտական (մաթեմատիկական) տեսակետից ուսումնասիրել է այս բնագիրը, փորձել է նաև որոշել նրա ընդօրինակման և հեղինակման ժամանակը: Նա նախ ենթադրություն է անում, թե ձեռնարկը ընդօրինակված է 18-րդ դարում: Մաշտոցյան Մատենադարանի «Ցուցակ ձեռագրաց»-ը այս բնագրի ընդօրինակումը դնում է 17-րդ դարի մեջ, որ մեզ ավելի հավանական է թվում:

Այնուհետև, Գ. Պետրոսյանը, ելնելով ձեռնարկում տեղ գտած թվանշանների ձևերից, միլիոն բառի գործածությամբ փաստից, ինչպես նաև օ տառի և ալ-ի զուգահեռ նույնանիշ գործածությունից, եզրակացնում է, որ դասագիրքը հավանաբար կազմվել է 15-րդ դարի երկրորդ կեսին կամ 16-րդ դարի սկզբներին³⁴:

³³ Զեռ. 8716, Հրապարակումը տե՛ս Գ. Պետրոսյան, Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում, Ե., 1959, էջ 223—351:

³⁴ Գ. Պետրոսյան, նշվ. աշխատութ., էջ 220:

Թվերի ձևի մասին փաստարկը չի համոզում, քանի որ նման թվանշաններ գործածված են նաև 17-րդ և 18-րդ դարերի թվաբանական բնագրերում: Այդ նկատել կարող է նաև ոչ մասնատրիկոսը. ցանկացողը կարող է վերցնել տարբեր դարերում ընդօրինակված թվաբանական ձեռագրեր և հեշտությամբ համոզվել, որ թվանշանների գրությունն ձևերով կարելի է որոշել ոչ թե բնագրի ստեղծման ժամանակաշրջանը, այլ ձեռագրի ընդօրինակման մոտավոր ժամանակը: Միլիոն բառի գործածության փաստը (մասնագետները ենթադրում են, որ այն մասնատրիկայում գործածության մեջ է դրվել 14-րդ դարից) առավելագույնը կարող է ապացույց լինել այն բանի, որ բնագիրը ստեղծվել է 13-րդ դարից հետո և բնավ չի բացառում, որ միլիոն բառի գործածությամբ բնագիրը ստեղծվեր 16, 17, 18, 19 դարերում: Վերջապես օ-ի և ա-ի գուգահեռ նույնանիշ գործածությունը նույնպես ոչ այնքան բնագրի ստեղծման, որքան ձեռագրի ընդօրինակման ժամանակի մասին կարող է մտածել տալ: Այդպիսի դուգահեռ գրություններ ունենք սկսած 13-րդ դարից մինչև 17, նույնիսկ 18-րդ դարերը³⁵: Ի դեպ, քանի որ ինքը Գ. Պետրոսյանը ձեռագրի ընդօրինակման ժամանակը համարում է 18-րդ դարը, կնշանակի նա ակամայից ընդունում է, որ այդ շրջանի գրիչները կարող էին թույլ տալ նման դուգահեռ գրություններ:

Գ. Պետրոսյանի փաստարկները հիմնավոր են թվում իբրև ապացույց միայն այն բանի, որ տվյալ թվաբանական ձեռնարկը կարող էր գրվել 13 կամ 14-րդ դարերից հետո, բայց այդ փաստարկները չեն նշում, թե որերորդ դարն է այդ ձեռնարկի ստեղծման վերջին սահմանը և բնավ չեն հաս-

³⁵ Օրինակ, ա-ի և օ-ի դուգահեռ օգտագործում կա 1295-ին ընդօրինակված մի ժողովածուի մեջ (Մաշտոցի անվ. մատենագ. ձեռ. 488), որ պարունակում է Մխիթար Գոչի Դատաստանագիրքը (կան՝ աւրիճաղաւորիւն և օրիճակ. ձեռագրաց և շաղօք և այլն): Նույն կարգի դուգահեռություն կա 1322 թ. ընդօրինակված մի ժողովածուի մեջ (ձեռ. 108, ինչպես՝ ձեռագրաց, ընդունալ, բայց՝ մեղօք, աղօք և այլն): 17-րդ դարի ձեռագրերից այդպիսի դուգահեռություններ ունի մի ժողովածու (ձեռ. 1749, ինչպես՝ բամբասանօք և բամբասանաւք, համառատ և համառօտ և այլն). հմմտ. նաև Ս. Գյուլբուղաղյան, Հայերենի ուղղագրության պատմություն, Ե., 1973, էջ 114—133:

տատում 15 կամ 16-րդ դարերում ստեղծված լինելու վարկածը:

Մեր կարծիքով ձեռնարկի լեզուն, մասամբ էլ առաջադրվող և լուծվող խնդիրների մեծ մասի գործնական-վաճառականական բնույթը ասում են այն մասին, որ խնդրագիրքը մեզ հասած ձևով պետք է ստեղծված լինի ոչ վաղ, քան 17-րդ դարի կեսերին, ավելի ճիշտ՝ հենց այդ շրջանում կամ գուցե երկրորդ կեսի առաջին տասնամյակներում: Ստորև մենք կտանք այդ ձեռնարկի լեզվից մի նմուշ և մի երկու օրինակով համառոտակի կընթացրենք նրա բառապաշարային և քերականական մի քանի առանձնահատկությունները: Այժմ նախապես ասենք, որ այդ լեզուն նոր գրական հայերենն է՝ շտրոհված արևելահայերենի և արևմտահայերենի, որ և բնորոշ էր 17-րդ դարի երկրորդ կեսի համար: Մյուս կողմից, ձեռագրի աշխարհաբարը բնույթով այնպիսին է, որպիսին 17-րդ դարի 40-ական թվականներից ավելի վաղ, նաև այդ դարի սկզբներին չի եղել, համենայն դեպս, մեզ այդ շրջաններից նման լեզվով հուշարձան հայտնի չէ: Նշենք նաև, որ ձեռնարկի սկզբի մասը գրված է ուշ շրջանի ոչ կատարյալ գրաբարով և միայն այն հատվածից, որտեղ սկսվում է բուն խնդիրների և նրանց լուծումների շարադրումը, գրաբարը փոխարինված է նոր գրական հայերենով: Ահա մի նրմուշ այդ խնդրագրից. «Մէկ մարդ մի մշակ բունեց մինչև ի ի՞ օր. ասաց, թէ յառաջի օրն ա ըստակ կուտամ, երկրորդն ի, երրորդն զ ըստակ, չորրորդն ղ, ամենայն օր մի մի աւելացնեմ, որչափ որ կենաս ի քովս: Եւ նա կեցաւ ի նորայ մօտն 24 օր: Ընդ ամենն քանի ըստակ պիտի լինի» (էջ 42ա):

Բնագրի լեզվում ունենք ժողովրդական-բարբառային մի շարք բառեր և բառաձևեր, ինչպես յիրուր (35ա), կօրայ (36ա), մէկալն (36ա), պօզմիշ (40ա), աղեկ (42ա), իրեմն (43), խալնեցուր (44ա) և այլն, թեև հիմնականում իշխում են գրաբարյան բառաձևերը (այս, այն, այսպէս, հոգի, նորա, երկու և այլն) և շատ են գրաբարի բառապաշարից եկած բառերը (վաստակել, ցուցանել, բազմապատիկ և այլն): Ուղղագրությունն անկանոն է, քերականությունը, քերականական ընդհանուր տրամաբանությունը՝ բարբառային կամ խոսակցական հիմքով: Ինչպես ասվեց, չկա արևմտահայ-արևելահայ բաժանու-

մը, թեև ներկան կազմվում է կու (կ)-ով (սի տեղն ինչ կու մնայ», 34, «ամենն այս ցեղս կու ելնէ» 36), վաղակատար ժամանակը՝ եր-ով վերջացող դերբայով («վաստակեր են», «գնացեր են» 40)³⁶, բայց այդ ձևերն ընկալվում են ոչ թե իբրև արևմտահայերեն, այլ՝ միջին հայերենի շարունակվող իշխանություն արտահայտություն: Խոսքին հատկապես արևմրտահայ թեքում չեն տալիս նաև այնպիսի տարրերը, ինչպես, այլ բառի մեկ-երկու անգամ գործածված ալ ձևը (35, 36ա) կամ աղէկ բառը (42ա), որոնք հակակշռվում են արեւմելահայ բարբառներից եկող մի շարք բառերի և ձևերի գործածությունում, ինչպես իրեֆն (43), խլասեցուր (44ա), խալըսնս (44) և այլն:

Մենք շատ հակիրճ բնութագրեցինք այս խնդրագրքի լեզուն՝ ցույց տալու համար այդ լեզվի բնույթը, որպիսին չէր կարող լինել և չի եղել 14-րդ դարում, ինչպես և 15, 16-րդ դարերում: Ստորև, երբ ավելի մանրամասն քննենք տպագիր «Արհեստ համարողութեան» գրքի հայերենը, կտեսնենք, որ այն բավական նման է ձեռագիր այս խնդրագրքի լեզվին. և այդպիսի հայերենով միայն 17-րդ դարի կեսերից են սկսել գրել: Կարելի էր ենթադրել, թե գասագիրքը 14-րդ դարում գրաբար կազմվել է, իսկ 17-ում փոխադրվել նոր լեզվի, բայց խնդիրների վաճառականական բնույթն այնքան նման է 17—18-րդ դարերում հայոց մեջ տարածված ձեռնարկներում զետեղվող խնդիրներին, որ նման ենթադրությունն էլ անհոգ է մնում:

Նոր Զուղայում 1687 թվականին նշանավոր դպրապետ Կոստանդ Զուղայեցու կողմից ընդօրինակված մի ձեռագիր ժողովածվում³⁷ կա երկու աշխարհաբար բնագիր, մեկը «Աշխարհաժողով», որ «Չափի և գազի, քարի և կշեռքի» ձեռնարկ է ու վերաբերում է տարբեր երկրների դրամներին, չափերին ու կշիռներին. փաստորեն, մի տարբերակն է այն ժամանակ տարածված այդ կարգի ձեռնարկներին: Մյուսը հա-

մարողական արհեստի ձեռնարկ է՝ «Գունն համարողական արհեստին» («Եւ յառաջ ածեմք զգոներն ըորդամին»), այս-րունակում է խնդիրներ, լուծումներով³⁸:

Հիշատակարանում (գրաբար) Կոստանդ դպրապետը գրում է. «Շարագրեցաւ բանս աշխարհաժողով փոքր ի շատէ վասն վաճառականաց գնելու և վաճառելոյ, որ նորավարժ մանկունքն փոքրուստ ուսանեն վասն ի պէտս ապագայից իւրեանց...» (167ա):

Ի դեպ, նշենք, որ այս խնդրագրքն ընդգրկում է վաճառականության և վաճառաշահության բոլոր բնագավառները. խնդիրներ և լուծումներ կան աշխարհի տարբեր քաղաքներում հայ վաճառականների կողմից այն ժամանակներում գնվող և վաճառվող ապրանքների, նրանց գների ու չափելու, կշռելու եղանակների, ընկերովի դրամ շահելու, տոկոսով (շախով) դրամ տալու, մահացողի ունեցվածքը ժառանգներին բաժանելու մասին և այլն: Կան նաև մի քանի ոչ վաճառականական խնդիրներ: Ձեռնարկն այսօր կարող է աղբյուր լինել հայ վաճառականության պատմության համար:

Ստորև բերում ենք մի քանի նմուշ այդ ձեռնարկից. «Դարձեալ. է ջուլխակ գ ամիս ք օրումն քնն գաղ շուխայ կամ այլ ինչ գործեցին: Ապա ժա ջուլխակն ք ամիս գ օրումն քանի գաղ կու գործեն: Այսպէս արայ. յառաջ գ ամիս ք օրն ռխշ օր շինէ. որ ելաւ զը օր և է ջուլխակովն ըռաղամ արայ. որ ելաւ զն. ձգ վէրդիր կայ և յետոյ ք ամիս գ օրն ռխշ օր շինէ» (183ա), «Դարձեալ գ հոգի ընկերացանք. Ենժը ռուփի դատեցինք: Բերին կիսեցին: Մինին հասաւ նղ ըռուփի. և երկրորդին հասաւ քնխա ըռուփի, և երրորդին հասաւ ննգ ըռուփի: Որ էս ննգ ըռուփա տրողն խաբար ամ, որ սարմայէն ղնժէ ըռուփի այ և էն ք հոգոյն սարմայէն խաբար շնմ: Եթե ուզենաս հիմանաս, այսպէս արայ. էն մինն, որ նղ ըռուփի շախն այ, վեռէլ նղ ըռուփին դիր էն ընկերի սարմային օր

³⁶ Վաղ աշխարհաբարում վաղակատար դերբայի այս ձևի գործածման արժեքի մասին տե՛ս ստորև:

³⁷ Մաշտոցի անվ. մատենադարան, ձեռ. 8443 (օրինակների մոտ փակագծում նշվում են այդ ձեռագրի համապատասխան էջերը):

³⁸ Այս խնդրագրքին անդրադարձել է Ա. Եգանյանը իր «Մաթեմատիկայի հայերեն ձեռագիր դասագիրքը...» հոդվածում («Գիտ. աշխ. ժողովածու» Հայկ. հեռ. մանկ. ինստիտուտի, 1960, № 6, մասն 2, էջ 26—35), ուր և ձեռագրից բերված է մի քանի քաղվածք (մասամբ աղավաղված):

խաբարն ա. որ ղեմէլ բռուփի էր, դիր տակումն բռաղամ ա-
րայ...» (220), «Դարձեալ մին բօլուկ ղուշ ղնաման ին. ա
ղուշ ղէմ ելաւ ասաց. «բարի աջողում ձեզ, և ղուշ»: Ասա-
ցին Վ բարի քե, մենք և շենք. մին մեզ շանք, մին մեր կիսին
շանք, ա մեր շարէքին շանք, էնշաղն թէ քենով և գինինը:
Յիմանաս էն բօլուկն քանի ան ելէլ: Այսպէս արայ. ղը վեր-
դիր, ք նօլ էլ տուր և յետո ք և գ ռուպովն կտրատէ: Քեզ ցու-
ցանէ, թէ էն բօլուկ ղուշերն քանի ան ելէլ. որ լզ ղուշ ան
ելէլ» (236):

Նմուշներ շատ բերեցինք այն պատճառով, որ այս խնդրա-
գրքի լեզվական տարրնթացութիւնը բավական մեծ է, որոշ
խնդիրների լեզուն երբեմն առանձնահատուկ է դառնում և,
խնդրագրքի լեզվի մասին ամբողջական պատկերացում ստա-
նալու համար պետք է տարբեր հատվածների ծանոթանալ:

Ամբողջութիւն մեջ այդ լեզուն նորջուղայական արդեն
մեզ ծանոթ աշխարհաբարն է՝ Ն. Զուղայի գրականացված
(գրաբարացված) բարբառը կամ խոսակցականը:

Խնդրագրքի լեզվում տեղ-տեղ Ն. Զուղայի բարբառը շատ
թույլ է արտահայտված կամ բնավ չի զգացվում, որով և
գրքի լեզուն մոտենում է ընդհանուր նոր գրական հայերե-
նին, իսկ տեղ-տեղ արևելահայ խոսքը ու հատկապես Ն. Զու-
ղայի բարբառը իրենց շատ որոշակի են զգացնել տալիս (օ-
րինակ, «Դարձեալ, Հալապայ որ դուս լինիս ելման, դապ
Աջամըստան լինիս գովման, յամէն տեղի խալճ բալճն բա-
բաթ գրած այ, որ ներկես կու տեսնես» 244ա):

Խնդրագրքի լեզվի մեջ (ամբողջութեամբ վերցրած) շատ
են Ն. Զուղայի բարբառից ու ժողովրդախոսակցականից ե-
կող լեզվամիջոցները. բառաձևերից ու բառերից ունենք, օրի-
նակ, մուլֆ (182), էնտով (184ա), էնտուր (220ա), էտեմց
(237ա), էն («էն ք կտրածին տակումն» 184ա), էլ («ա գիր
էլ կիսին համար կտրէ» 184ա), խացն (235), շախ («որ շախ
մայէն ելաւ» 188ա), պախեց (193), Խօռոմստան (212), գօ-
րայ («էն գօրայ» 184ա), բարշել (184ա), ղուշ (236), բօլուկ
(236) և այլն: Առավելապես արևելահայ խոսքին հատուկ այս
բառաձևերն ու բառերը (մի քանիսը միայն Ն. Զուղայի բար-
բառին բնորոշ) հակակշռվում են շատ ու շատ բառերի գրա-

բարյան ձևերի օգտագործմամբ (հոգի, յետոյ, երկուրդ, եր-
ուրդ, քնկեր, դարձեալ, այլ, ուրիշ, ապա, յառաջ, ելաւ, հա-
սաւ և այսպես շարունակ), ընդ որում, էս ու էն-ին ու նը-
րանցով կազմվածներին գուգահեռ ունենք այս ու այն և նը-
րանցով կազմվածներ (շատ է գործածված այսպէս-ը): Նույն
կերպ գուգահեռաբար են գործածվում (նույն իմաստով) մին
և մէկ ձևերը՝ առաջինի գերակշռութեամբ: Բարբառի կողմը
ձգող գլխավոր տարրն է էական բայի եզակի հրրորդ ղեմքի
բավական շատ գործածված ա ձևը («թղտումն գրած այ»
184ա), որին գուգահեռ, սակայն, գործածվում է նաև է-ն
(«թնշ որ մնայ խալիս արըշում է» 184ա): Ն. Զուղայի բար-
բառից են նաև էական բայի խոնարհված ամ («մին իքմին ամ
բարշել» 233), աւ («բարշել աս» 188ա), աւն («քանի ան ելել»
236), ին («մին բօլուկ ղուշ գնաման ին» 236), ձևերը, ան-
կատար գերբայի մի քանի ձևեր (գնաման, ելման, գովման) և
այլն: Ն. Զուղայի բարբառին հատուկ, բայց և ընդհանուր
արևելահայ ձևերից են ում-ով ներգոյականը (տակումն 178,
ուուարումն 178), ից-ով բացառականը (արշմիցն 184ա),
ոււմ-ով կազմված անկատար գերբայը («խարցանում այ»
243ա) և այլն:

Քերականական այս ձևերը խոսքին արևելահայ թեքում
են տալիս, սակայն նկատելի է նաև միջին հայերենից եկող
որոշ ձևերի գործածությունը, ինչպես կու-ով ներկան (կու
տեսնես), վաղակատար ժամանակների եր-ով գերբայը (վաւ-
տակեր են), է վերջավորութեամբ եզակի հրամայականը (շի-
նէ) և այլն, որոնք գրաբարյան բառաձևերի հետ խոսքը հա-
նում են բարբառի, ինչպես և ղուտ արևելյան հայերենի վի-
ճակից և մոտենցնում ընդհանուր նոր գրական հայերենին:

Ամեն դեպքում, այս լեզուն 17-րդ դարի մի ընդհանուր
գրական հայերենի նմուշ չէ. քանի որ ձեռնարկը գրվել է
միայն տեղական օգտագործման համար, ուստի և նրա լե-
զուն չի հասցվել ժամանակի ընդհանուր գրական հայերենի
մակարդակին:

Գրական լեզվի մակարդակ ունի առաջին տպագիր աշ-
խարհաբար գրքի՝ «Արհեստ համարողութեան»-ի լեզուն, ո-
րին անդրադառնում ենք ավելի մանրամասն:

Գիրքը³⁹ տպագրվել է Մարտիում, նշանավոր «Յանուն Ս-էքմիածնի և Ս. Սարգսի» տպարանում, Ոսկան Երևանցու մահից շուրջ տարիուկես հետո, երբ տպարանի տնօրենը, գլխավոր գրաշարը Ոսկանի քեռորդի Սողոմոն Լեոնյանն էր, գրաշարը, սրբագրիչը, երբեմն նաև խմբագիրը՝ Մատթեոս Հովհաննիսյան Վանանդեցին (հիշենք, որ Ոսկան Երևանցին ու նրա հարազատները ն. Զուղայից էին, ծնողները՝ գաղթած Երևանից, իսկ Մատթեոս Հովհաննիսյանը՝ Գողթան գավառից)։

«Արհեստ»-ի հրատարակիչները, խախտելով հայ տպագրության ամրացած ավանդույթը՝ տպագրում են ոչ գրաբար հայերեն գիրք, բայց ավանդույթի մի մասին, այնուամենայնիվ, հավատարիմ են մնում՝ գրքի առաջաբանն ու հիշատակարանը գրում ու տպում գրաբար։

Առաջաբանում («Առաջաբանութիւն գրգոյս») կարգում ենք. «Տեսանելով գհարկաւորութիւն մերազնեայց վաճառականաց վասն կատարելապէս ո՛չ գիտելոյ դարհետն համարողութեան, վայելուչ վարկաք զգիրգս զայս թարգմանել ի մերս բարբառ. որպէսզի սովաւ վարժեցեալք կարիցեն դիւրապէս պարապիլ ի գործս իւրեանց թարց զհզերման մտաց»։ Ուրեմն հրատարակիչների նպատակն է եղել հայ վաճառականի ձեռքը մի գիրք տալ, որը նրանց համարողության արհեստի տարրական գիտելիքներ պիտի սովորեցնէր⁴⁰։

Տպագրիչների ոսկանյան խումբը միշտ կապված է եղել հայ վաճառականների հետ։ Հատկապես Ոսկանի եղբայրը՝ Ավետիս Ղլիճենցը (նորջուղայեցի) տպարանի հիմնադրման

³⁹ Լրիվ վերնագիրը և ամբողջ տիտղոսաթերթը հետևյալն է. «Արհեստ համարողութեան ամբողջ և կատարեալ. Թարգմանեցեալ ի պէտս Հայկազունեաց և մանաւանդ Վաճառականաց։ Եւ տպագրեցեալ ի տպարանի սրբոյ էքմիածնի և սրբոյն Սարգսի զօրաւորին։ Ի հայրապետութեան տեսոն Յակօբայ ամէնից հայոց Կաթողիկոսի և ի միապետութեան Լուսավիկոսի շորէքտասանեորդի արքային Կալիստոսի։ Ի Մարշիլեայ. Յամի ներ մարդեղութեան Տեսոն 1675. օգոստոսի ամսոյ 25։ Ի. Յ. Լ. Բ. Տ. Պ. Տ. »։

Այս գրքի՝ Հայաստանում եղած մեզ հայտնի երեք օրինակները գրտնջվում են Մաշտոցի անվ. մատենադարանում (հնատիպերի հավաքածու)։

⁴⁰ Գիրքն իր ծավալով էլ նախատեսված է աստանդական վաճառականների համար. նրա փոքր, «գրպանային» ծավալը (6,8×11 սմ, 151 էջ), հնարավորություն պիտի տար հայ վաճառականին միշտ իր մոտ ունենալու այն և անհրաժեշտության դեպքում անմիջապես օգտագործելու։

Ժամանակից սկսած անընդհատ դրամական օժանդակություն է ցույց տվել նրան։ Հավանական է, որ ծանոթ վաճառականների (գուցե և՛ ամենից շատ Ավետիսի) խորհրդով էլ Ս. էքմիածնի և Ս. Սարգսի անվան տպարանը ձեռնամուխ է եղել այս գրքույկի թարգմանությանն ու տպագրությանը։ Իհարկե, հազիվ թե գրքի հրատարակման միակ մղիչը «մերազնեայց վաճառականաց» համարողական գիտելիքները բարձրացնելու մտահոգությունը եղած լինի։ Ըստ երևույթին, կարևոր է եղել նաև դրամական ակնկալությունը. նյութական ծանր վիճակի մեջ գտնվող տպարանը, այդպիսի գրքույկ վաճառականներին հրամցնելով, զգալի եկամուտ կարող էր ունենալ։ Նշենք նաև, որ նույն տպարանում մի քանի ուրիշ գրքույկներ (օրինակ՝ «Գիրք այբուբենից», «Գիրք վայելուչ և հարկաւոր» նույն 1675, «Գրգուկ կարեւոր հանապազորդեան...»՝ 1676 և այլն) ըստ տիտղոսաթերթի, առաջաբանի կամ հիշատակարանի նույնպես վաճառականների համար են տպագրվել։ Բայց նրանք բոլորը գրաբար են, թեև բավական «հեշտացված» գրաբար, ընդ որում, գրքերի բաղադրիչ մաս կազմող օրացույցները, պարզատուժարները իրենց լեզվով (պարզ գրաբար), ինչպես և նրանցում եղած աղյուսակները և թվարկումները այն ժամանակներում հիմնականում օգտագործելի էին գրագետ վաճառականների համար։

Թվաբանության մի տպագիր ձեռնարկ, կազմված թեկուզ պարզ գրաբարով, անմատչելի պիտի լիներ հայ վաճառականների հիմնական զանգվածին, ուստի և ճիշտ որոշում է ընդունվել՝ այդ գիրքը հրատարակել հասկանալի լեզվով։ Առաջաբանի շարունակության մեջ գրված է. «Եւ մանաւանդ զի աշխարհականաւ ոճիւ է շարագրեցեալ առ ի բառնալ զպատճառս ծուլից և պարսաւարանից. որք եթէ մի անգամ սիրով և ուշադրութեամբ ընթեռնուցուն զսա, զբնաւս զժարութիւնս համարողութեան գերազանցեցեն»։

Հիշատակարանում («Վախճան») ասված է. «Ի վայելումն հանուրց հայկազունեաց վաճառականաց»⁴¹։ Բոլոր հայ վա-

⁴¹ «Աւարտեցաւ պիտանացու և շահաւէտ գրգուկս համարողութեան ի փառս մեծազոյնս Աստուծոյ և ի վայելումն հանուրց հայկազունեաց վաճառականաց. յամի ներ մարմնութեան Տեսոն 1675 նոյեմբերի ամսոյ 21. ի Մարշիլեայ քաղաքի...»։

ճառականներին հասցեագրված գիրքը, պարզ է, որ պետ-
բուրին հասկանալի լեզվով լինելու, ուստի և նրա լեզվի
որևէ բարբառի շատ թե քիչ նկատելի գերակշռություն չէ
շարժող է լինելու: Եվ չկա այդպիսի գերակշռություն:



Արհեստ համադրություն, Մառսել, 1675 թ. (տիպոգրաֆեր)

Ստորև բերում ենք «Արհեստից» մի հատված նրա լեզվի
մասին ընդհանուր պատկերացում ու ճաշակ տալու համար⁴².
«Մին մարդ մի մառչիլ կուզէ տայ զառապխանէն և կուզէ
իմանայ, թէ իւր փողն որչափ թուման և որչափ դիան կանէ:
Ջառապխանի քաշումն վեց հարիւր մսխալն հարիւր մառչիլ
է. մին մառչիլն քանով որ կու պարշի, դիան կու շինէ և էս
մին մառչիլի գնովս իւր բովանդակ փողն կու բազմացնէ:
Յետոյ բազմացուցած թվի աջ կողմէն շորս գիր կու կըտըէ:

⁴² «Արհեստ»-ից բերված այս և հետագա քաղվածքներում պահպանված
է բնագրի ուղղագրությունը, ժամանակակից է դարձված միայն կետադրու-
թյունն ու մեծատառերի գրությունը (քաղվածքների վերջում տրվում են
«Արհեստ»-ի համապատասխան էջերը):

ինչ-որ ձախ կողմն կու մնայ՝ թուման է, ինչ որ աջ կողմն
կու մնայ՝ դիան է: Եւ թէ աւելի մսխալ մընայ, հարիւր մառ-
չիլի գինն դիան կու շինէ և այն աւելի մսխալովն կու բազ-
մացնէ և վեց հարիւրովն կու բաժանէ և այսպէս կիմանայ
աւելի մսխալների գինն. ինչպէս էս օրինակումս: Ունիմք 2615
մառչիլ: Մին մառչիլն 675 դիանով պարշեցանք: էս գնովս
զբովանդակ մառչիլն կու բազմացնենք և շորս գիր աջ կողմէն
կու կտրենք, և կու լինի բովանդակ մառչիլի գինն՝ հարիւր
ևօթանասուն և վեց թուման. հինկ հազար հարիւր և քսան
դիան, և ոչինչ չի աւելանար» (134—135):

«Արհեստ»-ի լեզվի մասին ավելի շոշափելի պատկերա-
ցում տալու համար փորձել ենք դիմել խոսքը լեզվական բա-
ղադրիչներով բնութագրելու միջոցին: Ընտրել ենք 20 բաղա-
դրիչներ, որոնք պայմանականորեն անվանում ենք գլխավոր,
բայտ այդ բաղադրիչների ներկայացրել ենք «Արհեստ»-ի լեզ-
վի 20 հատկանիշներ:

Այդ բաղադրիչներն են. 1) Մի շարք բնորոշ բառաձևերի
օգտագործում (մին-մէկ, էս-այս և այլն), 2) բարբառային
բառերի օգտագործում, 3) մի քանի դերանունների (նոբա,
նոբա և այլն) և վերայ կապի գրաբարյան ձևերի օգտագոր-
ծում, 4) զոյականների հոգնակիի կազմությունը, 5) գրա-
բարյան հոլովաձևերի գործածությունը, 6) հոգնակի ստացա-
կան (սեռական-տրական) հոլովի կազմության ղեպերը,
7) անորոշ դերբայի ստացական (սեռական-տրական) հոլովը
կազմվելու ղեպերը, 8) ում հոլովիչով ներգոյականի գոր-
ծածությունը, 9) բացառական հոլովի կազմությունը, 10) և
հոդի գործածության երեք բնորոշ ղեպեր, 11) վ բայամաս-
նիկ ունեցող բայաձևերի գործածությունը, 12) բայերի ներկա
ժամանակի կազմությունը, 13) դիմավոր բայերի հոգնակի
առաջին դեմքի զուգահեռ մե և նե վերջույթների առկայու-
թյունը (դենմե-դեննե), 14) բայերի եզակի երրորդ դեմքի է
և ի վերջույթների գործածությունը (գրէ-գրի), 15) էական
բայի եզակի երրորդ դեմքի է ձևի մենաշնորհը, 16) բայերի
վաղակատար ժամանակի ձևերը, 17) բայերի ներկա ժամա-
նակի ժխտական ձևերը, 18) պիտիմ դիմավոր բայի և անո-
րոշ դերբայի հատկանշական կապակցությունների առկայու-
թյունը («պիտինք գիտենալ»), 19) Պիտի բառի և հարակա-

«տար դերբայի հատկանշական կապակցությունների (պիտի գրած») առկայությունը, 20) ուզել բայի դիմավոր ձևերի բարբառային բնույթի կապակցությունը դիմավոր լրացման հետ («կուզէ ծախէ»):

Ստորև՝ ըստ այս բաղադրիչ-հատկանիշների ներկայացնում ենք «Արհեստ»-ի լեզվական համապատասխան իրողությունները:

1) Բառագոտագործման մեջ նկատելի են ժողովրդական խոսքից եկող մի քանի բառաձևեր, որոնց հաճախակի գործածությունը որակ է ստեղծում «Արհեստ»-ի լեզվում: Դրանցից պետք է համարել մին ձևը, որ առաջացել է մի բառի ու ն հոգի միացությունից և ավանդված է գրաբար դասական բնագրերում (կամբրոնացի, նարեկացի և այլն), բայց և նույնությամբ պահպանվել է արևելյան մի շարք բարբառներում, այդ թվում՝ արարատյան (նաև՝ Լոռու խոսվածքում), Ն. Զուղայի, Արցախի: Արևմտյան բարբառներում չկա (կա մըն հնչյունափոխված տարբերակը): 17-րդ դարի երկրորդ կեսին և հետագայում մին-ը նոր գրական հայերեն բնագրերում գործածվում է իբրև արևելյան հիշյալ բարբառներին հարազատ, այդ բարբառներից եկող (և ոչ՝ գրաբարյան) ձև: Մէկ ձևը (որ նույն մի-ից է առաջացել) մին-ի համեմատ սկսել է ընկալվել (և մինչև օրս էլ ընկալվում է) իբրև առավել գրական (17—18-րդ դարերում՝ գրաբարյան) ձև: «Արհեստ»-ում շափազանց շատ է մին-ի գործածությունը: Օրինակներ՝ «Համարողութիւնն մին արհեստ մի է, որ թիւ գրելոյ ճանապարհ կուսուցանէ» (էջ 1. աշխարհաբար բնագրի առաջին նախադասությունն է), «Մին գիր մի երբ որ առաջին տեղը կու գրովի, մինակ գինքն կու նշանակէ» (3), «Ներքեն մին խաղ մի կու քաշենք» (5), «մին դրով կու լինի» (6), «Բայց թե մին երկար թիւ մի հանդիպի, որ երբ որ բարդենք...» (8), «Երբ որ մին թիւ կու բարդենք...» (9), «մին կարտ լինի» (91), «Երեքի կանոնն մին ճանապարհ մի է, որ երեք գիտացած թրվով մին ուրիշ չի գիտացած թիւ գտնել կու ուսուցանէ» (106), «մին ամսումն» (112), «մին մարդ» (121, 135) և այլն: Նրշենք, որ արևմտահայ խոսքին հատուկ մը կամ մըն ձևերը լիովին բացակայում են «Արհեստի» լեզվում:

Մին ձևի՝ գրքի սկզբի մասում տեղ գտած «մենաշնորհը»

բնագրի շարունակության մեջ աստիճանաբար վերանում է, և սկսում է նույն իմաստով մին-ի հետ հանդես գալ նաև նրա մէկ համանիշը, ինչպես՝ «Զերայ թէ որ վերևի երկու շարն մէկ տեղ բարդենք» (15), «Մէկ թիւ մի մէկ ուրիշ թվով պիտինք փորձել, թէ շիտակ եմք բազմացուցնք» (42), «ապա մէկ թիւ մի կու բարդեմք քշտի երեքին հետ» (87) և այլն:

Թվաբանական կանոնները բացատրելիս մերթ մին, մերթ մէկ ձևերն են գործածվում, ինչպես՝ «Հանելն էն է, որ մին պզտիկ թիւ մի ի մեծ թվէն կամ հաւասար թիւ մի ի հաւասար թվէն դուրս քաշել կուսուցանէ» (17), «Բազմացնելն էն է, որ մին թիւ մի մին ուրիշ թվի շափովն աւելացուցանել կուսուցանէ» (32), բայց և՝ «Բաժանելն էն է, որ մէկ թիւ մի մէկ ուրիշ թվի շափովն կըտրատել կուսուցանէ» (51), «Երբ մէկ թիւ մի բաժանել կուզեմք...» (53) և այլն:

Ընդհանուր առմամբ գերակշռում է մին ձևը, որն ինչպես ասացինք, հատուկ է արևելյան մի շարք բարբառներին: Նկատենք նաև, որ մի բառաձևը (տե՛ս օրինակներում) առանձնահատուկ (մին-ից և մէկ-ից տարբեր) նշանակություն ունի (անորոշություն):

Բառաձևերի գործածման մի այլ ակնառու հատկանիշ է գերազանցապես արևելահայ էս, էդ, էն ձևերի ու նրանցից կազմվածների առատությունը: Ինչպես. «Առաջին տեղն էն է, որ աջ կողմն է: Իսկ վերջին տեղն էն է, որ ձախ կողմն է: Ինչպես էս թվումս» (2), «և էսպես կու կատարվի բարդելն» (7), «Բայց լաւն էն է, որ երբ էսպէս երկար թիւ հանդիպի բաժին բաժին անենք, ամէն բաժին ջոկ ջոկ բարդենք, յետոյ էն բարդածներն մին տեղ ժողովենք» (8), «թէ որ լինի, մրտքերս չի խրթվի, ինչպէս թէ որ կամենամք էս երկար թիւս բաժին բաժին անել, էնպէս կանենք» (9), «էս փորձելս երեք կերպիւ կու լինի» (9), «էս օրինակս կուսուցանէ» (10) և այլն: Ունենք նաև՝ էնտոնց (2), էնտոր (11), էնկից (6), էսկից (13), էստում (71) ձևերի մի շարք օգտագործումներ⁴³:

⁴³ Այստեղ և այսուհետև «Արհեստ»-ից քաղված առանձին բառերի ու ձևերի կողքին տրվում է նրանց գործածության դեպքերից միայն մեկի էջը: Ուստի այդ մի էջի նշումը չի նշանակում, թե բառը կամ ձևը այդ մեկ անգամն է գործածված: Շատ դեպքերում մինչև 10 և ավելի գործածություններից նշված է միայն մեկը:

էս ու էն-ը և նրանցով կազմվածները նույնպէս գրքի սկզբի մասում գրեթէ մենաշնորհ ունեն, բայց աստիճանաբար սրանց զուգահեռ հանգես են գալիս այս ու այն-ը և նրանցով կազմվածները, ինչպէս. «Բայց գրերն պիտի այնպէս տեղաւորած...» (5), «Բայց այս օրինակս այն թւերին է...», «Այս երկուքս» (85), «Յետոյ այս բաղմապատկած թիւս...» (107), «Այսպէս թէ առաջինն տարի լինի...» (107), «Ապա այս եօթնասուն և չորս հարիւրով բաղմացուցինք» (122), «Այսպէս կիմանայ այսչափ տրամ մառճամի գինն» (142) և այլն:

Շատ դեպքերում միմյանց հարեան կապակցութիւններում, նույնիսկ՝ միևնույն նախադասութեան մեջ ունենք և՛ մեկ, և՛ մյուս ձևը («Այս վերոյ գրեալ օրինակս էն թվերին է...» 75, «Ինչպէս այս հետեւեալ օրինակումս...» 77, և «Ինչպէս էս օրինակումս...» 78 և այլն):

Գերակշռում են էս ու էն-ը և նրանցով կազմվածները: Հատկապէս շատ են էս-երը՝ «էս օրինակս», «էս օրինակումս» և այլն, ունենք զ նախդիրով էս, ինչպէս. «Մին ուրիշ ճանապարհ էլ կա հանելու, որ հեշտ է, քան զէս» (22), «Յետոյ զէս բաղմացուցած թիւս վեց հարիւր գիւնով կրկին կու բաղմացնեմք» (139) և այլն, թեև նույն դիրքում էս-ը գործածվում է նաև առանց դ-ի («Յետոյ էս բաղմացուցած թիւը երկու հարիւրով կու բաժանեմք» 134): Կա նաև զ-ով այս («Բայց դժուար է զայս փորձս գործածելն» 50):

Արեւմտահայ խոսքին հատուկ աս, աղ, ան-ը և նրանցով կազմվածները բոլորովին չկան «Արհեստ»-ում:

Գրքի լեզվում առկա են մի շարք ուրիշ բառաձևեր ևս, որոնք բարբառից կամ ժողովրդագիտականից են գալիս. այդպիսին է արեւելահայ խոսքին հատուկ էլ-ը («էլ աւելի» 15, «Այս մէկս էլ կու հանեմք վերեւի մէկէն» 90), միայն մեկ-երկու դեպքում ունենք էլ-ի գրաբարյան այլ համանիշը (օր.՝ «Իսկ թէ յետ բաժանելուն այլ գիր չի մնայ» 77): Էլ-ը բացարձակ գերակշռութեամբ բավական շատ է գործածված: Արեւմտահայ ալ-ի ոչ մի դեպք չկա: Ժողովրդաբարբառային բնութի բառաձևերից կան նաև հիմիկս («հիմիկս թողումք» 51, «Ինչ որ մինչև հիմիկս գրեցինք» 115), կարենալ («որ հեշտ կարենայ ամէն մարդ» 15), մինակ («... կու գրի մի-

նակ»), իրուր («էն ժուկն պիտինք զգուշանալ, որ գթվերն իրուր չի խրթեմք»): Այս բառաձևերը նույնպէս գալիս են արեւելահայ բարբառներից և մի ամբողջական շարք են կազմում մին-ի, էս ու էն-ի, էլ-ի հետ:

Ուշադրութեան է արժանի լինել (լինիլ) բայը, որ գործածված է հենց այս ձևով: Այդ բայաձևը ուշադրութեան ենք առնում այն պատճառով, որ հետագայում գրական արեւմտահայերենին հատուկ ըլլալ ձևն «Արհեստ»-ում լիովին բացակայում է, մյուս կողմից լինել ձևը հետագայում հատկանշական դարձավ գրական արեւելահայերենին: Օրինակներ. «Յետոյ էն բարդումներն մին տեղ ժողովենք, որ հեշտ լինի...» (8), «էս փորձելս երեք կերպիւ կու լինի» (9), «թէ մին կարտ լինի» (91), «սա առանց նորա չի լինիր» (115) և այլն:

2) «Արհեստ»-ի լեզվում առկա են բարբառներից և ժողովրդագիտականից թափանցած մի շարք բառեր (որանց մի մասը ուշ միջնադարի և նոր շրջանի բարբառային փոխառութիւններ են): Այդ բառերից մի քանիսն առավելապէս հատուկ են արեւելահայ բարբառներին, ինչպէս՝ իմին («մին իրմին չի նշանակեր» 2), ժուկ (ժամանակի իմաստով՝ «էն ժուկն միաւորն կու դնեմք» 8, «էն ժուկն պիտինք զգուշանալ» 112), զառապխանայ («մի մառչիլ կուղէ տայ զառապխանէն»): Մյուս բարբառային բառերը, ըստ երևույթին, հատուկ են եղել թե՛ արեւելահայ, թե՛ արեւմտահայ մի շարք բարբառների, ինչպէս՝ պղտիկ («մին պղտիկ թիւ»), ջոկ-ջոկ («ամէն բաժին ջոկ-ջոկ բարդենք» 8), խազ («ներքէն մին խազ կու քաշենք» 5), սաղ («սաղ թվի բարդելն» 5), խաւրենլ («մին ամսումն վեց ոսկի է խարճեր» 112), պարշել («հարիւր ոսկի էինք պարշել» 130), կլօրայ (ամէն մարդ իւր կարողութեան կէօրայ» 116), մայա («իւր բովանդակ մայէն» 125), ֆլան («ֆլանի այսչափ փողը» 116), և այլն:

Շատ է գործածված գէրայ փոխառյալ շաղկապը. ընդ որում գերակշռում է հենց այդ գէրայ ձևը (մոտ 40 գործածութիւն, էջք՝ 15, 16, 20, 26 և այլն), բայց ունենք նաև նույնի գէրէ և գիրայ ձևերը, առաջինը տասից ավելի անգամ (էջք՝ 97, 102, 104, 107 և այլն), երկրորդը մի քանի անգամ գործածված (էջք՝ 12, 17, 30, 36 և այլն):

Կան նաև չափ ու կշիռ նշանակող մի շարք (հիմնականում նոր փոխառյալ) բառեր, որոնք հատուկ են եղել վաճառականների ժողովրդախոսակցական հայերենին, ինչպես՝ բուման (83), դիտր (109), տինար (97), կարտ (97), քէրց (97), դիան (135), լիպրայ (139), օխայ (143), դանքար (144) և այլն:

Վերը բերված բառերից հետաքրքրական են հետևյալները՝ խարենլ, կեօրայ, պարշել, տրամ, տինար՝ իրենց ն, կ, պ, տ խուլ բաղաձայններով (և ոչ թե արևելահայ խոսքին բնորոշ՝ խարջել, գեօրայ, բարշել, կամ բարիշել, դրամ, դինար ձևերը). խուլերով տառադարձված այդ ձևերը հավանաբար միջին հայերենի⁴⁴ կամ արևմտահայ խոսքի ազդեցությամբ են տեղ գտել «Արհեստ»-ի լեզվում: Այդ կարգի բառերի մի մասն էլ, ըստ երևույթին, արևելահայ ձև ունեն, օրինակ, դիտր (ն. Զուղայի բարբառ), ֆլան (Երևանի և ն. Զուղայի բարբառներ) և այլն:

3) «Արհեստ»-ում հետևողականորեն պահպանվում են մի քանի դերանունների (գլխավորապես անձնական) գրաբարյան թևքված (երբեմն տարարմատ հոլովմամբ) ձևերը՝ իւր, իւրեանց, նորա, նոֆա, սորա, գիս, որոնք նոր գրական հայերենում հարատևեցին մինչև 20-րդ դարի սկզբները:

Վերայ-վրայ կապի գուգահեռ ձևերից գործածված է միայն գրաբարյան վերայ-ն, որը նույնպես նոր գրական լեզվում գոյատևեց մինչև 20-րդ դարը:

4) Գոյականների հոգնակին կազմվում է եր ու ներ-ով. արապներն (2), գրերն (5), թվերն (5), հաբիւրաւորներն (6), շարերն (16), մտքերս (29), խրատներ (55), զերօներ (69), մառչիլներն (88), բումաններն (90), օրինակներն (103), ամսներն, օրերի (126), մսխալներն (141): «Արհեստ»-ում այս հոգնակիների մի մասը շատ անգամ է գործածված (օրինակ, թվեր, գրեր, օրինակներ), մի մասն՝ ավելի քիչ:

Գրաբարյան ձևով (բ-ով) կազմված ուղղական հոգնակիները քիչ են «Արհեստ»-ի լեզվում: Կան՝ տինարիֆ (Յենտոյայս տինարիքս էլ կու բաժանեմք ըննով» 102), Փինիկեցիֆ,

⁴⁴ Միջին հայերեն բնագրերում նման ուղղագրությունը բնականոն է. փոխառյալ բառերի ձայննդ պայթականները հաճախ տառադարձվում էին դասական հայերենում խուլի արժեք ունեցող տառերով (պ, կ, տ, ճ և այլն):

ասորիֆ («Փինիկեցիքն են, որ ըզրուական արհեստն գտուն», «արապներն և ասորիքն ի յաջէն դէպ ի ձախ կերթան, երբ որ գիր կու գրեն» 2—3), երկուֆ («տասն երկուֆ են» 21,— թեև աշխարհաբարի համար երկուֆ ձևն արդեն քերականական եզակիի արժեք ունի): Ք-ով և իֆ-ով կազմված այս մի քանի հոգնակիները աննշան տոկոս են կազմում եր ու ներ-ով կազմված հոգնակիների համեմատ:

5) Զուտ գրաբարյան հոլովաձևերը⁴⁵ նույնպես շնչին տոկոս են կազմում աշխարհաբարյան ձևերի համեմատ և «Արհեստ»-ի լեզվում, փաստորեն, բացառություներ են: Ունենք՝ կերպի (9), չորիցս (27), չորսի (62), կտորտանցն (115), հասարակաց (116), գրելոյ (1), բաժանելոյ (63), որոնք անկատելի են մնում նոր լեզվին հատուկ հոլովաձևերի բաղմության մեջ:

6) Հոգնակի ստացական (սեռական-տրական) հոլովը կազմվում է միայն ի վերջավորությամբ, որ և արևելյան բարբառներին հատուկ կազմություն է. գրերին (2), տասնաւորներին (6), հաբիւրաւորներին (7), միաւորներին (8), թւերին (8), օրերի (126), մսխալներին (134) և այլն: Բոլորովին չկան արևմտյան բարբառներին և ժողովրդախոսակցականին հատուկ ձևերը (միաւորներու, թվերու և այլն):

7) Անորոշ դերբայի ստացական հոլովաձևերը կազմվում են աշխարհաբարյան ու թեքությով, ինչպես՝ ճանաչելու (15), բարդելու (15), դուրս ձգելու (15), հանելու (18), բաժանելու (69), բազմացնելու (42) և այլն, գրաբարյան ոչ թեքությով կազմված ձևերը բացառություների արժեք ունեն (վերը բերված օրինակներում՝ գրելոյ 1, բաժանելոյ 63):

8) Հոլովման համակարգում աչքի են զարնում արևելահայ խոսքին հատուկ ում-ով ներգոյականի ձևերը՝ միջումն (14), տակումն (18), օրինակումն (34), տողումն (33), երեսումն (50), էստում (71), քվումս (72), ամսումն (112), ֆաղաֆում (117), օրումս (138): Հատկապես շատ են գործած-

⁴⁵ «Զուտ գրաբարյան» ասելով հասկանում ենք նոր գրական լեզվին ու բարբառներին ոչ բնորոշ հոլովաձևեր և բացառում ենք այն հոլովաձևերը, որոնք բնորոշ են և՛ գրաբարին, և՛ աշխարհաբարին (օրինակ, է-ով բացառականը):

ված տակում, միջում, օրինակում, Կան նաև ներգոյականի իմաստ արտահայտող գրաբարյան ձևեր (ինչպես՝ «կու գրեմք ի ձախ կողմն խաչին» 12, «կու պահենք ի մտի» և այլն)։ Բացարձակորեն գերակշռողը ում-ով հոլովված ձևերն են։

9) Բացառականը կազմվում է գրաբարին, միջին հայերենին և արևմտյան բարբառներին⁴⁶ հատուկ է ձևույթով, ինչպես. ամէնէն (7), քվերէն (9), երկուքէն (9), գրէն (11), մնացածներէս (12), քվէն (17), մեծէն (18), պատճառէն (25), գէրօէն (30), երեքէն (30), չորսէն (30), կողմէն (33), յընէն (35), բաժանօղէն (72), վէրէն (87), տասնէն (87), յուրնէն (88), օրէն (127)։ Արևելյան բարբառներին հատուկ ց(ից, ուց) ձևույթով կազմվող բացառականով միայն երկու բառեր են ձևավորված՝ էսկից, էնկից, որոնք շատ են գործածված։

10) Ն հոգի գործածության 3 բնորոշ հատկանիշ ենք բնութիւն Դրանք հետևյալներն են.

ա) Գործիական և ներգոյական հոլովները ն հոգով գործածելը. դա սովորական է «Արհեստ»-ի լեզվում, ինչպես՝ շափովն (12), մնացածովն (72), կանոնովն (116), փողովն (116), չորսովն (130), վեց հարիւրովն (134), տրամենւովն (143), միջումն (15), տակումն (19), օրինակումն (34), երեսումըն (50) և այլն։ Սա մի հատկանիշ է, որ, ինչպես հայտնի է, երկար ժամանակ բնորոշ մնաց գրական արևելահայերենին։

բ) Մի քանի բառերի ուղղականը ն հոգի միացմամբ ձևավորված է, ինչպես որ հատուկ է արևելյան մի քանի բարբառների, օրինակ՝ մայա-մայէն (125), օխայ-օխէն (140), լիպրայ-լիպրէն (140)։

գ) Ստացական հոլովաձևն ունեցող հատկացուցիչները և կապի խնդիրները գործածվում են և՛ առանց ն հոգի, և՛ այդ հոգով, ինչպես՝ քվի տակն, քվի տակումն (85), քվի մէջն, գէրօի կշտին (85), խաչի տակն (89), օրերի շահն

⁴⁶ Ինչպես ասել ենք, է-ով բացառականը հազվադեպ հանդիպում է նաև մի քանի արևելյան խոսվածքներում. օրինակ, ոչ ստույգ տվյալներով՝ Ն. Զուղայի բարբառի խոսվածքներում (ց-ով բացառականին զուգահեռ)։ է-ով է կազմվում Թփղիսի բարբառի բացառականը։

(126) և այլն, բայց և՛ գէրօին հետ (23), երեքին հետ (24), ըննին հետ (34), չորսին դեմ (37), ժամանակին հետ (118), օրերին շահը (136) և այլն։ Այսպիսի հոգավոր ձևերը, որ հատուկ են թե՛ արևելյան, թե՛ արևմտյան մի շարք բարբառների, ավելի ուշ պահպանվեցին գրական լեզվի միայն արևմտյան ճյուղում։

11) Վ մասնիկով կազմված բայաձևերը (կու գրվի 3, կասվի 4, բաժանվի 73 և այլն) «Արհեստ»-ի լեզվում սովորական են, որ և նոր գրական լեզվի կարևոր հատկանիշ է։

12) Բայական համակարգում գրական ներկան կազմվում է միայն կու, կ եղանակիչի օգնությամբ՝ ճամադրական ձևերով⁴⁷, ինչպես՝ կու գրվի (3), կու նշանակէ (3), կասվի (4), կու գրենք (11), կու գտնունք (7), կու դենք (7), կու տեսնումք (8), կտեսնումք (16), կու տեսնուս (14), կասենք (11), կուգենք (35), կիմանանք (44), կու ձգենք (72), կուսնումք (87), կու ծախեն (141), կու բարդենք (89), կու հանենք (9) և այլն։

Ներկայի ձևերը «Արհեստ»-ում բայի բոլոր դիմավոր ձևերից ամենաշատն են, և բոլորը կու, կ մասնիկով են ձևավորված։ Չկա արևելյան բարբառներին բնորոշ հարադրական (մասնավորապես ում մասնիկով ձևավորված անջատ բայահիմք ունեցող) ներկայի և ոչ մի նմուշ։

Թեև հետագայում նոր գրական լեզվի արևմտյան ճյուղում իշխեց կու եղանակիչի կը ձևը և կու-ն աստիճանաբար դուրս մղվեց, բայց այս վերջինը, բնորոշ լինելով արևմտյան մի շարք բարբառների, անպայման պետք է դիտվի ոչ միայն միջին հայերենի, այլ նաև արևմտահայ խոսքի արտահայտության «Արհեստ»-ի լեզվում։

Թփղիսի բարբառում ներկայի ում-ով հարադրական ձևերին զուգահեռ գործածվող կու-ով համադրական ներկան «Արհեստ»-ի լեզվում դեր խաղալ չէր կարող, քանի որ գրքի հրատարակման շրջապատում որևէ թփղիսցի չի եղել, իսկ եթե նույնիսկ լիներ էլ որևէ մեկը, ապա նրա բարբառային ազդեցությունը նշանակություն ունենալ չէր կարող։

⁴⁷ Բնականաբար, անցյալ անկատարը նույնպես համադրական է և նույն կու, կ մասնիկով է կազմվում։

Ստորև բերում ենք ներկայի ձևերի մի քանի օրինակներ «Արհեստ»-ի խոսքային միջավայրում. «Ինչպէս էս օրինակումս կու հանեն 6 ի թվէն 9, կու մնայ 3 և կու դնեմ 3 խազի տակն առաջի տեղն: Դարձեալ կու հանեմ 3 ի թվէն 8, կու մնայ...» (19), «էն բովանդակ ժողոված թիւն մին գրով կու գրվի» (5), «էն ժուկն երկուքէն էլ էն շափ դէրօ դուրս կու ձգեմ» (72), «էս վեցս կու բարդեմ գէրօին հետ, և կու լինի միշտ 6, և կու դնեմ 6» (87—88), «Բայց երբեմն կու հանդիպի, որ զփողն ժամանակին հետ կամ ժամանակն ապրանքին հետ կուգեմ իմանալ» (112), «Մուշկն զտրով կու ծախեն» (141) և այլն:

13) Դիմավոր բայերի հոգնակի առաջին դեմքի գրաբարյան մէ և բարբառային-ժողովրդախոսակցական նմ զուգահեռ վերջույթները (մ և ն ձևույթային փոփոխականները) խառը գործածված են, ինչպես ներկայի, այնպես էլ մյուս համապատասխան ժամանակաձևերում, օրինակ՝ կու գրեմ (6), կու բարդեմ (6), կու պահեմ (8), կու տեսնում (8), դուրս կու ձգեմ (11), կու հանեմ (19), կուգեմ (53), կու բազմացնեմ (139), դնեմ (6), կամենամ (8), կասեմ (14) և այլն, բայց և՛ կու գրեն (11), կու բարդեն (9), կասեն (11), կու զտնուն (7), կու դնեն, կու պահեն (7), կու ձրգեն (11), կիմանան (17), կու հանեն (18) և այլն:

էական բայի հոգնակի առաջին դեմքը (ներկայի) նույնպես զուգահեռ են և են ձևերով է արտահայտված, ինչպես օրինակ, «լավ են բարդեր» (17), բայց՝ «Շիտակ են բարդեր» (9):

Բացարձակ գերակշռությունը բոլոր դեպքերում մ ձևույթով կազմված գրաբարյան բնույթի տարբերակներին է:

14) Նզակի երրորդ դեմքի (ներկա, բնական) բայերի զուգահեռ է և ի դիմանիշներից բացարձակ գերակշռություն ունեն առաջինները, ինչպես՝ կու նշանակէ, գնէ («Պօղոսն գնէ», «Ղուկասն գնէ» և այլն 116), կանէ («քանի շահ կանէ» 125), կուգէ (125), կու ուսուցանէ (13) և այլն, շատ քիչ են ի-ով կազմված ձևերը, ինչպես՝ կու գրվի (3), կասվի (4):

է դիմանիշով կազմված ձևերի բացարձակ գերակշռությունը արևմտահայ խոսքի (ինչպես և միջին հայերենի ու

մասամբ գրաբարի⁴⁸) հետ է համապատասխանում (Թիֆլիսի բարբառի դերը կամ ազդեցությունը հավանական չէ):

15) էական բայի ներկա, եզակի երրորդ դեմքը (նաև օժանդակ բայի դերում) միշտ ունի է ձևը, ինչպես՝ «առաջին տեղն է» (2), «ծախ կողմն է» (2), «հեշտ է» (22) և այլն: Սա համապատասխանություն է գրաբարի, միջին հայերենի և արևմտյան բարբառների ու ժողովրդախոսակցականի հետ (համապատասխանությունը նաև թիֆլիսի բարբառի միևնույն է-ի հետ տվյալ դեպքում անկարևոր է, քանի որ նրա դերը «Արհեստ»-ի լեզվում այս դեպքում էլ բացառված է):

16) Վաղակատար ժամանակների ձևերը կազմվում են եր վերջույթ ունեցող անջատ հիմքի (կախյալ գերբայի) տարբերակով, ինչպես՝ «ուրեմն շիտակ էինք բարդեր» (14), «շիտակ ենք բազմացուցեր» (42), «ինչպէս որ ասեք ենք» (88), «վեց ոսկի է խարենք» (112), «քանի տրամով որ պարշեր է» (133), «այսպէս էինք պարշեր» (138) և այլն: Այս ձևերի բացարձակ գերակշռություն մեջ երբեմն հանդիպում են ել վերջույթ ունեցող անջատ հիմքով կազմված ձևեր, օրինակ մի քանի անգամ գործածված է «հարիւր ոսկի էինք պարշել» նախադասությունը (128, 130, 132):

Վաղակատար ժամանակների եր վերջույթ ունեցող անջատ հիմքի բացարձակ գերակշռությունը «Արհեստ»-ի լեզվում համապատասխանություն է միջին հայերենի և արևմտյան բարբառների հետ:

Եր-ով վաղակատարի ամենավաղ գործածությունները վկայված են միջին գրական հայերենի բնագրերում (եյ-ով վաղակատարին զուգահեռ): Ուրեմն, ըստ աղբյուրների, այն նախ միջին հայերենի հատկանիշ է (եյ-ով տարբերակի զուգահեռ առկայությունը չի բացառում այդ իրողությունը): Բայց ընդհանրապես վաղակատարի եր-ով բայահիմքը բնորոշ է արևմտյան բարբառներին, որոնցից էլ, հավանաբար, մտել է միջին հայերենի մեջ: Մեզ հասած վիճակով էլ արև-

⁴⁸ Վերը բերված բոլոր բայերն էլ գրաբարում և լեզվության են, ուստի ներկաի եզակի երրորդ դեմքում ունենում են է դիմանիշ, որը և մեծ մասամբ պահպանված է «Արհեստ»-ի նոր գրական հայերենի ձևերում. մի երկու դեպքում միայն է դիմանիշը փոխարինված է արևելյան բարբառներին հատուկ ի-ով:

մրտյան բարբառները հատկանշվում են նաև եր-ով վաղակատար ունենալու փաստով. այդպիսի վաղակատար ունեն կարինի, Մուշի, Խարբերդի, Երզնկայի, Շապին-Գարահիսարի, Արաբկիրի, Ակնի, Սեբաստիայի, Եվդոկիայի, Զմյուռնիայի, Նիկոմեդիայի, Կ. Պոլսի, Ռոդոսթոյի⁴⁹ և այլ արևմտյան բարբառներ, իսկ վաղակատար ժամանակների ել վերջույթով անջատ բայահիմքի ձևը հատուկ է արարատյան, Նոր Զուղայի, Աստրախանի բարբառներին, մասամբ Ադուլիսի բարբառին, ինչպես և Արցախ-Սյունիքի բարբառի մի շարք խոսվածքներին: Այսինքն՝ վաղակատարի ել-ով բայահիմքը արեւելեւյան մի շարք բարբառների առանձնահատկություն է: Ընդ որում, ել-ով վաղակատարի տարբերակը՝ ալ-ով վաղակատարը (տես՝ ալ ա), նույնպես հատուկ է արեւելյան բարբառներին (Արցախի, Շամախու, Ադուլիսի, Մեղրու և այլն)⁵⁰:

Կարելի էր ասել՝ չ վերջույթ ունեցող վաղակատարները հատուկ են արեւելյան, իսկ Ե ունեցողները՝ արեւմտյան՝ բարբառներին, եթե չլիներ իլ-ով և իր-ով վաղակատարների՝ այդպիսի բաժանմանը չհամապատասխանող տարածումը. առաջինը հատուկ է ոչ միայն Թուրքիայի, այլ նաև Արգվինի, Ն. Նախիջևանի, Սուլավայի բարբառներին, իսկ երկրորդը մի կողմից արևմտյան՝ Տիգրանակերտի, Տրապիզոնի, Մալաթիայի բարբառներին⁵¹, մյուս կողմից արեւելյան՝ Խոյի բարբառին⁵²:

Եվ այսպես, եր-ով վաղակատարը արևմտյան բարբառների և միջին հայերենի հատկանիշ է⁵³, ուստի և «Արհեստ»-ի լեզվում նրա բացարձակ գերակշռությունը աղերսվում է միջին հայերենի և արևմտյան բարբառների (թերևս՝ ավելի շատ արևմտյան ժողովրդախոսակցականի) համապատասխան ձևվերի հետ:

17) «Արհեստ»-ի լեզվում ներկայի ժխտական ձևերը (հարադրական) կազմվում են Ե վերջույթ ունեցող անջատ բա-

⁴⁹ Ա. Աբրահամյան, Հայերենի գերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Ե., 1953, էջ 177—192:

⁵⁰ Նույն տեղում:

⁵¹ Նույն տեղում:

⁵² Մ. Ասատրյան, Ուրմիայի (Խոյի) բարբառը, Ե., 1962, էջ 100:

⁵³ Իրրև աննշան բացառություն, այն առկա է արևելահայ մի քանի խոսվածքներում (գլխավորապես պարսկահայ):

յահիմքով (գերբայով)⁵⁴, որ դարձյալ արևմտյան բարբառների առանձնահատկությունն է, օրինակ՝ «չի կարեւ հանվիլ իր գրէն» (20), «կու տեսնեմք, որ ոչինչ չի ավելանար» (57), «այս շորսս էլ վերևի գէթոն չի փաշվիր» (89), «էս մէկ թիւս մնացած գէթոն դուրս չի գար» (89), «առանց նորա չի լինիր» (115) և այլն (դիտենք նաև, որ ժխտական դիմավոր երրորդ դեմքի մասնիկը ոչ թե գրաբարյան չէ, այլ ժողովրդաբարբառային չի ձևն ունի):

18) «Արհեստ»-ի լեզվին հատկանշական են պիտի դիմավոր բայի և անորոշ գերբայի հետևյալ կապակցությունները. «պիտինք ետ դառնալ փորձել» (9), «բաժանող թիւս պիտինք բաժանելու թվի տակն դնել» (53) «աջ կողմն դուրս պիտեղալ» (73), «չի պիտինք երկարել» (73), պիտինք փորձել (74), պիտինք կտրել (74), պիտինք գիտենալ (97), պիտինք իմանալ (112) և այլն: Շատ են հոգնակի առաջին դեմքի (պիտինք) և անորոշի կապակցումները:

19) «Արհեստ»-ում է՛լ ավելի հատկանշական են պիտի բայի և հարակատար գերբայի այնպիսի կապակցությունները, ինչպես. պիտի տեղաւորած, պիտի բարդած, պիտի գրած և այլն: Ունենք նաև պիտի բայի առաջին դեմքի (հոգնակի) կապակցություն հարակատարի հետ («պիտինք զայն դուրս ձգած» 7), սակայն այս կաղապարի մեջ բնորոշը եղակի երրորդ դեմքի՝ պիտի-ի կապվելն է հարակատարի հետ, ուր պիտի-ն եղանակիչի արժեք է ստանում. օրինակներ. «Բայց գրերն պիտի այնպես տեղաւորած...» (5), «Հանելու թիւն էնպէս պիտի տեղաւորած մեծ թվի տակումն, որ միաւորն միաւորին, տասնաւորն տասնաւորին, հարիւրաւորն հարիւրաւորին և հազարաւորն հազարաւորին դէմդէմ լինի» (18), «էս երկու թվի տակն մին խաղ պիտի փաշած և պղղտիկ թիվն մեծէն դուրս հանած և մնացածն խաղի տակն գրած» (18), «պիտի երկրորդ գրի տակն գրած» (53), «էն ժուկն պիտի գրած երկրորդ գրի տակն» (53), «Կտրատած թիվն ինչպէս պիտի բարդած» (81), «Սաղ թիվն կտրատած թիւ պիտի բաժանած» (97), «գերբորդն էլ դիան պիտի չինած» (108), «պիտի առաջինն էլ ամիս շինած» (107), «պիտի

⁵⁴ Այս բայահիմքը կամ գերբայածը առաջացել է անորոշ գերբայից. գլխավորապես վերջույթային լ-ն Ե-ի է վերածվել:

յառաջ զամէնու մայէն մին տեղ նամարած և դրած առաջին տեղն» (116) և այլն:

«Արհեստ»-ում կան նույնիսկ գլուխների վերնագրեր այս բնույթի կապակցութիւններով արտահայտված՝ «Կտրատած թիվն ինչպէս պիտի հանած» (86), «Կտրատած թիվն ինչպէս պիտի բազմացուցած» (91), «Կտրատած թիւն ինչպէս պիտի բաժանած» (96):

Հարակատար դերբայի այսպիսի օգտագործումները, մեր կարծիքով, արեւելյան որոշ խոսվածքների ազդեցութեան առ-դշունք են⁵⁵, գլխավորապէս՝ Ն. Զուղա—Երևան—Արցախ շարքի բարբառների:

20) «Արհեստ»-ի շարահյուսական առանձնահատկութիւն-ներից նշելի է նաև ուզել բայի եղանակային-դիմավոր ձևերի հետ լրացում բայի գիմավոր ձևի կապակցվելը: Օրինակներ. «կուզենք իմանամք» 35), «ուզեն իմանան» (117), «կուզէ իմանայ» (125), «մին մարդ մի կուզէ ոսկի ծախէ Աճաճստան և կուզէ իմանայ, թէ իւր բովանդակ ոսկին որչափ թուման և որչափ դիան կանէ» (135) և այլն:

Այդ կապակցութիւնների գերակշռութեան մեջ միայն մի երկու դեպքում է ուզել բայի գիմավոր ձևը կապվում անորոշ դերբայի ուղիղ ձևի հետ (ուղիղ խնդիր), ինչպէս, օրինակ, «յետոյ ուզեն իմանայ» (116):

Բերված օրինակներում (երեքի մեջ) թեև ներկան կ-ով է կաղմված, այսինքն՝ արեւելյան բարբառներին ոչ հատկանշա-կան ձևով, բայց եղանակային-դիմավոր բայ-գիմավոր բայ կաղապարը առավելապէս արեւելյան մի շարք բարբառ-ների (Երևան, Արցախ-Սյունիք, Ն. Զուղա և այլն) ամրացած հատկանիշ է, արեւմտյան բարբառներում նույնպէս այն հան-դիպում է, բայց ըստ երևույթին, ավելի պակաս կայունու-թյամբ:

«Արհեստ»-ում ուզել բայի եղանակա-գիմավոր ձևերի

⁵⁵ Հայոց բարբառներին նմանված աշխատութիւններում մենք չգտանք պիտի եղանակիչի (կամ նրա որեւէ տարրերակի) ու հարակատար դերբայի նման կապակցութիւնների նկարագրութիւն, մինչդեռ հարակատարի գոր-ծածութեան՝ այդ կապակցվածքներին նմանվող դեպքերի կարելի է հանդի-պել Արցախի և Զանգեզուրի, ինչպէս և մասամբ արարատյան որոշ խոս-վածքներում և, թերևս, ամենից ավելի՝ Ն. Զուղայի բարբառում:

կաղմած այդ կարգի կապակցութիւններ շատ կան, նրանք դրեթե օրինաշատ են:

Այս 20 կետերում նշված հատկանիշները «Արհեստ»-ի լեզվի համար պայմանականորեն համարելով գլխավոր, նույն-պայմանականութեամբ լրացուցիչ հատկանիշներ ենք համա-րում հետևյալները: Մի շարք դեպքերում գործածվում են առնեմ գրաբարյան բայի անցյալ կատարյալի հիմքից կաղ-մված ձևերը անել իմաստով, ինչպէս՝ «չորս բաժին արա-րինք» (9), «ի՛նչ շահ կամ գարար են արարեր» (116) և այլն (գրաբարյան բնույթի այս հատկանիշը նոր գրական լեզվում պահպանվեց մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը): «Արհեստ»-ում դրանց զուգահեռ գործածված է նաև ժողովրդախոսակ-ցական անել ձևը (օրինակ, վերը բերված՝ «որչափ դիան կանէ» 135):

«Արհեստ»-ում իրրև որոշիչ հոգ գրաբարյան ավանդույ-թով գործածվում է ն-ն, որի ը ժողովրդաբարբառային տար-բերակը չկա:

Այնուհետև, մառդ բառը շատ է գործածված, բայց հոգ-նակիի ոչ մի ձև չկա: Եղակին ստացական հոլովում սովորա-բար լինում է մառդի (119), բայց կա նաև մառդուս (119) ձևը:

Գործածված է տալ բայի տվալ կատարյալի ձևը («մին-մարդ մի իւր փողն շահով տվաւ» 125): Գտանիմ բայի ածանցն-րնկնում է ներկա-ըղձական հիմքում («մէկ բաժանող մի մին-բաժանելու թվի մեջն կու գտվի»): Ինն բառը թեթեւիս հընչ-յունափոխվում է (ըննի, ըննում— տե՛ս վերը բերված օրի-նակները):

Նշենք մի երկու ուղղագրական հատկանիշ. վ-ի և լ-ի ուղ-ղագրութիւնը անկանոն է, որ հատկապէս նկատվում է քիւ բառի գրութիւններում (տե՛ս վերը բերված օրինակները): Հինգ բառը միշտ գրվում է հինկ, վաքսուն-ը՝ վացուն: Հիշենք, որ հինկ ձևը շատ է հանդիպում միջին հայերեն բնագրերում:

Հանրագումարի բերելով «Արհեստ»-ի լեզվի թվարկված հատկանիշները՝ պարզում ենք, որ ըստ 20 գլխավոր կետերի (հատկանիշների) այդ լեզուն գերազանցապէս նոր գրական հայերենն է, ժամանակակից գրական հայերենի 17-րդ դարի երկրորդ կեսում գործածված տարբերակը: 20 կետերից մի-

այն երկուսում՝ 3-րդի (ղերանունների մի քանի ձևեր ու վերայ կապը) և 13-րդի (մ բայական մասնիկի բացարձակ գերակշռությունը ն-ի նկատմամբ՝ գրեմֆ-գրեմֆ) դեպքերում ունենք զրաբարյան ձևերի գերակշռություն, մյուսներում բացարձակորեն դերիշխում են նոր գրական լեզվին հատուկ ձևվերը: Երեք կետերի դեպքում՝ 9-րդ (բացառականի կազմությունը), 14-րդ (կուզէ, զնէ, կանէ ձևերի գերակշռությունը), 15-րդ (էական բայի եզակի երրորդ դեմքի է ձևի մենաշնորհը), զրաբարյան ու միջին հայերենի ձևերի ընդհանրությունը համընկնում է ժողովրդաբարբառային (գերազանցապես արևմտյան) ձևերի հետ, որոնք և աշխարհաբարյան են: Կետերից երեքում՝ 12-րդ (ներկայի կու-ով կազմությունը), 16-րդ (վաղակատար ժամանակների կազմությունը), 17-րդ (ներկայի ժխտական ձևերի կազմությունը) նշված ձևերը լիովին կամ մասամբ համընկնում են միջին հայերենի և ժողովրդաբարբառային հայերենի (արևմտյան) առանձնահատկությունների հետ:

Արևմտահայ թեև արևելահայ հակումների տեսանկյունից «Արհեստ»-ի լեզվի այս հատկանիշները հետևյալ բաժանումն ունեն: Կետերից 6-ում (կամ 7-ում) բացարձակ կամ մասնակի գերակշռությունը արևելյան բարբառներին է (և ժողովրդախոսակցականին): զրանք են՝ 1-ին (բառաձևեր), 2-րդ (բարբառային բառեր), 6-րդ (հոգնակի ստացական հոլով), 8-րդ (ներդոյական), 18-րդ (պիտի-պիտինք-անորոշ դերբայ կապակցություն), 19-րդ (պիտի-հարակատար դերբայ կապակցություն): Գուցե սրանց ավելացվի 20-րդը (նուզել բայի եղանակադիմավոր ձևեր- այլ բայերի դիմավոր ձևեր կապակցություն):

Կետերից 6-ում ձևերի գերակշռությունը արևմտյան բարբառներին է (և ժողովրդախոսակցականին), զրանք են. 9-րդ (բացառականի ձևերի հիմնական մասը), 12-րդ (զրական ներկայի, նաև անց. անկատարի կազմությունը), 14-րդ (ներկայի և ըղձականի եզակի երրորդ դեմքի ձևերում է դիմանիշի գործածության գերակշռությունը), 15-րդ (էական բայի ներկա եզակի երրորդ դեմքի է ձևի մենաշնորհը), 16-րդ (վաղակատար ժամանակների ձևերը), 17-րդ (ներկայի ժլխ-

տական ձևերը)*: Այս կետերից երեքը (9, 14, 15) արևմտահայ բնույթի լինելով, ինչպես վերն ասվեց, միաժամանակ հատուկ են զրաբարին ու միջին հայերենին, իսկ արևմտյան բարբառներին (և ժողովրդախոսակցականին) հատուկ մյուս երեք կետերում նշված ձևերը (12, 16, 17) առկա են միջին հայերենում:

10-րդ կետում (ն հոգի գործածության 3 դեպքերը) հավանաբար արևմտյան և արևելյան բարբառների հատկանիշները հավասարակշռվում են:

Նդրակացությունը հետևյալն է. նոր գրական հայերենով տպագրված առաջին զրքի ուշադրության առնված հատկանիշները ցույց են տալիս, որ 17-րդ դարի երկրորդ կեսին հայ նոր գրական լեզուն համակարգային դառնալու նկատելի հակումներ է ցուցաբերել, գծագրվել են կանոնի որոշ սահմաններ, թեև համակարգի չեկած զուգահեռականություններն էլ շատ են: Չուտ զրաբարյան (միայն զրաբարին հատուկ) ձևերը քիչ են, իշխում են ժողովրդախոսակցական և ժողովրդաբարբառային լեզվամիջոցները, և, իհարկե, լեզվի քերականական-տրամաբանական հիմքը լիովին ժողովրդաբարբառայինն է, այսինքն՝ նոր գրական լեզվին:

Լեզուն ունի թեև արևմտյան, թեև արևելյան բարբառների առանձնահատկություններ, այն միասնական գրական լեզու է. չկա արևելահայ-արևմտահայ բաժանում: Ընդ որում, արևմտահայ խոսքի տարրերը արևելահայ տարրերին մոտավորապես հավասարվում են՝ զրաբարյան և միջին հայերեն այն լեզվամիջոցների առկայության շնորհիվ, որոնք միաժամանակ արևմտյան ժողովրդաբարբառային են:

Թիֆլիսի բարբառում եղած արևմտահայ ձևերի (կու-ով ներկա, էական բայի եզակի երրորդ դեմքի է ձև, բայերի եզակի երրորդ դեմքի է վերջավորություն (կու բերէ) և է-ով բացառական) հատուկ դերը կամ ազդեցությունը ոչ միայն «Արհեստ»-ի, այլև 17-րդ դարից և 18-ի սկզբներից պահպանված աշխարհաբարյան մի քանի ուրիշ բնագրերի («Պարզաբանութիւն», «Գանձ շափոյ, կշռոյ...» և այլն) մեջ հավանական չէ: Եթե նույնիսկ այդպիսի դեր որևէ կերպ եղել է,

* Տե՛ս 17-րդ կետի տողատակի ծանոթագրությունը:

միևնույն է, դա վաղ շրջանի նոր գրական հայերենը միասնական դարձնող ազդակ կարող է դիտվել, քանի որ այդ ձևերով Թփղիսի բարբառը կապվում է արևմտյան բարբառներին, և այդ ձևերի գոյությունը տվյալ դեպքում «Արհեստ»-ի լեզվում, ինչ կերպ էլ հարցին մոտենալու լինենք, միջին հայերեն-արևմտահայ խոսքի տարրերի առկայությունն է՝ հակա-կշիռ գուտ արևելահայ խոսքին բնորոշ տարրերի: Իսկ նման հավասարակշռությունն էլ միասնական նոր գրական հայերենի ձևավորման կարևոր գործոններից է:

Ինչ վերաբերում է արևելյան մի քանի բարբառներում առկա ա-ով բացառականին (ֆեզանայ, ֆեանայ և այլն), ապա այն թեև է-ով բացառականի տարրերակն է, բայց շատ հեռացած նրանից և արևելյան բարբառների ուժեղ երանգով:

Ն. Զուլալի բարբառում է-ով բացառական, ասել ենք, ոչ եթե եղել էլ է, շատ թույլ է արտահայտվել, և եթե այն որևէ դեր կատարել է «Արհեստ»-ի լեզվում, ապա դարձյալ իբրև արևմտահայ խոսքի «ներկայացուցիչ» և դարձյալ նպաստել է լեզվի միասնականացմանը:

Կա ուշագրավ կարծիք⁵⁶, ըստ որի արևելյան և արևմտյան հայոց բարբառներում ներկայի (և անցյալ անկատարի) կազմությունները մի ժամանակ նույնն են եղել (բոլորն էլ կու-կե եղանակիչով համադրական ձևեր), բայց առայժմ այդ վարկածը փաստող նյութ չկա, համենայն դեպս, 17-րդ դարի բարբառներից պահպանված կցկտուր փաստերը նման բան ասելու հիմք չեն տալիս այդ ժամանակաշրջանի վերաբերյալ:

«Արհեստ»-ի լեզվի քննությունից կարելի է ենթադրել, որ գրքի թարգմանիչը պետք է արևելահայ եղած լինի՝ նոր Զուլա—Նրևան—Արցախ—Ջանգեզուր, գուցե և Ազուլիս տեղանքների ու շրջակայքի խոսվածքներից մեկի ներկայացուցիչ՝ գրաբարի և միջին հայերենի իմացությամբ կամ ծանոթությամբ: Այս ենթադրության հիմքը «Արհեստ»-ում գուտ արի-վելահայ բառային և քերականական ձևերի (կետեր 1, 2, 6, 8, 18, 19, 20) այնպիսի առատությունն է, որը, թվում է, կարող է եկած լինել մի արևելահայ խոսքից: Ավելի քիչ հավանական է թվում, որ արևմտահայ որևէ բարբառի մի ներ-

⁵⁶ Զ. Անադյան, Հիսկատար քերականություն հայոց լեզվի... հ. 4, գիրք Բ., Ե., 1961, էջ 75, 87:

ձայացուցիչ այդքան շատ և այդքան բնորոշ արևելահայ ձև-վեր գործածել, մինչդեռ «Արհեստ»-ում եղած արևմտահայ նույնպես մեծաքանակ ձևերը մի արևելահայ կարող էր գործածել, քանի որ նախ՝ այդ ձևերի հիմնական մասը նաև գրաբարյան և միջին հայերեն են, այսինքն՝ ընդհանուր գրական հայերեն, որպիսին, պետք է իմացած լինի թարգմանիչը: Ապա՝ արևմտյան որոշ ձևերի գործածմանը կարող էր նպաստել թարգմանչի գտնվելը Արևմտյան Նվրոպայի հայկական գաղութներում, որոնցում եղել է արևմտահայ խոսքային շրջապատ (գրքի հրատարակվելը Մարսելում վկայում է, որ նրա թարգմանիչը բնակվել է այդ քաղաքում կամ արևմտանվորական այլ քաղաքներից մեկում): Բայց մյուս կողմից էլ ունենք փաստ (կանդրադառնանք քիչ հետո), որը վկայում է, թե ինչպես 17-րդ դարի վերջում և 18-ի առաջին կեսում արևմտահայ բարբառի ներկայացուցիչը գրավոր խոսքում գործածել է այժմ գուտ արևելյան համարվող ձևեր:

Իսկ ամենից հավանականն, անշուշտ, այն է, որ արևելյան և արևմտյան այս ձևերի համատեղ գործածությունը «Արհեստ»-ի լեզվում հատուկ է եղել 17-րդ դարի միջբարբառային խոսակցական հայերենին և պահպանվել է առհասարակ նոր գրական հայերենի վաղ շրջանի նմուշներում:

Նվ այնուամենայնիվ, ո՞վ է առաջին աշխարհարար գրքի լեզվի մշակը: Այս հարցով դեռևս ոչ ոք լրջորեն չի դրադվել: Նախ ասենք, որ համոզիչ չէ այն ենթադրությունը, ըստ որի «Արհեստ»-ը անպայման իտալերենից է թարգմանվել⁵⁷: Գրքում բնագրի լեզվի մասին ոչ մի խոսք չկա, ուստի թեև անհավանական չէ գրքի՝ իտալերենից թարգմանված լինելը, բայց և չի բացառվում նրա լատիներենից, ֆրանսերենից կամ նույնիսկ հունարենից թարգմանված լինելը⁵⁸:

Գ. Զարբանալյանն իր «Հայկական մատենագիտության» մեջ, նկարագրելով այս գիրքը և վերծանելով տիտղոսաթերթի վերջում եղած Ի. Յ. Լ. Բ. Տ. Պ. հապավումները՝ փակագծում

⁵⁷ Հմմտ. օրինակ. Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղտնի, հ. Ա., Կահիրե, 1946, էջ 417—418:

⁵⁸ Գ. Պետրոսյանն այն կարծիքին է, որ գիրքը թարգմանված է գերմանացի Քր. Կլավիուսի «Գործնական թվաբանության համառոտ շարադրանք» լատիներեն ձևերակից (տե՛ս «Սովետական Հայաստան» լրագիր, 1969, 170):

ազնայնացում է այսպես՝ (Քակովը Հոլով Բիւզանդեան?)⁵⁹։ Զարբհանալյանի՝ կասկածով հայտնած (հարցականն, անշուշտ, կասկածի նշան է) այս կարծիքն անցել է Ա. Ղազիկյանի գիրքը, և նա էլ հարցականով գրել է նույն Քակովը Հոլով Բիւզանդեան-ը⁶⁰, որ Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցի է նշանակում։

Այնուհետև, այս թեմական ենթադրությունն ընդունվել է իբրև հավաստի իրողություն, և, օրինակ, Արշակ Ալայոյանյանը, թվարկելով Հովհաննես Հոլովի թարգմանած գրքերը, «Արհեստ»-ը գրել է առաջին տեղում՝ առանց որևէ վերապահության⁶¹։

Գ. Պետրոսյանի մի հոգվածում նույնպես գրքի թարգմանիչն անվերապահորեն համարվում է Հովհաննես Հոլովը. «Արհեստ համարողութեան» գիրքը, — գրում է հեղինակը, — չէր կարող վրիպել հայ բանասերների ուշադրությունից։ Սակայն նրանց հետաքրքրել է հարցի միայն մի կողմը, այսինքն՝ ով է թարգմանիչը։ Ուսումնասիրությունները բերել են այն եզրակացության, որ թարգմանությունը պատկանում է լեզվաբան Հովհաննես (Հոլով) Հակոբյան-Կոստանդնուպոլսեցուն⁶² և ապա՝ «... Հովհաննես «Հոլով» Հակոբյանը, որն այլ գրքերի հետ միասին թարգմանեց, մշակեց ժամանակի համապատասխան մաթեմատիկական տերմիններ ու աշխարհաբար լեզվով տպագրեց առաջին մաթեմատիկական գիրքը»⁶³։

Իրականում չեն եղել այնպիսի ուսումնասիրություններ, որոնցում բանասերներին հետաքրքրած լինի «Արհեստ համարողութեան» գրքի «հարցի միայն մի կողմը» և որոնք բերած լինեն այն եզրակացության, թե այդ գրքի թարգմանիչը Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցին է։ Եղել է միայն Գ. Զարբհանալյանի վերոհիշյալ թեմական ենթադրությունը, որը նույնությամբ (թերևս՝ մեքենայորեն) անցել է Ա. Ղազիկյանի

գրքի մեջ⁶⁴ և հետո ուրիշների կողմից որդեգրվել իբրև իրողություն։

Մի քանի դիտողություն պետք է անենք Գ. Զարբհանալյանի վերածանության մասին, որի շնորհիվ է Հովհաննես Հոլովն անվերապահորեն «դարձել» աշխարհաբար կամ նոր գրական հայերեն առաջին տպագիր գրքի թարգմանիչը։

Հօգուտ Զարբհանալյանի ենթադրության ունենք հետևյալ տվյալները. ա) Նոր գրական հայերեն երկրորդ տպագիր գիրքը՝ «Պարզաբանութիւն հոգեհուազ սաղմոսացն» (1687), իրոք Հովհաննես Հոլովն է կազմել (մի մասն իր հեղինակածն է, մյուս մասը՝ օտար տարբեր աղբյուրներից կատարված թարգմանություններ ու փոխադրություններ), որ և մտածել է տալիս, թե առաջին աշխարհաբար գրքի թարգմանիչն էլ կարող էր նա լինել։ բ) «Արհեստ»-ի տպագրության ժամանակ և դրանից էլ քիչ առաջ Հոլովը բնակվել է Մարսելում, որտեղ նա Վատիկանի կողմից նշանակված էր Ոսկան Երևանցու Ս. էջմիածնի և Ս. Սարգսի անվան տպարանի դավանաբանական գրաքննիչ, և նույն շրջանում այդ տպարանը լույս է ընծայել Հոլովի գրած կամ թարգմանած գրքերը (ինչպես՝ «Համառօտութիւն ճարտասանականի արուեստի», 1674, «Նուագարան կուսին Մարիամու», 1676)⁶⁵։ գ) Հոլովը 1670-ական թվականներին Մարսելում եղած հայ մտավորականներից «Արհեստ»-ի առավել հավանական թարգմանիչը կարող է թվալ, քանի որ մյուսներից որևէ մեկը Հոլովի հետ չի կարող համեմատվել լեզուների իմացությամբ և թարգմանական արվեստին տիրապետելու աստիճանով (ինչպես իմանում ենք «Պարզաբանութիւն հոգեհուազ սաղմոսացն» գրքի շափածո հիշատակարանից, Հոլովը տիրապետել է մի շարք ժամանակակից և դասական լեզուների)։ դ) Հոլովը «Արհեստ»-ի տիտղոսաթերթին կարող էր իր անունը ծածկագրել, քանի որ չէր ուզի իր՝ նշանավոր հայկաբանի, անունը բա-

⁵⁹ Գ. Զարբհանալյան, Հայկական մատենագիտություն, էջ 70։

⁶⁰ Ա. Ղազիկյան, Հայկական նոր մատենագիտություն, պր. 1, սյունակ 248։

⁶¹ Ա. Ալայոյանյան, Պատմություն հայ գրքերի, հ. Ա, էջ 417։

⁶² «Սովետական Հայաստան» լրագիր, 1969, № 170։

⁶³ Նույն տեղում։

⁶⁴ Հիշենք, որ Ա. Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտությունը» ստեղծվել է Գ. Զարբհանալյանի «Հայկական մատենագիտության» պատրաստվող 2-րդ հրատարակության խմբագրման ժամանակ, իբրև դրա արդյունք, և Զարբհանալյանի գրքից շատ նկարագրություններ նույնությամբ տեղ են գտել Ղազիկյանի աշխատության մեջ։

⁶⁵ Գ. Զարբհանալյան, Պատմություն հայկական տպագրության, Վենետիկ, 1895, էջ 132—133, 140—141։

ցահայտորեն կապել առաջին անգամ ռամկոճեն հրատարակվող մի գրքի հետ: Ե) Հոլովը թեև իրեն սովորաբար Հովհաննես Կոստանդնուպոլսեցի է անվանել, բայց մեկ անգամ (մեզ միայն այդ մի գեպին է հայտնի) նա իրեն անվանել է Բուզանդեան և կարող էր «Արհեստ»-ի մեջ էլ իրեն այդպես կոչել, որով և կարծես հավանական է դառնում հապավման Բ. տառը Բիզանդեան վերծանելը:

Տեսնենք ինչ տվյալներ ու փաստարկներ կան ի վնաս Գ. Զարբհանալյանի ենթադրության: ա) Զարբհանալյանն իր գրքում ճիշտ չի արտագրել «Արհեստ»-ի տիտղոսաթերթին հղած հապավումները (տառերը): Տիտղոսաթերթի առաջին՝ Խ տառի մոտ, ինչպես որ մյուս 5 տառերի մոտ, հապավման կետ կա, որ նշանակում է, թե բոլոր տառերը, այդ թվում և Ջ-ն, հապավումներ են: Զարբհանալյանը տառերը արտագրելիս՝ իր գրքի մեջ բոլոր կետերը պահպանել է, բացի Խ-ի մոտ հղածից, որով ստացվել է այնպես, թե իբր այն հապավում չէ և կարելի է կարդալ իբրև ի նախդիր՝ «Ի Յակովբէ Բիզանդացոյ»: Ղադիկյանը, հետևելով Զարբհանալյանի օրինակին, նույնպես այդ Խ-ն գրել է առանց կետի: Եթե ի տառն իբրև նախդիր ընթերցելու Զարբհանալյանի առաջարկը հիմնավոր չէ, անհավանական է դառնում նաև հաջորդ երկու տառերի վերծանությունը: բ) Զարբհանալյանը բոլորովին չի վերծանել հապավման վերջին երկու տառերը՝ Տ. Պ., որ նույնպես լրջորեն կասկածի տակ է դնում սկզբի տառերի վերծանությունը: գ) Ասացինք, որ մեզ ծանոթ դեպքերից միայն մեկում է Հովհաննես Հոլովն իրեն Բուզանդեան (ի դեպ ոչ Բիզանդեան, ինչպես գրում է Զարբհանալյանը) անվանել. «Անարդին ծառայ Յոհաննէս Բուզանդեան շնչին քահանայ», — այսպես նա ստորագրել է Թոմա Կեմպացու «Յազագս համահետեմանն» իր թարգմանած գրքի առաջաբանի («Բան առ սրբուհի Աստուածածինն») տակ⁶⁶: Նույն գրքի տիտղոսաթերթին կարդում ենք. «Թարգմանեցալ ի Յոհաննիսէ Վարդապետէ Կոստանդինուպոլսեցոյ»: Եվ այս կերպ է Հոլովն իրեն անվանել իր թարգմանած կամ գրած բոլոր գրքերի տիտղոսաթերթերին: Նրանց վրա կարդում ենք. «շարագրեցալ»

կամ «թարգմանեցալ» «ի Յոհաննիսէ վարդապետէ Կոստանդնուպոլսեցոյ», երբեմն՝ «ի նուաստ Յոհաննիսէ» կամ «Յոհաննիսի վարդապետի Կոստանդնուպոլսեցոյ...»: Հովհաննես Հոլովի թարգմանած ձեռագիր բժշկարանում նույնպես ունենք «ի Յոհաննիսէ վարդապետէ Կոստանդնուպոլսեցոյ»⁶⁷: Մեզ հայտնի են 14 անուն գրքեր, որոնց տիտղոսաթերթերին թարգմանիչ կամ հեղինակ Հովհաննես Հոլովն իրեն այդպես է անվանել, և ոչ մի դեպք հայտնի չէ, որ գրքի տիտղոսաթերթին նա իրեն Բուզանդեան անվանի: Ի դեպ, ասենք, որ թեև Հոլովը կոչվում է Յոհաննէս Յակովբ, բայց չկա (գոնե մեզ հայտնի չէ) որևէ գիրք, որտեղ գրված լինի ի Յակովբէ..., ինչպես որ վերծանել է Գ. Զարբհանալյանը Յ. հապավումը:

Միայն գրքերի առաջաբաններում է, որ Հովհաննես Հոլովը երբեմն իրեն անվանում է ոչ միայն Յոհաննէս Կոստանդնուպոլսեցի, այլ նաև ուրիշ կերպ, օրինակ, «Ես ամենեցուն հմ ծառայ, անպիտան Յոհաննէս Հոլով» («Հայելի ճշմարտութեան» 1680), «Զայսոսիկ գրեցի առ եղբարսդ իմ՝ խնդրելով զներումն յանդգնութեան իմոյ, զի հմ ձեր ամենեցուն ծառայ նուաստ Յոհաննէս Հոլով: Ողջ լերուք» («Պատասխանատրութիւնք», 1687), «Աշխատանօք Յոհաննիսի Ստամպուլի վարդապետի» («Պարզաբանութիւն», 1687): Ահա, առաջաբաններում իրեն այլ կերպ անվանելու մի դեպքն էլ վերոհիշյալ Բուզանդեան-ն է:

Ուրեմն, քիչ հավանական է դառնում, որ տիտղոսաթերթերում երբեք չգործածված և միայն մեկ անգամ առաջաբանի տակ գրված Բուզանդեան անունը, այն էլ նրա Բ. հապավումը Հոլովը զներ մի գրքի տիտղոսաթերթին:

Հանրագումարի բերելով թերև ու դեմը՝ կարծում ենք, որ մատենագիտական բնույթի տվյալները, համենայն դեպս, հավանական չեն դարձնում Գ. Զարբհանալյանի տված թեական վերծանումը: Սակայն հնարավոր է, որ վերծանումը սխալ լինի, բայց գրքի թարգմանիչը, այնուամենայնիվ, լինի Հոլովը: Այդ բանը պարզելու համար կարելի է դիմել լեզվական համեմատության միջոցին՝ Հոլովի թարգմանած

⁶⁶ Թոմա Կեմպացի (Գեմրացի), Յազագս համահետեմանն Քրիստոսի..., Հոմ. 1674, էջ 6:

⁶⁷ Խոսքը «Գիրք բնազննութեան» բնագրի թարգմանության անվանաթերթին է վերաբերում (տե՛ս «Հանդես ամսօրյա», 1893, էջ 283):

«Պարզաբանութեան» լեզուն համեմատել խնդրո առարկա «Արհեստ»-ի լեզվի հետ:

Անկախ այդպիսի համեմատությունից և նրա նպատակից «Պարզաբանութիւն»-ն իր լեզվական որակով շատ հետաքրքրական գիրք է, վաղ շրջանի նոր գրական հայերենի կարևոր նմուշ: Ուստի համառոտակի անդրադառնում ենք այդ գրքի լեզվական հատկանիշներին:

«Պարզաբանութիւն»-ը, որ, ինչպէս ասվեց, նոր գրական հայերեն երկրորդ տպագիր գիրքն է, նույնպէս հասցեագրված է հայ վաճառականներին, սակայն այս անգամ նկատի է առնված ոչ թե նրանց գործնական ու կիրառական գիտելիքների հարստացումը, այլ հոգևոր սնունդը:

Հայտնի է, որ Սաղմոսարանը հայոց միջնադարում եղել է ոչ միայն եկեղեցու սպասավորների ամենօրյա գործածության գիրքը, այլ նաև մայրենի լեզվի դասագիրք, ինչպէս և ընթերցանության գիրք, նաև՝ սիրելի վաճառականներին: Հայ վաճառականը փոքրագիր սաղմոսարանը գրաւանում անցնում էր մայրցամաքի մի ծայրից մյուսը և ազատ ժամերին սաղմոսներ կարդում, թեև սովորաբար կարդացածի մի փոքր մասն էր միայն հասկանում: Ահա ազուլեցի մի վաճառական՝ Գուլնազարի որդի խոջա Նահապետը, որ նաև տպարանատեր էր Վենետիկում, որոշում է «հանուրց հայկազունեաց վաճառականաց» մատուցել մի գիրք, որտեղ լինեն գրաբար սաղմոսների աշխարհաբար պարզաբանությունները: Վերջիններս, իհարկե, նաև իրեն՝ Նահապետին էին հետաքրքրում, բայց այս դեպքում ևս, հավանաբար, դեր է խաղացել թե՛ ընդհանուրին օգտակար լինելու ձգտումը և թե՛ վաճառական զնորոյներ ունենալու հեռանկարը:

Գիրքը լույս է տեսել Վենետիկում, Նահապետ Ազուլեցու տպարանում, «Արհեստ»-ից 12 տարի անց՝ 1687-ին, «Պարզաբանութիւն հոգեհուազ սաղմոսացն Դաւթի մարգարէին» վերնագրով⁶⁸:

⁶⁸ Տիտղոսաթերթն է՝ «Պարզաբանութիւն հոգեհուազ սաղմոսացն Դաւթի մարգարէին: Ժողովեցեալ ի զանազանից մատենից վարդապետաց եկեղեցւոյ և թարգմանեցեալ ի հայրապետութեան Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի Տեառն Նղիազարու Սրբազան Կաթողիկոսին ի նուստ Յոհաննիսէ վարդա-

Գրքի սկզբում խոջա Նահապետի անունից գրված (հավանաբար Հովհաննէս Հովովի կողմից) ոտանավորում ասված է, որ գիրքը կազմվել է իր՝ Նահապետի ցանկությամբ և՝

Աշխատեալ Յոհաննիսի,
Ստամպոյցի վարդապետի.
Ձոր մաղրաւոյ աղաչեցի
Ձեռն արկանել այսմ գործի:

Ասված է նաև, որ «Պարզաբանութիւն»-ը՝

... պարզ է և հեշտալի
Եւ դիւրապէս հասկանալի:

Գրաբար առաջաբանում («Առաջաբանութիւն գրգոյս») խոսվում է այն մասին, որ վաղուց ի վեր խոջա Նահապետը ցանկացել է ունենալ սաղմոսների մեկնաբանություն, ապա ասված է. «Եւ ի շկարելն զտանել զպարզախօս ոմն հեղինակ կամ զիակատար իմն, ուխտեալ էր յանձին իւրում տալ շարադրել զնա երբեմն ի դիպակում ժամու ի լրումն բղձի և դիտաւորութեան իւրոյ: Ուստի ի դառնալն իւր վերստին առողջութեամբ շնորհօք Տեառն ի քաղաքս այս Վէնէտիկ թախանծանօք խնդրեաց ի հիբոյս պարզաբանել զնոյնն: Ո՛չ վասն մարմնաւոր օգտի և շահասիրութեան իւրոյ, այլ վասն հոգեկան մխիթարութեան ազգին հայկազունեաց և ի յիշատակ անջնջելի ինքեան և ծնողաց իւրոց հանգուցելոց ի Քրիստոս: Բայց ոչ խրթին շարադրութեամբ, այլ աշխարհական լեզուաւ. ըստ որում տեսեալ էր առ իտալացիս զի ամենեքեան միահաղոյն դիւրապէս հասկանալով, վայելիցեն զնոյնն»⁶⁹:

Ուրեմն իտալերեն գրքերի օրինակն էլ է խրախույս ու ազդակ հանդիսացել նոր գրական հայերեն այս գրքի երևան գալուն:

«Խրատ առ ընթերցողս» նախաբանի կամ սկզբի առաջաբանի մեջ Հովհաննէս Հովովը գրում է, որ մյուս քրիստոնյաներն էլ են եկեղեցիներում երգում սաղմոս, «բայց ոչ այնքան յաճախ, զի հայք ոչ միայն եկեղեցականք, այլև աշխար-

պետէ Կոստանդինուպօլսեցւոյ ի փառս մեծազոյնս Աստուծոյ: Եւ տպագրեցեալ արդեամբք և գոյիք Ազուլեցի Խոջայ Գուլնազարի որդի խոջայ Նահապետին ի սեփականի տան իւրում: Ի թուականութեան մերում ԹՃԼԵ, ի Վէնէտիկ քաղաքի: ...1687, 840 էջ:

⁶⁹ Պարզաբանութիւն, էջ 5:



Պարզաբանութիւն եօզեմուազ սաղմոսացն, Վենետիկ, 1687 թ.
(անվանաբեր)

հականք ևս արտաբոյ եկեղեցւոյն միշտ և հանապազ ունին զնա ի բերան: Ուստի ի տարակուսիլն նոցա ի վերայ դժուարիմաց բանի ուրուք կարեն սովաւ դիւրապէս լուծանել զտարակուսութիւնս իւրեանց»⁷⁰:

Ապա՝ «Երատ առ ընթերցողս» առաջարանում բացատրում է, թե ինչու է ինքը ճիշտ համարում սաղմոսների պարզաբանութիւնը աշխարհաբար հրատարակել. «... ղմեկնութիւնս զայս այնու գիտաւորութեամբ շարադրեցաք մեք աշխարհօրէն, զի կարիցեն աշխարհականք ամենեքեան դիւրապէս իմանալ զսոյն. քանզի եկեղեցականք ունելով զբաւական

⁷⁰ Պարզաբանութիւն, էջ 8:

կրթութիւն և զուսումն, յարածամ ճաշակեն զբաղցրութիւնս սրբազանից զրոց, իսկ աշխարհականք, որ պարապին ի զբաղմունս և ի հոգս աշխարհի, ամենեկին մնան անմխիթարք ի յայսպիսեաց շնորհաց»⁷¹:

Արդյո՞ք աշխարհաբարի օգտագործման 17-րդ դարի այս հիմնավորումը հեռու է 19-րդ դարում գրապայքարի ժամանակ աշխարհաբարի պաշտպանութիւնը նվիրված փաստարկումներից: Կարծում ենք երկու դեպքում էլ փաստարկումների էությունը նույնն է:

Հովհաննէս Հոլովը խնդրում է նաև, որ աշխարհաբար գրելու համար իրեն շարհամարհեն իբրև հայերենին անհմուտ անձի. «որովհետև ոչ վասն եկեղեցականաց, այլ վասն օգտի և շահաւետութեան հասարակաց ժողովրդոց եղև առաջիկայ մերս գործառնութիւն»⁷²:

Գրքի վերջում, նահապետ Աղույեցու անունից գրված ուսանավորի մեջ խոսք կա Հովհաննէս Հոլովի, իբրև թարգմանչի և կազմողի աշխատանքի մասին այսպես.

Ի շուս լեզուացս քաբգմանալ՝
Յունաց, հելլց համաձայնեալ,
Եւ լաթինաց քնդ շարագեալ,
Հայոց լեզուաւ տպագրեալ,
Աշխարհաբար զայս ծանուցեալ (838)⁷³:

Գիրքը հետևյալ կառուցվածքն ունի: Ամեն էջը երկու մասից է բաղկացած. մի մասում հատվածաբար տրված են զրաբար սաղմոսները, մյուսում ամեն մի զրաբար հատվածի դիմաց գտնվում է նրա աշխարհաբար մեկնությունը կամ պարզաբանությունը: Վերջինս կա՛մ տվյալ սաղմոսի (նրա մի մասի) աշխարհաբար աղատ փոխադրությունն է, կա՛մ մեկնաբանությունը ըստ եկեղեցական տարբեր հեղինակների, որոնց մտքերը Հոլովի կողմից նոր դրական հայերենի են թարգմանված՝ հավանաբար ամենից ավելի շատ լատիներենից, հունարենից և իտալերենից:

Առանձին պարզաբանությունները մեծ մասամբ սկսվում

⁷¹ Նույն տեղում:

⁷² Նույն տեղում:

⁷³ Այստեղ ու սրանից հետո «Պարզաբանութիւն»-ից բերված բնագրային քաղվածքների էջերը նշում ենք քաղվածքի կոդքին:

են այսինքն բառով: Բերում ենք մի նմուշ գրքից, սկզբում փակագծում տալով գրաբար հատվածը (կամ սաղմոսի համարը), ապա առանց փակագիծ նրա պարզարանությունը նոր գրական լեզվով:

(«Սաղմոս Դաւթի: Սաղմոս 12») Իբր զայս սաղմոսս ինքն Դաւթ է ասացեր: Այս սաղմոսումս կու մխիթարէ մարգարէն բարի և խեղճ մարդիքն, որ երբոր կու տեսանեն շար մարդկանց աշողութիւն շի յուսահատին:

(«Մի՛ նախանձիր ընդ շարս և մի՛ ընդայնոսիկ ոյք գործեն զանօրէնութիւն»): Այսինքն, մի՛ նախանձիր և մի՛ ցանկանար շարագործ մարդկանց փառացն և մեծութեանն և աշողութեանն և մի՛ հետևիր այնպիսի անխղճմտանք մարդկանց, որ աշխարհիս վերայ անօրէնութիւն և ամբարշտութիւն կու գործեն:

(«Զի որպէս զխոտ վաղվաղակի ցամաքեսցին. որպէս զգալարի խոտոյ վաղվաղակի անկցին»): Այսինքն, գէրէ նոցա մեծութիւնն և փառքն շուտով կու փշանայ և խոտի նման կու ցամաքի և նոցա վայելչութիւնն դալար խոտի նման շուտով, երբոր մահուան տաղնապն կու հասնի, վայր կու անկանի և կու ոչնչանայ:

(«Յուսա ի Տէր և արա՛ զքաղցրութիւն, բնակեաց յերկրի. և հովուեսցիս ի մեծութեան նորա»): Այսինքն, յուսա՛ դու յԱստուած և քաղցրութիւն արա՛, իբր ամենեցուն սէր և դուք և խոնարհութիւն նշանց տուր: Բնակիր միշտ այս երկրումս իւր սուրբ եկեղեցւոյ միջումն, որ Աստուծոյ մեծութեամբն իբր շնորհօքն և ողորմութեամբն ապրիս և կերակրիս քոյ կենաց մէջն» (185—186):

Այժմ ըստ վերոհիշյալ 20 կետերի, որոնց օգնութեամբ փորձեցինք տալ «Արհեստ համարողութեան»-ի լեզվական բնութագիրը, պետք է աշխատենք ներկայացնել «Պարզարանութեան» լեզվի (հասկանալի է, միայն նոր գրական հայերենով եղած մասերի) համապատասխան հատկանիշները, ըստ այդմ էլ՝ հայտնաբերել այս երկու գրքերի լեզվական մի քանի կարևոր ընդհանրություններն ու անհամապատասխանությունները:

1) Մին և մէկ գուգահեռներից «Պարզարանութեան» մեջ գործածվում է երկրորդը. օրինակ՝ «Այնպէս մարդն մէկ բա-

րի ծառի կու նմանի, որ մէկ զետեփի մի տնկած լինի» (12), «մէկ անգամ» (20), «մէկ ժամանակ մի դիս պատեր էին...» (22), «Իբր թէ ինձ մէկ վնաս մի հասուցանէք» (24), «մէկ բարի գործ մի գործէ» (56), «մէկ բանի մի համար երգում կանէ» (59), «մէկ մեղք մի կամ մէկ թերահաւատութեան գործ մի տեսանէի» (337), «Ես նորա թշնամիքն մէկ ոչինչ իրմինի պէս խոնարհեցուցեր էի» (442), «Ինչպէս մէկ գօրական մի կուրախանայ» (650) և այլն: Հարցութեամբ անգամ գործածված մէկ ձևի դիմաց գրքում կա մի քանի անգամ գործածված (նույն նշանակությամբ) մին ձևը՝ «որոց միին է դիտութիւն վախճանի աշխարհիս» (40), «մին առիծի ձազի նման» (66), «մին զմինու վերայ դիզվեցան» (412):

Մի ձևը մեծ մասամբ գործածվում է անորոշի նշանակութեամբ: Նրա մը արեւմտահայ տարբերակը այստեղ ևս բացակայում է:

Ցուցականներից գործածվում են միայն այս, այդ, այն գրաբարյան ձևերը ու նրանցից կազմվածները: Էս, էդ, էն, ինչպիս և աս, ադ, ան և նրանցից կազմվածները բոլորովին չկան: Օրինակներ. «Սաղմոսս այս խորագիր շունի» (11), «այլ իւր միտքն և կամքն այն է» (12), «Այսինքն այսպէս չեն անօրէն մարդիք» (14), «Իբր սաղմոսս այս երրայեցուց Աստուածաշնչումն հատուկ թիւ և համար շունի» (16), «Այսինքն այս ինչ խոտվութիւն և աղաղակ է» (16), «և ես այսօր քեզ ծնայ» (18), «այնչափ խեղճ և ողորմելի եղայ» (21), «մի՛ հետևիր այնպիսի անխղճմտանք մարդկանց» (185) և այլն:

Այս, այդ, այն բառերը և նրանցով բաղադրվածները շատ մեծ քանակ են կազմում գրքի մեջ և խոսքի ընդհանուր բնույթը դարձնում ավելի խստորեն գրական:

Մի քանի տեղ, կարծես, զգացվում է արեւմտյան աս, ադ, ան ձևերով բաղադրված ասուր, անուր բառերի բանավոր գործածման ազդեցությունը: Օրինակ, ունենք, «այնու համար դու յամօթ արա զիրեանք» (45), «այնու համար ինչ ճանապարհ որ կու բռնէ» (46), «այսու համար իմ սիրտս ուրախացաւ» (62—63) և այլն: Այս զեպքերում, հավանաբար, արեւմտահայ ժողովրդախոսակցական ասուր-ն ու անուր-ն են (ասուր համար, անուր համար) գրաբարյան տեսք ստացել (քանի որ այսուր և այնուր ձևերը գրաբարը չունի):

Այլ գրաբարյան բառաձևի ժողովրդաբարբառային էլ ու ալ համանիշները նույնպես չեն գործածվում, նրանց իմաստով գործածվում է միայն գրաբարի ալլ-ը, օրինակ, «թէ տասն անգամ հարիւր հազար այլ լինի» (22), «այսպէս անպէտ են դարձեր, որ այլ արժանի չեն, որ զԱստուած պաշտեն» (56), «արեգակն իւր պայծառութեամբն, քան զամէն աստղեր այլ առաւել կու ծանուցանէ...» (97) և այլն:

Ժողովրդաբարբառային բառաձևերից կան՝ ցորեն (25), արեց (35), մանտրել («Փոշին կու մանտրվի» 84), սառուց (743), գանկատ (71), ֆանտեց (35) և այլն (վերջին երկու օրինակները, թերևս, գիտվեն նաև իբրև գրաբարյան ձևերի ուղղագրական տարբերակներ):

Գործածված է լինել ձևը (ըլլալ ձևի ոչ մի օգտագործում չկա). «որ լինի թէ մէկ հնարք մի գործեն» (16), «արժանի կու լինին» (2), «չի լինի թէ...» (24), «գլխիկոր լինի» (31), «կու լինիմ» (46) և այլն:

2) Ժողովրդաբարբառային (այգ թվում՝ նոր փոխառյալ) բառերը բավական շատ են, օրինակ, գործածված են՝ մուլ (18), պողազ (28), փոշիմանել (24), դալխան (29), պոլոնիկ (34), իֆմին (37), քալաֆ (46), պոունկ, գէհր, աղու (56), սէլալ («սէլաներն» 70), փարտայ (74), օթաղ («օթաղներ» 74), գէրէ (78), վոագել (91), ճէյրան (81), դամիշ («դամշի նման» 89), պոզ («իմ ազատութեան պոզն է» 69), զօրայ («ինձ հատուցումն անէ իմ արդարութեան և շիտակութեան զօրայ» 78), աւփար («Փարաւոնի ասքյարն» 91), ճէվեհիր (100), փեթակ (100), իզ («զիմ իզս» 64), դօշ (133), ֆուշ («քունշ շորերս» 139), ջուլ («ջուլ կու հագնի» 168), տնագատեղ (182), ձորամէջ (331), էլշի (543), քօփալ (645), լակլակ (546), լապստրակ (546), սահաթ (547), շուաֆ (557), ֆունն (620), մատղաշ (647), քալան (650), պուլ («պուլն կու հանէ» 695), եաւայ (820), սաղ (761), դօլ («այս դօլումս» 419), ողորդ («ողորդ կասեր» 674) և այլն:

Շատ են նաև ժողովրդական հարադրութիւնները (այգ թվում դարձվածքային), ինչպես. ականջ դրեց (48), ականջ կանէ (50), ձեռնէն քան շի զար (58), ճշանց տուր (47), ցիբ ու ցան անեմ (84), միտֆ արեց (35), տնագ աւարին (58.— երկրորդ բաղադրիչը գրաբարյանացված է), կոտր ձգեմ (83),

դողն բռնեց (91), դուր կու գան (101), կուլ տվեց (561), դիրուր կու գան (448) և այլն: Շատ են գործածված իֆմին, զօրայ, ճշանց տալ բառերը:

«Արհեստ»-ում բազմիցս գործածված ժուկ բառը այստեղ չկա (գործածվում է ժամանակ—ը), «Արհեստ»-ում առկա զէրայ, գէրէ, զիւրայ ձևերից այստեղ գործածվում է միայն գէրէ—ն:

Մի շարք բառերի մեջ նկատելի է ձայնեղների ավանդական գրութեան փոխարեն խուլների գործածություն, օրինակ, 1-ին կէտում բերված նմուշներում կան այդպիսիք. զանկատ, ֆանտեց, նաև՝ մուլն, մանավանդ նոր փոխառյալ բառերում նկատելի են արևմտյան խոսքին (կամ միջին հայերենին) բնորոշ տառադարձություններ՝ փարտա (ոչ՝ փարդա), ճէվեհիր (ոչ՝ ջաւահիր), ճէյրան (ոչ՝ ջեյրան) և այլն:

Բայց մյուս կողմից ունենք դրամ (59), զօրայ (78) և այլն, որոնք ինչպես տեսանք, «Արհեստ»-ում տրամ, կօրայ ձևն ունենին:

3) Պահպանվում են անձնական դերանունների և սա, դա, նա—ի գրաբարյան ձևերը. նոցա (17), նորա (18), սորա, զիս (21), դորա (21), նմանէ (17), մեֆ (25), զնոսա (25), դոֆա (33), դոցա (50), իւր (17), իւրեանֆ (17), իւրեանց (17) և այլն:

Վերայ կապը գործածված է միայն այս ձևով:

4) Հոգնակի ուղղականը մեծ մասամբ կազմվում է գրաբարյան ձևով (ֆ մասնիկով), ինչպես՝ դպիրֆն (15), փարիսեցիֆն (15), ֆահանայֆ (15), ֆահանայապետֆն (15), ժողովուրդֆ (16), հրամանֆն (18), հրէայֆն (18), եզերֆն (18), քաղաւորֆ (19), իշխանութիւնֆ (21), հեքանոսֆ (21), աղօթֆ (33), մանկունֆ (37), բշնամիֆն (37), կենդանիֆն (39), ոչխարֆն (38), քալանֆն (43), մեղաւորֆ (49), սիրելիֆ (48), զործֆն (50), վիշտֆ (70), նեղութիւնֆ (70), որոգայքֆն (70), յարկֆ (74), աղբիւրֆ (76), հիմունֆ (76), ձիաւորֆ (88) և այլն:

Մարդ բառի հոգնակին բազմիցս գործածված է մարդիֆ ձևով:

Դրբի սկզբի էջերում բացարձակորեն իշխում են Բ-ով կազմված հոգնակիները, ապա մերթ ընդ մերթ երևում են նաև Ե-ու Ն-ով հոգնակիի ձևեր, որոնք գրաբարյան ձևե-

րին զուգահեռ գործածվում են մինչև վերջ, թեև գերակշռողը միշտ մնում են Բ-ով ձևերը: Երևում են Բ-ով հոգնակիների օրինակներ. տեղերս (31), հրեշտակներն (38), կռապաշտներդ (44), աշխերն (46), առամներն (47), բներն (48), աղեղներն (49), նետերն (49), սրտերն (50), խորհուրդներ (54), մրտֆերն (57), հիմֆերն (71), փայլակներն (76), կայծակներն (75), աղբրներ (76), նանապարհներ (80), ժողովրդներն (84), զաւակներդ (84) և այլն:

Շատ դեպքերում նույն նախադասության մեջ հանդիպում են և՛ Բ-ով, և՛ Երևում են Բ-ով կազմված ձևեր, ինչպես՝ «ցաւեր և շարութիւնք յղացաւ իւր սրտի միջումն» (35), «Այսինքն, իւր ողորմած աշխերն միշտ դէպ ի յաղատներն և խղճներն կու նային և իւր աշաց քարքերն մահկանացու մարդկանց զործին և աւարմունքն կու քննեն» (50), «Իբր քալաֆներն և հնարագործութիւնքն, որ իմ բշխմիքն ինձ համար սլատարաստեր էին, ինձ ժամանեցին» (70), «մահուան որոգայթքն, իբր հրէից և Յուդայի քալաֆներն և հնարագործութիւնքն...» (70) և այլն:

Մի շարք դեպքերում էլ միևնույն բառը մե՛րթ մի, մե՛րթ մյուս ձևով է հոգնակի դառնում, ինչպես, օրինակ՝ «Դարձեալ, երեւցան զանազան աստուածաբան վարդապետք, որք են աղբիւրք ջրոյ կենդանութեան» (76) և «Այսինքն, երեւցան նոր և անտես ջրոց աղբրներ ի բազում տեղիս» (76), «և բացվեցան և յայտնվեցան երկրիս և աշխարհիս հիմֆերն» (76) և «նոցա քարոզութեամբն յայտնեցան բանի մարգարեիցն, որք են հիմունք աշխարհի» (76), ունենք նաև՝ ձիաւորներն (87) և ձիաւորքն (88) և այլն:

Կան մի շարք դեպքեր, երբ գրաբարյան հոգնակիի ձև ունեցող բառերը ստանում են աշխարհաբարյան հոգնանիշ, ինչպես ժողովներն (61), զործներս, զմտներն (57), հիմֆերն (71), աշխերն (79), ոտներս (81), ձիաւորներով (92), երկինքներս (95), մեղներս (101), խօսներն (101) և այլն:

5) Զուտ գրաբարյան⁷⁴ թեք հոլովաձևերը գերակշռում են (զխաւորապէս հոգնակիում) ժողովրդաբարբառային հոլովաձևերի համեմատ, օրինակներ՝ «մարդոյ ոտաց տակն ձգե-

ցիր և նորա կամացն հնազանդեցուցիր» (38—39), «Այսինքն, այլ և հնազանդեցուցիր մարդոյ վայրի ոշխարքն, երկնից թռչունքն և ծովու ձկներն և այլ ուրիշ կենդանիքն, որ ծովու ալեաց միջումն իւրեանց ճանապարհ կու գնան» (39), «կու տանէ զիւրեանք ի կեանս յաւիտենականս» (16), «ի ձեռաց նոցա» (17), «Վասն վշտից և ազատութեանց» (20), «միտ երկխալից նման» (37), «թռչնոց նման» (39), «ձկանց նման» (39), «իմ բոլոր սրտիս» (40), «զիս այսչափ փորձանաց ազատեցիր» (40), «կռապաշտից և զանազան ազգաց միջումն» (42), «ի բերանոյ արդար մանկանց» (63), «զի որպէս Դաւիթ գերծաւ ի ձեռաց թշնամեաց իւրոց նույնպէս Քրիստոս զերծաւ ի ձեռաց հրէից» (67), «շնորհակալ կու լինի ի բերանոյ Քրիստոսի» (67), «յոյս ունիմ, թէ հրէից քահանայիցն և քահանայապետացն, թէ դպրացն և փարիսեցւոցն և թէ նենգաւոր Յուդայի ձեռքէն նորա կարօղ դօրութեամբն պոծանիմ և ազատիմ» (69), «զիմ աղօթից ձայնն» (71), «և շուրջ զնովաւ են յարկք իւր» (74), «նոցա մեղացն թողութիւն կու շնորհէ» (102), «զկեանս պարզեւ ազգի մարդկան» (773): Նաև՝ կամացն (16), ալլազգեաց (16), որդոյն (17), կտակարանաց (17), կամօքն (18), հրամանացդ (18), սրտի (19), մտօք (19), որքոց (19), նախաճարգ (19), կամաւ (19), հոգւոյն (20), փառօքն (20), պսակաց (21), շարշարանաց (20), երեսաց (21), արքոյն (21), դպրաց (22), ի բերանս (23), եկեղեցւոյն (22), աղօթիւք (23), ստուգիւ (24), յանկողնոյ (24), զինւոյ (25), բերանոյ (26), որդւոյ (32), սուսերօք (70), բրօք (70), ջրոյ (76), հասակաւ (767) և այլն:

Հատուկ անունները գրաբար են հոլովված՝ Ազամայ, Աբրահամու, Իսահակայ, Յակոբայ, Աբիսողոմայ, Յուդայի և այլն⁷⁵:

Վերևի օրինակները հիմնականում գրքի սկզբի մասից են, բայց գրաբարյան այդ կարգի հոլովաձևերի բացարձակ գերակշռությունը անփոփոխ պահպանվում է ամբողջ գրքում:

⁷⁵ Հատուկ անունների այ հոլովակերտիչով թեքումը առկա է նաև մի շարք բարբառների մեջ: «Պարզաբանութեան» լեզվում հատուկ անունների այս և մյուս հոլովաձևերը ակնհայտորեն գրաբարից են զալիս:

⁷⁴ Տե՛ս «Արհեստ»-ի լեզվի թնության 5-րդ կետի ծանոթագրությունը:

և բազմաթիվ օրինակներ կարելի է քաղել նրա ցանկացած մասից:

6) Հոգնակի ստացական (սեռական-տրական) հոլովը գերադանցապես գրաբարյան ձևերով է կազմվում, որոնց օրինակները բերվեցին նախորդ կետում: Կան նաև աշխարհաբարյան ձևեր, սակայն միայն ի թեթույթով, այսինքն՝ արևելահայ խոսքին հատուկ, ինչպես՝ «իւր նետերի սլաքներն» (35), «սաստեցիր կռապաշտներին» (41), «այն շար խորհուրդների միջումն» (47), «ցաւերի և տանջանքների քամին» (51), «մատաղներին կամ զոհերին համար» (61), «քոյ թևերի շվաքի տակումն» (65), «սէլաւների նման ինձ վերայ վազեցին» (70), «անդունդների յատակն» (89), որսերի (47), ժողովրդների (33), ժառանգներին (67), սարերի (81), գաւակներին (86) և այլն: Ու թեթույթով արևմտահայ բնույթի սեռական-տրական հոլովաձևեր (սարերու, գաւակներու) չկան:

7) Անորոշ դերբայի ստացական հոլովը կազմվում է գրաբարյան ոչ ձևույթով, ինչպես՝ գալոյ (8), զործելոյ (15), կատարելոյ (19), զովելոյ, փառարանելոյ («առաւօտեան ժամանակն այլ առաւել պատշաճ է քո սուրբ անունդ գովելոյ և փառաբանելոյ» 27), անելոյ («իրաւունք անելոյ վերայ» 59), զարգարվելոյ, խնշվելոյ («զարգարվելոյ և խաշվելոյ համար» 61), մեռնելոյ («մեռնելոյ ահն» 69) և այլն: Աշխարհաբարյան ու-ով կազմված ձևեր բոլորովին չկան:

8) Շատ են ում-ով ներգոյականի ձևերը, օրինակ՝ Աստուածաշնչումն (16), միջումն (16), աշխարհումս (20), սաղմոսումս (20), քերանումս (28), երկրում (39), ղոնեւումն (43), տակումն (46), բնումն (47), երեսումն (49), սարումս (49), ժամանակումն (49), տանաւումն (50), երկնումն (50), խորանումդ (58), լեռնումդ (59), մտումս (82), երկրում (97), ծայրերումն (97) և այլն:

Չափազանց շատ է միջում-ի գործածութիւնը՝ մեծ մասամբ ն հոգի հետ, շատ են գործածված նաև աշխարհում, սաղմոսում (ս և ն հոգերով) և այլն:

9) Բացառական հոլովը կազմվում է է թեթույթով, ինչպես քերանէն (16), սրտէն (19), ճանապարհէս (19), պատծէ (20), պատուհասէ (20), Յուդայէ (20), Բեզանէ (21), փորձանքէ

(21), մահուանէ (21), լեռնէն (21), անօրէններէ (66), ձեռնէն (66) և այլն:

Յ-ով բացառական հազվագեպ է հանդիպում, օրինակ, ինձանից (40), մեզանից (45), Բեզանից (299):

10) Գործիականի և ներգոյականի հետ ն հոգի գործածութիւնն բնորոշ դեպքերից բազմաթիվ օրինակներ ունենք: 8-րդ կետում ն հոգով ներգոյականի օրինակներ բերվեցին (միջումն, ղոնեւումն, երեսումն և այլն), բերենք նաև մի քանի օրինակներ ն հոգ ունեցող գործիականի. խորհրդովն (12), խրատովն (12), պտղովն (25), լեզուովն (37), ուժովն (46), քերանովն (75), ալիքներովն (89), կովարարներովն (93), կամարներովն (95) և այլն:

Ստացական հոլովով հատկացուցչի և կապի խնդրի հետ ն հոգը և՛ դրվում է, և՛ չի դրվում, ինչպես. «սաղմոսին հետ» (16), «նորա սրտին գօրայ» (52), «կնկան նման» (35), «մարդկային ազգին համար» (60), «բերանիդ խոսքին համար» (64), «պատուիրանքին համար» (64), «քո աշաց բիրին նման» (65), «խաշին վերայ» (102), «սեղանին վերայ» (102) և այլն, բայց և՛ «ղատաստանի օրն» (17), «լսողի սիրտն» (46), «Բարի վերայ» (60), «ծովի մէջն» (87), «ջրի տակն» (90), «առիւծի նման» (66), «առիւծի ձագի նման» (66), «խընամքի տակն առաւ» (77) և այլն: Գերակշռողը առանց ն ձևերն են:

11) Վ մասնիկ ստացած բայերը սովորական են, ինչպես՝ կու խոսվի (26), կու փառավորվինք (102), գրվեք են (25), նշանվեք են (25), կու հալածվին (48) և այլն, կան նաև վ-ով կազմված կրավորական սեռի շատ դեպքեր, ինչպես՝ «նոցանէ կու գովվի և կու փառաւորվի» (45):

Օգտագործվում են նաև կրավորականի գրաբարյան ձևեր. «յոյս ունիմ, որ ամէն մի թշնամեաց ձեռքէն նորա կարողութեամբն պոծնիմ և ազատիմ» (69), «նս առաւել տրտմութենէս հալեցայ և մաշեցայ» (31), նաև՝ խափանեցան (103), «հիմունք լերանց սասանեցան» (72) և այլն:

12) Ներկան (գրական) կազմվում է կու (կ) մասնիկով⁷⁶,

⁷⁶ Կու մասնիկը գրքում մեծ մասամբ տպված է բային միացած, անշատ տպված դեպքերն ալելի թիւ են: Մենք բոլոր դեպքերում անշատ ենք գրում (միասին գրված թողնելով մասնիկի կ ձևը):

ինչպես, «Այս սաղմոսումս կու խօսի մարգարէն» (16), «այժմ ես կու աղաղակեմ և կասեմ, Տէր, ողորմեա ինձ» (23), «Այս սաղմոսումս կու աղօթէ մարգարէն ի բերանոյ եկեղեցւոյն» (26), «Կուրախանամ և կու ցնծամ քեզանով» (40), «Դարձեալ վասն որոյ միշտ օրհնելով և գովելով կու աղաղակեմ առ Հայրն իմ երկնաւոր...» (69), «Թէպէտ երբեմն մեր սխալանաց և մեղացն համար իւր ցասման և բարկութեան միջումն կու սրտմտի և կու զայրանա մեզ վերայ...» (137), «Այս սաղմոսումս քաղցրութեամբ զանկատ կանէ մարգարէն ի ձեռացն Աստուծոյ» (394), «է՛ր քո հզօր ձեռքդ մեր թըշնամեացն յետ կու դարձուցանես» (397) և այլն:

Արևելյան հայոց բարբառներին հատուկ հարադրական ներկայի ձևերը խորթ են «Պարզաբանութեան»-ը, իբրև բացառություն ում-ով անջատ բայահիմքից կազմված հարադրական ներկայի մի քանի դեպքեր կան՝ «Այսինքն, մարդկային ազգս այն շափ լրբվեր է և թերահաւատեր է, որ երբեմն այնպէս մարդ է գտվում այս աշխարհումս, որ թէպէտ բերանով չէ կարում գկատուած ուրանալ, բայց միշտ իւր սրտի միջումն կասէ, թէ աշխարհս անտէր է...» (55), «Այսինքն՝ ոչ ոք չէ գտվում այդ շափ մարդկանց միջումն, որ մէկ բարի մի գործէ...» (56):

13) Դիմավոր բայերի հոգնակի առաջին դեմքի գրաբարյան և աշխարհաբարյան մէ և նմ գուգահեռ վերջութեանից (մ և ն ձևութեանից) «Պարզաբանութեան» մեջ գործածվում են վերջին ձևերը (ն ձևով), ինչպես՝ կու սիրենք (25), կու պաշտենք (25), կու հաւատանք (25), կենդանի ենք (25), շնորհակալ ենք (29) և այլն, թեև շատ հազվադեպ (միայն մի քանի դեպքում) հանդիպում են նաև մ-ով ձևեր. «Թէպէտ ոչինչ ունիմք, բայց զամէնայն ինչ ունիմք» (161), «Ուստի կաղատեմք դքեզ» (327), «մեք, որ երկնաքաղաքացիք եմք» (484):

14) Բայերի եզակի 3-րդ դեմքի հնարավոր գուգահեռ է և ի դիմանիշներից գերակշռությունը է-ինն է՝ կատարէ (12), խնդրէ (18), գիտէ (23), կու մատնէ (14), կու ճանաչէ (15), կու տրամեցուցանէ (17), կանէ (17), կու խայտառակէ (18), կու նշանակէ (18), կու լսէ (24), պիտի դատէ (45), բամբասէ (64), կու շնորհէ (102), և այլն, թեև քիչ շին նաև ի-ով տար-

բերականեր՝ կու բնակի (17), կու ծիծաղի (17), խօսի, ճետևի (գրեթե միշտ պահպանվում են գրաբարյան լծուղները):

Երբեմն միևնույն նախադասության մեջ ունենում ենք և՛ է-ով, և՛ ի-ով կազմված ձևեր. օրինակ, «Նա պիտի բնդունի զիս փառօք և նստուցանէ ընդ աջմէ իւր» (69):

15) էական բայի (նաև օժանդակ բայի դերում) եզակի երրորդ դեմքը (ներկա) ունի միայն է ձևը. «այս ինչ խոսվու-թիւն և աղաղակ է, որ ծներ է կուսպաշտից և ալլազգեաց միջումը» (16), «ճանապարհն ուղիղ է» (773), «դատաստանդ արդար է» (773) և այլն:

Չկա էական բայի ա ձևի գործածության և ոչ մի դեպք:

16) Վաղակատար ժամանակների ձևերը մեծ մասամբ եր ունեցող անջատ բայահիմքերից են կազմվում, ինչպես՝ «Հե-րովդէս և Պիղատոս միաբաներ են» (16), «մէկ տեղ են եկեր» (16), «լրբացեր են» (17), «հանդգներ են» (17), «մեր վիզն են դրեր» (17), «ձգեր է» (21), «բարիք է պարգևեր» (24), «գրվեր են» (25), «նշանվեր են» (25), «խնդացուցեր ես» (30) և այլն:

Սակայն կան նաև վաղակատարի ել-ով ձևեր, ինչպես՝ «Իբր զայս սաղմոսս ինքն Դավիթ մարգարէն է շարագրել» (58): Վաղակատարի նշանակությամբ մերթ ընդ մերթ գործածվում է նաև գրաբարյան անցյալ դերբայի ձևը. օրինակ՝ «Դաւիթ մարգարէն է ասացեալ» (23), «Դաւիթ մարգարէն է շարագրեալ» (763):

17) Ներկայի և անցյալ անկատարի ժխտական ձևերը ռ-ով կազմված անջատ բայահիմքով⁷⁷ են հարադրվում, ինչպես, օրինակ, «Այսինքն, այն որ զիւր դրամն և փողն այլոց շահով չի տար և դատաստան և իրաւունք անելոյ վերայ կաշառք չի անուր, զէրէ այսպէս բարի գործոց կատարող մարդն միշտ հաստատ կու մնայ և բնաւ ամենկին չի՝ աւսանիւր և չի՝ վնասվիւր իւր կենաց մէջն» (60):

18) Պիտի դիմավոր բայի և անորոշ դերբայի վերոհիշյալ կապակցություններից կան նաև «Պարզաբանութեան» մեջ, ինչպես՝ «պիտինք խաղաղութեամբ քնիլ և խաղաղութեամբ արթնանալ» (25—26), «պիտինք խաղաղութեամբ հանգչիլ»

⁷⁷ Տե՛ս «Արհեստ»-ի լեզվի վերլուծության մեջ 17-րդ կետի ծանոթագրությունը:

(26), «Այսինքն, այս ժառանգութիւնս թէպէտ ևս պիտի մտանալ...» (62):

19) Շատ քիչ է օգտագործված պիտի եղանակիչի և հարակատարի կապակցութիւնը, օրինակ. «այս բանիս վերայ չի պիտի տարակուսած» (53):

20) Ուզել բայի առաջին դեմքի և լրացում գիմավոր բայի կապակցութիւններ հանդիպում են, ինչպես՝ «կուզեն մեղ վերայ հրամանք բանացնեն» (17), բայց հակառակ «Արհեստ»-ի, ավելի շատ են լրացում անորոշ դերբայով գոյացած կապակցութիւնները՝ «կուզենան հնազանդիլ» (19), «նորա զիմ թագաւորութիւնս ուզեցին փշացնել» (50), «կուզեմ կշտանալ» (67) և այլն:

Լրացուցիչ հատկանիշներից կարելի է նշել հետևյալները: «Պարզաբանութեան» մեջ ևս գործածվում է առնձն բայի առաջին ձևը (անել իմաստով), ինչպես՝ «խորհուրդ արարին» (16), «միտք են արարել», «լաւ միտք արարէք» (57), թեև քիչ չէ նաև նույն իմաստով ժողովրդախոսակցականին հատուկ անել ձևի նույնիմաստ գործածութիւնը. «միտք անելով» (27), «թէ ինձ անիրաւութիւն այլ անեն» (64), «յամօթ անելոյ համար» (85) և այլն:

Գործածվում է և հոգը, չկա նրա ժողովրդաբարբառային ը տարբերակը:

Մաքդ բառի եզակի ստացականը, հակառակ «Արհեստ»-ի, մեծ մասամբ մաքդոյ ձևն ունի, թեև կա նաև մաքդի (շատ քիչ, օրինակ, «մարգի նման» 97) ձևը:

Գտանձ բայի և ածանցը ընկած է խոնարհված ձևերում, օրինակ՝ չկարենա գտվիլ (48), կու գտվի (97), գտվիւ (99) և այլն:

Ուղղագրական հատկանիշներից նշենք ճինկ-ը, որ նման է «Արհեստ»-ին և, ինչպես ասացինք, սովորական է միջնադարյան բնագրերում:

Մի շարք հատկանիշներ, որ «Արհեստ»-ում չկան, բնորոշ են «Պարզաբանութեան»-ը, օրինակ, այստեղ շատ է հանդիպում գոյականների կրկնակի հատկացականութիւնը՝ և՛ հոգ, և՛ հատկացական դերանուն ունենալը, որ հատուկ է բարբառներին. օրինակ՝ իմ գանկատիս (26), իմ խօսիս (26), իմ բանիս (26), իմ լացիս և աղաղակիս (31), իմ աղօթ-

քիս (31), իմ սրտիս (31), իմ կազմանէս (34), զի ողորդի (37), և սուրբ և աղաւ պատուիրանովդ (28) և այլն, թեև ունենք նաև միայն դերանվամբ, առանց հատկացական հոգի դեպքեր, ինչպես՝ «Իմ ձայնն լսես» (26—27):

Շատ են գրաբարակերպ պատճառական բայերը, ինչպես՝ «ոչնչացուցանելով և փշացուցանելով զիմ թշնամիքն» (33), «փշացուցիր քո հակառակներն» (89) և այլն, թեև կան նաև այսպիսի ձևեր. օր.՝ աւելացնելով (22):

Հաճախ է գործածվում ապառնի լոց վերջույթով կազմվող գրաբարյան դերբայը. հաւատացելոց (20), լինելոց է (29), «զինչ լինելոց իցէ յապայ ժամանակի» (84) և այլն:

Իբրև «Պարզաբանութեան» լեզվի ընդհանուր հատկանիշ ավելացնենք նաև այն, որ այդ դրբում կան այնպիսի գրաբարյան քերականական ձևեր, արտահայտութիւններ, ամբողջ հատվածներ, որպիսիք բացակայում են «Արհեստ»-ի լեզվի մեջ: Ահա գրաբարյան այդ կարգի հատվածներից մի երկու օրինակ. «...այրեսցէ և իջցէ մինչև ի գծոխս ներքինս» (73), «Յերոքովամայ ի զարմէն յեմինայ հայհոյեաց զԴաւիթ յորժամ փախչէր ի ձեռաց Արիսողոմայ որդւոյ խրոյ» (32), «և քարշեալ հանեցի զթուրն, որ կապեալ ունեւ ի մէջ իւր և նովաւ հատի զգլուխս նորա և բարձի դամօթս և ղնախատինս յիսրայէլացւոց ազգէն» (767) և այլն: Գրաբարյան այսպիսի ոչ մեծ հատվածների քանակը զգալի է «Պարզաբանութեան» նոր գրական հայերեն գրված մասում: Կան նաև գրաբարյան բնույթի ավելի ծավալուն հատվածներ, օրինակ. «Եւ շուրջ ղնովաւ են յարկք իւր, իբր պարք երկնային զօրացն, գասք սուրբ առաքելոցն և երամք ընտրելոցն, ըստ այնմ ես յո՛հանգեայց, եթէ ո՛չ ի հեզս և ի խոնարհս. և խաւարային ջուրք իբր մոլորեալ իմացողութիւնք հրէից և յիմար քննութիւնք հեթանոսաց, մինչև յամս օգոց, իբր մինչև ի խորին ասացուածս, մարգարէից, զորս ոչ կարելով և ո՛չ կամելով իմանալ, զրկեցան ի լուսոյ աստուածապաշտութեան և ի մասնակցութենէն Քրիստոսի» (74—75):

Գրաբարագետ պարզաբանողը կարծես մերթ ընդ մերթ մոռացել է, որ գրում է նոր լեզվով՝ աշխարհականներին հասկանալի, և, թերևս, իրենից անկախ անցել է հին լեզվին:

Այսպիսի գրաբարայնութիւնները, անկախ քանակից, շե-

ղումներին արժեք ունեն «Պարզաբանութեան» մեջ, որի հիմնական ու բնորոշ լեզվի մի ընդարձակ նմուշ արդեն բերել ենք վերևում և որը նոր գրական հայերենն է: Գրքում բազմաթիվ են նաև այնպիսի հատվածներ, որոնցում նոր գրական լեզուն զերծ է գրաբարայնությունից առհասարակ, ինչպես՝ «Ճշմարիտ կու հաւատանք և կասենք, թէ աղքատների և խեղճների ցանկությունն և հառաչանքն լսեց Աստուած», «Երկրի իշխաններն տիրեր էին Երուսաղեմու դավառներին» (48, 91) և այլն:

Ամփոփելով այդտի ասենք, որ «Պարզաբանութեան» լեզուն 17-րդ դարի միևնույն նոր գրական հայերենն է, նրա մի տարբերակը. մեղ ծանոթ մյուս տարբերակի՝ «Արհեստ»-ի լեզվի համեմատ ավելի հակված է դեպի գրաբարը:

Ըստ 20 գլխավոր կետերի վիճակագրության «Պարզաբանութեան» պատկերը հետևյալն է: Կետերից 6-ում լիովին կամ մասամբ գերակշռում է գրաբարը: Դրանք հետևյալներն են. 1-ին (բառաձևեր, գլխավորապես այն-ով ձևավորված շարքը՝ այս, այդ, այն... այլ, ինչպես նաև մէկ-ը, որոնք բացարձակ մենաշնորհ ունեն իրենց ժողովրդաբարբառային զուգահեռների՝ էս, էդ, էն-ի և մյուսների նկատմամբ), 3-րդ (գերանունների գրաբարյան ձևեր և վերայ կապը), 4-րդ (հոգնակի ուղղականի մեջ գրաբարյան ձևերի գերակշռությունը), 5-րդ (գրաբարյան թեք հոլովաձևերի մեծ տոկոսը), 6-րդ (հոգնակի ստացականի գրաբարյան ձևերի գերակշռությունը), 7-րդ (անորոշ դերբայի գրաբարյան ստացական հոլովի բացարձակ մենաշնորհը):

Մնացած 13 կետերում (չենք հաշվում 19-ը, որն այս գրքի լեզվում շատ թույլ է արտահայտված) «Պարզաբանութեան»-ը լիովին կամ առավել չափով հակված է դեպի բարբառային և ժողովրդախոսակցական ձևերը: Նշենք, որ ինչպես «Արհեստ»-ում, այստեղ ևս կետերից 3-ում գրաբարյանը, միջին հայերենը և ժողովրդաբարբառայինը համընկնում են (9-րդ՝ բացառականի կազմություն, 12-րդ՝ կու-ով ներկա, 15-րդ՝ էական բայի է ձևը):

Եթե կետերի մեջ ընդգրկված հատկանիշներին մոտենանք արևմտահայ-արևելահայ լեզվամիջոցների տոկոսային հարաբերության տեսանկյունից, ապա կպարզվի, որ 5 կամ 6

կետերում բացարձակ կամ մասնակի գերակշռությունն արևելահայ ձևերինն է. դրանք են՝ 1-ին (որոշ բառաձևեր), 6-րդ (հոգնակի ստացական հոլ.), 8-րդ (ույմ-ով ներգոյական), 18-րդ, 19-րդ, գուցե և՛ 20-րդ: Ծիշտ է, այս կետերից առաջինում և վեցերորդում գերակշռում են գրաբարյան ձևերը, բայց աշխարհաբարյան ձևերի մեջ գերակշռությունը արևելահայ խոսքինն է (օրինակ, 1-ին կետում ըլլա-ի բացակայությունը և լինել ձևի գերակշռությունը, 6-ում ժողովրդաբարբառային ձևերից միայն արևելահայ ի-ով՝ սաբերի, զավակների հոգնակի հոլովաձևերի առկայությունը):

Կետերից 6-ում էլ «Պարզաբանութեան» լեզուն հակված է դեպի արևմտյան խոսքը. դրանք են՝ 9-րդ (բացառական հոլ.), 12-րդ (դրական ներկայի կազմությունը), 14-րդ (բայերի է դիմանիշ վերջավորությունը), 15-րդ (էական բայի եզակի 3-րդ դեմքի է ձևը), 16-րդ (վաղակատարի կազմությունը), 17-րդ (ժխտական ներկայի կազմությունը):

Ինչպես կարելի է դիտել այս կետերում, արևմտահայ ձևերը հիմնականում համընկնում են գրաբարյան և միջին հայերեն համապատասխան ձևերին, և այդ կետերի մեջ չկա արևմտահայ խոսքի այնպիսի մի հատկանիշ, որը միաժամանակ գրաբարի կամ միջին հայերենի հատկանիշ չլինի:

10-րդ (և հոգի գործածության դեպքեր) կետում, ինչպես «Արհեստ»-ի, այնպես էլ «Պարզաբանութեան» մեջ արևելահայ և արևմտահայ հատկանիշները հավասարակշռվում են:

«Պարզաբանութեան» լեզվի բերված հատկանիշների, նրանց վիճակագրության համակողմանի զննումն ու հաշվառումը ցույց են տալիս, որ այս գրքի նոր գրական լեզուն ևս միասնական է, ընդհանուր առմամբ չկա արևմտահայ կամ արևելահայ լեզվամիջոցների ակնհայտ գերակշռություն, ուստի և ունենք չբաժանված աշխարհաբար:

Երբ «Պարզաբանութեան» լեզուն համեմատում ենք «Արհեստ»-ի լեզվի հետ, նկատում ենք հետևյալը՝ «Պարզաբանութեան» մեջ գրաբարը գերակշռում է 20 կետերից 6-ում, «Արհեստ»-ում այդ գերակշռությունը 2 կետում է, այսինքն՝ ըստ այդ կետերի գրաբարյան տարրը «Պարզաբանութեան» մեջ 3 անգամ ավելի է:

Նշելի է նաև հետևյալը. «Արհեստ»-ի վերահիշյալ «գրա-

բարյան» 2 կետերից մեկը 13-րդն է (հոգնակի առաջին դեմքի բայաձևերի մ-ով գրաբարյան տարբերակի գերակշռությունը՝ կու գրենմ և այլն), բայց այդ կետը «Պարզաբանութեան» լեզվում դարձել է աշխարհաբարյան (բացարձակ գերակշռությունը ն-ով կազմված ձևերինն է՝ կու գրենմ և այլն): Սակայն, «Արհեստ»-ի համեմատ, այս մի կետում հակվելով դեպի նոր գրական լեզվի բնույթը, «Պարզաբանութիւն»-ը 5 ուրիշ կետերում, որոնք «Արհեստ»-ում աշխարհաբարյան-բարբառային են, հակվել է դեպի գրաբարբ:

Հատկապես նկատելի է, որ եթե «Արհեստ»-ում ժողովրդաբարբառային էս ու էն-ը, մին-ը փոխեփոխ գործածվում են գրաբարաձև այս ու այն-ի և մէկ-ի հետ՝ առաջինների գերակշռությամբ, ապա «Պարզաբանութիւն»-ում առկա են միայն գրաբարյան ձևերը: Կամ՝ եթե «Արհեստ»-ում շնչին քանակ են կազմում գրաբարյան հոգնակի և եզակի հոլովային ձևերը, ապա «Պարզաբանութիւն»-ում նրանք գերակշռում են ժողովրդաբարբառային ձևերի նկատմամբ: Եթե «Արհեստ»-ում բացարձակորեն իշխում է անորոշ գերբայի ստացական հոլովի ու թեքույթը, ապա «Պարզաբանութիւն»-ում առկա են միայն գրաբարյան ոչ թեքույթով կազմված ձևեր:

Հետևյալ 7 կետերում՝ 2-րդ (բարբառային բառեր), 8-րդ (ու՛մ-ով ներգոյական), 10-րդ (ն հոգի գործածություն), 11-րդ (բայերի մեջ վ մասնիկի գործածություն), 12-րդ (բայերի ներկայի կազմություն), 15-րդ (էական բայի է ձևը), 16-րդ (վաղակատար ժամանակների կազմություն), 17-րդ (ժխտական ներկա), 18-րդ, 20-րդ՝ «Արհեստ»-ն ու «Պարզաբանութիւն»-ը գրեթե նույն դիրքում են բարբառային, ժողովրդախոսակցական լեզվամիջոցների ընտրության նկատմամբ: Ընդհատ է, օրինակ, բարբառային բառերը (2-րդ կետ) «Պարզաբանութեան» մեջ ավելի շատ են, քան «Արհեստ»-ում, բայց դրա պատճառն այն է, որ «Պարզաբանութիւն»-ը «Արհեստ»-ից շատ ավելի բազմաբովանդակ է և ծավալով էլ (նոր գրական լեզվով գրված մասը) շուրջ վեց անգամ մեծ է: Նորից հիշեցնենք, որ կու-ով կամ կ-ով ներկան դիտում ենք, միջին հայերենից բացի, նաև ժողովրդային-արևմտահայ ձև. իսկ «Պարզաբանութեան» մեջ գործածված ու՛մ-ով ներկայի հարա-

դրական մի քանի ձևերը, ինքնըստինքյան հասկանալի է, որ բարբառային-խոսակցական են:

Արևելյան թե արևմտյան լեզվամիջոցների ընտրության տեսակետից երկու գրքերի համեմատական պատկերը հետևյալն է: «Արհեստ»-ը 6 (կամ 7) կետում է հակված դեպի արևելահայ խոսքը, 6 կետում էլ դեպի արևմտահայը, «Պարզաբանութիւն»-ում ունենք 5:6 (կամ 6:6), այսինքն՝ արևմրտահայ և արևելահայ տարրերի հավասարակշռություն: Անկախ մեր այս հաշվումներից, որոնք կունենան թերի կողմեր, իրողությունն այն է, որ երկու գրքերի լեզվում էլ արևմրտյան-արևելյան լեզվաբաղադրիչների մի մոտավոր հավասարակշռություն ունենք⁷⁸, միայն «Պարզաբանութիւն»-ում, գրաբարյան բաղադրիչների ավելացման պատճառով ընդհանրապես, փոքր ինչ նվազել են աշխարհաբարյան տարրերը:

«Պարզաբանութեան» լեզվի վիճակագրական մեր քննության ու դնահատման թերիները մասամբ հաղթահարելու տեսակետից, թերևս, անկարևոր չէ նկատի առնել նաև հետևյալը. «Պարզաբանութեան» մեջ ու՛մ-ով հարադրական ներկայի թեկուզ աննշան գործածությունը, այնուամենայնիվ, դեպի արևելյան հայերենը եղած հակման նշան է: Թեև այս դեպքում էլ գրքի ծավալը նկատի չառնել չի կարելի: Գուցե եթե «Արհեստ»-ն էլ լիներ «Պարզաբանութեան» ծավալի կամ գոնե նրա կեսի չափ, ապա ու՛մ-ով ներկայի մեկ-երկու ձևեր կարող էին սպրդել նրա լեզվի մեջ ևս:

Նկատելի է նաև, որ «Արհեստ»-ի համեմատ՝ «Պարզաբանութիւն»-ն ավելի համակարգային լեզու ունի, բացակայում են «Արհեստ»-ի լեզվում եղած մի շարք զուգահեռություններ: Չենք մի շարք միակերպումներ ձեռք են բերվել գրաբարյան և բարբառախոսակցական զուգահեռ ձևերի դեպքում գրաբարյանները միակն ընդունելու պատճառով (այս, այն, այլ և

⁷⁸ Մեր մանրամասն քննությամբ չհաստատվեց այն կարծիքը, ըստ որի «Պարզաբանութեան» աշխարհաբար մասի «Գրողը պոլսեցի լինելով՝ ընդհանուր ոճը արևմտյան հայերենն է» (Ն. Աճառյան: Հայոց լեզվի պատմություն, մաս 2, էջ 450). ինչպես և այն, որի համաձայն Հովհաննես Կոստանդնուպոլսեցու (Հոլովի) աշխարհաբարը հիմնված է Կ. Պոլսի հայոց բարբառի վրա (տե՛ս, օրինակ, Գ. Джаукян, Армянская лингвистическая мысль и вопросы новоармянского языка в XVIII—XIX веках, էջ 13):

այլն), իսկ մի դեպքում (և և մ զուգահեռ բայամասնիկներ) իբրև միակ ձև աշխարհաբարյանը (և-ն) ընտրելու հետևանքով:

Նշենք նաև, որ շնայած բարբառներից նոր օտար փոխառություններ թափանցել են «Պարզաբանութեան» մեջ, բայց բառնարանության զլխավոր գիծն է՝ բարբառային օտարաբանությունների փոխարեն հնարավորին չափ զրաբարյան բառեր գործածել, նրանցով արտահայտել համապատասխան իմաստները:

Ըստ 20 կետերի և լրացուցիչ հատկանիշների ընձեռած տեղեկատվության նոր գրական հայերեն այս երկու տպագիր գրքերի լեզվի քննությունը կարելի է ամփոփել այսպես.

ա) Ե՛վ «Արհեստ»-ը, և՛ «Պարզաբանութիւն»-ը գրված են միասնական նոր գրական լեզվով. այսինքն՝ կա արևմտահայ և արևելահայ լեզվատարների հավասարակշռություն: Ընդ որում, եթե արևելահայ լեզվական ատաղձը հիմնականում աղերսվում է արևելյան բարբառային-ժողովրդախոսակցական լեզվի տարրերի հետ, ապա արևմտահայ լեզվատարները, արևմտյան բարբառներին հատուկ լինելու հետ, գրեթե միշտ համընկնում են միջին հայերենի և զրաբարի համապատասխան լեզվամիջոցներին և, հավանաբար, որոշ դեպքերում նրանց ազդեցության արտահայտությունն են: Դա բացատրվում է հայոց գրավոր խոսքում անցյալի այդ երկու գրական հայերենների գործածման դեռևս ամուր պահպանվող ավանդույթով:

բ) «Արհեստ»-ի լեզուն, համեմատած «Պարզաբանութեան» լեզվի հետ, ավելի ժողովրդային է:

գ) «Արհեստ»-ի լեզվի համեմատ՝ «Պարզաբանութեան» լեզուն ավելի քիչ զուգահեռ ձևեր ունի. առաջինում առկա բարբառախոսակցական-զրաբարյան զուգահեռ ձևերի մի մասը երկրորդում չկա՝ մեծ մասամբ զրաբարյան ձևերին գերապատվություն տալու շնորհիվ:

* * *

Այժմ, երբ «Պարզաբանութեան» լեզվի ընդհանուր բնութագիրն ունենք, կարելի է երկու խոսք էլ ասել այդ լեզվի մեջ եղած գեղարվեստական տարրերի մասին: Սաղմոսարանը

Աստվածաշնչի առավել գեղարվեստական մասերից է. սաղմոսներից շատերը կարող են դիտվել նաև իբրև գեղարվեստական փոքրիկ ստեղծագործություններ, դրանք այն երկերն են, որոնցում կրոնական զգացմունքն այնպիսի խոսքով է արտահայտված, որի գեղագիտական արժեքն ակնհայտ է: Սաղմոսների աշխարհաբար պարզաբանությունը, որ կազմել է Հովհաննես Հովովը, մեկնաբանությունների, փոխադրությունների և թարգմանությունների մի ամբողջություն լինելով, պարունակում է աստվածաշնչային, ինչպես և այլ աղբյուրներից եկող վերապատումներ, կենցաղային պատկերներ, որոնք ինքնըստինքյան գեղարվեստական խոսքի նմուշներ են: Լեզվաբանություններ անելիս՝ Հովհաննես Հովովը երբեմն ոգեվորվում է, հուզմունքով հագեցնում իր խոսքը, օգտագործում այլ հեղինակների ստեղծած պատկերները, ինքը հորինում այդպիսիք և այլն: Ստորև բերում ենք «Պարզաբանութիւն»-ից քաղված մի քանի հատվածներ, որոնք գեղարվեստական խոսքի տարրեր են պարունակում, ունեն դարձույթների (այլաբերությունների) տարրեր տեսական (զլխավորապես համեմատություններ). «Առաւօտն իբր ի տղայութեան հասակին խոտի նման՝ կու բուսանին, առաւօտն իբր ի այրութեան հասակին դալարի նման կու զուարճանան և կու ծաղկին. բայց իրիկունն, իբր ի ծերութեան հասակին կու թարշամին, իբր կու շորանան և ի վայր կու անկանին» (489), «Սրեր են իւրեանց լեզուն թրի նման, որ դիս շարախօսեն և դատասպարտեն և իւրեանց նենգաւոր շրթունքների աղեղներն դառն խօսքերի նետերով լարեր են և պատրաստեր են» (323), «Իւր աչքերն հանապազ խեղճ և աղքատ մարդկանց վերայ է, և միշտ ծածուկ թալաք կու գործէ, ինչպէս մէկ առիւծ մի, որ իւր բնումն նստի և որսերի վերայ ատամներն սրէ» (46—47), «և առաւել բարկութենէն ասնպէս կու թուէր, թէ քթի ծակերէն վրեժխնդրութեան մոխ դուրս կու գայր և յերեսէն սրտմտութեան կրակ կու բորբոքէր և կայծակներ և փայլակներ կու թափէին յիւրմէն» (72), «Արեգակն իւր պայծառութեամբն, քան զամէն աստղեր այլ առաւել կու ծանուցանէ մեզ Աստուծոյ մեծութիւն և փառքն. և երբ կու ծագէ յարևելից, այնպէս է, ինչպէս մէկ փնայ մի, որ իւր օթաղէն դուրս գա և գլորելով

և վազվազելով կու գնայ իւր ճանապարհն յարեւելից յարեւմուտք, ինչպէս մէկ քաջ մարդն մի օր պատերազմ երթայ...»:

Եթե համեմատենք միմյանց հետ գրաբար սաղմոսները և Հովովի՝ նոր լեզվով տված մեկնությունները, կնկատենք, որ մեկնիչը պատկերները, համեմատությունները երբեմն վերցրել է պարզաբանվող սաղմոսից և դարձրել աշխարհաբար՝ անելով իր լրացումները, որոնք հաճախ շատ զգալի են: Երբեմն էլ նա մեկնվող սաղմոսում բոլորովին չեղած համեմատություններ է օգտագործում: Ամեն դեպքում, իհարկե, արդյունքը նույնն է՝ նոր գրական հայերեն գեղարվեստական խոսքը:

Շատ են բնապատկերները, որոնց առկայությունն ինքնըստինքյան խոսքին գեղարվեստական երանգ է հաղորդում: Բերենք մեկ օրինակ. «...կու ելնեն ծովի ջրերն և սարերի նման կու բարձրանան և կու իջանեն ի վայր և դաշտի նման կու ցածանան և կու հանդարտին իւրեանց տեղումն, ինչ տեղ որ Դու ի սկզբանէ հաստատեր ես գիւրեանք: Այսինքն գէրէ Դու նոցա սահման ես դրեր, այլ դէն շեն անցանիր և այլ յետ շեն դառնար և զերկիրս ծածկեր, ինչպէս որ ծածկեր էին ի ըսկըզբան աշխարհիս գրովանդակ գունտն երկրի»⁷⁹: ...Դու զերկիրս արբուցանելոյ համար ծովի ջրերն հողի տակի եղած երակներովն անցկացնելով կու մաքրես, կու քաղցրացնես և կու ողարկես դէպ ի ձորերն և տեղն զանազան աղբրներ կու բխեցնես և քո նախատեսութեամբ լեռների միջէն գետեր և առուներ կու վազեն» (545):

Մի շարք դեպքերում խոսքը ողբերգական շեշտեր է ընդունում, հերոսի տառապանքի նկարագրությամբ. «...երբոր սաստիկ տառապանքէս իմ շունչս ի յիս նուազեցաւ, Դու իմ շարշարանաց և անտանելի վշտաց շաւիղն և կերպն ճանաչեցիր և իմացար, որ իմ փրկագործ տնօրենութեան ճանապարհումն, որ ես կու կենցաղավարէի ի վերայ երկրի, իմ թշնամիքն ինձ նենդութեամբ թալաք սարքեցին» (721—722): Եր-

⁷⁹ Ի միջի այլոց, գրաբար սաղմոսի մեջ ասված է «և ոչ ես դառնան ի ծածկել զերկիր» (545): Այս վերջին բառը (զերկիր) Հովհ. Հովսեփն է փոխադրել «գրովանդակ գունտն երկրի», այսինքն՝ ամբողջ երկրագունդը, որ սաղմոսների հորինման ժամանակաշրջանի ըմբռնում չէ: Այսպիսի այլ դեպքեր էլ կան «Պարզաբանութեան» մեջ:

բեմն էլ խոսքի քնարականությունը դրսևորվում է հոետորական բնույթի արտահայտություններով. «Ահ, թէ որ շափ շնորհակալ ենք Քեզանէ, Տէր Աստուած, որ դու քո բարի կամօքդ այնպէս, ինչպէս թէ զէնքով և զալխանով զմեզ պահպանեցիր, փառաւորեցիր և պսակեցիր» (29):

Այսպես՝ վաղ շրջանի նոր գրական լեզուն ի վիճակի է եղել նաև գեղարվեստական մտածողության ու զգացմունքների երբեմն հաջող արտահայտիչ լինել, թեև դեռ երկար ժամանակ պետք է անցնէր, որ հայոց գեղարվեստական գրականության ընդունված լեզուն դառնար:

«Արհեստ»-ը, բնականաբար, գեղարվեստական արժեքունեցող հատվածներ չունի: Իսկ եթե հարկ լինէր նման հատվածների արդյոք թարգմանիչը իր ընտրած աշխարհաբարին փոքր-ինչ ավելի գրաբարյան գույն չէ՞ր տալու, ինչպես «Պարզաբանութեան» մեջ է:

* * *

Այժմ նորից դառնանք առաջին աշխարհաբար տպագիր գրքի՝ «Արհեստ»-ի թարգմանչի հարցին: Այդ գրքի և «Պարզաբանութեան»՝ վերը բերված լեզվական տարբերությունները արդյոք բավարար չեն՝ ասելու համար, որ «Արհեստ»-ը Հովհաննես Հովովը չի թարգմանել: Թվում է, որ բավարար են:

Բայց նորից հաշվի առնենք թերևս ու դեմը: Հիշենք, որ լեզվական տարբերությունների հետ «Արհեստ»-ն ու «Պարզաբանութիւն»-ը ունեն նաև բավական ընդհանրություններ, այդ թվում, կարծես, «մասնավոր» բնույթի: Օրինակ, հիշենք այնպիսի «նեղ» բնույթի ընդհանրություններ, ինչպես պիտիմ, պիտի, պիտին՝ դիմավորների հետ անորոշ և հարակատար դերբայների գործածություններն են (պիտին՝ դնել, պիտի՝ գրած) կամ՝ այնպիսի հատկանշական շարահյուսական կաղապարներ, ինչպես՝ մէկ (մին) և մի բառերով կազմվածներն են. օրինակ, «Արհեստ»-ից՝ «Համարողութիւն մին արհեստ մի է», «մէկ թիվ մի կու բարդեմք», «Պարզաբանութիւն»-ից՝ «մէկ ժամանակ մի զիս պատեր էին», «Ինձ մէկ վնաս մի հասուցանէք»:

«Մասնավոր» թվացող շատ ընդհանրություններ կան բառօգտագործման մեջ, օրինակ, չի կարելի շնկատել երկու գրքե-

րում իմին բառի հաճախակի գործածությունը կամ որոշ բաղաձայնների միանման տառադարձումները (օրինակ, հինկ ձևի գործածությունը երկու գրքերում) և այլն:

Կարող է նաև հարց առաջանալ. այս գրքերի լեզվական տարբերություններն արդյոք չի՞ կարելի բացատրել նրանով, որ «Պարզաբանութիւն»-ը տպագրվել է «Արհեստ»-ից 13 տարի անց. մի ընդմիջում, որի ընթացքում միևնույն անձը կարող էր մշակած լինել իր աշխարհաբարը՝ մի շարք դուգահեռություններ վերացրած, ձևերը միատարր դարձրած, նաև վերանայած իր կարծիքը գրաբարյան և բարբառային ձևերի գործածության շափի վերաբերյալ՝ հօգուտ առաջինների (մանավանդ որ իր առաջաբանում, ինչպես տեսանք, Հոլովը ակնարկում է լեզվական դժվարությունների մասին):

Այսպես՝ երկու գրքերի լեզվական տարբերությունների պատճառ չի՞ կարող լինել նրանց բովանդակությունների լուրջ տարբերությունը: Չէ՞ որ «Արհեստ»-ը խիստ աշխարհիկ գիրք է, իսկ «Պարզաբանութիւն»-ը խիստ կրոնական, և կրոնի լեզուն՝ գրաբարը այս դեպքում էլ կարող էր ավելի առատ թափանցել գրքի լեզվի մեջ:

Հօգուտ Հոլովի թարգմանիչ լինելու այս և վերն ասված մյուս (այդ թվում ոչ լեզվական) փաստարկները հաշվի առնելուց հետո գալիս ենք այն եզրակացության, որ, այնուամենայնիվ, հիմք չունենք Հովհաննես Հոլովին համարելու «Արհեստ»-ի թարգմանիչ: Մատենագիտական բնույթի թիր ու դեմի մասին վերն ասվեց: Ինչ վերաբերում է լեզվական տարբերություններին, ապա նրանք թվում են ականառու: Առանձնացրել և ուշադրության ենք առել լեզվական հատկապես մի քանի այնպիսի տարբերություններ, որոնք գրիչ շարժած անհատների տարբերությամբ, այսինքն՝ երկու անհատի առկայությամբ կարող են պայմանավորված լինել և որոնք համոզիչ են դարձնում տարբեր հեղինակների առկայությունը: Օրինակ, մի փոքրիկ գրքում մեծ առատությամբ էլ, ևս, էդ, էն, էնպէս, էնտուր, էնտուր բառաձևերը գործածող մարդը ինչպե՞ս կարող էր 840 էջանոց հսկա գրքում ոչ մի անգամ չգործածել այդպիսի որևէ ձև, թեկուզ 13 տարի հետո, թեկուզ բոլորովին այլ բովանդակություն ունեցող գրքում: Կամ՝ ինչպե՞ս կարող էր փոքրիկ «Արհեստ»-ում անորոշ դերբայի ու-ով

թերված ձևերը (ճանաչելու, բարդելու, դուրս ձգելու և այլն) այնքան շատ գործածած անձը մեծածավալ «Պարզաբանութեան» մեջ դրանք չգործածել: Ավելի կարևոր հանգամանք. եթե երկու գրքերի թարգմանիչը (հեղինակը) նույն անձն է, որը «Արհեստ»-ից հետո որոշել է նոր լեզվի ձևերն ավելի միատարր դարձնել՝ գերապատվությունը տալով գրաբարյան ձևերին, ապա ինչո՞ւ «Արհեստ»-ում եղած եմք—ենք, կասեմք—կասենք, գրեմք—գրենք շարքի դուգահեռները վերացրել է՝ գերապատվությունը ոչ թե գրաբարյան, այլ բարբառից եկող ձևերին տալով (գրքի նյութն էլ հակառակն է պահանջում, այսինքն՝ գրաբարյան ձևերին գերապատվություն տալը): Զգացվում է, որ «Պարզաբանութեան» հեղինակի ձեռքը պարզապես սովոր է եղել ն-ով ձևերին (ենք, կասենք և այլն), մինչդեռ «Արհեստ»-ի թարգմանիչը դարձյալ ըստ սովորույթի մերթ այս, մերթ այն ձևն է գործածել: Նույն կերպ նկատելի է, որ «Պարզաբանութեան» հեղինակի ձեռքը, գոյականների ստացական հոլովը գրելիս, ավելի շատ սովոր է եղել գրաբարյան ձևերին (ոտաց, ալեաց, ձեռաց, հեղից, պսակաց և այլն), մինչդեռ «Արհեստ»-ի թարգմանիչը աշխարհաբարյան մի սովորույթով գրում է ի- հոլովիչով ձևեր (օրեի, գրեի, քրեի և այլն) և գրեթե չի գործածում գրաբարյանները:

Բառօգտագործման մեջ քիչ հավանական է, որ փոքրիկ «Արհեստ»-ում նույն բառի զերայ, զիրայ, զերէ դուգահեռ ձևերը գործածողը մեծածավալ «Պարզաբանութեան» մեջ ամենուրեք զերէ գրի և կամ «Արհեստ»-ում ժամանակի իմաստով միայն ժուկ բառը գործածողը մյուս գրքում անընդհատ ժամանակ գործածի: Նաև՝ բնավ հավանական չի թվում, որ «Արհեստ»-ում միայն կէօրայ և տրամ բառաձևերը գործածող անձը կարող էր «Պարզաբանութեան» մեջ անընդհատ գօրայ և դրամ գրել: Ըստ երևույթին, այս բառերի սկզբի բաղաձայններն ընտրելիս (ձայնեղ թե խուլ) հայերենի որևէ օրենք կամ ավանդույթ չէր կարող դեր խաղալ, այսպիսի դեպքերում 17-րդ դարի հեղինակը՝ մեկը կամ մյուսը գրել է ըստ իր անհատական խոսքի ավանդույթի կամ սովորույթի (նույն կերպ կարելի է բացատրել նաև երկու ձևերից մեկի մեջ է-ի առկայության, մյուսում նրա բացակայության փաս-

տը՝ կէօրայ—գորայ): Այսպես, ունենք երկու սովորույթ, հետեւաբար՝ երկու հեղինակ:

Իսկ այն, ինչ ընդհանուր է (և այդ ընդհանուրը գերակշռողն է) այս երկու գրքերի լեզուներում, ժամանակի նոր գրական հայերենի ընդհանրությունն է: Ապացույցներ շատ կան. կուռով ներկան, Ե-ով վաղակատարը և մյուս այն հատկանիշները, որոնք ըստ 20 կետերի ընդհանուր են երկու գրքերի լեզուներում, առկա են նաև, հաճախ մեծ քանակով, 17-րդ դարի նոր գրական հայերենի բոլոր գրավոր ստեղծված հուշարձաններում: Առավել «նեղ» թվացող ընդհանրությունների մեծ մասը նույնպես առկա է հիշյալ դարի գրավոր բնագրերում: Օրինակ, Մաշտոցի անվան մատենադարանի վերը հիշված ձեռագրի (թ. 8716) բնագրում շատ է հանդիպում «Արհեստ»-ի և «Պարզաբանութեան» լեզվում առկա «մէկ (մին) ... մի» շարահյուսական վերը հիշված կաղապարը («մէկ մարդ մի ուներ 100 դուռուշ» 36ա, «մէկ մի տալիք ունի» 36ա, «մէկ մարդ մի մշակ բոնեց» 42ա և այլն): Այս կաղապարը հանդիպում է նաև վաղ աշխարհաբարյան այլ բնագրերում: Նույնը և իմֆին բառը, որ առկա է և՛ «Արհեստ»-ում, և՛ «Պարզաբանութեան» մեջ, ընդհանրապես շատ է գործածված 17, նաև 18-րդ դարերի աշխարհաբարում (օրինակ, Կոստանդ Զուղայեցու արդեն հիշված ձեռնարկում այն հաճախ է հանդիպում, էջք՝ 130ա, 233 և այլն, շատ է գործածված նաև Յոհան Երյոդերի «Արամեան լեզուին գանձ» գրքի մեջ եղած աշխարհաբար բնագրերում, որոնց մասին խոսք կլինի ստորև): Երկու գրքերում կան նաև շատ ուրիշ լեզվական ընդհանրություններ, որոնք բոլորը ժամանակի նոր գրական հայերենի ընդհանուր հատկանիշներ պետք է լինեն:

Եթե Հովհաննես Հոլովը չէ «Արհեստ»-ի թարգմանիչը, բնականաբար հետաքրքրական է դառնում, թե, այնուամենայնիվ, ո՞վ կարող է լինել աշխարհաբար առաջին գրքի լեզվի մշակը:

Կարո՞ղ էր արդյոք այդ գիրքը թարգմանած լինել Ոսկան Երևանցին կամ նրա համագործակիցներից որևէ մեկը: Նման հնարավորությունը բացառել չի կարելի: «Արհեստ»-ի թարգմանությունը շատ հավանական է, որ արած լինի որևէ ջուղա-

յեցի, մանավանդ Արարատյան դաշտում ապրած, ինչպիսին Ոսկանն էր: Այդպիսի թարգմանություն կարող էր անել նաև մի ազուլեցի՝ երկար ժամանակ ապրած ուրիշ վայրերի արևելահայոց մեջ, ինչպիսին էր Ոսկանյան տպարանի գրաշար Մատթեոս Հովհաննիսյանը: Հնարավոր է նաև, որ թարգմանությունը կատարած լինի Ոսկանի քեռորդի Սողոմոն Լեոնյանը՝ տպարանի գրաշարապետը, կամ ժամանակին Ոսկանի գործընկեր եղած Թադեոս Համազասպյան Երևանցին:

Այս հարցը կարող է լուծվել հատկապես Մարսելի դիվանատանը հայ տպագրիչների գործունեության մասին եղած փաստաթղթերի մանրամասն քննությամբ, մասամբ գուցե և «Գանձ չափոյ, կշռոյ...» գրքի և «Արհեստ»-ի լեզվի մանրամասն համեմատությամբ: Ուստի և առայժմ հիմք չունենք վերը թվարկված անձանցից որևէ մեկին հաստատապես համարելու «Արհեստի» թարգմանիչ:

Դառնալով «Պարզաբանութեան» աշխարհաբար մասի մշակ Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու անձին՝ պետք է նշենք, որ նա եղել է 17-րդ դարի խոշոր մշակութային գործիչ, շատ եռանդուն գրական մշակ, կարևոր դեմք հայոց գիտության պատմության մեջ:

Հովհաննես Հոլովը հատկապես մեծ երախտիք ունի իբրև վաղ շրջանի հայոց նոր գրական լեզվի տաղանդավոր մշակ: Մենք մեր վերլուծության մեջ ցույց տվեցինք, որ «Պարզաբանութեան» լեզուն մշակելիս Հոլովն այդ շրջանի (նաև հետագայի) աշխարհաբարին հատուկ բառաձևերի մի շարք գուգահեռականություններ վերացրել է գրաբարյան ձևերին գերապատվություն տալու միջոցով: Սա գրական նոր լեզվի դարգացման այն ուղին է, որը հետագայում պաշտպանեց «Հյուսիսափայլ»-ը, ավելի ուշ՝ Վ. Տերյանը, և որին, ինչպես հայտնի է, պատմականորեն հաղթանակ էր վիճակված:

Հոլովը եղավ նաև աշխարհաբարի մշակման այն ուղղության ռազմիրան, որի սկզբունքն էր գրաբարի բառապաշարը ազատ օգտագործելու միջոցով նոր գրական լեզուն մաքրել բարբառային փոխառություններից (գլխավորապես՝ թուրքական, նոր պարսկական): Ծիշտ է, «Պարզաբանութեան» մեջ դեռ զգալի են այդ կարգի բարբառային փոխառյալ բառերը,

բայց նկատելի է նաև այդպիսիների փոխարեն գրաբարյան բառերի օգտագործման ուժեղ հակումը⁸⁰։

«Պարզաբանութեան» լեզուն արժանի է ավելի մանրակրկիտ քննության, վերը մեր տվածը մի ակնարկային փորձ է սոսկ։

Հետազոտության կարոտ է նաև Հոլովի կենսագրությունը, որից շատ փաստեր առայժմ հայտնի չեն։ Հայտնի չէ ամենագլխավորը՝ երբ և ստույգ որտեղ է ծնվել մշակութային այդ եռանդուն գործիչը։ Չգիտենք, թե նա կամ նրա ծնողները Արևելյան, թե՛ Արևմտյան Հայաստանից են եղել։

Հոլովն իրեն անվանում է Կոստանդնուպոլսեցի, բայց, ինչպես հայտնի է, քիչ չեն դեպքերը, երբ անցյալի գործիչների այդօրինակ մականունները նրանց ծննդավայրը չեն ցույց տալիս, այլ նրանց կյանքին զգալապես առնչվող որևէ այլ վայր։ Բացի դրանից, եթե նույնիսկ Հոլովը Կոստանդնուպոլսում կամ շրջակայքում ծնված լինի, ապա միևնույն է, դա դեռ չի նշանակում, թե նա անպայման ոչ թե արևելահայ, այլ արևմտահայ (Կ. Պոլսի) բարբառի ներկայացուցիչ է եղել⁸¹։ Իսկ այս հարցը Հովհաննես Հոլովի կենսագրությունից աչժմ մեզ ամենից ավելի է հետաքրքրում՝ առնչված «Պարզաբանութեան» լեզվի հետ։

Բանն այն է, որ «Արհեստ»-ի լեզվի կապակցությամբ վերնասվածը՝ թարգմանչի արևելահայ լինելու մասին, մասամբ վերաբերում է նաև «Պարզաբանութեան» հեղինակին։ Այսինքն՝ այս գրքի լեզվում եղած արևմտահայ խոսքին հատուկ

⁸⁰ «Կարծիք կար,— գրում է Հ. Աճառյանը,— որ առաջին անգամ լեզվի մաքրության վրա ուղղորդված դարձնողն եղավ Զմյուռնիայի անդրանիկ հայ թերթը՝ Շտեմարանը, որ ամերիկյան բողոքական միսիոնարների հրատարակությունն էր, և որի առաջին համարը լույս տեսավ 1839 թ. հունվարի 1-ին։ Այս կարծիքը սակայն սխալ է։ Շտեմարանից շատ առաջ, 1687 թվին Վենետիկ տպված Պարզաբանութիւնը արդեն շատ մաքուր լեզու ուներ. թուրքերեն բառերի թիվը խիստ քիչ էր նրա մեջ, և հայերեն բառերն էլ բարբառային ձևով չէին, այլ զրարար... (Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, էջ 476)։

⁸¹ Նկատի ունենք վերը հիշված այն իրողությունը, որ Արևելյան Հայաստանից տարբեր ժամանակներում գաղթել են Էդել դեպի Կ. Պոլիս, և այս քաղաքում ու շրջակայքում 17-րդ դարում բնակվել են արևելահայ բարբառների ներկայացուցիչներ։

լեզվամիջոցները ևս 17-րդ դարում մեծ մասամբ համազգային արժեք ունեին՝ համապատասխանելով միջին հայերենի և մասամբ գրաբարի ձևերին, և ըստ այդմ պետք է ենթադրել, որ կարող էին գործածվել թե՛ արևմտահայի, թե՛ արևելահայի կողմից, մինչդեռ արևելահայ խոսքի բաղադրիչները, թվում է, որ համազգային արժեք չպետք է ունեցած լինեն և ավելի հավանական է, որ մի արևելահայի գրչի արտադրանք լինեն։

Այսպիսի դատողությունից կարելի է ենթադրաբար բխեցնել, որ Հովհաննես Հոլովը արևելահայ բարբառի ներկայացուցիչ է եղել։ Բայց նույն դատողությունից նաև մի այլ ենթադրություն է բխում՝ որ Հոլովը կարող էր լինել պոլսեցի և տեղի արևմտյան բարբառի ներկայացուցիչ, բայց և կարող էր ունեցած լինել մի արևելահայ խմբագիր կամ օգնական՝ լեզուն մշակելու գծով։ «Պարզաբանութեան» հիշատակարանում, որ գրված է Նահապետ Ազուլեցու անունից, Հովհ. Հոլովի ձեռքով, կա այսպիսի հատված. «Յիշեցէք ևս միով հայրմերիւ զագուլեցի մղտսի Աստուածատուրի որդի զսպասաւորն իմ զԹօմայն, որ ամէնայն ջանիւ անձնաձիր աշխատեցաւ ի տպագրատանն և օգնեաց սրբադրութեան սորին և ձեռնտու եղև միշտ Յոհաննէս վարդապետին...»։ Արդյո՞ք այս «ձեռնրտու եղև միշտ»-ը նշանակում է նաև, որ ազուլեցի Թոման Հովհաննես վարդապետի (այսինքն՝ Հոլովի) աշխարհաբարը խմբագրել է՝ նրան մասամբ արևելահայ թեքում տալով⁸²։

⁸² «Պարզաբանութեան» առաջարանում լեզվական բնույթի ղեկավարություն ակնարկող հատվածի վերաբերյալ վերը խոսք եղել է։ Հիշատակարանից առաջ գրված մի ոտանավորում նույնպես խոսվում է գրքի ստեղծման հետ կապված ղեկավարությունների մասին.

Քանիցս անգամ դառնագունեալ,
Բան դժուարին ի սմա գտեալ,
Կիսակատար զսա թողեալ,
Չաշխատաւորս ընդ արձակեալ,
Չափով գիրգս յոյժ ձիգացեալ,
Զի աւելի ծագիկ շինեալ.
Մինչ ի վերջն կատարեալ (էջ 838)։

Արդյո՞ք այս ղեկավարությունները նաև գրքի լեզուն կանոնավորելուն չեն վերաբերում, և արդյո՞ք այդ ընթացքում կարևոր չի եղել ազուլեցի Թոմայի դերը։

Մյուս կողմից, արդյո՞ք այսպես դատելով ներկա դեպքում նա նոր գրական հայերենի այս նմուշի գնահատման հարցում չափից ավելի նշանակություն չենք տալիս անհատին: Այս դեպքում էլ «Պարզաբանություն» լեզվի մշակը կարող է ամենից առաջ և ամենից ավելի գործածած լինել ժամանակի ընդունված գրական աշխարհաբարը՝ հիմնված գլխավորապես միջբարբառային վաճառականական խոսակցական հայերենի վրա: Վերջինիս գործածողների, այն ասպարեզ բերողների մեծ մասը 17-րդ դարում արևելահայեր են եղել (գլխավորապես՝ նորջուղայեցիներ, ագուլեցիներ), համենայն դեպս, այդ շրջանում հայ վաճառականների կեսից ավելին արևելահայեր էին: Կարո՞ղ էր արդյոք արևելյան թեքում ունեցող ժողովրդախոսակցականի մեջ տարբերայնորեն թափանցել միջին հայերեն- արևմտահայ լեզվատարրերի այնպիսի քանակ, որը լեզվին խոսակցականի մակարդակում արդեն միասնական (և՛ արևելյան, և՛ արևմտյան) բնույթ տարւ Այսպիսի հնարավորության դեպքում «Պարզաբանություն» լեզվի մեջ եղած խրատորեն արևելահայ լեզվատարրերի սկզբնական աղբյուրը կարող էր լինել վաճառականական խոսակցականը, որը պետք է որ իմանար հայ վաճառականների հետ մշտական շփման մեջ գտնված վարդապետը:

Սակայն տարբերայնորեն զոյացած միասնական ժողովրդախոսակցական հայերենի գոյության այս վարկածն ընդունել նշանակում է ինչ-որ չափով համաձայնել լեզուների և բարբառների խաչավորման տեսակետին, այսինքն՝ համաձայնել, որ երկու լեզու (կամ լեզվական տարբերակ, բարբառ) կարող են քերականորեն, բառապաշարով, հնչյունաբանությամբ խառնվել և ասպարեզ բերել մի նոր լեզու (կամ բարբառ):

Լեզուների պատմությունից այդպիսի հավաստի փաստ մեզ հայտնի չէ, ուստի լեզուների և բարբառների խաչավորման տեսակետը մեզ հիմնավոր չի թվում: Հայոց մի քանի բարբառներում կան հատկանիշներ, որոնք կարող են խաչավորման արդյունք թվալ: Օրինակ, Թփղիսի⁸³ և Արդվինի բար-

⁸³ Վերն արդեն ակնարկել ենք, որ Թփղիսի բարբառի դերը 17-րդ դարի միասնական նոր գրական հայերենի ասպարեզ գալու գործում անհավանական է: Թփղիսի բարբառի մի քանի հատկանիշներ (ուժ-ով ներգոյա-

բառների մեջ արևելյան ու արևմտյան բարբառախմբերի քերականական տարրերի համատեղ գոյությունը կամ այժմյան Արթիկի շրջակայքում առկա մի քանի խոսվածքների որոշ առանձնահատկություններ (այդ խոսվածքներն ակնհայտորեն վերաբերում են Կարինի բարբառին, բայց, օրինակ, բայի ներկա ժամանակաձևը նրանցում լինում է նաև հարադրական ձևի՝ սիրմ եմ և այլն): Սրանք, ըստ երևույթին, ոչ թե խաչավորման, այլ ազդեցության կամ լեզվի զարգացման որևէ այլ երևույթի արդյունք են:

Հնարավոր է նաև մի այլ վարկած: Թերևս, մինչև 17-րդ դարը (գուցե մինչև 16-ը), հնարավոր համարվի, որ արևմտյան և արևելյան բարբառների այժմ հայտնի տարրերությունները տվյալ վիճակով չեն եղել. օրինակ, գուցե իրոք բոլոր բարբառների բայի ներկա ժամանակը կազմվել է համադրական ձևով, ապա հարադրական ձևերը ծագել են արևելյան բարբառների մեջ ու շնչին բացառություններով (Արդվին, Կարինի որոշ խոսվածքներ և այլն) տեղայնացել միայն հայոց արևելյան շրջաններում: Մյուս կողմից, գուցե ներգոյական հոլովը (ուժ-ով) մինչև 17 (կամ 16-րդ) դարը տարածված է եղել թե՛ արևելյան, թե՛ արևմտյան մի շարք բարբառների մեջ, ապա տեղայնացել է արևելյան հայոց մեջ և այլն:

Այսպիսի պարագայում հնարավոր է, որ դեռևս 17-րդ դարից առաջ ձևավորված մի ընդհանուր հայ ժողովրդախոսակցական իր մեջ առած լինի թե՛ արևմտյան, թե՛ արևելյան բարբառների նախկին վիճակին հատուկ միասնական լեզվատարրերը և իր այդ բնույթը պահպանած լինի մինչև 17-րդ դարը, երբ երկու բարբառախմբերի մեջ լեզվական տարրեր հատկանիշների բևեռացումը մեծացել էր, և այն, ինչ միասնական էր մնացել ընդհանուր խոսակցականում, տարրերվել էր բարբառներում:

Սրանք վարկածներ են, որոնք, ըստ երևույթին, այժմ չեն կան, և-ով բացառական, բայի համադրական ներկայի ժամանակաձև, էական բայի եզակի երրորդ դեմքի է ձևը և այլն) այս բարբառը նման են դարձնում 17-րդ դարի նոր գրական հայերենին: Սակայն պատմական փաստերը բացառում են այս բարբառի դերը 17-րդ դարի միասնական նոր գրական լեզվի երևան գալու գործում:

կարող հաստատվել կամ հերքվել՝ անհրաժեշտ փաստերի պակասի պատճառով: Միակ փաստն այն է, որ 17-րդ դարում եղել է միասնական նոր գրական հայերեն: Թերևս, ինչ-որ շափով փաստվող դրույթ կարող է համարվել նաև այն, որ 17-րդ դարում հայոց նոր գրական լեզվի միասնականությունը դրսևորումները ազդակվել են մի կողմից հին և միջին գրական լեզուների առավել կենդանի ավանդույթով, միջբարբառային ժողովրդախոսակցականի վրա այդ լեզունների ազդեցությամբ, մյուս կողմից նրանով, որ միասնական նոր գրական հայերենը գործածվել է միայն գրավոր խոսքում, այն էլ շատ փոքր ոլորտում, և նրա առաջին գործածողները այդ լեզուն մշակում էին ժողովրդախոսակցականի, երբեմն էլ բարբառի մեջ հին և մանավանդ միջին գրական հայերենների հավելյալ տարրեր թրստ հարկի» մոտեցումով: Նոր լեզվի մշակներն անշուշտ, դեր ունեցել են, բայց դա չի նշանակում նոր գրական հայերենի յուրաքանչյուր մշակի անհատական հատկանիշներին շափից ավելի մեծ նշանակություն պիտի տալ: Գրավոր խոսքում ձևավորված լեզվական փոփոխություններն էլ դառնում (մանավանդ՝ հին ու միջին գրական խոսքի ամուր ավանդույթի ճնշմամբ), անհատները պահպանում են այդ ավանդույթը, բայց և իրենց անհատական ինչ-որ շափով մոծում տվյալ բնագրի մեջ: Ահա յուրաքանչյուր դեպքում այդ ինչ-որ շափով պիտի գտնել (որ բավական դժվար է) նոր լեզվի ամեն մի մշակի ներդրած անհատականը ճիշտ պատկերացնելու համար:

Ավարտելով մեր խոսքը «Արհեստ»-ի և «Պարզաբանութեան» լեզվի մասին, ուզում ենք նշել կարևոր թվացող մի իրողություն ևս, որն ավելի ուշ շրջանում նկատելի դարձավ հայ նոր գրական լեզվի զարգացման մեջ, գլխավորապես հատկանշեց աշխարհաբար գեղարվեստական գրականության լեզվի մշակման գլխավոր ուղիները: Խոսքը վերաբերում է վերը ներկայացված այն իրողությանը, որ «Արհեստի»-ի և «Պարզաբանութեան» լեզուները տարբերվում են նաև առաջինի մեջ ժողովրդային խոսքի ավելի մեծ, երկրորդում ավելի նվազ առկայությամբ, և որ «Պարզաբանութիւն»-ը ավելի հակված է դեպի գրաբարը, քան «Արհեստ»-ը:

Ուրեմն, արդեն 17-րդ դարի վաղ աշխարհաբարում ունենք

լեզվամշակման երկու ուղղություն՝ ավելի ժողովրդային բունույթի և ավելի գրքային-գրաբարյան: 17-րդ դարի աշխարհաբարի ուրիշ նմուշների լեզվի քննությունը նույնպես վկայում է այն ժամանակ արդեն այդ երկու գլխավոր ուղղությունների կամ երկու մոտեցումների առկայությունը, ուղղություններ, որոնք գլխավորապես արևելահայոց մեջ հակադիր դարձան 19-րդ դարի երկրորդ կեսում և բանավեճերի ու բախումների առիթ տվեցին 20-րդ դարում:

* * *

Դարավերջին՝ 1699 թ., Ամստերդամում Վանանդեցի տպագրիչները լույս ընծայեցին երրորդ տպագիր գիրքը՝ նոր գրական լեզվով գրված: Դա Ղուկաս Վանանդեցու «Գանձ շափոյ, կշռոյ, թւոյ և գրամից բոլոր աշխարհի» երկն է, որ նույնպես հատկապես հրատարակվել է հայ վաճառականների համար՝ իրեն առօրյա տեղեկատու առևտրական գործերում⁸⁴: Գրքում կան տեղեկություններ ինչպես տարրեր երկրների դրամական և շափ ու կշռի միավորների, այնպես էլ աշխարհի վաճառաշատ շուկաների մասին: Գրքի մեջ տեղ են գտել նաև համարողության արհեստի տարրեր:

Ղուկաս Վանանդեցին գրաբարագիր հեղինակ է, ժամանակի կիրթ հայերից: Նա «Գանձ շափոյ, կշռոյ...»-ն կազմել է այլալեզու տարբեր աղբյուրներից օգտվելով, ինչպես և իր իմացածն օգտագործելով: Գրքի ծախսերը հոգացել է չուղայեցի վաճառական Պետրոսը (որդի խաչատուրի), որը և պատվիրել է այդ գիրքը:

Գրքի լեզուն բավական մոտ է «Արհեստ համարողութեան»-ի լեզվին, միայն ավելի է հակված դեպի վաճառականական խոսակցական հայերենը, որը, ինչպես այս գրքից է նկատվում, դարավերջից առավելապես արևելահայ թեքում է ստանալիս եղել:

Գրքի լեզվում պահպանված են նոր գրական հայերենի միասնականության մի շարք կարևոր հատկանիշներ, բայց

⁸⁴ Առաջարանը, որ կոչվում է «Առ հայազուն վաճառասէր եղբայրս», ազդարարում է՝ «յօգուտ մերազնեայ վաճառասէր եղբարցդ արձանացուցութե», հիշատակարանում գրված է. «Ի յօգուտ մերազնեայ բանասէր վաճառական եղբարցս»:

ընդհանուր առմամբ այդ լեզուն հակված է դեպի արևելյան խոսքը:

Անշուշտ, ակնհայտ է, որ գործ ունենք գրական լեզվի հետ, այսինքն՝ խոսակցականը գրականացված է. դրա առաջին նշանները այնպիսի բառերի և բառային ու քերականական ձևերի գործածություններն են, որոնք 17-րդ դարում հատուկ էին միայն հայոց գրավոր խոսքին, ինչպես, օրինակ, ուստի, գոեկօրեն, այսինքն, ուրպես, նույնպես, հանապազ, հայտնապես, օրստօրէ, ներգորեալ, վերգորեալ, երկդրամեան, կեոիք, համարք, միջագիծ, իւր, իւրեանց, նոցա, մնացեալ, մասունք, բոլորովմբք, ոսկոյ, ժամանակաւ, կանոնաւ, լեզուաւ և այլն: Կան գրաբարյան կամ գրքային այնպիսի արտահայտություններ, ինչպես՝ «վախճան պսակէ զգործ», «Որք ունին բերդս և շենս ոչ սակաւ», «Երեքի կանոնաւ զերկրորդն և զերրորդն բազմացնել», «Թագաւորն ֆրանցու ի Փարէզ», «Լիօնացիք որք են ի Ֆրանցիա» և այլն:

Բացի այսպիսի գրաբարանոց լեզվատարբերի գործածությունից, միասնական աշխարհաբարի վիճակը գոյանում է նաև ընդհանուր առմամբ արևելյան հակում ունեցող խոսքի մեջ արևմտյան բարբառներին հատուկ լեզվատարբեր գործածելու շնորհիվ:

Այստեղ ևս առկա են առավելապես արևելյան հայերենին հատուկ այնպիսի բառաձևեր, ինչպես՝ էս, էդ, էլ, մին և այլն, թեև դրանց կողքին գործածվում են նաև գրաբարյան կամ գրքային այս, այդ, այլ, մէկ⁸⁵ և նման բառաձևեր. օրինակ, «Մին ուրիշ անծանօթ համարք գտանել», բայց՝ «մէկ ունցէն 8 գրօս է», «էն մեջ տեղ գրած փողովն», բայց «Այս երեք կանոնաւ...» և այլն: Առհասարակ, բառապաշարն ու բառաձևերն ավելի արևելյան բնույթ ունեն (կան նաև՝ իմին, անբրաշ, փաւէն, լիւրէն, լինի, նույնիսկ՝ ըստոնց):

Բառապաշարում զգալի տեղ են զբաղեցնում հայ վաճառականական խոսակցականին հատուկ շատ բառեր, այդ թրվում՝ փոխառյալ: Չափ, կշիռ, դրամ, հաշվի ձևեր, տարբեր ապրանքներ նշանակող այդ բառերի զգալի մասը 17-րդ դարում հատուկ է եղել նաև այլ լեզուների, և դրանք «Գանձ

շափոյ, կշռոյ...» գրքի լեզվին վաճառականական շեղանդովի (ժարգոնի) երանգ են տալիս: Ուշագրավ է, որ այդ կառուցիկ փոխառյալ բառերի մեծ մասը տառադարձված է արևելահայ խոսքին հատուկ ձևով: Հիշենք «վաճառականական» այդ բառերից մի քանիսը՝ ղանքաւ, ռուփի, մաղալ, լիւրալ, ղանկ, ունցալ, քալիս, սնջաֆ, քուման, մարք, դիւաք, դինար, դրամ, շնլինգ, մարշիլ, ֆսեստր, ռուբլ, կլայեկ, ֆֆուրդ, բիրար, դարշին, արասի, զաֆրան, խարջ, դալալ և այլն:

Գործածվում է արևելահայ խոսքին հատուկ ներգոյական հոլովը. երկրումն, Մոսկովումն, Փօրթուգալումն, Իադաֆումն, միջումն, տեղումն և այլն: Բացառականը մեծագույն մասամբ կազմվում է արևմտյան բարբառներին (նաև գրաբարին ու միջ. հայերենին) հատուկ է մասնիկով. օրինակ՝ պատնառէն, երկրէն, բաժանելէն, Մոսկովէն, ֆսանէն և այլն, նույնիսկ էստեղ-ը ունի էստեղէս բացառականի ձևը: Հատուկենտ կան նաև բացառականի արևելյան ձևեր, ինչպես՝ էստից, կամ արցախյան՝ Հնդուստանայ:

Բայի ներկա (և անցյալ անկատար) ժամանակները համադրական են (արևմտահայ— միջին հայերեն ձևերով), ինչպես՝ «Մին փուտին 1000 դիան քիրայ կու տան», «Զօռով կու խօսին», «Հարիւրին կէս մաղալ աւել կու ձգեն», «50 դիան գօմրուկ կառուն», «Դալալն դին կանէ», «Հարիւրին հինգ խարջ կու տան», «Ի Հաշտարխան կու կշռեն» և այլն: Արևելյան խոսքին հատուկ ներկայի համադրական ձևի որևէ օրինակ չկա:

Գործածվում է էական բայի եզակի երրորդ դեմքի է ձևը. «Ապրիշումի դիտրն 21 լիրայ է», «մի և նոյն խօսք է», «փողն արծաթ է» և այլն, թեև ի տարբերություն «Արհեստ»-ի և «Պարզաբանութեան», այստեղ ունենք նաև ա ձևը՝ հատուկ միայն արևելյան բարբառներին. «մնացածն քանի այ», «Առուծախն Սուրաթին պէս այ», «120 կոպեք այ», «Մին ղոնլուդ այ» և այլն:

Ստորև բերում ենք մի փոքր հատված այս հետաքրքրական գրքից. «Պիտի յառաջ ամէն ընկերաց մայէն մի տեղ ջամ անել և զնել առաջին տեղումն: Յետոյ իւրեանց մէջ դրած փողի շահն կամ զարարն մին տեղ ջամ անել... Այսպէս երեքի կանոնաւ ընկերաց մէջ տեղ դրած փողն ջոկջոկ պիտի

⁸⁵ Մին և մէկ ձևերի փոխհարաբերությունն այս գրքի լեզվում մոտավորապես 80:20-ի է՝ հօգուտ մին-ի:

Հարցանելով իմանալ, թե ի՞նչ շահ կամ ի՞նչ զարար կու հասնի ամէն ջոկջոկ դրած սարմայի։ Որքան ընկերք կան, այնքան անգամ պիտի երեքի կանոնն բանացնել և կրկնել... Ամմա երբ ընկերութեան մէջն ժամանակ ևս հանդիպի, թէ բարարաւ և թէ ավել պակաս ժամանակ լինի, յառաջ պիտի ամէն ընկերի մայէն ջոկջոկ իւր ժամանակին հետ բազմացնել»։

Պարզ է, որ «Գանձ չափոյ...»-ի խոսքի ընդհանուր բնույթն ավելի ժողովրդային հակում ունի, քան ոչ միայն «Պարզաբանութեան»-ը, այլ նաև «Արհեստ»-ինը, իսկ այդ հակումը հենց պայմանավորել է լեզվի համեմատաբար ավելի արևելյան երանգը, առայժմ մասնակի շեղումը 17-րդ դարի միասնական աշխարհաբարից։

17-ՐԴ ԴԱՐԻ ՆՈՐ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆՆԻ ԻՐՐԵՎ ԳՐԱՎՈՐ ԶԱՓԱՅՈՅԻ ԼԵԶՈՒ

«Պարզաբանութեան» առիթով բերեցինք մի քանի գեղարվեստական նմուշներ, սակայն այդ գիրքն ընդհանուր առմամբ գեղարվեստական երկ չէ, նրանում սոսկ գեղարվեստականության տարրեր կան։ Մյուս կողմից, 17-րդ դարի բանավոր մշակվող գուսանական աշխարհաբարը ավելի շատ արևելահայ խոսքի արտահայտություն է եղել։

17-րդ դարում և 18-ի սկզբին եղել է նաև գրավոր աշխարհաբար չափածո, որի մեջ առկա են միասնական նոր գրական հայերենի նմուշներ։

Իբրև օրինակ վերցնենք բանաստեղծ Ստեփանոս Դաշտեցու (ծնվ. մոտ 1640—50 թթ.) ստեղծագործությունները՝ գրված 17-րդ դարի վերջին 2—3 տասնամյակներին և 18-ի առաջին երկու տասնամյակներում։ Դաշտեցին գրել է գրաբար, մայրենի (Զուղայի) բարբառով, նոր գրական հայերեն, թուրքերեն։

Աշխարհաբարյան բանաստեղծությունների մի մասը 17-րդ դարի միասնական նոր գրական հայերենի հիմնական կանոնի պահպանմամբ է գրված, մյուսը՝ ավելի արևելահայ թիքում ունեցող ժողովրդային լեզվով։ Ոտանավորների գրության թվականները մեզ հայտնի չեն. արդյոք կարո՞ղ ենք

ենթադրել, որ լեզվական վերահիշյալ առաջին խմբին վերաբերող ոտանավորներն ընդհանուր առմամբ ավելի վաղ շրջանում են գրվել, երբ միասնական աշխարհաբարը դեռևս կայունության նշաններ էր ցուցաբերում։

Միասնական նոր գրական լեզվի վերը նշված հատկանիշներից Դաշտեցու աշխարհաբար ոտանավորների լեզվում առկա են շատերը⁸⁶։ Այստեղ ևս ունենք արևելյան բարբառներին առավել հատուկ մի շարք բառաձևեր (ավելի շատ, քան «Արհեստ»-ում կամ «Պարզաբանութեան» մեջ)։ դրանցից են՝ մին («Ինչ ունես տուր մին մարգարտին, մին ակին»), էս, էդ, էն և նրանցից կազմվածներ, էլ և այլն («Շատվորն էսօր էրնեկ կուտայ մինակին», «Աշխարհումս էլ ինչ պետք էր», «էն երկինքն», «էս գերոյս»)։ Առկա են նաև այս վերջինների գրաբարաձև հոմանիշները («այլ մի ակն», «այլոց բամպասոդն», «այս ցաւէս», «այսպէս դառնութիւն»)։ Առատ է ներգոյական հոլովի կիրառությունը (փողոցներում, ձեռնումդ, հանդերումն, երկնքումն, աշխարհքումս, մարտում, օրում և այլն), բացարձակորեն իշխում է է-ով բացառականը (բանէն, հօրէ, հացէս, ձիանէն, երկնքնէն, գործէն, սրտէս և այլն), հազվագեղ է արևելյան ց-ով բացառականը (լնեքիցն, աստից), բայերի ներկան (և անց. անկատարը) հիմնականում կազմվում է համադրական արևմտյան ձևով. «Դուն է՞ր կու տխրիս», «Ով կու դատէ, ով կու տայ», «Ով երկու տակ կու խօսի», «Կու խնդրեմ, որ միշտ դու օգնես անմեղին», «Սրտէս արին կու քափի», «Նետք կու տեղայր, երբ քո բանդ կու խօսի», «Բոլոր գիշերն կու նայիմ» և այլն։ Կան նաև ներկայի արևելյան հարադրական ձևեր, բայց շատ փոքր քանակով. «Չար մարդն էստեղս ինչ ուզում է, անում է», «հանապազ մատնում այ»։ Վաղակատարը մեծ մասամբ Ե-ավոր է. «Կինն առէր է, բողբէր», «Քանի ձեռաց բողբէր է»։

Կան արևելյան բարբառային, գլխավորապես նորջուղայական լեզվատարրեր, այդ թվում էական բայի եղակի ամ, ա, ան ձևերը. «Մանող ամ», «Ողջ բարեկամ ան», «անուշ շար այ», «էն երկինքն այ, գետին չէ», «ծէսն էս այ», բայց և սրանց զուգահեռ կան նույն բայի եմ, ես, են, ենք (նաև՝

⁸⁶ Օրինակներն առնված են ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագրից» (հաս. գիտ.), 1956, № 12, էջ 106—114։

եմբ) և մյուս համապատասխան ձևերը. «մարդն այն է», «մերիշ ես եմ», «սիրուն պահ է», «շատ քաջ է», «Մարդ փորձելն է մէկ ամիս», «Նրեա ով է, խոր ով է» և այլն:

Հական բայի է-ազոր և ա-ազոր ձևերից բացարձակորեն դերակշռում են առաջինները, բայց երկրորդների առկայությունն արդեն իսկ խոսքը շեղում է միասնական գրական լեզվի շաղկից:

Հիշենք նաև, որ մի քանի դեպքում առկա է ն-ի դիմաց նորջուղայական խ-ն, յու-ի դիմաց ե-ն («Սեր կանէ խէտ մեծ իշին», «Խէտ էս գերոյս», «էս գեղիս ջուլիսակէն»:

Կան նաև արևմտյան բարբառային այնպիսի տարրեր, որոնք գրական արևմտահայերենի բաղադրիչներ դարձան. օրինակ՝ «Օր մ՝ ապրին», մի քանի անգամ գործածված է աղէկ միջին հայերեն-արևմտահայ բառը և այլն:

Շատ են դրաբարյան բառերը և բառային ու քերականական ձևերը. բացի բերվածներից, ահա մի քանի քերականական նմուշ ևս՝ «Բազումք կեցան», «մեղաց պտուղք», «մեղաց ծովն անկար», «զսուր քո», «Ամառն էանց», «քան դանասուն», «զտիւ և զգիշեր», նաև՝ զիս, զինչ, մեք նորա, բարւոյն, հոգոյս, մտացս, քազաւորք, ընտրեաց, արկանէ, առիծոյ, ցաւօք, լինիմք և այլն:

Բառապաշարում առկա են 17-րդ դարում գրաբարյան-գրքային ընկալված բառեր ու բառաձևեր, որոնք նոր գրական հայերենի կարևոր բաղադրիչներ են, ինչպես՝ տեսողութիւն, հարցընկեր, հանդերձ, հովիւ, ընդդէմ, սերմանեմ, արկանեմ, արտասուեմ, անհատ, սավան, արիւն, եղբայր, եթէ, առողջ, խորագէտ, կերպարանք և այլն:

Ստեփանոսի աշխարհարար բանաստեղծություններում հայոց լեզվի տարրեր շերտերին պատկանող բառերի ու ձևերի կողք-կողքի շատ գործածությունների մի պատճառն էլ հանգաստեղծման նպատակով կատարված բառնորոշությունն է: Ինչպես նոր գրական լեզվով մեծ մասամբ գրել է թաշնիսի ձևով, որ հատուկ հանգային համակարգ ունի և հանգակազմիշ բառերի ու ձևերի մեծ զինանոց է պահանջում: Ահա մի օրինակ.

Ո՛վ մեղ շաբաւ, մարդ այն է,
Մարիամ չէ՝ Մարթան է.

Աստուած շանէ, որ մէկ կիճ
Երեւ կամ յորս մարդ առնէ:

Կա՛մ Շամիրամ, կա՛մ Արա,
Կա՛մ ուսուցո, կամ արա.
Ազնիւ կերպիտ լոյսն միշտ
Տիւ և զիշեր կամար այ:

Կամ՝

Ստեփան, Լ՛ի. սիրունն է լաւ,
Շունչս այն, որ սիրուն էլաւ.
Ի՛նչ կատուն ի՞նչ կու պահես՝
Ի՛նչ պահես՝ սիրունն է լաւ:

Սիրունն է միշտ սրտի սէր,
Սիրով կուտայր սրտիս սէր.
Լեզուս ասաց միշտ անկեղծ,
Ի՛նչ որ մէկ իմ սրտիս էր:

Նաղաշ Հովնաթանը (1661—1722) նույն շրջանի բանաստեղծ է, երևի Ստեփանոսից փոքր-ինչ ավելի ուշ ասպարեզ եկած և, իհարկե, շատ ավելի խոշոր ստեղծագործող:

Հովնաթանն ունի և՛ գրաբար, և՛ աշխարհարար տաղեր: Տաղերի մի մասը (երգիծական և խնջույքի) հաճախ սկսվում է գրաբար, ապա շարունակվում նոր լեզվով. երբեմն ուժեղ է միջին հայերենի կնիքը: Սիրո տաղերը մեծ մասամբ նոր գրական լեզվի որակն ունեն, երբեմն էլ թեթևում են դեպի գուսանական աշխարհարար:

Հովնաթանի այդ տաղերի լեզվում միասնական գրական հայերենի մի շարք տարրեր պահպանված են, բայց ընդհանուր առմամբ նրա խոսքը ևս արևելյան հակում ունի, թեև միջին հայերեն-արևմտահայ մի շարք ձևեր, ինչպես՝ համադրական (կ, կու մասնիկով) ներկան և անց. անկատարը, է-ով բացառականը, ր-ով վաղակատարը և այլն պահպանվում և գերակշռում են⁸⁷:

⁸⁷ Նաղաշ Հովնաթանի լեզվի ավելի մանրամասն նկարագրությունը տե՛ս «Երաբեր հաս. գիտ.», 1972, № 1, էջ 40—50 և «Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն», Ե., 1978, էջ 60—74:

18-րդ դար: նոր Գրական Հասերենի Երկրորդ Կոնսեր

18-րդ դարում նոր գրական հայերենի զարգացման երեք ամենաբնորոշ հատկանիշները, հավանաբար, հետևյալներն են. ա) գրավոր խոսքում հստակ է դառնում նոր գրական լեզվի երկփեղկումը՝ արևմտյան և արևելյան ճյուղերի, բ) լրջորեն մշակվում ու զարգանում է նոր գրական հայերենի արևմտյան ճյուղը, որն ըստ էության սկսում է ընկալվել իբրև հայոց ընդհանուր աշխարհաբար: Արևելյան ճյուղը աննշան չափով է արտահայտվում գրավոր խոսքի մեջ և իբրև մշակութային հաղորդակցության միջոց նկատելի զարգացում չի ունենում, գ) նոր գրական լեզուն շարունակում է մնալ իբրև գերազանցապես կրոնական. թվաբանական մի խոսքով՝ իբրև ոչ գեղարվեստական երկերի լեզու, իսկ իբրև գեղարվեստական գրականության (գրավոր ստեղծվող), գլխավորապես շափածոյի լեզու շարունակում է իշխել գրաբարը, մասամբ էլ միջին հայերենի որոշ տարբերակներ, որոնք երբեմն բավական մոտենում են նոր գրական հայերենին (արևմտյան ճյուղին):

Վերը տեսանք, որ արդեն 17-րդ դարի գուսանական աշխարհաբարը հենց սկզբից արևելահայ բնույթ էր ստացել, քանի որ իբրև հենք ուներ արևելյան բարբառ: Արդյոք Հայաստանի արևմտյան գավառներում 17-րդ դարի երկրորդ կեսում եղե՞լ են արևմտահայ գուսանական աշխարհաբարով հորինող գուսաններ: Դա մեզ հայտնի չէ. չկան անհրաժեշտ նյութեր: Ավելի հավանական է թվում, որ այդ գավառներում հայերեն ստեղծվող (հիշենք՝ արևմտահայ գուսանները մեծ մասամբ թուրքերեն էին ստեղծագործում) գուսանական արվեստի լեզուն 17-րդ դարում և դուրս շատ դեպքերում 18-րդ դարի մեջ ավանդաբար շարունակել է մնալ միջին հայերենի որևէ տարբերակը՝ երբեմն մոտ արևմտահայ ժողովրդախոսակցականին ու նոր գրական լեզվին: Այդ են վկայում մի

շարք տաղեր՝ տեղ գտած տպագիր և ձեռագիր տաղարաններում:

Գրավոր խոսքի մեջ 18-րդ դարի առաջին կեսում նոր գրական լեզուն արդեն երկճյուղ է. ճյուղերն իրարից հեռանում են աստիճանաբար, բայց ինչպես հետագա շրջանի զարգացումը ցույց տվեց՝ անվերադարձ:

1710—20 թվականներից պահպանված են աշխարհաբարյան ուշադրավ հուշարձաններ՝ գրված նոր գրական լեզվի և միջբարբառային խոսակցական հայերենի միջին դիրքում գտնվող մի լեզվով, արևելյան բարբառախմբի ակնհայտորեն գերակշռող հատկանիշներով: Խոսքը վաճառական, նաև ժամանակի ականավոր քաղաքական գործիչ Նդիա Խոտորչրեցու (Կարենցու) գրությունների լեզվին է վերաբերում⁸⁸:

Ահա մի քանի նմուշ Նդիայի նամակներից. 1715 թ.՝ «Բայց մեք չէյինք հաւատալ մինչի էս թարեղին, էս քանի աւուրն էրլըմ մարթ էկաւ և գիր, որ ճշմարտապէս սաֆար է, դերա էրզըմ պարայղներն բացվել է Յեայեան ասքարն գնացել է ձիաւ, որն էլ պիտի դատկին գնա», «Իստամպօլ աչքով տեսնողներն զարմացել են, թէ՛ աշխարքս մէկ մարթուն էլ է՞սչափ ոսկի, էսչափ դուռուշ կամ է՞սչափ ջաւահիր կու լինի» (3), «Ատաթ է, որ երկու սհաթ դամ փոքր յաւել դիւան կու լինի, էս էլին վեց սհաթ կու մնա» (4), «Մին էլ թէ ալիշվերիշի էհուալն հարցանես, մինչի էս թարեղս Գանճա զարպաֆին լիտրն տասներկու հաղար, տասներեք հաղար դիւան էր, հիմա յիշաւ մին թուման» (5): 1718՝ «Նիզպարն էլ էս խանին դուլուղ շի անում, իրան համար սովտաքարութին անում է» (12), «Եւ էն առաջի գրումն, որ գրել էի, թէ ձուկ դրկեք, հալպաթ, հասանել գրոյս մուղաթ լինիս, թահտի անես, որ դըրկես» (12), 1724՝ «էստից յառէջ մին ուռուսի նաւ յընկել է Կասկարու հողումն և կասկարեցիք նաւի ապրանքն առել են և մարդիկն բռնել, հիմիկս ուռուսի սարտարն էն ապրանքն ուզում է և շատ նեղացել է» (269), «Այսօր 25 օր է, որ մեզ խարճ չեն տվել, և մին շափառ ձի մեզ պետք եկաւ, բռնեցինք, ձեր մարդիքն գնացին ուռուս սարտարին մեր ձեռիցն գան-

⁸⁸ Նդիա Կարենցու դիվանը: Առաջար. և ծանոթագրութ. Ա. Աբրահամյանի, Ե., 1968, 387 էջ: Բերված քաղվածքների մոտ նշված են այս հրատարակության էջերը:

կատարին, թէ՛ մեր նրանց էլ ո՛չ ձի կուտանք, ոչ խարճ. քանզի ձի են բռնում, տեղիս բաներն աստ և անդ են գրում: Սարտարիցն մարդ եկաւ մեր կուշտն, պատասխան տվի թէ՛ եթէ էս յերկիրն շահին է, պիտի որ շահի հրամանն անց կենա...» (281):

Այս քաղվածքներում, ինչպես տեսնում ենք, առկա են՝ ում-ով հարադրական ներկայի, ել-ով վաղակատարի, ց-ով բացառականի, ներգոյականի (ում-ով) ձևեր, էս ու էն և ներանցով կազմված բառեր, էլ-ը և արևելահայ խոսքը հատկանշող ուրիշ լեզվամիջոցներ: Եղիայի գրություններում կան նաև առավելապես արևելյան բարբառներին և ժողովրդախոսակցականին բնորոշ այնպիսի լեզվատարրեր, ինչպես, օրինակ, ի-ով հոգնակի ստացական (սեռական-տրական), ինչպես՝ րովիերին (271), ինկիսներին (290) և այլն կամ այսպիսի ձևեր՝ մայէն (13), աղէն (16), էկած լինի (16), ձեն շհանեն (16), մոռանաս ոչ (14), կարող չեմ (28), նշանց տալ (14), ախպեր (28), էս ժուկն (230) և այլն:

Գրություններում կան նաև միջին հայերենին և արևմտահայ խոսքին հատուկ մի շարք ձևեր, այդ թվում կու (կ)-ով համադրական ներկա ու անց. անկատար, օրինակ՝ «Ատաթ է, որ երկու սհաթ, գամ փոքր յաւել, դիւան կու լինի» (4), «խիստ շատ խօսք կու խօսվի» (4), եր-ով վաղակատար՝ «Մօնիերին վիզն անկեր են» (10), «Դուն վատն առերես» (13), «պատրին եկեր էր» (18), մանավանդ՝ արևմտահայ խոսքի կարևոր ցուցիչ ալ բառաձևը՝ «մին ալ այս գիրն բերող Սայեթվանն եկավ Բեան» (9), ու-ով հոգնակի ստացական՝ հայերուն (14), ուրիշներուն (272), ուռուսներուն (281) և այլն, որոնք գործածվում են արևելահայ ձևերին զուգահեռ և, կարծես, քանի գնում՝ պակասում են (ըստ նամակների ժամանակագրության):

Եղիայի գործածած աշխարհաբարը, ինչպես տեսնում ենք, ունի միասնական գրական հայերենի հատկանիշներ և դրանցով մասամբ նման է «Արհեստ»-ի ու «Պարզաբանութեան» լեզվական որակին, սակայն հակումը դեպի արևելահայ խոսքը բավական զգալի է, և լեզուն ընդհանուր առմամբ կարող է դիտվել արևելյան աշխարհաբար՝ միասնական գրական հայերենի մի շարք հատկանիշներով:

Ինչո՞վ բացատրել ստուգապես արևմտահայ Եղիա խոտորջրեցու նամակների լեզվում արևելահայ խոսքի այսպիսի առատությունը:

Եղիայի գրությունների բնագրերը մեր ձեռքին չեն եղել, և մենք փաստաթղթային տվյալներ (ինքնագիր և այլն) չունենք որոշելու համար, թե Եղիայի անունով նրա դիվանում պահպանված բոլոր գրություններն անձամբ ի՞նքն է գրել, թե՞ որեւէ քարտուղար կամ քարտուղարներ (որպիսիք նա ունեցել է): Պահպանվել են Եղիայի կողմից տարբեր մարդկանց առաքված հայերեն, պարսկերեն, ֆրանսերեն նամակների պատճենները (այլալեզու նամակների պատճենները հայերեն թարգմանությամբ), ինչպես և իր ստացած նամակների հայերեն համառոտումները:

Արդյոք այդ բոլոր պատճենները ինքր Եղիա՞ն է հանել: Ըստ փաստաթղթերը հրապարակողի՝ Ա. Աբրահամյանի տեղեկատվության՝ այո՞⁸⁹: Նամականու լեզվի որոշ հատկանիշներ, որոնց մասին այստեղ ծավալվելը շատ տեղ կպահանջեր, վկայում են, որ այդ պատճենները ու համառոտումները (կամ նրանց հիմնական մասը), իրոք, Եղիայինը պետք է լինեն: Այսինքն՝ տվյալ դեպքում ունենք այդ անձնավորության նամակային լեզվի նմուշներ: Պահպանված է նաև Եղիայի մի ծավալուն աշխատությունը⁹⁰ հետևյալ վերնագրով՝ «Պատմութիւն իմն կարճառօտ ի վերայ անձկութեանց Եղիայիս Աստուածատուրեան Մուշեղանց, զորս կրեցի ի ազգէն ֆռանկաց, մանաւանդ ի խաբերայ կրօնաւորաց նոցա եւ ի սուտ եխայրց և բարեկամ կոչեցելոց...»: Ինչպես պարզ է դառնում հրապարակված հատվածներից⁹¹, հեղինակն այս աշխատությունը գրել է գրաբար: Դա, իհարկե, լեզվական լուրջ շեղումներով չի գրաբար է, բայց և անառարկելիորեն գրաբար է իր ընդհանուր լեզվական կառուցվածքով: Ահա մի

⁸⁹ Եղիա Կարենցու դիվանը, էջ XXX:

⁹⁰ Ըստ Ա. Աբրահամյանի, մեկ աշխատություն է՝ բաղկացած երեք մասից (Դիվան, XXX), ըստ Հ. Ոսկյանի՝ երեք առանձին աշխատություններ են («Հանդէս ամսօրյա», 1927, էջ 367—374):

⁹¹ Աշխատության ձեռագիրը գտնվում է Վիեննայի Մխիթարյան-մատենադարանում, մի շարք հատվածներ հրապարակել է Համազասպ Ոսկյանը («Հանդէս ամսօրյա», 1927, սյունակ 28—36, 126—138, 237—249, 367—375, 493—501):

հատված. «Եւ այսպէս, թողի զպաշարումն և գնացի դարձեալ ի Դավրէժ 1722 թին և մտի առ վերո Քափուշինսն և բնակեցայ ընդ նոսայ. այսպէս անցաւ ժամանակս ինչ, եկաւ նորոնձայ Շահ Թահմազն ի Դավրէժ: Սորա փեսա նավապիղօվլայն առաւ բաղանիսն Շերիմանցոց, որ կար ի քաղաքին Դավրէժու և վաճառեաց զնա քաղաքացոյ ումեք. իբրեւ տեսին զայս գործ ազգն Հայոց, մանաւանդ Զուղայեցիք, խոր խոցեցան»⁹²:

Ուրեմն, Եղիայի նամակների և այլ գրութիւնների լեզուն աշխարհաբարն է, իսկ «Պատմութեան»-ը՝ գրաբարը:

Համազասպ Ոսկյանը Եղիայի այս գրաբար աշխատութեան լեզվի մասին գրում է. «Լեզվի տեսակետով Եղիայի երկերու կարևորութիւնը կկայանա անոր մեջ, որ կենդանի վկաներ են Բարձր Հայոց և հատկապես խոտրջրո նույն ժամանակի բարբառին: Քանի որ Եղիա ծնած և ուսում առած է խոտորջուր ու Կարին, քանի որ այս երկու տեղերը շարադրած է վերոհիշյալ գրութիւնները, շատ բնական է նույն բարբառին ազդեցութիւնը, սակայն ապրած ըլլալով ուրիշ երկրներ ալ, գլխավորաբար Պարսկաստան, իր գրքին մեջ երբեմն ուրիշ բարբառներու ազդեցութիւնն ալ անժխտելիորեն երևանկու գաւ: Դժբախտաբար ինքը չէ գրած պարզապէս իր ժամանակի բարբառովը, որով այս գիրքը բոլորովին թանկագին կըլլար, քանի որ շարադրված կըլլար արևմտյան գրավոր լեզվի սկսելուն փորձերու շրջանին»⁹³:

Այս առթիվ պետք է ասել: որ նախ՝ Եղիայի աշխատութեան գրաբարի մեջ Կարինի (Բարձր Հայքի) բարբառը շնչին շափով է նկատելի. իբրեւ Բարձր Հայքի բարբառի տարրեր Հ. Ոսկյանի բերած օրինակները (յիմանալ, վասն յէր, յընծայեալ, յերբօր և այլն), մեզ թվում է, կարող են դիտվել նաև արևելյան որոշ բարբառների (օրինակ, ն. Զուղայի) ազդեցութիւն: Արևելահայ խոսքի ազդեցութիւնը այս գրաբարի վրա ավելի ուժեղ է. հենց Ոսկյանի բերած օրինակների մեծ մասը (Եխպայր, տվին, մին, այտպէս, ժայն ժամանակն ասի», «Դեռ չեն եկել», «ամօթ լինի», «չը լինէր» և այլն) ավելի շատ արևելեայան բարբառների և ժողովրդախոսակցականի ազդեցու-

թյան նշաններ ունի, քան՝ արևմտյան: Ոսկյանը գրելով, թե Եղիան «չէ գրած պարզապէս իր ժամանակի բարբառովը», փաստորեն այն միտքն է հայտնում, թե իբր Եղիան չի գրել ժամանակի ժողովրդախոսակցականին մոտ գրական լեզվով, քանի որ բարբառ ասելով Ոսկյանն այստեղ նկատի ունի վաղ շրջանի արևմտյան գրական հայերենը («արևմտյան գրավոր լեզվի սկսելուն փորձերու շրջանին»): Բայց Եղիան, ինչպես տեսանք, բավական գրել է նաև ժողովրդախոսակցականին շատ մոտ գրական լեզվով⁹⁴, որը սակայն ոչ այնքան արևմտյան, որքան արևելյան գրավոր հայերենի վաղ շրջանի օրինակներ է տալիս (Հ. Ոսկյանը, հավանաբար ծանոթ չի եղել այդ գրութիւններին):

Եղիա խոտորջրեցու կյանքի ու գործի մեջ հանելուկային կետեր շատ կան, որոնց պարզումը լույս կսփռեր նաև մեզ հետաքրքրող հարցի վրա: Սակայն շատ բան էլ նրա կենսագրութիւնից հայտնի է և կարծես օգնում է բացատրելու առեղծվածը:

Եղիան ծնվել է խոտորջուր գավառի Կրման գյուղում, 1689 թ.: Մանկուց տեղափոխվել է Կարին, ուր կրթութիւն է ստացել նախ մի համագյուղացի ուսուցչի, ապա կարնեցի ուսուցիչների մոտ, սովորել է նաև կաթոլիկ հայրերի կրթարաններում (Կարին և Գանձակ): Եղիան եղել է առևտրականի որդի, ինքն էլ եղբայրների հետ զբաղվել է առևտրով և բավական շատ շրջել. Գանձակ, Թավրիզ, Թիֆլիս, Ամիդ, Բաղդադ, Կ. Պոլիս, Երևան, Շամախի, Աստրախան, Մոսկվա, ն. Զուղա, Ռաշտ,— սա է այն բնակավայրերի շատ թերի ցանկը, ուր այցելել կամ որոնցում ապրել է Եղիան: Մեզ հետաքրքրող հարցի տեսակետից կարևոր է այն, որ 1710-ական թվականների սկզբներից, այսինքն՝ 20—25 տարեկանից Եղիան ավելի հաճախ է եղել արևելահայոց մեջ, այնուհետև մի քանի բարձր պաշտոններ է վարել Պարսկաստանում, Ռու-

⁹⁴ Եղիա խոտորջրեցու կենսագրութիւնն առաջինը շարադրել է Հ. Ոսկյանը, օգտվելով Եղիայի «Պատմութիւն իմն կարճագոտ ի վերայ անձկութեանց Եղիայիս...» վերոհիշյալ ձեռագիր աշխատութեան տվյալներից («Հանդես ամսօրյա», 1927, էջ 28—36, 126—138), ապա՝ Ա. Արբահամյանը «Եղիա Կարնեցու դիվանը» գրքի առաջաբանում և ծանոթագրութիւններում:

⁹² «Հանդէս ամսօրյա», 1927, սյունակ՝ 127:

⁹³ Նույն տեղում, սյունակ՝ 493:

աստատանում: Բանտարկվելուց և քաղաքից քաղաք տեղափոխվելուց հետո ապրել է Աստրախանում մինչև 1736 թվականը, ապա եղել է Եվրոպայում, 1740 թվականից նորից է հաստատվել Պարսկաստանում և ապա 1745-ից մինչև կյանքի վերջը (հավանաբար՝ 1750) ապրել է Կարինում: Ամփոփելով, կարող ենք ասել, որ Եղիան կյանքի շուրջ կեսն անց է կացրել արևելահայոց մեջ:

Եղիայի նամակները գրված են 1715—1724 թթ., այսինքն՝ այն շրջանում, երբ նա արդեն բնակվում կամ շրջում էր գերազանցապես արևելահայ շրջաններում:

Արդյոք հաստատ կարո՞ղ ենք ասել, որ խոտորչեցի այս գրագետ վաճառականն ու գործիչն արևելահայոց մեջ ապրելու (նաև Գանձակում սովորելու) հետևանքով է յուրացրել արևելահայ խոսքի քաղմաթիվ բնորոշ տարրեր և գործածել իր գրություններում, իսկ վերջին նամակները գրել գրեթե արևելահայ գրական աշխարհաբարով⁹⁵:

Ինչ էլ եղած լինի, լիովին հաստատն այն է, որ 18-րդ դարի առաջին կեսի աշխարհաբարյան այս և ուրիշ բնագրերում արդեն չենք հանդիպում միասնական նոր գրական հայերենի այնպիսի բնորոշ նմուշների, որպիսիք ստեղծվել են 17-րդ դարում: 18-րդ դարի առաջին կեսից պահպանված աշխարհաբարյան բնագրերը հաճախ առհասարակ գրական լեզվի այնպիսի մակարդակ չունեն, ինչպիսին ունեն, օրինակ, «Արհեստ»-ը կամ մանավանդ «Պարզաբանութիւն»-ը: Այդ բնագրերը երբեմն միջբարբառային խոսակցականից և բարբառներից նույնությամբ եկած, «անմշակ» շատ տարրեր են պարունակում և այնքան էլ ենթարկված չեն գրավոր խոսքի պահանջներին: Այսպիսի պարագայում առկա է լինում կա՛մ արևմտահայ, կա՛մ արևելահայ կենդանի խոսքի գերակշռու-

⁹⁵ Եղիայից պահպանված գրական բավական հարուստ ժառանգության լեզվական առանձնահատկություններն արժանի են մանրամասն ուսումնասիրման, որը հետաքրքրական ոչ քիչ հարցեր կպարզի և, թվում է, մի շարք զեպերում նոր լույս կսփռի նոր գրական հայերենի պատմության, ինչպես և 18-րդ դարի հայոց բարբառների մասին այժմ եղած պատկերացումների վրա: Մեր հանձնարարությամբ այդպիսի ոչ մեծ աշխատանք կատարել է մեր նախկին ուսանողուհի Լ. Գևորգյանը (հրապարակված է. «Ասպիրանտական գիտ. աշխ. ժողովածու», № 8, պր. 2-ում, Ե., Խ. Աբովյանի անվան մանկ. ին-տ, 1975):

թյուն, ընդ որում, արևմտյան թեքում ունեցող լեզվամուշնեքում գերիշխողը դառնում է Կ. Պոլսի հայոց բարբառի հենքը, արևելյան թեքում ունեցողների մեջ՝ մե՛րթ ն. Զուղայի, մե՛րթ արարատյան բարբառներինը:

Արևելյան բարբառների (գլխավորապես արարատյան) շափավոր գերակշռող ազդեցությունն ակնբախ է Յոհան Երյոզերի կողմից 1711 թվականին «Արամեան լեզուին գանձ»⁹⁶ գրքի մեջ հրապարակած աշխարհաբար նմուշներում, թեև նրանցում դեռևս զգալի են նաև միջին հայերենի (արևմտահայ խոսքին համընկնող) լեզվամիջոցները: Հետաքրքրական է, որ գերմանացի⁹⁷ հայագետի կողմից նոր գրական հայերենի ներկայացված քերականությունը, հիմնականում արևելյան գրական հայերենի նկարագրությունը լինելով, դեռևս տեղ-տեղ միջին հայերեն-արևմտահայերեն քերականական տարրեր է պարունակում: Իբրև օրինակ վերցնենք անունների հոլովումը, ուր այդպիսի տարր կա թացառական հոլովում (է-ով բացառականը):

մին ձուկն

մին ձկնի

մին ձկանէ, ձկնէ, ձկնից

մին ձկնում

մին ձկնով

Երյոզերի ներկայացրած աշխարհաբար բնագրերում արևմտահայ-միջին հայերեն ձևերից ունենք կու (կ)-ով ներկա, եզակի երրորդ դեմքի է դիմանիշ⁹⁸, և հոգով հատկացուցիչ ու կապի խնդիր և այլն: Օրինակ, «Ինչպե՞ս դուք երեխա-

⁹⁶ Յ. Երյոզեր, Արամեան լեզուին գանձ, Ամսերդամ, 1711, էջ 490 (հիմնական լեզուն լատիներենն է. կան հայերեն շատ նմուշներ):

⁹⁷ Յոհան Երյոզերը գերմանացի գիտնական է, որ բնակվել է Ամստերդամում, ուր և ծանոթացել է վանանդեցի տպագրիչների հետ, նրանց օգնությամբ խորացել հայ հին և նոր լեզուների ուսումնասիրության մեջ: Հայ բանասիրության մեջ Երյոզերին սխալմամբ հուանդացի են համարում, նաև անվանում Սկրյոզեր ձևով:

⁹⁸ Ազուլիսի մոտակայքից սերող վանանդեցիների օգնությամբ՝ Երյոզերի կազմած աշխարհաբար բնագրերի և քերականական նմուշների մեջ ևս Թփղիսի բարբառի կու-ով ներկայի, է-ով բացառականի, էական բայի է ձևի և եզակի երրորդ դեմքի է դիմանիշի ազդեցությունը պետք է բացառված

յին կու մկրտեմ» (328)⁹⁹, «Յառէջ երխայն կնքահօր գիրկն կու տանք, որ երեխի բերանէն հաւատոյ դաւանութիւն ասէ և հրաժարիմքն, յետոյ մեր կնքահօրէն երեխայն կառնունք աւագանին վերայ կու բռնենք, երեք անգամ գազաթին վերայ ջուր կածենք, մկրտութեան խօսքերն ասելով, երեք անգամ էլ ընկղմենք ի ջուրն և բովանդակ մարմինն կու լուանանք, ապա դրոշմն կու տանք...» (328), ինչպես նաև՝ «արձակեալ ի քահանայէն» (228—229), «եկեղեցականքն կնիկ կառնունք» (330), «չափէն դուրս կու քահանանքն» (335), «Հոռոմըն մեր ազգին վերայ կասէ» (335) և այլն:

«Արամեան լեզուին դանձ»-ի աշխարհաբար բնագրերում ևս նոր գրական հայերենի միասնութեան պահպանման միջոց է գրաբարյան բառաձևերի ու քերականական տարրերի մեծաքանակ օգտագործումը (տե՛ս ստորև բերված նմուշներում):

Սակայն այդ բնագրերում, այնուամենայնիվ, իշխողը արևելյան խոսքն է: Այսպես, գործածվում է էական բայի եղակի երրորդ դեմքի է-ն՝ «բասմայ է ելել» (325), «թէ հաճոյ է» (328), «ինչ սլատճառ է» (337) և այլն, բայց մի քանի անգամ ավելի շատ է զուտ արևելահայ ա ձևի գործածությունը՝ «բարի այ» (325), «կամքդ այ» (325), «ինչ որ արժանն այ» (326), «երրորդ խնդրքի պատասխանին էս այ» (329), «թէ ձերն էլ նոցա նմա այ» (330), «երկու օր մեզ պահէր այ» (335), «երեկոյան ժամի վախտ այ» (337), «էն ի՞նչ այ գրած» (367). կամ՝ առկա են այս, այդ, այն-ը և նրանցով կազմվածները, օրինակ՝ այսօր (326), «Զունին այնպիսի երթեկութիւն» (331), «այդ սրբոց բարեխօսութիւն...» (336), «այնքան ապրանք» (343), բայց ավելի շատ են էս ու էն-ը և սրանցով բաղադրվածները՝ «ինչ կարծիք ունիս էն գրքին վերայ» (325), «էն գրքումն չկայ» (326), «էստուր համար» (326), «էս բոլոր ևսիու երկրումս» (327), «էդ եկեղեցւոյ խորհրդոց անունքն ասա» (327), «գրպարտանք են էղունք» (335), «էստունց

համարել, իսկ եթե այն ինչ-ինչ ուղիներով թափանցել է այդ գրքի լեզվի մեջ, ապա, միննույն է, այս դեպքում ևս աշխարհաբարը միասնականացնող տարր է:

⁹⁹ Բնագրային օրինակների դիմաց տրվում են Շրյոդերի հիշյալ գրքի համապատասխան էջերը:

մոտ» (342), «էսօր ինն օր այ, որ քաղաքս եմ մտել» (344), «էստեղ ամէն բարաթ իէմիշի միջում ենք» (364) և այլն:

Քերականության մասում իբրև բաղադրված կամ թերված ցուցականներ Շրյոդերը բերում է էսպէս, էդպէս, էնպէս, էսօր, էստեղ, էնտեղ (322), էստուր, էստում, էստով, էստունք (311) և այս կարգի ձևեր ու միայն մի քանի նմուշ կա այն բաղադրիչով կազմված՝ այնքան, այնքանեմ (322):

Նույնը կարելի է ասել վաղ շրջանի նոր գրական հայերենի միասնականացնող (արևելահայ ու արևմտահայ տարրերի հավասարակշռություն գոյացնող) մյուս լեզվամիջոցների մասին: Այսպես, ասացինք, որ շատ կա կու (կ)-ով համադրական ներկա, բայց արդեն զգալի տեղ ունի զուտ արևելահայ հարադրական ներկան¹⁰⁰. օրինակ՝ «ես գնում եմ եկեղեցին» (337), «տղէքքն լաւ զոլլուղ են անում» (352), «դու ուզում ես» (353), «ինչ եք խոսում» (354), «խմում եմ» (362), «արծուի մօտ ծաղիկ են քաղում» (363), «վանքում կարդում են» (363), «ես գնում եմ ձեր դաստուրով» (368), «մեր երկրէն եմ գալիս» (338), «ամենն քո ձեռն եմ տալիս» (348) և այլն: Կամ՝ թեև է-ով բացառականը պահպանվում է, բայց արդեն շատ են ց-ով բացառականի ձևերը՝ ազգիցն (337), զոլլերից (345), ֆրանցիկիցն (345), պահագիցն (360), մեզնից (362) և այլն:

Մի շարք դեպքերում միասնական գրական հայերենի մեր նշած ձևերը կամ ձևերի զուգահեռականությունը լիովին (կամ գրեթե լիովին) փոխարինված են արևելահայ բարբառախմբին բնորոշ ձևերով: Օրինակ, շատ է զգալի էլ-ի գործածությունը. «Մին խնդրանք էլ ունիմ» (336), «յետոյ մտօք էլ» (337), «իմ աչքն էլ լոյս» (338), «էլ ի՞նչ իէմիշ» (364) և այլն: Կամ՝ մին ձևը իշխում է բնագրերում, քերականական նկարագրությունների մեջ էլ բերված է իբրև միակը (207, 309, 313):

Լիակատար մենաշնորհ ունեն արարատյան բարբառի կարևոր հատկանիշը կազմող վաղակատար ժամանակների էլ-ով անջատ հիմքերը, ինչպիս. «բոլորն կարդացել եմ» (325), «առաւել մեզ, որ չենք տեսել» (343), «շատ անգամ էս քաղաքն ես եկել» (345), «անձրևն բռնել չէ» (346), «շատ մարդ

¹⁰⁰ Հասկանալի է՝ նաև անցյալ անկատարը (օրինակ, «ես գնում իմ ես իսկի հասկացայ, թէ ինչ իմ խօսում» 355):

եմ կանչել» (348) և այլն: Նշենք նաև, որ գոյականների ստացական հոլովը ներկայացված է միայն ի հոլովիչով, օրինակ՝ ձկնեռի (308), այսինքն՝ գարձալ արևելահայ ձկնով, և սովորական է ներգոյական հոլովը, ինչպես՝ շաքարումն (335), զլխումն (335), երկրումն (341), դուխանումն (342), ամսումն (344), դանվախանումն (346), բաղումն (348), միջումն (355), այգումն (361) և այլն:

Եթե այս լեզվամիջոցները գնահատենք ըստ նախորդ զլխում նկատի առնված 20 կետ-բաղադրիչների, կպարզենք, որ «Արամեան լեզուին գանձ»-ի աշխարհարարը այլևս չունի արևելյան-արևմտյան խոսքի հավասարակշռություն, այլ ունի արևելյանի բացարձակ գերակշռություն՝ սոսկ միջին հայերեն-արևմտահայ լեզվատարների որոշ պահպանմամբ: Ի տարբերություն «Արհեստ համարողութեան»-ի և «Պարզաբանութեան» լեզուների «Արամեան լեզուին գանձ»-ի աշխարհարարում կան շատ արտահայտություններ, ամբողջ հատվածներ, որոնք գուտ արևելահայ խոսքի նմուշներ են, գրաբարյան տարրերի ներմուծմամբ գրականացած. մի քանի օրինակ. «էն ի՞նչ պահք այ, որ գրքերում կարդացել եմ, ևս առաւել Հոռմից շատ անգամ եմ լսել» (335), «հենց այ, թէ մեր թագաւորն խաղաղասէր լինի, զարա շատ տարի այ կռիվ չունի, ինչպէս ձեր թագաւորն, որ համիշա կռվի միջում ին, և երկիրն անհանգիստ» (339), «Բարի իրիկուն աղային, թողութիւն անես, աղայ, շատ վաստակի էսօր, շուտ գնացի տեղս, Ղազարն եկաւ, ասաց աղէն կանչում այ» (347), «Գիտես ախպեր Սատուր, ինչու քեզ էսէնց բիվախտ կանչեցի» (347):

«Պարզաբանութեան» և «Արհեստ»-ի համեմատ «Գանձ»-ի լեզուն ավելի հակված է դեպի ժողովրդախոսակցականը կամ դեպի քաղաքացիական (ցիվիլ) հայերենը, ինչպես այն անվանում է Շրյոդերը¹⁰¹: Դա արևելահայ ժողովրդախոսակցականն է՝ հարադատ արևելյան բարբառախմբին, զլխավորապես հենված արարատյան բարբառի վրա: Նոր գրական հա-

յերենում (գրավոր խոսքի մեջ), ինչպես արդեն ասել ենք, արևելյան ժողովրդական խոսքի ավելի շատ գործածումը միջին հայերեն-արևմտահայ տարրերի փոխարեն՝ գոյացնում էր գրական լեզվի արևելյան ճյուղը, ինչպես և արևմտահայ ժողովրդական խոսքի ավելի շատ գործածումը և գուտ արևելյան ձևերի դուրս մղումը ձևավորում էր գրական լեզվի արևմտյան ճյուղը:

«Արամեան լեզուին գանձ»-ի աշխարհարար քննադրերում եղած բարբառային լեզվամիջոցների մի մասը (օրինակ, էական բայի ա ձևը) գրական արևելահայերենում հետադաշում գրական հնչողություն չստացավ, մյուսները (օրինակ, էս ու էն-ը) միառժամանակ ընկալվեցին որպես գրական ձևեր, բայց, ի վերջո, գրական լեզվի լիարժեք բաղադրիչներ չդարձան: Բարբառային լեզվամիջոցների մի զգալի մասն էլ (օրինակ, ց, ից-ով բացառականը, ել-ով վաղակատարը, ում-ով հարադրական ներկան, էլ-ը և այլն) դարձան գրական արևելահայերենի զլխավոր բաղադրիչներից՝ լիարժեք գրական հնչողությամբ: Նույն կերպ արևմտահայոց գործածած գրավոր խոսքում գրական հնչողություն ստացան արևմտյան բարբառների մի շարք ձևեր (օրինակ, աս, աղ, ան-ը, ալ-ը, րսել-ը, րլլալ-ը և այլն): Սրանով նոր գրական հայերենի երկփեղկումը որակապես նոր մակարդակի հասավ և ավելի ամրապնդվեց:

Շրյոդերը (և նրա հայերենի ուսուցիչները) այն ժամանակ գիտակցել են նոր գրական լեզվի երկփեղկվելու այդ հակումը. դա երևում է, օրինակ, այն բանից, որ թեև «Գանձ»-ի աշխարհարարյան քննադրերում բավական շատ է գործածվում կու (կ) -ով ներկան (երբեմն դերակշռում է), բայց բայի խոնարհման հարացույցում տրված են միայն արևելահայ ներկայի ձևերը (զովում եմ, զովում ես և այլն, 314), իսկ կ-ով ձևերը դրված են միայն ապառնու մեջ (315). ճիշտ այնպես, ինչպես արևելահայ գրականի՝ ավելի ուշ հաստատված ու բազմիցս նկարագրված կանոնում է:

«Արամեան լեզուին գանձ»-ի աշխարհարարի համար, ըստ երևույթին, արդեն կարելի է ասել, որ այն իբրև հիմք ունի արարատյան բարբառը. Շրյոդերն այդ աշխարհարարը առվորել է (կամ «վերցրել է») ազուլիսցիներից (վանանդեցի-

¹⁰¹ Քաղաքացիական հայերեն ասելով Շրյոդերը նկատի ունի աշխարհարար այն ժամանակվա բմբունամբ, որ նշանակում էր և՛ միջբարբառային ժողովրդախոսակցական (այս դեպքում արևելյան), և՛ նրա գրավոր, ավելի գրականացված տարբերակը:

ներից), որոնք, բացի գրաբարից ու Ազուխի մայրենի բարբառից, քաջատեղյակ են եղել նաև արևելահայ ժողովրդախոսակցականին ու նրա դրական տարրերակին:

* * *

3. Շրջողերը նոր գրական հայերենի քերականական կառուցվածքի առաջին նկարագրողն է: Մխիթար Սեբաստացին էլ առաջին հայազգի հեղինակն է, որ կազմեց նոր լեզվի քերականություն և տպագրեց «Արամեան լեզուին գանձ»-ից 16 տարի անց՝ 1727-ին¹⁰²:

Առաջինը ներկայացնում էր նոր գրական լեզվի առավելապես արևելյան ճյուղը, երկրորդը՝ արևմտյան:

Սեբաստացու գրքում քերականական նկարագրություն մեջ արդեն արևմտահայերենի շատ բնորոշ հատկանիշ է հոլովման հարացույցում ներգոյականի բացակայությունը (տրոփած է վեց հոլով՝ ուղղ., սեռ., տր., հայց., բաց., գործ., — էջ 10—36):

Հոգնակի ստացականը միայն ու հոլովիչն ունի՝ հացերու (ն), ագարակներու(ն), քղբերու(ն), գետիներու(ն), հաւերու(ն), ցրտերու(ն), իրիցներու(ն), դոներու(ն), զառներու(ն) օրերու(ն) և այլն (էջ 10—22), որ նույնպես բնորոշված արևմտահայ հատկանիշ է:

Եզակի բացառականը է հոլովիչով է՝ հացէն, ագարակէն, քղբէն, գետնէն (10—19) և այլն կամ ստացականի ձևով՝ հաւուն, ցրտուն, իրիցուն (10—19) և այլն, ց-ով արևելահայ բացառական չկա (բացառություն են ից-ով ասկից, ատկից ձևերը, 181):

Կան արևմտահայ գրականին բնորոշ դարձած ուրիշ հոլովաձևեր, ինչպես՝ ամենուն, մէկֆանիի, զիս և այլն:

Ցուցականների արևմտահայ աս ու աղ-ը (բնագրում ատ)՝ նրանցից կազմված ասոք, ասոնք, ասոնց, ատոք, ատոնք, ատոնց (34—35), ասօր (81) ձևերով, այս գրքում արդեն լիովին իրենց դերի մեջ են. ընդ որում, այդ դերը երբեմն տար-

¹⁰² Մխիթար Սեբաստացի, Դուռն քերականութեան աշխարհաբառ լեզուին հայոց: Շարադրեցեալ տաճկականաւ լեզուաւ, առ ի յօգուտ այնց հայոց, որք զտաճկական լեզու միայն գիտեն, և փափաքին ուսանիլ զաշխարհաբառ հայերէն: Վենետիկ, 1727, 149 էջ:

բերակված է բնագրում զուգահեռաբար գործածված (80—90) այս ու այդ-ի և նրանցով կազմվածների դերերից:

Էլ բառաձևը բնավ չկա, փոխարենը արևմտահայ ալ-ն է («ալ էսել գինի կուզէի» 86, «թշնամիքդ ալ որ թէ կամենան գալ» 88 և այլն):

Մին բառաձևի փոխարեն գործածվում է մէկ-ը, էական բայի եզակի երրորդ դեմքի ա ձևը չկա (ամենուրեք է-ն է):

Բայի ներկա (դրական) միայն կու (կ) եղանակիչ ունեցող համադրական ձևերով է ներկայացված՝ կու վառեմ, կու վառես, կու մոռնանք, կաշխատիմ և այլն (39—75), վաղակատար ժամանակների անջատ հիմքը միայն արևմտահայ երվերջությունով է կազմված (կոչվում է հարակատար)՝ եղեր եմ, վառեր եմ, լացեր եմ, լացուցեր եմ (38—75) և այլն, ժխտական ներկան և պայմանականը նույնպես արևմտահայ ձևով, այսինքն՝ ր-ով կազմված անջատ հիմքով են հարադրվում՝ չեմ վառեր, չեմ լուանար, չեմ քողուր (73—75), չէ կարգը-ւեր (87) և այլն:

Քրքի աշխարհաբարում կան նաև արևմտահայ խոսքին բնորոշ մի շարք այլ բառաձևեր ու սղումներ, օրինակ՝ հաւեր (15), սօրվիլ (89), սօրվիւնք (80), մտփերնիդ (88), մեզի (89), ձեզի (89), հիւրնդցայ (82) և այլն:

Ահա մի քանի հատկանշական արևմտահայ ամբողջական խոսքեր, որոնք բերված են գրքի խոսակցությունների մասում. «Աս տեղս եկաւ», «Ան տեղը մտաւ» (81), «Ինչ ատեն կու գաս» (82), «ան ատենն խոսեցայ» (82), «երբ որ կուզէ կուտամ» (82), «Որչափ առիր» (83), «Մէկ հեղ զարկաւ» (83), «Շատ հեղ բարկացուց զիս» (83), «քո բարեկամներուդ իմացարէ, որ պան» (88), «Ուրեմն հիմիկուց ետև պիտի շասէք, թէ սօրվեցնօղ շունինք» (88), «բայց դուք ալ պիտի ջանաք» (88), «Եթե կարողութիւն ունիք նէ, այս գրգովս կու սօրվիք» (89), «շատոնց գրած էի զասոնք ձեզի» (89), «Քիչ դժուարութիւն կու քաշէք զասոնք սօրվելու, զի ձեր գիտցած լեզուովն գրեր եմ» (89) և այլն:

Վենետիկի Ս. Ղազարն արդեն 18-րդ դարում դառնում էր նոր գրական հայերենի մշակման կենտրոն: Իսկ այդտեղ գերազանցապես արևմտահայ բարբառների ներկայացուցիչներ էին՝ ավելի շատ կապված Կ. Պոլսի և Անատոլիայի քաղաք-

ների, ինչպես և Հայաստանի արևմտյան շրջանների հայու-
թյան հետ: Հասկանալի է, թե ինչու Վենետիկում դարբնվող
նոր գրական լեզուն արևմտահայ երանգ պիտի ստանար:
Նպաստեց նաև այն, որ նոր գրական հայերենի մշակման
մյուս կարևոր կենտրոնը դարձավ Կ. Պոլիսը:

Շրջողների գործից մինչև «Ազդարար»-ի հրատարակումը
(1794) գրական արևելահայերենը միայն մեկ հրատարակու-
թյան մեջ է մեզ հայտնի: Մինչդեռ Սեբաստացու գրքից հե-
տո արևմտահայ աշխարհաբարով կամ արևմտահայ երանգ
ունեցող գրական լեզվով եղել են մի շարք հրատարակու-
թյուններ: Եվ ընդհանրապես ամբողջ 18-րդ դարում տպագրվել է
երկու տասնյակից ավելի աշխարհաբար գիրք (մի քանիսը՝
սոսկ աշխարհաբար հատվածներ ունեցող), դրանցից միայն
երեքը արևելյան գրական լեզուն են ներկայացնում, մյուս-
ները կա՛մ լիովին արևմտահայերեն են, կա՛մ ունեն արևմտա-
հայ խոսքի գերակշռություն:

Ավելացնենք նաև, որ արևելահայ տպագիր խոսքի հիշյալ
երեք նմուշներն էլ հատվածային բնույթ ունեն. մի դեպքում
գերմանացի բանասերն իր լատիներեն գրքում աշխարհա-
բարի մի քանի օրինակ է դրել, մյուս դեպքում Կղեոպատրա
Սարաֆյանն է գրաբար-ռուսերեն ձևոնարկում նոր գրական
լեզվից մի երկու կտոր բերել¹⁰³, երրորդ դեպքում գրաբար
«Ազդարար»-ի մեջ Հարություն Շմավոնյանը գետեղել է գրա-
կան արևելահայերենի առանձին հատվածներ: Մինչդեռ 18-րդ
դարից ունենք շուրջ 15 հրատարակություններ, որոնք պար-
զապես գրքեր են՝ ամբողջությամբ գրված նոր գրական լեզվի
արևմտյան տարբերակով և հասցեագրված հայ ընթերցողին:
Այդպիսի գրքեր ամբողջ 18-րդ դարում արևելահայ գրական
լեզվով չեն հրատարակվել: Իսկ 1800 թվականին սկսեց լույս
տեսնել (Վենետիկում) հայերեն երկրորդ պարբերականը
(գրաբար «Ազդարար»-ից հետո), դարձյալ գրական արևմտա-
հայերենով:

Պետք է տարբերել գրական արևմտահայերեն և նրան
մոտեցող (դեպի այն հակված) լեզվական որակները, քանի
որ 17-րդ դարի մեջ հրատարակված գրքերի արևմտահայերե-
նը միասնական գրական լեզվից շեղվելու տարբեր աստիճան-

¹⁰³ Խոսքը Կղեոպատրա Սարաֆյանի «Բանալի գիտություն» գրքի մասին
է (տե՛ս ստորև):

ներ ունի: Երբեմն պահպանվում են 17-րդ դարի ավանդները,
և հեղինակները, գրաբարյան տարրերի մեծ քանակ օգտա-
գործելով, նվազեցնում են նոր լեզվի հակումը դեպի արև-
մրտյան խոսքը: Արդյունքը թեև չի լինում ընդհանուր նոր
հայերեն գրական լեզուն, ինչպես ունենք «Պարզաբանութեան»
դեպքում, և արևմտահայ տարրերը այնուամենայնիվ գերա-
կշռում են արևելահայերենի նկատմամբ, բայց այդ գերա-
կշռությունը համեմատաբար փոքր է լինում: Այլ դեպքե-
րում արևմտահայ լեզվատարրերի գերակշռությունն այնքան
ուժեղ է, որ խոսքը բացարձակորեն վերաբերում է նոր գրա-
կան լեզվի արևմտյան ճյուղին: Առաջին կարգի գրքերը սո-
վորաբար հրատարակված են 18-րդ դարի առաջին կեսում,
երկրորդները՝ դարի երկրորդ կեսում:

Հիշենք գրական արևմտահայերենով (կամ նրա որոշ գե-
րակշռությամբ) գրված ու տպագրված գրքերից մի քանիսը
(մոտավոր ժամանակագրական կարգով). Մխիթար Սեբաս-
տացու «Գիրք քրիստոնեական վարդապետութեան»-ը (Վե-
նետիկ, 1727, 1732, 1771 թթ.), Հ. Նալյանի «Գիրք կոչեցեալ
քրիստոնեական»-ը (Կ. Պոլիս, 1737), նույն հեղինակի «Գիրք
կոչեցեալ զէն հոգեոր»-ը (Կ. Պոլիս, 1757), Տրիեստի Մխի-
թարյանների կազմած գրքերից՝ «Քրիստոնեական վարդապե-
տութիւն համառօտ»-ը (Տրիեստ, 1776) և «Կարճառօտ քրիս-
տոնեական»-ը (Տրիեստ, 1788), մի քանի այբբենարաններ,
այնուհետև դարձյալ Կ. Պոլսի հրատարակություններից՝ «Տեա-
րակ, որ կոչի ականոց աշաց»-ը (1780), և դարձյալ վենետիկ-
յաններից՝ Խ. Սյուրմելյանի «Համառօտ թուարանութիւն»-ը
(1788), Ղ. Ինճիճյանի «Տեսութիւն համառօտ հին և նոր աշ-
խարհագրութեան»-ը (1791) և այլն:

18-րդ դարի գրական արևմտահայերենի պատկերն ավելի
լրիվ դարձնելու համար ստորև հատվածներ ենք բերում վե-
րահիշյալ գրքերից չորսի լեզվից (ընտրել ենք տարբեր ժա-
մանակ գրված և տարբեր նյութերի վերաբերող գրքեր):

Նախ երկու հատված Մխիթար Սեբաստացու «Գիրք քրիս-
տոնեական»-ից¹⁰⁴, Այս գիրքն առաջին անգամ լույս է տեսել

¹⁰⁴ Գիրք քրիստոնեականի վարդապետութեան: Շարադրեցեալ աշխար-
հաբառ լեզուաւ, աշխատասիրութեամբ Տեառն Մխիթարայ վարդապետի Սե-
բաստացոյ, Աբբահայր կոչեցելոյ: Վենետիկ, 1771, 120 էջ:

1727-ին, ուստի գրվել է 1720-ական թթ., բայց քաղվածքը բերում ենք նույնի 1771-ի հրատարակությունից, քանի որ նախորդ երկու հրատարակությունները Երևանի դրաղարաններում չկան։ «Մուլութին այն է, որ մարդս բարի դորձքերուն և հոգևոր բաներուն վերայ կու տրտմի. և իրեն դժուար կու գայ անանկ բաներն. և ասանկ տրտմելով և դժար գալով՝ կու հետևի, որ յետ կենայ բարի գործքէն և հոգևոր բաներուն։ Ինչպէս են այն մարդիքն, որ հինգ ժամ դատարկաբանութիւն լսեն նէ, դժար չի գար իրենց և չեն նեղիր...» (89)։

Սեբաստացու այս գրքի արևմտահայերենը թեև ունի աս, աղ, ասանկ, անանկ, գործքերուն, բաներուն, ինչպես և ալ-ը («սրտին մէջն ալ սուտ վկայութիւն պիտի շտրի» 62), բայց ղեռնա իշխում է ոչ թե ըլլալ-ը, այլ լինիլ-ը («Եւ ասկից կու ծնանին այս մեղքերս. մտօք կոյր լինիլ. միտք անելու բանն շմտածել. անհաստատ լինիլ...» 93), գործածվում է մի-ն և ոչ արևմտահայերենին բնորոշ մը-ն։ Օրինակ, այստեղ էլ ունենք մէկ (կամ մին) և մի բառերով կազմված այն կաղապարը, որն, ինչպես տեսանք, շատ բնորոշ էր 17-րդ դարի միասնական նոր գրական հայերենին։ «Խոհանութիւն մէկ առաքինութիւն մին է» (100), «Արդարութիւն մէկ առաքինութիւն մին է» (103), «Բարեխառնութիւնն մէկ առաքինութիւն մի է» (104) և այլն։

Ինչպիսի արևմտահայ խոսքը թեքումը գուցե ավելի փոքր է Հակոբ Նալյանի Քրիստոնեականի¹⁰⁵ լեզվում։ Բերում ենք մի նմուշ այդ լեզվից. «... շատ անգամ սուտն ճշմարիտ կու ձեւանայ, և մարդ խաֆիլ կու գտնելի և ճշմարիտ երգվիլն իքէն սուտ կերդվի. զէրէ թէհիքէլի է աշխարհիս ինամութիւն։ Անոր համար ասաց. թէ ամենեկին մի՛ երդնուր. եթէ ոչ կատարեալ վերահասու և վուխուֆ լինիս ճշմարտութեան։ Ութերորդ խրատն է հեռացընելն ի պատճառէ մեղաց։ Անոր համար կասէ քի, եթէ ակն քո գայթակղեցուցանէ զքեզ՝ հան զնա. այսինքն՝ թէ որ բարեկամ մի ունիս աշացդ պէս սիրելի և թէ սէնահէթ ունիս ձեռացդ պէս պիտանի և թէ ծառայ ունիս ոտիցդ ծառա-

¹⁰⁵ Գիրք կոչեցեալ քրիստոնէական ուսանելի և կամ քրիստոնէից վարժիչ ... Շարադրեալ աշխարհաբառ ոճիւ ի Յակոբ վաղդայեանէ զմիւռնացույ Կ. Պոլիս, 1737, 429 էջ։

յօղ, որ քեզ զլորման պատճառ կու լինին՝ կտրէ դայն բարեկամութիւն» (201—202)։

Նալյանի լեզվում արևմտահայ մի շարք ձևերի փոխարեն ավելի շատ են գործածվում գրաբարյան ձևեր. օրինակ՝ բացարձակորեն գերակշռում են այս, այդ, այն-ը և նրանցով կազմվածները՝ «այսպէս և մեք նորայ սուրբ արեամբն սրբր-վեցաք» (11), «այսով իմանամք» (19), «եբրորդ աստիճան էր այս» (38), «Այս ևս գիտելի է» (39), «Զորրորդ աստիճան էր այս», «Լաքին այն մեղքն զԱստուծոյ բարութիւնն չի կարացին յաղթել» (43), «Այսպէս պէտք է մարդուն սէզմիշ անել» (81), «և այլ այսպիսիք շատ կան» (97), «նոյնպէս և այսօր» (463) և այլն։ Աս, աղ, ան-ով բաղադրվածներից միայն անոր բառն է որ հաճախ է գործածվում, օրինակ՝ «անոր սրբրվելովն սրբրվեցան» (223, տե՛ս նաև վերը բերված քաղվածքում)։ Արևմտահայ ալ ձևը շատ քիչ է հանդիպում, նույն իմաստով գրաբարյան այլ-ն է գործածված՝ «այսպէս ինքն այլ չի պիտի աշք դարնէ այլոց կանայս» (177), «և զայն այլ չեմ գիտեր» (405), «Այլ առաւել յիմար է, որ ի մէկ մարդոյ մի ամաչէ» (275) և այլն։ Ամենուրեք իշխում է մի-ն (արևմտահայ մը-ի փոխարեն)։ Մին (մէկ) ... մի վերոհիշյալ կաղապարն այս գրքի լեզվում ամենուրեք մէկ... մի ձևով է արտահայտված, ինչպես՝ «մէկ մարդ մի ի հիւմմայէ պառկած լինի» (222), «մէկ սաղ մարդ մի ի տես զնալն բռնրվի» (222), «մէկ քահանայ մի որ զհացն և զհինին ի ձեռն առնէ» (306) և այլն։ Իշխում է լինել (լինիլ)-ը, և ոչ ըլլալ-ը. «սէրն պիտի լինի» (74), «զորս բան պիտի, որ կատարեալ լինի» (306, տե՛ս նաև վերը բերված քաղվածքներում)։

Թեև հոգնակի ստացականի ու-ով զուտ արևմտահայ ձեւեր կան («ի հրեշտակներուն բարեխօսութիւն» 72), բայց ավելի հաճախ են գործածված գրաբարյան նույնարժեք ձևերը, ինչպես՝ «կամեցողաց կուսուցանէ» (7), «զնոր հաւատացելոց անունն քրիստոնեայ կոչեցին» (8), «մէկ մարդ մի, որ ի մէջ մեղաց որ լինի» (73) և այլն։

Թեև գրաբարի օգնությամբ Նալյանն աշխարհաբարը կարողացել է ավելի ընդհանուր հայկական մակարդակում պահպանել, բայց դա միաժամանակ պակասեցրել է հասկանալիության աստիճանը։ Մյուս կողմից, նոր փոխառությունների

(զխավորապես թուրքերենից կատարված) առատությունը հաճախ ուժեղ է զգացնել տալիս Պոլսի բարբառը (օրինակ, «Ջերէ պազի քէրէթ մարդ յիր խուվէթն ապաւինելով առանց միշտավէրէի շատ պէրզահներու կու հանդիպի. լաքին զմարդու խուվէթն միշտավէրէն կու կառավարէ»⁹⁷ և այլն):

Արևմտահայ խոսքի ակնառու գերակշռությունն առկա է դարի երկրորդ կեսում ստեղծված և տպագրված մի քանի երկերի լեզվի մեջ: Ահա խաչատուր Սյուրմելյանի «Համառոտ թուարանութիւն»¹⁰⁶ գրքի սկիզբը. «Թէպէտ մեր ազգին մէջ տպած գրաբառ թուարանութիւն մը ելաւ, որ երկար ու տեղն ի տեղը թուարանական արհեստին վրայ լաւապէս գրած է, բայց գրաբառ ըլլալով, բաղումբ չեն կրնար խօլայ ու շիտակ հասկընալ: Անորհամար շատ մարդիկ կըբաղձային, որ աշխարհաբառ լեզուաւ մէկ համառոտ թուարանութիւն մը ըլլայ. որ աւելի խօլայ հասկընան թէ՛ սորվողները և թէ՛ սորվըցնողները. և մենք ալ տեսնելով, թէ հարկաւոր է աս թուարանական ուսումը, պատշաճ տեսանք մէկ համառոտ թուարանութիւն մը շինել աշխարհաբառ լեզուաւ: Որպէս զի ասօր վրայ վարժելով, մէկ դուռ մը կըլլայ աս նաև գրաբառ թուարանութեանը, որ խօլայ ու շիտակ հասկըցուի» (3):

Սա ժամանակի գրական արևմտահայերենն է. այս հատվածում միայն առկա են միասնական գրական լեզուն երկփեղկող մի շարք լեզվամիջոցներ, ինչպես անորհամար, աս, ասոր, ըլլայ, ըլլալով, չեն կրնար, հասկընալ, հասկըցուի, սորվըցնողները, մը և այլն: Ուշադրություն է հրավիրում մին (մէկ)... մի կաղապարի լիովին արևմտահայ բնույթ ստանալը՝ «մէկ համառոտ թուարանութիւն մը», «մէկ դուռ մը»: Այս գրքում հոգնակի ստացականն էլ արդեն հիմնականում աւ հոլովիչով է կազմվում՝ ճիսապաներուն (5), փաւաներուն (14), համրանքներուն (53), կտորներուն (61) և այլն:

Արևմտահայ կենդանի խոսքի և միջին հայերենի քերականական ընդհանրությունները (ներկայի կազմություն, բացառական և այլն) պահպանված են, դուրս են ընկած միջին հայերենի ու գրաբարի այն լեզվատարրերը, որոնք տարբեր են արևմտյան բարբառներից ու ժողովրդախոսակցականից

(առկա էին «Պարզաբանութեան» լեզվում): Գրքի լեզվում կան նաև արևմտյան բարբառներից (զխավորապես Կ. Պոլսի բարբառից) եկող ուրիշ լեզվատարրեր, ինչպես՝ ասանկ (14), անանկ (50), լըմընայ (21), րէ (20), րիւն (23), րսիւն (25), բաժնեցիւն, գիտնալ (43), ճոս (21), առն (44) և այլն: Այս լեզվատարրերը, ստանալով գրական հնչողություն, դարձան նոր գրական հայերենի արևմտյան ճյուղի հաստատուն բաղադրիչներ: Բայց այս գրքի լեզվում կան նաև բարբառներից եկող այնպիսի լեզվամիջոցներ, որոնք հետո պետք է դուրս գային գրական լեզվից: Դրանցից են բավական հաճախ գործածվող բարբառային նոր փոխառությունները (հիմնականում թուրքերենից): Գրքի լեզվում բարբառային-խոսակցական մի շարք ձևեր էլ ընդհանուր նոր գրական են և նույնա՝ նում են արևելյան գրականում հետագայում հաստատված ձևերի հետ (մենք, վրա և այլն):

Խ. Սյուրմելյանի գրքի լեզվի այս հակիրճ պատկերի մեջ անդամ կարելի է նկատել նաև նոր գրական հայերենի արևմրտահայ ճյուղի կանոնավորման բնույթը:

Գրական արևմտահայերենի կանոնավորումն ավելի լավ դիտելու տեսակետից հետաքրքրական է հեղինակի մի բացատրությունը. «... մեր ազգին մէջ ալ շատ տարբեր ու դանազան աշխարհաբառ կերպ կայ խօսելոյ, և գրեթէ ամմէն քաղաք կամ ամմէն գաւառ մէկ զմէկէ տարբեր կը խօսին, բայց մենք միջակ կերպով ջանացինք դրել, որ բազումբ խօլայ կարենան հասկընալ: Եւ տեղիս տեղիս նաև տաճկի բառեր բանեցուցինք, որ գրեթէ ամմէնուն հասկանալի է» (3):

Այսպես, շատերին հասկանալի լինելու ձգտումն ավելի ժողովրդային էր դարձնում խոսքը, բայց հայ ժողովրդի պայմաններում դա նպաստում էր ընդհանուր գրական լեզվի ավելի խոր երկփեղկմանը:

Գրեթե նույն բնույթի է Ղուկաս Ինճիճյանի՝ 1791-ին հրատարակված «Աշխարհագրութեան»¹⁰⁷ լեզուն: Ահա մի նմուշ. «Աշխարհիս կլոր ձևով ըլլալը կցըցնէ իրեն շուքը, որ կլոր ձևով կղարնէ լուսնին վրայ խաւարման ատենը. կցըցնէ նաև ան երևելի նաւապետներուն ճամբորդութիւնը, որ բոլոր աշ-

¹⁰⁶ Խ. Սյուրմելյան, Համառոտ թուարանութիւն աշխարհաբառ: Վենետիկ, 1788, 160 էջ:

¹⁰⁷ Ղ. Ինճիճյան, Տեսութիւն համառոտ հին և նոր աշխարհագրութեան: Վենետիկ, 1791, էջ 146:

խարք ծովով պտրտեցան միշտ դէպ ի արևմուտք նաւելով. վասն զի ինչպէս որ դէպ ի արևմուտք նաւելին պատճառ եղաւ, որ առաջի նաւահանգստէն ելան հեռացան, անանկ ալ նոյն դէպ ի արևմուտք նաւելին պատճառ եղաւ, որ դարձեալ ան նաւահանգիստը հասան, որ շէին կըրնար անանկ միշտ մէկ դի նաւերով հասնիլ առջի ելած տեղերին, թէ որ աշխարքս կ'որ չըլլար...» (զ):

Խ. Սյուրմելյանի գրքի հետ միասին (1788 թ.) Պետերբուրգում լույս է տեսել Կղեոպատրա Սարաֆյանի «Բանալի Բիտութեան»-ը¹⁰⁸, որը հիմնականում հայ-ռուսերեն և ռուս-հայերեն բառարան է (գրադեցնում է գրքի 240 էջը), իսկ վերջում ունի խոսակցարաններ (հայ-ռուսերեն), որոնցից մեկը (245—256) նոր գրական լեզվով է (հայկական մասը), բայց գրական արեւելահայերեն: Ահա մի քանի նմուշ այդ լեզվից. «Ի՞նչ են առնում նոցա որք իւրեանց դասն չեն սերտել: — Ուսուցիչն նոցա պատժում է քստ իւր կամացն: — Ինչ եք առնում դուք յետոյ: — Ուսուցիչն ուղղում է այն, որ ինչ ինքն տալիս է մեզ շինել տանն: — Չէ՞ այդպէս լինելոց է շատ ժամանակ (246): — Նա տալիս է մեզ միշտ ինչ որ լինի ուսանիլ առանց գիր (247): — Վասն է՞ր այտպէս շուտ ճաշեն այսօր: — Վասն այն, որ հրամանացող մեծ եղբայրն պարտ է գնալ գիւղն: — Ապա պատրաստէ կերակուրն: — Հրամայել ես, տէր իմ, ահա նստեալ են ի սեղան (248): — Եւ ունիմ պատիւ րմպնոյ վասն հրամանացող ողջութեանն (249): — Այտ մեղըն շատ լաւ է: — Չէ, իմ պարոն, ես չունէի ժամանակ ուսանելոյ այն: — Վասն այն, որ ես բոլոր օրն ընդ մօրս հիւր էի (250): — Երբեք ոչ է պիտոյ, որ ուրախութիւնն մեզ հարկադրէ թողուլ մեր պարտականութիւնն (253): — Չի լինիլ փոշիմանութիւն հրամանացող, երբ հրամանքդ չես կարող երբեք նորա ոչինչ ծառայութիւն ցոյց տալ: — Ես ինքս ինձ անտես կառնէի, եթէ գտանէի ինձ ի մէջ այտպիսի բանի: — Հրամանքդ յոյժ բարւոք ես դատում՝ ապա այտ չէ բաւական. հետեիլ ընդ այն և ընթանալ հարկ է: — Այս է առաջին պարտականութիւն մարդոյ՝ որ ծառայէ իւր հայրենեացն» (255):

¹⁰⁸ Կղեոպատրա Սարաֆյան, Գիրք, որ կոչի բանալի գիտութեան, Պետերբուրգ, 1788, էջ 235:

Այս լեզուն 17-րդ դարի մեզ ծանոթ գրքերի նոր գրական հայերենից տարբերվում է նախ նրանով, որ այլևս չունի գուտ միջին հայերեն-արևմտահայ լեզվամիջոցներ: Լեզվի գրական մակարդակը գլխավորապես պահպանվում է գրքային-գրարարյան լեզվատարրերի օգտագործմամբ: Օրինակ, այս աշխարհաբարում բոլորովին չկա բայի կու (կ)–ով համադրական ներկա (կամ անցյալ անկատար), բոլոր ներկաները արեւելյան բարբառներին հատուկ վերլուծական ձևով են կազմված (սնում են, ուղղում է, տալիս է և այլն), մինչդեռ գրաբարի հետ առնչվող գրքային ձևերի առատություն կա՝ սկսած դերանվանական ձևերից՝ նոցա, իւր, իւրեանց, նորա, որք, այս, այդ, այն, այդպիսին և այլն, մինչև բայաձևեր ու հոլովաձևեր՝ լինելոց, րմպելոյ, ուսանելոյ, գտանելի, մարդոյ, հայրենեացն:

Գլխավորապես արարատյան բարբառի հիմքի վրա ձևավորված այս լեզուն, իհարկե, ժողովրդական կենդանի խոսքից շատ է հեռացած և նախատեսակն է այն գրական հայերենի, որը շուրջ յոթ տասնամյակ հետո պետք է իշխեր Ռուսաստանի հայերեն հրատարակություններում (մասնավորապես՝ «Հյուսիսամիայլ» և «Ծոթաբաղ»): Սարաֆյանի պետերբուրգյան աշխարհաբարի որոշ գրաբարյան կամ գրաբարանման արտահայտություններ, բառաձևեր (բոլոր օրն, ոչ է պիտայ, «ոչինչ ծառայութիւն ցոյց տալ», «գտանելի ի մէջ այդպիսի բանի», «ծառայէ իւր հայրենեացն» և այլն) հետագայում հատկանշական դարձան հյուսիսամիայլյան անվտանգ լեզվի համար:

Կղեոպատրա Սարաֆյանի գրքի աշխարհաբարը վկայություն է այն բանի, որ նոր գրական հայերենի արեւելյան ճյուղը թեև 18-րդ դարի տպագիր հրապարակումների մեջ արեւմրտյանի համեմատ շատ շնչին չափով է երևացել, բայց և այնպես դործածվել ու մշակվել է: Եթե Սարաֆյանի բերած նոր գրական լեզվի նմուշները գերադանցապես արարատյան բարբառի հիմքի վրա էին արեւելյան բնույթ ստացել, ապա մի քանի տարի անց Մադրասում «Ազդարար»-ի առանձին էջերում տեղ գտնող գրական հայերեն հատվածները գրական արեւելահայերենի նորջողատյական տարբերակն էին ներկայացնում: Վերջինս նույնպես, թեև 18-րդ դարի տպագիր խոս-

քում իրեն զգացնել չէր տալիս, բայց ամբողջ դարի ընթացքում գործածվում էր մե՛րթ ավելի շատ թեքվելով դեպի բարբառը, մե՛րթ դեպի գրաբարը:

Ստորև բերում ենք «Ազդարար»-ի մեջ գործածված այդ լեզվից մի օրինակ. «Մին առակ կասեն. պառաւն ժամ շգնաց, յերփ գնաց, շունն ոտն կծէց: Այժմ իմ բանն այ. բազում ժամանակ էր, որ յառաջ ասացէլ ամ ցանկաման ի Ազդարարումն բան գրել, չէր յաջողման, յերփ գրեցի, մին տարաբախտութեան հանդիպեցայ: Էսպէս որ ջրօրհնէք առաւօտն գնացի բարեկամիս շնորհաւորել, տեսի նստած Ազդարար էր կարգման և ինձ տեսանելէն զլուխն կոռ գծեց՝ աշկերն խառնած, և կարծեմ, թէ էնպէս հանդիսաւոր օր չլինէր, կարելի էր յերկարից ինձ վերայ բարկանէր»¹⁰⁹:



Նվ այսպէս. միասնական նոր գրական հայերենը փլուզվեց, գրաբարի ու միջին հայերենի օղնոթյամբ հնարավոր չեղավ պահպանել այդ միասնությունը. նոր գրական լեզուն բաժանվեց հիմնականում երկու ճյուղի՝ հայոթյան երկու հատվածները, նրանց լեզվական գրավոր առանձնահատկությունները ներկայացնող: Լեզվական այդ բաժանումով հայոց կյանքում շատ երևույթներ ու տեղաշարժեր պայմանավորվեցին, դրանով պայմանավորվեցին նաև հայոց նոր մշակույթի, գեղարվեստական գրականության դարգացման երկու ամենից ավելի գլխավոր ուղիները՝ արևմտահայ, արևելահայ:

Նդել են և կան տարբեր կարծիքներ այդ երկփեղկման վերաբերյալ, արվել են և արվում են բազմաթիվ գործնական առաջարկներ այն վերացնելու նպատակադրմամբ:

Երբ 19-րդ դարում հայոց գրական լեզվի երկճյուղությունն արդեն ավարտված իրողություն էր, հայ գրագետներից շատերը սկսեցին մտահոգվել և երկու ճյուղերի միացման գեղատոմսեր առաջարկել: Այդպիսի առաջարկներ հատկապես շատ էին արվում: 19-րդ դարի վերջերին և ներկա դարի սկզբներին ու մինչև օրս էլ այդպիսիք շարունակում են արվել: Երկու ճյուղերի միաձուլման գազափարն առաջ է քաշվել ու պաշտպանվել, օրինակ, Մ. Զեյնալի, Ե. Տեմիրճիպաշ-

յանի, Մ. Արեղյանի¹¹⁰, Ա. Զոսյանյանի, Լ. Շանթի և շատ ուրիշների կողմից: Հ. Աճառյանն ընդհանուր գծերով ներկայացրել է այդ հարցի պատմությունը (հատկապես խոսելով Մ. Արեղյանի, Գ. Արծրունու, Ս. Մանդինյանի, Գ. Վանցյանի, Խ. Վեմյանի կարծիքների մասին)¹¹¹, և այժմ հարկ չկա կանգ առնելու միաձուլման մասին հայտնված զանազան տեսակետների վրա: Ասենք միայն, որ այդ տեսակետների ելակետը մեկն է, այն, որ հայ ժողովրդի համար երկու գրական «լեզու» ունենալը շարիք է կամ առնվազն մեծ անհարմարություն. եզրակացությունն էլ նույնն է՝ պետք է այդ երկու գրական «լեզուները» միացնել կամ միաձուլել լեզվական (հնչյունաբանական, բառագոյացման, քերականական) փոխդիզումների միջոցով: Միայն՝ «կողմնապահությունամբ» ոմանք արևմտահայերենից են ավելի շատ դիզումներ պահանջել, ոմանք՝ արևելահայերենից, և միաձուլման առաջարկների տարբերություններն էլ, ըստ էության, այդ «կողմնապահությունների» բնույթով ու շահով են պայմանավորված: Նույնպիսի տեսակետներ (դարձյալ «կողմնապահություններով» հանդերձ) այժմ էլ են հայտնում, մատնանշում են անգամ Լևոն Շանթի կամ Վահրամ Փափաղյանի երկերի լեզուները իբրև այդ միաձուլման գործնական իրականացման հաջող օրինակներ:

1906 թ. Հ. Աճառյանը որոշակիորեն գրեց, որ հայ գրական լեզվի երկու ճյուղերը միացնելու առաջարկներն ու ջանքերը անիմաստ են, և նման միաձուլման որևէ հնարավորություն բացառված է¹¹²:

Սակայն այս տեսակետը քիչ պաշտպաններ ունեցավ: Նրանցից մեկն էր է. Աղայանը, որը նաև որոշ սրվածություն տվեց հարցին. «Կարծել, թե այդ երկու գրական լեզուների տարբեր քերականական երևույթների խառնուրդով կարելի

¹¹⁰ Խորհրդածությունների տեղիք է տվել Մ. Արեղյանի հոդվածը՝ «Մեր գրական լեզվի միության խնդիրը» («Արարատ», 1906, էջ 37—40): Արևմտահայ մամուլում նույն և հարակից հարցերի մասին տպագրված հոդվածներից տե՛ս. օրինակ, «Բաղմավեպ», 1898, էջ 174—179, 373—376, 1899, էջ 133—136, 1901, № 4—5, «Անահիտ», 1902, № 6, 1903, № 1, 5, 1911, № 3—4 և այլն:

¹¹¹ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, էջ 547—568:

¹¹² Հ. Աճառյան, Պատմություն հայոց նոր գրականության, Վաղարշապատ, 1906, էջ 37—40:

¹⁰⁹ «Ազդարար», 1795, էջ 23 (ուղղագրությունը պահպանված է):

կլինի ստեղծել մի ընդհանուր լեզու, առնվազն միամտություն է»¹¹³։

Նոր գրական հայերենի երկու ճյուղերի միաձուլումը մենք համարում ենք իրական հիմք շունեցող գաղափար, որն առայժմ մարմնավորվել է սոսկ անպտուղ ծրագրերի ու վեճերի մեջ, երբեմն էլ հանգեցրել արևելահայ-արևմտահայ անմիտ և վնասակար հակադրումների կամ նրանց սրման¹¹⁴։

Երկու ճյուղերի միաձուլումը, ասացինք, հնարավոր են համարել նաև անվանի ոչ քիչ բանասերներ և արել են գործնական առաջարկներ. դա կատարվել է ազգային բարի գործ կատարելու մղումով և, հավանաբար, լեզուների, նրանց բարբառների ու տարբերակների պատմության ոչ բավարար հաշվառմամբ։ Այդ պատմությունը ոչ մի այնպիսի դեպք չի նշում, երբ նախապես կազմված ծրագրով, փոխդիջումներ կատարելու միջոցով իրար միանան երկու կենդանի լեզուներ կամ մի լեզվի երկու գործող տարբերակներ։

Այս հարցը մասամբ առնչված է լեզուների ու բարբառների խաչավորման առեղծվածի հետ։ Մենք դժվարանում ենք հավատալ երկու լեզուների այնպիսի խաչավորման հնարավորությանը, որը հանգեցնում է մի նոր լեզվի գոյացման։ Դժվարանում ենք՝ ամենից առաջ նման փաստի ծանոթ չլինելու պատճառով։ Եղած փաստերն ասում են, որ լեզուները միմյանցից կատարում են բառային փոխառություններ, երբեմն շատ մեծ քանակ, կատարում են նույնիսկ ածանցների, բառակերտման որոշ միջոցների ու ձևերի, քերականական իրողությունների փոխառություններ, բայց չեն խաչավորվում։ Փաստ է նաև լեզվական ուժացման իրողությունը. երբ որևէ ժողովուրդ զարգարում է իր լեզվով խոսելուց մի այլ ժողովրդի լեզու որդեգրելով։ Սրա օրինակներն էլ շատ են և հանրահայտ, և սա էլ կապ չունի լեզուների խաչավորման հետ։ Հավանաբար նույնը պետք է ասել բարբառների մասին՝ ինչ-ինչ լրացումներով։ Եթե լեզուների և

բարբառների տարերային խաչավորումը հավանական չէ, ապա աներևակայելի է հայության բարբառային երկու գլխավոր խմբերը ներկայացնող, լեզվական տարբեր միջավայրերում սնված գրական երկու ճյուղերի նախապես ծրագրված խաչավորումը։

Լեզուների կամ մի լեզվի տարբերակների, բարբառների միջև կատարվող փոխադարձ ներթափանցումների, նաև խաչավորման հարցերը շատ կողմերով պարզված չեն։ 17-րդ դարի միասնական նոր գրական հայերենի առիթով այս հարցերի վերաբերյալ որոշ նկատառումներ վերը շարագրեցինք։ Այժմ պետք է ավելացնենք, որ 17-րդ դարում միասնական նոր գրական լեզվի գոյության փաստը հիմք չի տալիս մտածելու, որ այժմ կարելի է միասնական գրական հայերեն ստեղծել՝ երկու ճյուղերի միացմամբ։ Նոր գրական լեզվի միասնական վիճակը 17-րդ դարում ուներ իր հիմքերը, որոնցից են՝ հին ու միջին գրական լեզուների ավանդույթի շատ ավելի մեծ ուժը (այժմյան համեմատ) հայության տարբեր հատվածների մեջ, լեզուն միասնականացնող տարրերի ավելի մեծ քանակը ժողովրդախոսակցականում, նոր գրական հայերենի գործածման շատ փոքր ոլորտը և այլն։ Այժմ այս հիմքերը չկան։ Բոլորովին չկա միջին գրական հայերենի ավանդույթի ուժը, շատ է թուլացել գրաբարյան տարրերի նոր գործածությամբ լեզվական միասնություն ստեղծելու գործոնը, լեզվական երկու՝ արևմտյան և արևելյան միջավայրերի գոյությունը. գրական հայերենի երկու ճյուղերը սնող արմատներ ունեն՝ յուրաքանչյուրը այդ միջավայրերից մեկում։ Անցած ավելի քան 250 տարվա ընթացքում պատմական դարգացումը նոր գրական հայերենի երկու ճյուղերը անընդհատ միմյանցից հեռացրել է, և այժմ նրանց ինչ-որ որոշումով կամ ծրագրով միացնելը անհնար է։ Կարծում ենք, հնարավոր է մերձեցումը, և իրապաշտական են մերձեցման ուղղություններ արված ջանքերը, ինչպես որ անիմաստ է խաչավորում ծրագրելը։

Հնարավոր է, որ նոր գրական հայերենի երկու ճյուղերը բառային փոխանակումներ անեն, ինչպես որ արել են, հնարավոր է, որ այդ փոխանակումների քանակը մեծանա, նույնիսկ կարող են փոխանակել առանձին արտահայտություններ,

¹¹³ Է. Աղաջան, Հայոց լեզվի մշակման ու հարստացման և բարբառների դերի մասին։ «Սովետ. գրականություն», 1963, № 6, էջ 112։ Այս հարցի մասին տե՛ս նույն հեղինակի հոդվածը «Նրբան», 1962, ապրիլի 28։

¹¹⁴ Նոր գրական հայերենի երկու ճյուղերի միաձուլման անհնարինության մասին մեր նկատառումները տե՛ս «Սովետական Հայաստան» (հանդես), 1969, № 4, «Հայրենիքի ձայն», 1969, № 3, 4։

քերականական ձևեր և այլն: Բայց ամեն դեպքում դա խա-
շավորում չի լինի. երկնյուղությունն այդպիսի փոխանակում-
ներով չի վերանա:

Երկնյուղությունը կարող է վերանալ լեզվական ուժաց-
ման միջոցով, եթե պատմական որոշ հանգամանքներում
ճյուղերից մեկը գործածող հայությունը սկսի գործածել մյուս
ճյուղը, որը և կդառնա միակը: Այդպիսի ձուլման մասնակի
օրինակներ կան. այսօր շատ հայեր, որոնք գործածել են արև-
մրտյան գրականը, անցել են արևելյանի գործածմանը: Ավե-
լի շատ են բարբառային ուժացման դեպքերը, երբ բարբա-
ռային նոր միջավայր գաղթած շատ հայեր սեփական բար-
բառը մոռանալով սկսեցին խոսել նոր վայրերի բարբառնե-
րով:

Բայց մեզ անհրաժեշտ չափով հիմնավորված չի թվում
այն տեսակետը, ըստ որի անպայման, վաղ թե ուշ հայ նոր
գրական լեզվի արևմտյան ճյուղը պետք է դառնա անգոր-
ծածելի ու նրանով խոսողները պետք է որդեգրեն արևելա-
հայերենը: Պատմաբաղադական իրավիճակից (Արևմտա-
հայաստանի հայազրկում, արևմտահայության ցրվածությու-
նը տարբեր երկրներում, ներգաղթ գեպի խորհրդային Հա-
յաստան և այլն) բխեցվող այս կարծիքը, որքան էլ հավա-
նական թվա, ըստ երևույթին, գիտական կանխագուշակում
դառնալու համար բավարար հիմք չունի:

Վերը մենք հիշեցինք Հ. Աճառյանի և է. Աղայանի կար-
ծիքները երկու ճյուղերի միացման անհնարինություն մասին,
որոնք հիմնականում համոզվել են: Բայց բավարար չափով
համոզվել չի թվում այդ տեսակետի մյուս մասը, մանավանդ
այն հայտնելու հաճախ շատ կտրական եղանակը, ըստ որի
գրական լեզվի արևմտյան ճյուղը վաղ թե ուշ պիտի մահա-
նա, և արևելյանը դառնա միակ համազգայինը¹¹⁵, իսկ ըստ
որոշ ձևակերպումների՝ իբրև վերջինս արդեն դարձել է հա-
յության գրական լեզվի միակ տարբերակը¹¹⁶: Այս կարգի
մի շարք կանխագուշակություններ են արվել¹¹⁷: Այդպիսի

¹¹⁵ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, էջ 553, է. Աղա-
յանի վերը նշված հոդվածները:

¹¹⁶ «Աշխատությունների ժողովածու», ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի, հ.
3, Ե., 1948, էջ 139:

¹¹⁷ Նույն տեղում, էջ 60:

կարծիք պաշտպանող լեզվաբանները, ըստ երևույթին, ելնում
են միայն պատմաբաղադական հանգամանքներից: Ընդ ո-
րում, երբեմն նույնիսկ գրական երևույթ են համարում արև-
մրտահայերենի անհետացումն ու արևելյան ճյուղի մեկա-
շնորհի հաստատումը և կարծես խրախուսում են գեպի այդ
կատարվող քայլերը:

Այս հարցին վերաբերող բոլոր կարծիքներն, ինչպես աս-
վեց, նույն ելակետն ունեն՝ որ գրական լեզվի երկու ճյուղե-
րի առկայությունը հայության համար չարիք է: Եվ ոչ ոք
չի փորձել բուն այդ ելակետը քննելու՝ արդյոք իրո՞ք այդ երկ-
նյուղությունը չարիք է կամ արդյոք այն մի՞այն չարիք է:

Նոր գրական հայերենի երկնյուղության մասին մեր նկա-
տառումները հետևյալն են:

1) Նոր գրական հայերենի երկու ճյուղերը ճիշտ՝ չէ երկու
լեզու համարել (կարելի է միայն պայմանականորեն գործա-
ծել առևտրային լեզու, առևտրային լեզու անվանումները,
դրանց տակ հասկանալով մի գրական լեզվի արևելահայ և
արևմտահայ ճյուղերը): Ընդհանրապես տարբեր լեզուներ, ա-
ռանձին լեզու, ինֆուռույն լեզու բնութագրումները հաճախ ոչ-
թե լեզվաբանական, այլ հասարակական-քաղաքական կամ
ազգային-քաղաքական հիմք ունեն: Օրինակ, թե՛ համշենցի-
ները, թե՛ դարաբաղցիները իրենց հայ են համարում, և այդ
պատճառով էլ նրանց մայրենի բարբառները համարվում են
հայերեն, այսինքն՝ նույն լեզվի երկու բարբառներ, թեև այդ
բարբառները լեզվականորեն իրարից շատ ավելի տարբեր են,
քան, ասենք չեխերենն ու սլովակերենը: Եթե դարաբաղցին
իր բարբառով խոսի, համշենցին՝ իր, նրանք միմյանց չեն
հասկանա, մինչդեռ երբ մեկը չեխերեն է խոսում, մյուսը՝
սլովակերեն, միմյանց ազատ հասկանում են: Բայց չեխե-
րենն ու սլովակերենը տարբեր լեզուներ են համարվում: Պատ-
ճառն այն է, որ չեխերեն ու սլովակերեն իրենց համարում են
միմյանցից տարբեր ազգեր:

Հայ ժողովրդի պատմական-ազգային ավանդույթով միև-
նույն հայերենի տարբեր դրսևորումներ են ըմբռնվում թե՛
գրաբարն ու միջին հայերենը՝ իրենց հիմք և ուղեկից բար-
բառներով և թե՛ արդի բարբառներն ու նրանց վրա խարըսխ-
ված նոր գրական լեզուն իր երկու ճյուղով: Ուրեմն և է՛լ ա-

վելի անհամադիր է այդ ճյուղերից ամեն մեկը մի առանձին շեղու համարող կարծիքը, որ մի ժամանակ հաճախ էր հայտնվում:

2) Հիմք չունի նաև նոր գրական հայերենի արևմտյան ճյուղը 4. Պոլսի բարբառ համարելու Այդպիսի կարծիք մի ժամանակ պաշտպանվում էր (և մեծ կրքով) շատերի կողմից¹¹⁸, բայց այժմ արդեն Դուրյանի, Մեծարենցի, Վարուժանի, ամբողջ արևմտահայ մամուլի ու գրականության լեզուն ոչ ոք գավառաբարբառ չի հայտարարում (նախկին համարողները հավանաբար հրաժարվել են նման կարծիքից):

3) Անհիմն է հայ ժողովրդի երկու հատվածների՝ արևմրտահայության և արևելահայության միջև ցեղային կամ ժազումնաբանական որևէ տարբերություն տեսնելու: Հայության միասնությունը փաստվում է ոչ միայն դարավոր պատմությամբ, այլ նաև այդ պատմության ամբողջ ընթացքում Հայաստանի արևելյան ու արևմտյան մասերի բնակչության բազմաթիվ փոխտեղաշարժերով: Այժմ մեր կարծիքով հայության երկու հատվածների զխավոր տարբերիչ գործոնը լեզվականն է՝ գրական լեզվի երկու ճյուղերի միջև եղած տարբերությունը:

4) Այդ տարբերությունը, ըստ երևույթին, շատ խոր չէ. ճյուղերից մեկը լավ իմացողը ազատ հասկանում է մյուսը: Ամենից զգալի տարբերությունը հնչյունաբանական է: Քերականական տարբերությունները ոչ մի դեպքում անհասկանալիության կամ անհարազատության աստիճանի չեն հասնում. օրինակ, արևմտահայ ճյուղի կ-ով ներկան, նք-ով վաղակատարը, է-ով բացառականը, ու-ով հոգնակի ստացականը կամ նրա գինիի, գաբիի, ոգիի ձևերը և այլն միանգամայն ըմբռնելի են և հարազատ արևելահայ գրականը գործածողի համար, նույնը և արևելահայ ճյուղի ում-ով ներկան, ել-ով վաղակատարը, ից-ով բացառականը, ի-ով հոգնակի ստացականը, ինչպես և նրա գինու, գաբու, ոգու, ձևերը և այլն իբրև հայերեն ձևեր ըմբռնելի են և հարազատ արևմտյան գրականը գործածողի համար: Անհասկանալիության աստիճանի չեն հասնում նաև բառօգտագործման տարբերություն-

ները. օրինակ, արևմտահայ գրականում ընդունված ֆով-ը, ատեն-ը, աղեկ-ը, աղվոր-ը, պաղ-ը, դրացի-ն, կոնակ-ը, ակոա-ն, խածնել-ը հայերեն սովորական բառեր են, հասկանալի՝ արևելահայերենը գործածողի համար, ինչպես և այդ բառերի արևելյան գրականում ընդունված համանիշները՝ մոտ-ը, ժամանակ-ը, լավ-ը, վատ-ը, ցուրտ-ը, հաբե-վանք-ը, մեջք-ը, ատամ-ը, կծել-ը իբր հայերեն բառեր միանգամայն հասկանալի են և հարազատ արևմտյան գրականը գործածողի համար, նաև ընդունված այնտեղ:

5) Գրաբարի նկատմամբ երկու ճյուղերի դիրքերը հավասարակշիռ են: Ինչպես հայտնի է, հնչյունաբանությամբ գրաբարին ավելի մոտ է արևելյան ճյուղը, քերականությամբ՝ արևմտյանը, գրաբարի բառապաշարն օգտագործելու տեսակետից էլ դիրքերը հավասար են՝ արևելյան ճյուղն ավելի է ձգտում պահպանել բառերի գրաբարյան ձևերը, իսկ արևմրտյան ճյուղը ավելի է հակված գրաբարյան հին բառերը կենդանացնելու և գործածության մեջ դնելու:

6) Ժողովրդական խոսքի նկատմամբ էլ երկու ճյուղերը գրեթե հավասարակշիռ դիրք ունեն, թեև արևմտյան ճյուղը, հավանաբար, ավելի ժողովրդային բնույթ ունի: Անհիմն է որոշ գրագետների այն կարծիքը, ըստ որի արևելյան ճյուղն ավելի ժողովրդային է, քան արևմտյանը: Իրողությունը հակառակն է: Ասում են, թե քերականությամբ ժողովրդական խոսքին ավելի մոտ է արևելահայերենը: Սա ճիշտ չէ: Արևմրտահայ ճյուղը քերականությամբ նույնքան մոտ է ժողովրդական խոսքին, միայն՝ արևմտյան բարբառներին, և արևմտյան գրական հայերենի քերականական մոտիկությունը գրաբարին ոչ թե ժողովրդական խոսքից նրա հեռու լինելու նշանն է, այլ այն բանի հետևանքը, որ արևմտահայ ժողովրդական խոսքն իր քերականությամբ (թեկուզ միայն հոլովումով ու խոնարհումով) գրաբարին ավելի հարազատ է մնացել:

Ինչ վերաբերում է բառաձևերին, ապա նոր գրական լեզվի արևելյան ճյուղը կրեց գրաբարի, եթե կարելի է ասել, բառաձևային ճնշումը, մինչդեռ արևմտյան ճյուղը գրեթե չկրեց նման ճնշում և շատ ավելի ազատ էր բարբառախոսակցական բառաձևեր գործածելու մեջ (հիշենք արևմտյան գրական

¹¹⁸ Տե՛ս, օրինակ, «Տեղեկագիր» ՀՍԽՀ ԳԱ, հաս. գիտ., 1951, № 7, «Գրական թերթ», 1951, № 22 և այլն:

հայերենի մեջ այնպիսի բառաձևերի հաստատումը, ինչպես՝
աս, ադ, ան, ասանկ, անանկ, րլլալ և այլն, որոնց արևելա-
հայ տարբերակները՝ էս, էդ, էն, էսպես, էնպես, րլնել և այլն
չհաստատվեցին գրական արևելահայերենում)։ Սրա հետևան-
քով է, որ գրական հայերենի արևմտյան ճյուղն այսօր շատ
ավելի մոտ է կենդանի արևմտահայ խոսքին, քան արևել-
յանը՝ կենդանի արևելահայ որևէ տեսակ խոսքի։

7) Հավանաբար, ճիշտ չէ այն արժատացած պատկերա-
ցումը, ըստ որի նոր գրական հայերենի երկփեղկումը միայն
շարիք է։ Փաստերը ցույց են տալիս, որ անհարմարություն-
ների հետ՝ այդ իրողությունը հայության համար ունի նաև
օգտակարություն։ Մանրամասնելու միջոց շունենալու պատ-
ճառով՝ նշում ենք այդ օգուտներից միայն երկուսը։ Նոր գրա-
կան հայերենի երկու ճյուղերը տարբեր բնույթի զարգացում
ունեցան. արևմտյանը արևելյանից ավելի վաղ սկսեց լայն
գործածության մեջ դրվել ու մշակվել, այն ունեցավ իր ծաղկ-
ման ու մշակման համար սուլթանական, ցարական որևէ տե-
սակ բռնադատումներից ու ներգործումներից ազատ կենտ-
րոններ եվրոպայում։ Այս ամենի հետևանքով արևմտյան
ճյուղով ոչ միայն ստեղծվեց հայագիտական և առհասարակ
գիտական (այդ թվում բնագիտական) հարուստ գրականու-
թյուն, մամուլ՝ արևելյանից շատ ավելի ծավալուն, այլ նաև՝
լեզվաշինական ավանդույթ (օրինակ՝ գիտական եզրաշինու-
թյան, լեզվի մաքրության բնագավառներում)։ Զարգացմամբ
ևս մնացած արևելյան ճյուղը 19-րդ դարում և մանավանդ
20-ում մեծապես օգտվեց ոչ միայն արևմտյան ճյուղի բա-
ռային ճոխությունից, այլ նաև բառաշինական-եզրաշինական
ավանդներից (օրինակ, թեկուզ այն փաստը, որ 1920-ական
թվականների սկզբներին խորհրդային Հայաստանի լեզվա-
բանները, ինչպես իրենք են նշում, գիտական նոր եզրեր մշա-
կելիս, ռառարաններ կազմելիս մեծապես օգտվել են արև-
մրտահայերենի փորձից)։ Էլ ավելի է եղել հայերենը մաքուր
պահելու ասպարեզում արևմտահայերենի զգաստացուցիչ
դերը արևելյան ճյուղի համար։

Պատմական զարգացումը ցույց է տվել, որ տարբեր մի-
ջավայրերում զարգացած (և զարգացող) այդ երկու ճյուղե-

րը հաղորդակից անոթների են նման՝ մեկի հարստացումը
նաև մյուսի ճոխացումն է։

Այնուհետև, գեղարվեստական գրականության մեջ գրա-
կան լեզվի երկճյուղությունն այն հետևանքն ունեցավ, որ
ստեղծվեցին միևնույն հայ գրականության լեզվաճակատի եր-
կու գլխավոր տարբերակներ, ուղիներ՝ արևմտյան և արևել-
յան։ Այսինքն՝ երկճյուղությունը առիթ տվեց լեզվաճակատի,
գեղագիտական բազմազանության, որը մի ազգի գեղարվես-
տական գրականության համար հարստություն է։

8) Ամեն դեպքում այս օգտակարությունը «չկա շարիք
առանց բարիքի» արժեք ունի, և երկու ճյուղերի մերձեցման,
ավելի հարազատացման խնդիրը մնում է. միայն, լավ կլի-
նի, որ այն իրապաշտական հողի վրա դրվի։

Քանի որ երկու ճյուղերի միաձուլումն անհնար է, ուրեմն
և, թվում է, պետք է համակերպվել նոր գրական հայերենի
երկճյուղության փաստի հետ, նաև վնասակար համարել ա-
մեն մի գործնական քայլ ճյուղերից մեկը վերացնելու, մյու-
սը միակ համազգայինը դարձնելու ուղղությամբ։ Մասնա-
վորապես արևմտահայերենը, որ Սփյուռքի հայության մեծա-
գույն մասի գոյության միակ իրական գործոնն ու փաստն է,
լավ կլինի, եթե ավելի ու ավելի լայն շրջանակում գործած-
վի, հայերենը մոռացած շատ-շատերի լեզուն դառնա նորից,
շարունակի մշակվել, ճոխանալ գրականության ու մամուլի
մեջ։ Իսկ թե ինչպես՝ կվարվի ապագայում պատմությունը,
ինչպես՝ նա կտնօրինի հայոց նոր գրական լեզվի ճյուղերից
յուրաքանչյուրի բախտը, կալծում ենք, պետք է թողնել ժա-
մանակին։ Ի՞նչ հարկ կա մարգարեանալու և ճյուղերից մեկի
դատապարտվածությունը նախապես որոշելու իսկ մտահո-
գությանն ու ջանքերին, ըստ երևույթին, այլ ուղղություն
պետք է տալ՝ կարելին անել որպեսզի ճյուղերից թե՛ մեկի,
թե՛ մյուսի գործածման ոլորտը չնեղանա և գործածողների
քանակն էլ չպակասի, այլ՝ ավելանա։ Ահա այս է, որ, հա-
վանաբար, ճիշտ չի լինի թողնել ժամանակի տնօրինությունը։

Մյուս կողմից, կարծում ենք, խրախուսելի է ամեն քայլ,
որը գրական հայերենի արևելյան ճյուղը ավելի հարազատ է
դարձնում արևմտահայոց համար, իսկ արևմտյանը՝ արևե-
լահայոց։ Դրան մեծապես կօգնի արևելահայ դպրոցներում

արևմտահայ խոսքին, գրողներին ավելի մեծ տեղ տալը, արևելահայ մամուլում գրական արևմտահայերենով հոդվածներ ավելի շատ տպագրելը և այլն, ինչպես և արևմտահայ դպրոցներում, մամուլում արևելահայ խոսքին ավելի շատ տեղ տալը: Հետևողականության դեպքում, թվում է, երկու ճյուղերի միջև լեզվատարրերի, հատկապես բառերի, եզրերի, նորակազմությունների ավելի մեծ փոխներթափանցումներ կկատարվեն և, հավանաբար, կկանխվի երկու ճյուղերի միմյանցից ավելի հեռանալը, որ դիտվում է:

Այս տեսակետից օգտակար կլինի նաև ուղղագրական բաժանումի վերացումը, անշուշտ, դասական ուղղագրության հիմքի վրա (որ նշանակում է դասական ուղղագրության գոնե հիմնական տարրերի վերականգնում):

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. ԱՂՐՅՈՒՐՆԵՐ

Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրեր, № № 108, 488, 1662, 1749, 2950, 8443, 8716:

«Ազգարար», 1794—1796:

Արհեստ համարողութեան, Մարտի, 1675:

Գիրք դպրութեան և տաղարան վայելուչ, Կ. Պոլիս, 1738:

Գիրք դպրութեան և տաղարան վայելուչ և գեղեցիկ, Կ. Պոլիս, 1723: Ծղիա Կարենցու Դիվանը, Ե., 1968:

Երեմյան Ա., Պարսկահայ աշուղներ, Քիզիս—Քեհրան, 1930:

Զաքարիա Ազուլեցու օրագրությունը, Ե., 1938:

Ինճիբյան Ղուկաս, Տեսութիւն համառօտ հին և նոր աշխարհագրութեան, Վենետիկ, 1791:

Կարճառօտ քրիստոնէական, Տրիեստ, 1788:

Հայնակ և նէմէցնակ, Տրիեստ, 1788:

Հովնաթան Նաղաշ, Բանաստեղծություններ, Ե., 1951:

Հովնաթան Հովով Կոստանդնուպոլսեցի, Պարզաբանութիւն հոգննուագ սաղմոսացն, Վենետիկ, 1687:

Ղուկաս Վանանդեցի, Գանձ շափույ, կշռույ, թույ և դրամից բոլոր աշխարհի, Ամստերդամ, 1699:

Մխիթար Սեբաստացի, Գիրք քրիստոնէական, Վենետիկ, 1771:

Նույնը, Դուռն քերականութեան..., Վենետիկ, 1727:

Հակոբ Նալյան, Գիրք կոչեցեալ զէն հոգեւոր, Կ. Պոլիս, 1757:

Նույնը, Գիրք կոչեցեալ քրիստոնէական, Կ. Պոլիս, 1737:

Շրջողեր Յ., Արամեան լեզուին գանձը, Ամստերդամ, 1711:

Պաղտասար Դպիր, Տաղարան փոքրիկ, Կ. Պոլիս, 1768:

Նույնը, Տաղարանիկ, Կ. Պոլիս, 1768:

Սահակյան Հ., Հայ աշուղներ. XVII—XVIII դարեր, Ե., 1961:

Սարաֆյան Կղեոպատրա, Բանալի գիտութեան, Մոսկվա, 1788:

Սյուրմեյան Խաչատուր, Համառօտ թուաբանութիւն աշխարհաբառ, Վենետիկ, 1788:

Ստեփանոս Դաշտեցու բանաստեղծությունները: «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ, հաս. գիտ., 1956, № 12, էջ 106—114:

Տետրակ, որ կոչի ակնոց աշաց սրտի, Կ. Պոլիս, 1780:

2. ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ., Գուսանական ժողովրդական տաղեր, հայրեններ և անտունիներ, Ե., 1940:

Նույնը, ժողովրդական խաղիկներ, Ե., 1940:

Նույնը, Մեր գրական լեզվի միության խնդիրը: «Արարատ», 1906, էջ 37—40:

Նույնը, Հայոց հին գրականության պատմություն, դիրք 2, Ե., 1946:

Աբրահամյան Ա., Հայերենի գերբայները և նրանց ձևարանական նշանակությունը, Ե., 1953:

Ալպայանյան Ա., Պատմություն հայ դպրոցի, հ. 1, Կահիրե, 1916:

Աղայան Է., Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Ե., 1962:

Նույնը, Հայոց լեզվի մշակման ու հարստացման և բարրառների գերի մասին: «Սովետ. գրակ.», 1963, № 6:

Նույնը, Մեղրու բարբառը, Ե., 1954:

Նույնը, Սովետահայ լեզուն որպես հայ ժողովրդի համազգային լեզու: ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստ.-ի «Աշխատութ. ժող.», հ. 3, 1948, էջ 125—159:

Անադյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի..., հ. 4, դիրք Բ, Ե., 1961:

Նույնը, Հայ բարբառագիտություն: «Էմինյան ազգագրական ժող.», հ. 8, Մոսկվա—Ն. Նախիչևան, 1911:

Նույնը, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Ե., 1951:

Նույնը, Պատմություն հայոց նոր գրականության, Վաղպատ, 1906:

Նույնը, Քննություն Ազուլիսի բարբառի, Ե., 1935:

Նույնը, Քննություն Ղարաբաղի բարբառի, Վաղպատ, 1901:

Նույնը, Քննություն Նոր Զուղայի բարբառի, Ե., 1944:

Նույնը, Քննություն պոլսահայ բարբառի, Ե., 1941:

Աճեմյան Վ., Գրական արևմտահայերենի ձևավորումը, Ե., 1971:

Այսրենյան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի՝ հանդերձ ներածությամբ և հավելվածով, Վենետիկ, 1866:

Ասատրյան Մ., Ուրմիայի (Խոյի) բարբառը, Ե., 1962:

Կեռզիկ Վ., Հեղեմրուպական լեզվաբանությունն այսօր: «Վոպրոսի յա-գիկոզնանիյա», 1975, № 5, էջ 3—5 (ռուսերեն):

Գիրք վայելուչ և հարկաւոր հանուրց հայկազունեաց բարեսիրաց, Մար-սեթ, 1675:

Գյուլբուղայան Ա., Հայերենի ուղղագրության պատմություն, Ե., 1973:

Իսվրյան Հ., Աշխարհաբար գիրքը հայ տպագրության սկզբից մինչև 1850 թվականը, Ե., 1964:

Զարբանալյան Գ., Հայկական մատենագիտություն, Վենետիկ, 1883:

Նույնը, Պատմություն հայկական տպագրության, Վենետիկ, 1895:

Խոսրովյան Հ., Արևմտահայ աշխարհաբարի ծագումը և զարգացումը, Բոստոն, 1961:

Խումանյան Է., Ակնարկներ նոր հայերենի հոլովական ձևերի պատմական զարգացման, Մոսկվա, 1962 (ռուսերեն):

Ղազարյան Ա., Հայոց լեզվի պատմություն, Ե., 1954:

Ղազիկյան Ա., Հայկական նոր մատենագիտություն, Վենետիկ, 1909—1913:

Մեացականյան Ա., Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Ե., 1956:

Շահբազյան, Տ., Արևմտահայ աշխարհաբարի առաջացումը, Ե., 1963:

Չամչյան Մ., Պատմութիւն հայոց, հ. 3, Վենետիկ, 1786:

Պետրոսյան Գ., Մաթեմատիկական Հայաստանում հին և միջին դարերում, Ե., 1959:

Գ. Սևակ, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Ե., 1948:

Վանցյան Գ., Պատմական քերականություն արևելահայ լեզվի, Թփղիս, 1906:

Ջանուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:

Նույնը, Հայ լեզվաբանական միտքը և նոր հայերենի հարցերը 18—19-րդ դարերում, Ե., 1955 (ռուսերեն):

Նույնը, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969:

Տեր-Հովնանյան Հ., Պատմութիւն Նոր Զուղայու, որ յԱսպահան, Ն. Զուղա, 1880:

Մամուլ, ժողովածուներ. «Աշխատությունների ժողովածու», ՀՍՍՀ ԳԱ լեզվի ին-տի, հ. 3, «Ասպիրանտական գիտ. աշխ. ժող.», Ե. Արուսյանի անվ. մանկ. ինստ., № 8, պ. 2, 1975, 1948: «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 1, էջ 57—70: «Գիտ. աշխ. ժողովածու» Հայկ. հեղ. մանկ. ին-տ, 1960, № 6, մաս. 2, էջ 26—35: «Գրական թերթ», 1951, № 22: «Լրաբեր հասարակական գիտությունների», 1972, № 1, էջ 40—50: «Հանդես ամս-օրյա», 1927, սյունակներ 28—36, 126—138, 237—249, 367—375, 493—501: «Սովետական գրականություն», 1974, № 9, էջ 155—199, 1975, № 12, էջ 124—129: «Սովետական Հայաստան», 1969, № 170: «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ., 1951, № 7:

ԱՆՁՆԱՆՈՒՆԵՐԻ ՑԱՆԿ

Արեղյան Մանուկ—15, 136, 146
Արիսողոմ—81, 87
Արուսյան Խաչատուր—14, 15, 35, 119
Աքրաճամ (նահապետ հրեից)—81
Արրահամյան Աշոտ (լեզվաբան)—60, 147
Արրահամյան Աշոտ (պատմաբան)—114, 116, 118
Աղամ—81
Ալալյանյան Արշակ—67, 68, 147
Անառյան Հրաչյա—15, 16, 33, 66, 91, 100, 136, 147
Անճմյան Վանուհի—147
Աղայան Հղուարդ—17, 136, 137, 139, 147
Ամիրզոգլաթ Ամասիացի—14
Ալվազովսկի Գարրիել—15
Այտրյան Արսեն—15, 22, 147
Անանիա Շիրակացի—38
Ասատրյան Մանվել—60, 147
Աստվածատուր Ազուլեցի—101
Ավետիս Ղլիճենց—46
Արա Գեղեցիկ—111
Արզունի Նորյուզայեցի—28
Արծրունի Գրիգոր—136

Գեորգիև Վ.—5, 147
Գեորգյան Լարիսա—119
Գյուրբուղայան Սիրաթ—40, 147
Գրիգոր Նարեկացի—50

Դավիթ Մարգարե—72, 74, 76, 81, 85, 87
Դավթյան Հայկ—34, 147
Դուրյան Պետրոս—141
Ծղանյան Ա.—43

Ծղիա Խոտորչրեցի (Կարենցի)—114, 115, 116, 117, 118, 119, 146
Ծղիազար Այնթափցի (կաթողիկոս)—72, 74
Երեմյան Արամ—146

Զարրահանյան Գարեգին—33, 67, 68, 69, 70, 147
Զաքարիա Ազուլեցի—33, 35, 36, 37, 146
Զաքարիա Քանաթեոցի—38

Էդազ Նորյուզայեցի—29
Էլիզբար (վաճառական)—114

Քաղեոս Համազասպյան Երևանցի—99
Քահմազ Շահ—117
Քոմա Ազուլեցի—101
Քոմա Կեմպացի—70
Քորոսյան Հ.—147
Քոմանյան Էթերի—17, 147

Ինճիճյան Ղուկաս—128, 132, 146

Լեոնյան Սողոմոն—46, 99
Լուդովիկոս 14-րդ—46

Խաչատուր Զուղայեցի—105

Սատուր—123

Կաժյան Վալենտինա—35
Կլավդիուս Քր.—67
Կղեոպատրա Սարաֆյան — տե՛ս Սարաֆյան Կղեոպատրա
Կոստանդ Զուղայեցի—42, 43

Հակոբ Մեղապարտ—34
Հակոբ Նալյան—128, 129, 130
Համազասպյան Քաղեոս — տե՛ս Քաղեոս Համազասպյան Երեւելացի
Հարություն Շմավոնյան Շիրազցի—127
Հերովդես—85
Հիսուս Քրիստոս—73, 81, 87
Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցի—15, 68, 69, 70, 71, 72, 73, 74, 75, 91, 93, 94, 96, 98, 99, 100, 101, 146
Հովնաթան Նաղաշ—28, 111, 112, 146
Հուդա (Իսկարիովտացի)—80, 81

Ղազար—123
Ղազարյան Սերոբ—34, 147
Ղազիկյան Արսեն—33, 68, 69, 70, 147
Ղուկաս Վանանդեցի—35, 105, 146

Մանդինյան Ստեփան—15, 136
Մանսուր Խան—36
Մատթեոս Հովհաննիսյան Վանանդեցի—46, 99
Մելքում Ճղդսի—36
Մեծարենց Միսաթ—141
Մեսրոպ Մաշտոց (Մաշտոցի անվ.)—40, 42, 46, 98
Մխիթար Գոշ—40
Մխիթար Սեբաստացի—15, 125, 126, 127, 128, 146
Մխիթարյաններ (Վիեննա)—116
Մխիթարյաններ (Տրիեստ)—128
Մնացականյան Ասատուր—148

Նաղարյան Ստեփանոս—14, 15
Նալբանդյան Միքայել—14, 15
Նալյան Հակոբ—տե՛ս Հակոբ Նալյան

Նահապետ Գուլնազար Ազուլեցի—72—75, 101
Նաղաշ Հովնաթան—տե՛ս Հովնաթան Նաղաշ
Ներսես Համբրոնացի—50

Շահբազյան Տ.—148
Շամիրամ—111
Շանթ Լեոն—136
Շերմազանյան Գալուստ—28
Շրլոդեր Յոհան—98, 120, 121, 122, 123, 124, 125, 127, 146

Ոսկան Երևանցի—46, 69, 98, 99
Ոսկյան Համազասպ—116, 117, 118

Չամչյան Միքայել—148
Չերազ Մինաս—15, 135
Չոպանյան Արշակ—136

Պազուսասար Դպիր—146
Պատկանյան Գարրիել—15
Պատկանյան Ռաֆայել—14, 15
Պատկանյան Քերովբե—22
Պետրոս Զուղայեցի—105
Պետրոս վարդապետ—36
Պետրոսյան Գարեգին—39, 40, 67, 68, 148
Պիղատոս Պոնտացի—85

Ջահուկյան Գևորգ—17, 22, 91, 148

Սահակյան Հասմիկ—29, 146
Սարաֆյան Կղեոպատրա — 127, 133, 134, 146
Սեակ Գուրգեն—17, 148
Սեֆիդուլի Խան—36
Սկրլոդեր—տե՛ս Շրլոդեր Յոհան
Ստեփանոս Դաշտեցի—28, 108, 109, 110, 111, 146

Այուրմեջյան հաշատուր—128, 131,
132, 133, 146
Աուլեյման շահ—36

Վանանդեցիներ—105, 120
Վանքյան Գրիգոր—33, 136, 148
Վարուժան Դանիել—141

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ազուլիս—18, 23, 32, 36, 60, 66,
125, 147
Ակն—23, 60
Ամիր—118
Ամստերդամ—35, 105, 120, 146
Այնճար—6
Անատուլիս—126
Անի—23
Առդեալ—23
Ասիս—32
Աստրախան—23, 60, 118, 119
Ասրաբադ—36
Արաբկիր—60
Արագածոտն—23
Արարատյան դաշտ—23, 24, 99
Արդվին—25, 60, 102
Արենիյան Հայաստան—տե՛ս Հա-
յաստան Արենիյան
Արենիք—32
Արևմտյան Հայաստան—տե՛ս Հա-
յաստան Արևմտյան
Արևմուտք—32
Արթիկ—103
Արցախ—23, 50, 60, 62, 66

Բաղդադ—118
Բարձր Հայք—117
Բեյլան—23
Բելլուսթ—6
Բոստոն—147

Գալիցիա—23, 24

Վեմյան հ.—136

Տեմիրհույաշյան Եղիա—135
Տեր-Հովնանյան Հ.—148
Տերյան Վահան—99

Րաֆֆի—14

Գանձակ—114, 118, 119
Գողթան զավառ—46

Դաշտ—36, 37
Դավրեժ—տե՛ս Թավրիզ

Եվդոկիա—60
Եվրոպա Արևմտյան—67
Եվրոպա—32, 119, 143
Երևան (բնագրում նաև՝ Ե.)—6,
36, 46, 62, 114, 115, 118, 129,
139, 146, 147, 148
Երզնկա—60

Ջանգեզուր—60, 62
Ջեյթուն—23
Ջմյուռնիա—60, 100

Էջմիածին—31, 46, 47, 69
Էրզրում—տե՛ս Կարին

Թավրիզ—117, 118
Թփղիս—18, 25, 30, 33, 56, 59,
60, 66, 102, 118

Հենինական—6
Հիրանան—6
Հոն—106
Հոռի—7, 50

Խարբերդ—23, 60
Խոյ—23, 26, 60

Խոտորչուր—23, 24, 117, 118
Խորհրդային Հայաստան—143

Կահիրե—67, 147
Կարին—18, 23, 60, 103, 114,
117, 118, 119
Կիլիկիա—10
Կիրովական—6
Կոստանդնուպոլիս (բնագրում նաև՝
Կ. Պոլիս)—18, 23, 60, 91, 100,
114, 118, 120, 126, 128, 129,
130, 132, 141, 146
Կրման—118

Հալեպ—44
Համշեն—23
Հայաստան—23, 24, 143
Հայաստան Արենիյան—10, 23, 100,
141
Հայաստան Արևմտյան—23, 100,
127, 113, 139, 141
Հաչըն—23
Հնդկաստան—31, 107
Հոռմ—123

Ղարաբաղ—23
Ղրիմ—23

Մադրաս—134
Մալաթիա—60
Մարաղա—26
Մարսել—33, 46, 47, 48, 67, 69,
99, 146, 147
Մարտունի—6
Մեծ Հայք—23
Մեղրի—23, 60
Մոսկվա—107, 118, 146, 147
Մուշ—23, 60

Նիկոմեդիա—60
Նոր Նախիջևան—60, 147
Նոր Զուղա—18, 23, 28, 29, 30,
31, 32, 36, 37, 42, 44, 45, 46,

50, 60, 62, 66, 117, 118, 120,
147, 148

Շամախի—23, 60, 118
Շապին-Գարահիսար—60

Պարսկաստան—117, 118, 119
Պետերբուրգ—133
Պորտուգալիա—107

Ջուղա—23, 108

Ռաշտ—118
Ռոդոսթո—60
Ռուսաստան—118, 134

Սասուն—23
Սեբաստիա—23, 60
Սյունիք—23, 60, 62
Սպահան—36, 148
Սվեդիա—7, 23
Սիյուր—144
Սուլավա—60
Սուրաթ—107
Ս. Քոմայի վանք—36
Ս. Ղազար (կղզի)—126
Ս. Սարգիս (վանք)—46, 47, 69

Վաղարշապատ—136, 147
Վայոց ձոր—23, 24
Վան—23
Վենետիկ—33, 34, 69, 72, 73,
126, 127, 128, 131, 146, 147,
148
Վիննա—116

Տիգրանակերտ—23, 60
Տրանսիլվանիա—տե՛ս Առդեալ
Տրապիզոն—60
Տրիեստ—128, 146

Ուրմիա—23, 26, 60

Փարիզ—106
Ֆրանսիա—106

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայոց երեք գրական լեզուներ	3
«Աշխարհարար» անվանումը	14
Նոր գրական հայերենի առաջին դարը	16
Նոր շրջանի հայ բարբառները	21
17-րդ դար	28
17-րդ դարի գուսանական աշխարհարարը	31
17-րդ դարի նոր գրական հայերենը գրավոր ու տպագրի խոսքի մեջ	108
17-րդ դարի նոր գրական հայերենն իբրև գրավոր լեզու	112
18-րդ դար: Նոր գրական հայերենի երկփեղկումը	145
Մասնագիտություն	
Անձնանունների ցանկ	
Տեղանունների ցանկ	

Հրատ. խմբագիր՝ Հ. Ս. Հաբուսյան
 Նկարիչ՝ Կ. Կ. Ղաֆադարյան
 Գեղ. խմբագիր՝ Ն. Ա. Քոչմասյան
 Տեխն. խմբագիր՝ Ս. Ա. Ղալբախյան
 Վերստ. սրբագրիչ՝ Ս. Վ. Ղազարյան

ՆԿԱՏՎԱԾ ՎԵՐԳԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պատր. է լինի
3	վ. 6	շուրջ ութ-տասը	շուրջ ութ
12	Դժապտտիկներ	8—10 հոդար	6—7 հոդար

ԻՐ 325

НБ 32

ՎՅ 03611.

Պատվեր 1694

Տպաքանակ 20

Հանձնված է արտադրություն 21/XI 1978 թ.: Ստորագրված է տպագրության 31/I 1979 թ.: Քուլթ. № 1, 84×108^{1/32}: Հրատ. 6,85 մամուլ: Տպագ. 4,75 մամուլ=7,98 պայմ. մամուլ: Գինը՝ 35 կոպ.

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Մոսկվայի փող. №

ВФ 03611.

Заказ 1694

Тираж 20

Сдано в производство 21/XI 1978 г. Подписано к печати 31/I 1979

Бумага № 1, 84×108^{1/32}. Изд. л. 6,85. Печ. л. 4,75=7,98 усл.

Цена 35 к.

Издательство Ереванского университета, Ереван, ул. Мравина, 1

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Արմավյան փող. № 32:

Типография Ереванского университета, Ереван, ул. Абовяна, 52.

8/11
h-68

Ռ.Ա. ԻՃԽԱՆՅԱՆ

ՆՈՐ
ԳՐԱԿԱՆ
ՀԱՅԵՐԵՆԸ
XVII - XVIII դդ.

ԵՐԵՎԱՆ